3580

491.99-8
Т-99

2010

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

ԸՆԹԱՑՔ
ԻԳՐՈՑ ԲԱՐՔԱՆ

Գ. ՏԱՐԻ

Ի ՆԱԽՆԵԱՑ ԵԻ ՅԱՐԴԵԱՑ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

FB 2002

(14)

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1930

491.99-8
Դ-99

Ի ՑԻՇԱՏԱԿ

ՅԱԿՈԲԱՅ ԱՇՂԵԱՆ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ

(1819 - 1887)

ԶԵԿՈՅՑ

Հրատարակելով ԸՆԹԱՑՔ Ի ԴՐՈՅ ԲԱՐԲԱՌԻ Գ տարին եւս՝ իբրեւ վերջին հատորը մեր Դասագիրքին՝ ամբողջացուցած կ'ըլլանք Հին Հայերէնի ուսման շրջանը մեր ազգային վարժարաններուն համար։

Աւելորդ է ըսել՝ թէ լեզուին մէջ աւելի զարգանալու հնարաւորութիւնը կախում ունի միայն ապագայ ընթերցումներէ եւ ուսումնասիրութիւններէ, անհատական ջանիերով։

Մեր սոյն հատորին մէջ, ինչպես կը տեսնուի, տեղ տուինք նաեւ Վիեննական Մխիթարեան Հայերու լուսագոյն բարգմանութիւններուն, որոնց արժէքը, Դասական հայերէնի տեսակէտով, բարձր է միշտ, ըլլալով հարազատ եւ մեծավայելուչ, որոնց ալ առերեսոյթ հետեւակութիւն մը կարծեն տեսնել ոմանք՝ *Դպրոցական* այդ ուղղութեան մէջ։

Ի վերջ Դասագիրքիս՝ անօգուտ չհամարեցինք ձԱՇԱԿ մը տալ նաեւ *Յունաբան Դպրոց*ի հայերէնի մասին, որպէսզի ուսանողը գաղափար մը ունենայ՝ թէ ան ինչո՛վ կը հետաքրքրի Դասականէն, եւ միւս կողմէ՝ տեղեկանայ թէ ի՛նչ նոր բառամթերք մը հետզհետէ ծուած է անով մեր հին եւ նոր գրականութեան մէջ։

Դասագիրքիս մասը կը կազմէ նաեւ մեր *Այբուբենի Հայերէն Բանասիրութեան* գրոյկը որ առանձին կը ծախուի, եւ զոր պիտի կցենք՝ միասին կազմելով, վանուցս Տպարանի Վարչութեան ըլլալիք յանձնարարութիւններու համաձայն։

69433-Կ. Հ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. ՍԱՐՅԱՆԻ
им. А. Мясницкого
ԵՐԵՎԱՆ

2092-81

ՅԱՆԿ ՆԻՔԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

		Եջ
	ՅԱՌԱՋԱԲԱՆ	Գ
1.	Հանգամանք արդոյն որք յանապատս բնակին (Ոսկեբերան)	1
2.	Արժան է փութալ ի փրկութիւն այլոց (»)	4
3.	Հրաշագործութիւնք Յիսուսի (Ռափիլ Որդի)	8
4.	Նկարագիր արծաթասիրի (Ոսկեբերան)	11
5.	Ագնուագոյնն յարուեստս է ողորմութիւն (Ոսկեբերան)	14
6.	Մեծութիւն Աստուծոյ (Ռափիլ Որդի)	17
7.	Մի՛ իւիք հպարտանալ (Ոսկեբերան)	19
8.	Պօղոս եւ Ներոն (»)	22
9.	Ընդդէմ արբեցութեան (»)	25
10.	Դորդոխա պատուի զերազ իւր (Ռափիլ)	28
11.	Վատուն հրոյ յեկեղեցւոջ օրինակաւ հրդեհի (Ոսկեբերան)	29
12.	Բարք մեղուաց (Բարսեղ)	32
13.	Ագգք ինչ թռչնոց եւ թարոյք նոցա (Բարսեղ)	35
14.	Ասպ Տէր առ Յոբ ի մէրկի եւ յանպոյ (Դիրք Յոբայ)	38
15.	Կերպարանք փղի (Բարսեղ)	40
16.	Դարձեալ կրկնեալ Տեառն յանպոյն՝ ասէ ցՅոբ (Դիրք Յոբայ)	43
17.	Յաղագս առատապետական կենդանեաց (Եզնիկ)	45
18.	Բնական պարտուք անասնոց եւ մարդկան (Եզնիկ)	49
19.	Առաջին յոյզք Աղամայ (Միւռոն)	52
20.	Կրօնք փիլիսոփայից, եւ հերքումն նոցին (Եզնիկ)	55
21.	Առուեստ բարձեւութեան (Կիւրեղ Աղեքսանդրացի)	59
22.	Ձիոջ նախածնողացն (Միւռոն)	62
23.	Առատկիք յաղագս Ովսանայ եւ Բեղայ (Եւսեբիոս)	64
24.	Վասն ջրհեղեղին (Եւսեբիոս)	67
25.	Մարդիկ ուժ եւ ակնոծութիւն (Բագրատունի)	69

ՄԱՍՆ Բ

1. *Երազն Լուկիանոսի (Ռոդեն)* 72
2. *Ուխտ Իդումեանոյ (Թեոդորն)* 74
3. *Մահ Իպպոլիտոյ (Ռասինի)* 77
4. *Կերպարանիլ եւ կեղծիք կոտպաշտութեան (Պոսիւէ)* 79
5. *Եգիպտացիք (Պոսիւէ)* 81
6. *Սենոքի կարծիք զաստեղաց (Ռասինի Որդի)* 84
7. *Սուտախաղսան եւ մարդահանոյն (Թերենտիոս)* 85
8. *Սենեքան եւ սենապաշտն (Թերենտիոս)* 87
9. *Որքան յանկարծականէ կշտամբէ զԹերենտիոս (Հոմերոս)* 90
10. *Առաքինութիւք ծերութեան (Կիկերոն)* 92
11. *Յաջորդ մասն վերնոյն (»)* 95
12. *Պողիոն (Վիրգիլիոս)* 99
13. *Մարտիպոս յանձն երթոդ (Ռոդեն)* 101
14. *Եսքինես առքաստանի զԴեմոսթենես (Եսքինես)* 104
15. *Սաւուղ եւ Սիմեոնէ խահանայապետ (Ալֆիէրի)* 108
16. *Դեմոսթենես ընդդէմ Եսքինեայ (Դեմոսթենես)* 110
17. *Դասիարանութիւն Պերպագոեանց (Պարթելմի)* 113
18. *Սենեքա ի դժոխս զգայոցն պատուհ (Վիրգիլիոս)* 117
19. *Կարգ բանականացն Պարսից եւ Մակեդոնացւոց (Կ. Կուրտոս)* 120
20. *Դաւ ընդդէմ Դարեհի եւ մահ նորա (»)* 122
21. *Դրուագ շինական կենաց եւ Ալեքսի Կոմնի (Վիրգիլիոս)* 126
22. *Եղեռնական խորհրդատուէ (Պարթելմի)* 129
23. *Տեսիլ մի ի «Հաւ» խաղոյ Արիստոփանեայ (Պարթելմի)* 132
24. *Էջք Որփեոսի ի դժոխս (Վիրգիլիոս)* 137
25. *Հրոմեայ Հռոմեայ եւ այրուելն Երուսաղէմի (Տակիտոս)* 138
26. *Գերմանիկ յաղթէ Գերմանացւոց (Տակիտոս)* 141
27. *Նշանք հիւանդութեան... (Վիրգիլիոս)* 144
28. *Մանկտիոն Կիւրոսի (Քսենոփոն)* 147
29. *Աբրադատ եւ հաւատարմութիւն կնոջ նորա (Քսենոփոն)* 151
30. *Հեկտոր եւ Անդրոմաքէ (Հոմերոս)* 154
31. *Կիկերոն ընդդէմ Անտոնիոսի (Կիկերոն)* 157
32. *Զօգտակարութենէն երթողութեան (Կիկերոն)* 161
33. *Առաքս երթողական (Վիրգիլիոս)* 166

34. *Հիւզերոյ or առարչութեան (Միլտոն)* 172
35. *Ողբ Անդրոմաքեայ ընդ մահ Հեկտորի (Հոմերոս)* 174
36. *Ընտրութիւն եւ խնամք արջառոց եւ ձիոց (Վիրգիլիոս)* 176
37. *Սատանայ եւ իւրոց պղակերպին ջօձ (Միլտոն)* 179
38. *Նկարագիր վահանին Աքիլլեայ (Հոմերոս)* 182
39. *Գործք ուշակաց եւ հոգք ուշակութեան (Վիրգիլիոս)* 185
40. *Հայկանոյշ (Բագրատունի)* 187
41. *Զգոյշ լինել ջօձից եւ ի վիշապաց (Վիրգիլիոս)* 189
42. *Գեղոյն Սկամանդրի կռիւ ընդ Աքիլլեայ (Հոմերոս)* 190
43. *Պրոտեոս (Վիրգիլիոս)* 193
44–45. *Հուզումն Փոսոմպեայ տաղ յաղագս Գերեզմանաց (երկիւղ բարեպաշտութիւն)* 194–210

ՁԱՇԱԿ մը Յունաբան Դպրոցի հայերեցեաց 211

46. *Հատուածք ի Սահմանաց Դարձի* 213
47. *Հատուածք ի Վերածութենէն Դարձի* 222

ԸՆԹԱՑՔ
Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

ԵՐԲՈՐԴ ՏՊԱՐԻ

ՄԱՍՆ Ա.

(Ի ՆԱԽՆԵԱՑ)

I

ՀԱՆԳԱՄԱՆՔ ՍՐԲՈՑՆ ՈՐՔ ՅԱՆԱՊԱՏՍ ԲՆԱԿԵՆ

Վարկպարագի, պարչ, վերլվերոյ
Ցառագաս մտանել, հարձակեալ ընդ-
ունել (խորհրդական ի՞մաստով)
Ցանձն ունել, յանձն առնել
Ասի կեանք, ապրելոցը
Կնաւանորձ, ընայլ կամ նշոյլ բան-
ի բացե (նե.), հեռու [ոտած
Վաչ, այլը ծածկոյթ կոտոր,
[ի] բերանս հարկանել, չքեր-
նուիլ (չարմանալեն, վախեն, լեզ)
Ոգորիլ, ճգտիլ, ի՞նդիլ
Ճարակ, արօտավայր
Սրահակ, վարժեցոյց
Կմբեայ, վահանին պորտը
Ջողիք, յորդիք, ջրհոսիք
Կողիճաւոր, պատերազմող (յն.
χολεόν (պատեան) բառէն)
Հաճուել, համաքիլ
Ոճով, (գ.) կոքիտ, հանդամանք
Բակ առնուլ, շրջապատել [ոչխարն

Ոչ ոսկեհուռ հանդերձից պէտք են մեզ, այլ ներքին պատմուճանաց[1]. *մինչ զայս ունիցիմք՝ այնու*[2] *զարդարել դժուար-
բին է: Զառնո՞ւս ի միտ զի ի հարանիս կոչեցար, և յԱստուծոյ*

(1) Ինչպէս հանդերձիցը նոյնպէս և պատմուճանացը յատկացուցիչ են թէ յայտնի դրուած և թէ լռելեայն իմացուած պէտ բառին:

(2) Այս ցուցական դերանունը մօտաւոր բառը (պատմուճանիֆ), եւ այնը հեռաւորը (հանդերձիֆ) կը ցուցնէ:— երկու յոգնակի գոյականներն ալ՝ եղակի մաքով կիրարկուած են, ինչպէս քիչ վերջն ալ ցնցոտիֆ և ձիրանիֆ բառերը:

հարսանիս. չածիցե՞ս զմտաւ, թէ զկա՛րդ յայնպիսի առագաստ պարտ էցէ ոգւոյն մտանել: Կամի՞ս զի ցուցից քեզ պայնոսիկ՝ որ այնու զարդու զարդարեալ էցեն: Յիշեա՛ զսուբբան որ զայծեայ զհանդերձն ունէցին և յանապատս բնակեալ էցեն. նոքա առաւել ունէցին զհանդերձս հարսանեացն, և յայտ անտի է, զի որչափ ծիրանիս տայցեն նոցա՝ չունէին յանձն առնուլ, այլ՝ զոր օրինակ՝ եթէ թագաւորի զաղքատի զցնցոտիս հրամայիցէ ոք ապանել, և նա յայնմանէ գարշէցի, նոյնպէս և նոքա ի նորին ծիրանեացն. զի զիւրեանց պատմուճանն գեղեցիկ քան զայն համարին. վասն այնորիկ զծիրանի քղամիդն անգոսնեն և իբրև սարդիոստայն կնատառորձ հաշուին, և քան զթագաւոր իսկ երկրաւոր բարձրագոյնք [են] և առաւել պայծառագոյնք: Եթէ կարասցես զդրուն տաճարին(ա) բանալ, ընդ ոգիսն նոցա ոճով մանր նայել եւ ընդ ներքինն զարդն ամենայն, թէպէտև [ի]բերանս հարկանիցես, չկարիցես ճառագայթից գեղեցկութեանցն նոցա ժուժալ:

Ուստի և զհին արանց աւագաց և զարմանալեաց ասել, այլ քանզի զթանձրամիտսն երևելի լինչ օրինակք առաւել յորդորեն, վասն այնորիկ զձեզ ի խորանս սրբոցն առաքեմ, ուր ոչն գոյ ամենևին տրամական լինչ, քանզի յերկինս հաստատեցին ըզտաղաւարս՝ ի բացէ ասի աշխատութեան կենացս, և զօրաժողով գումարեալ են ընդդէմ սատանայի, քակ առեալ ճակատեալ մարանչին ընդ նմա, վասն այնորիկ զխուզն չինեցին, զի ի քաղաքաց և ի տանց և ի հրապարակաց փախչիցին:

Ո՞ ոք ի բանակս զօրականացն անդս երկրի գնեսցէ, կամ նիւթս վաճառաց աղխաղխիցէ. չիք ոք չիք ուրեք: Զի՞ այդչափ ազօրիցիս վասն տեղւոյդ՝ զոր յետ սակաւ մի ժամանակի թողուլ հասանիցէ, յորժամ յաչխարհ(բ) երթայցեմք՝ զայդ անդ արասջիր, յորժամ ի մեր քաղաքն հասանիցէ երթալ, յայնժամ զայդ անդ կազմեսջիր: Թէզ աստ փոս լինչ սակաւ չուրջ հատանել բաւական է, և ձողիս կանգնել, և ի վերայ գլխոյդ սակաւ մի զհովանոցակն գործել, այլ շինուածոց և ոչ մի լինչ պետ են: Տե՛ս, զկա՛րդ վաչխուքն և սայլիւք Սկիւթացւոց աշխարհին

(ա) Թարգմանիչը յոյն բնագրին τοῦ ναοῦ (մատցն) բառը չփոթած կ'ենթադրի τοῦ ναοῦ (տաճարին) բառին հետ: — Խօսքին իմաստն է. երէ անոնց միտքին դուռները կարենաս բանալ:

(բ) Կամ ի գաւառ, «հայրենիք» նշանակութեամբ, ակնարկելով երկինքի. նոյն իմաստով է նաև՝ մեր (ըստ յուշին վերին) խաղաղն:

կեանքն վճարին, զկա՛րդ ըստ ճարակացն և եթէ փոփոխին. այսպիսի կեանս պարտ է կեալ քրիստոնէից: Զի՞ չինեացես ապարանս, ով այր դու, զի առաւել զանձն կապիցես. ընդէ՞ր ածիցես պարիսպ և կազմիցես անձամբ անձին բանդ:

Ե՛կ երթիցուք յայն տաղաւարս [Սրբոցն], զի և արդեամբք իսկ ուսանիցիս զդիւրութիւնս: Ուրախ և եթէ չինիցեն, և եթէ չուեն, որպէս զօրականքն ի խաղաղութեան զբանակս թողուցուն և գնայցեն, քանզի այնպէս բանակեալ են: Ցանկալի իսկ տեսիլ է տեսանել զանապատն լի վանականօք, վարկպարապի խորանօք, խիտ առ խիտ, թեւ ի թեւ հարեալ, բան զզօրականացն բանակի(գ), ուր սրահակք ձգիցին, և զտէգս և զդ'զարդունս կանգնեացեն, զբնիկ գեղարդանցն զաղեղնակապարճս կախիցեն, պղնձապատ զգլուխն առնիցեն, և մեծապայծառ լոյս կմբեայք վահանացն փայլիցեն, և [զօրք] կողինաւորք և զրահապատք չողայցեն, թագաւորին սպաս առնիցեն ի դաշտի ուրեք, ի հարթ և յողորկ վայրի, և ճաչք զճաչս մղիցեն, և ընթրիք զրնթրեօք անցանիցեն(դ), գուսանք երգիցեն, փողարք զձայն փողոցն նուագիցեն, սակայն և այնպէս չէցէ գեղեցիկ տեսիլն բան զայն՝ զորմէ այժմ ես պատմեմ:

Եթէ երթիցուք յանապատն՝ տեսանեմք զՔրիստոսի զօրականացն զխորանն, ոչ սրահակս ձգեալս տեսանեմք անդ, ոչ ծողիւնս(տ) գեղարդանց, և ոչ խորանս ոսկեզօծս արքունիս, այլ այնպիսի լինչ, եթէ ոք յերկրի առաւել և անչափ երկայնագոյն այնպիսի լինչ, եթէ ոք յերկրի առաւել և անչափ երկայնագոյն ա՛յլ երկիր գործէր, և ի վերոյ բազում երկինս ձգէր, ո՛չ ապաքէն նոր իմն և չքնաղ տեսիլ ցուցանէր, նոյնպէս և անդ է տեսանել: Չէ լինչ ընդհատ յերկնից բնակութիւնն նոցա, և պարառեալ չրջիցին ի մէջ նոցա գունդք հրեշտակաց:

ՈՍԿԵՐԲԱՆ, Մեկնութիւն Մատթէի
Ճառ ԿԹ.

(գ) Հոս ըստ բնագրին պէտք է հասկնալ՝ է տեսանել տեսիլ ցանկալի... քան [զտեսիլ] զօրականացն բանակի:

(դ) Անցանել բայը զոմ գործնական բառի հետ երբեմն կը նշանակէ ֆէթալանցել: Իսկ անցանել (զօրինօք, զհրամանաւ, ևայլն) իր յատուկ նշանակութիւնն ունի:

(տ) Կը թուի թէ պէտք է կարդալ ձողուիս, «բունս» նշանակութեամբ, վասնզի յոյն բառը (αἰχμή) նոյն է երկուքին համար ալ:

2

ԱՐԺԱՆ Է ՓՈԽԱԼ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ԱՅԼՈՑ

Ճարակաւոր, խոպակեր (անասուն)
Գառագիղ, վանդակ (ֆալանէ)
Դուլ եւ պատուհար, ֆայր, ջահ
Մեծութիւն, հարստութիւն
Դնել զանձն (ի վերայ ուրուք),
Հեն, առաջակ [անյանձնել (ինչ-ու մը)
Ճանապարհ գործել, ճամբորդել
Արիւն(f), արիւնհեղութիւն
Համեմաս, հաւասար
Ի բուռն անկանիլ, յեհ էյնալ
Ընդհաս, պատերազմ
Ցեղիւ, յաղթդներ
Ցայն սակս, այն պատճառաւ
Ընտելութիւն, հրեղմութիւն
Խառնել (բարեկամութիւն), (բարեկամութիւն) հաստատել
Զովողութիւն, ընկերութիւն
Գերդաստան, ձառանեքու խումբ
Փողոց, չրջապատ, բակ (պոռնէ)
Անխուլ=զանխուլ, ֆաղդնէ, ձայ
Շաղել, կապել, կաշկանդել [ձոկ
Զգուշութիւն գործել, հոկել

Զամենայն ինչ գիւրին համարեսցուք վասն եղբարց փըրկութեան, զի այնպէս կարեւոր են ոգիք՝ Աստուծոյ: Ի բանալ դրացն առաւօտու, յորժամ ի տանէ արտաքս ելանիցեմք, զայն և եթէ գիցուք ի մարմ — և ամենեցուն գուլ և պատուէրը լիցի — զնեղեալս ապրեցուցանել ի նեղութենէ: Նաև վաճառականն՝ զի յաճախիցէ զփեծութիւնն՝ ընդ ծով ճանապարհ գործէ, և ձեռաքն գէտն՝ զի յինչսն յաւելուցու՝ ազգի ազգի հնարս հնարի: Այսուհետև մի՛ զմեր փրկութիւնն միայն բաւական համարեսցուք, ապա թէ ոչ՝ և զայն ևս ապականեմք. քանզի ի ճակատն և ի պատերազմունս՝ զինուորն որ անձինն և եթէ ուշ ունիցի ապրեցուցանելոյ[1], և զայլսն ընդ իւր կորուս(անի)ցէ(ա). իսկ առաքինին, յորժամ ի վերայ այլոց զանձն ևս դնիցէ՝ հանդերձ այլովքն և ինքն ապրի:

Եւ քանզի մեծ պատերազմ առաջի կայ՝ և ևս սաստիկ ևս զամենայն պատերազմունս և ճակատս և կռիւս, որպէս և թագաւորն մեր ետ հրաման. ա՛յնպէս ճակատեսցուք ի պատերազմի, կոտրածս և սպանութիւնս և արիւնս գործեսցուք. ուշ եդեալ հայեսցուք յամենեցունց փրկութիւնն՝ որք կայցեն[ն]՝ նոցա խրախոյս տալ[2], և անկելոցն ձեռնտու լիցուք և յարուսցուք: Ցայն սակս իսկ տկարացաք և մատնեցաք ի պարտութիւն, զի չպատշաճեմք վիմեանց[3] և չամրացաք սիրովն, այլ զայլ իմն սիրոյ պատճառս խնդրեմք անձանց, ոմանք զազգականութեանն և ոմանք զընդելութեանն, այլք զովողութեանն[4] և ոմանք զգրացեացն, մինչ զի ամենայն ուստեք եմք միմեանց բարեկամք և ոչ յաստուածպաշտութենէ՝ ուստի պարտ էր խառնել զբարեկամութիւնն: Եւ արդ աւասիկ նորին հակառակն լինի, ընդ հրեայս և ընդ հեթանոսս խառնեմք զբարեկամութիւն և ոչ ընդ եկեղեցւոյ մանկունս:

Այնպէս լինչ առնեմք, որպէս (զի) թէ գառն ոք տեսանիցէ խախտեալ և գորմն թիւրեալս, և թողուցու չինել գառնն, եւ չուրջ զնովաւ՝ արտաքոյ՝ փողոցս մեծամեծս կազմիցէ, եւ կամ թէ՝ մարմնոյ ախտացելոյ գարման ոչ տանիցի, և հանդերձս ոսկեհուռս կազմիցէ նմա, կամ թէ յորժամ տանտիկինն յախտ կայցէ՝ և նա խնամ ոչ տանիցի, և նաժիշտս և ոստայնի գործի և այլ լինչ կահ ի տունն առնիցէ(բ), զնա անտես արարեալ յախտին ծիւրեալ: Նոյնպէս իմն և այժմ լինիցի, ոգիք յախտի կան թշուառացեալ, հարեալ ցասմամբ և բամբասանօք և անպատեհ

(1) Այսինքն՝ ուշ ունիցի ապրեցուցանելոյ զանձն. — երբ ներգործական բայի մը անուղղայթը սեռական հոլով ըլլայ՝ իր սեռի խնդիրն ալ սեռական կը դրուի, ինչպէս է հոս: — Օրինակներ. վասն կարճելոյ չարեացն (=զչարիս). Աւրաբ սկիզբն չինելոյ եկեղեցեաց (=զկեղեցիս). ծամանակ այգեաց յատանելոյ (=զայգիս). ձանապարհի գնալոյ նշանակ է (զճանապարհ):

(ա) Ոսկեբերանի թարգմանիչը շատ յաճախ կը գործածէ բայերու ասորագասական եղանակը՝ սահմանական և ապառնի ժամանակներու տեղ, ինչպէս կը տեսնուի:

(2) Բային անուղղայթը կրնայ առանձին գործածուիլ, այսինքն՝ առանց առ կամ ի և կամ առ ի նախադրութիւններուն, որոնք համաձայն կամ որպէս չէ նշանակութիւնը կուտան անոր. — Հոս տալ=(ի տալ, առ ի տալ, առ ի տալոյ):

(3) Պատշպանել. նորգ. բայը՝ պատշաճ կենալի նշանակութեամբ՝ իր խընդիրը տրականով կ'առնէ ընդհանրապէս. օր. Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ, փիլոկ. ըսելու «Պաշտպանեաց զիսրայէլ՝ զծառայ իւր»:

(4) Փիլոկ. «զզովողութեանն». — զ ով և յ ով սկզբնաւորուած բառերու առջև զ և յ նախդիրները երբեմն զանց կ'ըլլուին, թէև քերականօրէն չարդարանար այդ վերչումը:

(բ) Թերևս՝ խունիցէ:

ցանկութեամբք և անապարծութեամբք, աղմկեալ և ընդ գետին քարշեալ և յանչափ գազանաց պէշ պէշ պատառեալ, զնա թողեալ գերծուցանել ի չարեացն և մեք տանց և ծառայից հոգամք։

Եթէ գազան (ալ) ի գառագղացն գերծանիցի, զտանց դբունս փակեմք և ընդ անխուլ տեղիս ի ներքս աճապարեմք՝ զի մի՛ ի բուռն գազանին անկանիցիմք. և արդ՝ ահաւադիկ ոչ միայն գազան, այլ բազում խորհուրդք այնպիսիք զոփին պէշ պէշ պատառեն, և չզամք։ Եւ քաղաքի այնչափ զգուշութիւն գործեմք՝ ի թափուր տեղւոջ և ի գառագեղ արգելուլ(3) զգազանն, ոչ ի խորհրդա՛ւանաց բաղաքին տուն մօս(ք), և ոչ յատենից տեղիս հուպ և ոչ յարքունիսն վերձ, այլ ի բացէ ուրեք և ի հեռի [ուրեք] կապեալս պահեմք, իսկ ի մասին ոգւոց(ը)՝ տես զի և յարքունիսն և յատենից տեղիսն արձակեմք զչար գազանն, ի միտսն իսկ և չուրջ զարքունական աթոռոյն՝ գոչել և աղմկել, վասն այնորիկ ամենայն ինչ վեր ի վայր հարեալ կործանեցաւ, և ամենեքին լի խռովութեամբ ի ներքոյ և արտաքոյ. չէ ընդհատ իւրաքանչիւր ոք ի մէնջ ի քաղաքէ որ չարշաւանաց հինի խռովիցի, և այնպիսի ինչ լինիցի, զոր օրինակ օձ ի բոյն հաւուց ձագուց դիմեսցէ, և ճնճղուկքն զբունիւք(է) ճիչ առեալ խռովեալ չածիցին և չգտանիցեն ինչ՝ որով զտագնապն փարատիցեն։

Այլ զամենայնն՝ ընչիցն ցանկութիւն կործանեաց ընկէց, և զԱստուծոյ երկիւղն ի բաց մերժեաց. իբրև զբռնաւոր ոք որ զամուր քաղաքն (քնքդա+աղա+) առնուցու, ա՛յնպէս զոփիս մարդկան գրաւեաց։ Վասն որոյ և զորդւոց և զնեռմ փրկութենէն անտես առնեմք, և այնմ և եթ ուշ ունիմք՝ թէ զի՛ւրդ ընչաւէտք լիցուք և այլոց թողուցումք զմեծութիւնն, և նոքա գարձեալ այլոց, և նոցա յետինք՝ իւրեանց յետնոց։

Իբրև յուզարկիչք ընչիցն մերոց և ստացուածոց մերոց եմք, և ոչ տեարք. և անտի քան զծառայսն և անարգագոյնք

(3) Ուշ դիր սոյն գասի 2 կանոնին. նկատի առ նաև քիչ վերջը՝ գոչել և աղմկել աներևոյթներըը։

(ք) Կարդա՛ Ոչ մօտ ի գրունս խորհրդականաց քաղաքին։ — Նկատի առ մօս, հուպ, վերձ հոմանիշներու կիրարկութիւնը։

(ը) Կ'աւելցնենք ըստ յունին, ինչպէս կը պահանջէ խօսքին համատեքստութիւնը։

(է) Բոյն և բուն բառերու հոլովումներուն կ'արժէ մտադիր ըլլալ, իրարու հետ չշփոթելու համար։

են ազատքն, քանզի ծառայից՝ թէպէտ և ոչ վասն նոցա՝ այլ վասն մեր աստեմք, իսկ ազատքն և յայնմ եւս խնամակալութեան չվայելեն։), այլ քան զնոսա եւս վատթարագոյնք են։ Եւ զի՞նչ ասեմ՝ թէ քան զծառայսն, նա և քան զճարակաւորսն անարգագոյնք են որդիքն։ Իչոց և ձիոց առաւել խնամ ունիմք՝ fան որդւոց, և եթէ ջորի ուրուք ի մեջ իցէ՝ այնմ աւելի դարման տանիմք, որպէս[զի]է) զիշավարն պիտանացու խնդրեմք գտանել, և ոչ զատահակ ոք և գող և արբեցող եւ տխմար(4) արուեստին։ Թէ ի մանկան յոգւոց ալագս(ը) ոստիկան պարտ է կացուցանել՝ զդոյզն ոք և զվայրապար հաճիմք դաստիարակ կացուցանել, թէպէտև քան զայն արուեստ մեծ չկայցէ, քանզի չէ ինչ այնմ համեմատ՝ թէ ոք զոփի մարդկան վարժիցէ և զմիտսն վերստին ստեղծանիցէ։ Այլ մեք չառնեմք ինչ զայնմանէ փոյթ, այլ ի մին և եթ հայիմք՝ զի լեզուն սրբիցի, բերանն չդկիցի՝ և զայն գարձեալ վասն ընչից [առնեմք], ո՛չ զի խօսել կարիցէ, այլ զի ինչս մարթիցի ժողովել. և եթէ առանց այնր մարթ էր մեծանալ, և այնմ եւս ոչ ինչ ունէաք փոյթ յանձին։ Տեսանե՞ս որչափ ինչ է ընչիցն բռնաւորութիւն, զի՛ւրդ զամենայն ինչ գրաւեաց, և իբրև զգերդաստան և զխաչինս չաղեաց, և ձգէ տանի յո՛ և կամի. Այլ զի՛նչ չահ յայսչափ մեղադրութեանց մեզ գործիցի. եթէ լինիցի ինչ լաւութիւն՝ չահեսցուք և մեք և դուք, իսկ եթէ տակաւին ի նոյնս կայցէք, ի վեջ կուսե(5) ամենայն ինչ ի գլուխ ել։

ՆՈՅՆ. Մեկն. Մասր. Ճառ Ը Թ.

(ղ) Պէտք է ուշ դնել խնդրառութեանը վայելել բային, որուն՝ իբրև ներգործական բայի՝ հայցական խնդիր տրուած է յետնագոյն գրողներու կողմէ։

(ը) Կը նշանակէ՝ այնպէս ոք, ինչպէս ունի յոյն բնագիրը (ὥστε).— Հոս «զիշավար»ին առաջին վանկի զին պատճառ եղած է որ զի չաղկապը մոռցուի՝ անուշադիր գրչութեան հետևանքով։

(4) Աստնք ալ հայցական են ինչպէս ստանակը. եթէ ոբը վերջիններուն վրայ ալ կրկնուէր հարկ կ'ըլլար գրել՝ զդող ոբ կամ տխմար զոբ, ևայլն։

(ը) Կարդա՛ յաղագս ոգւոց մանկան։

(5) Կամ՝ ի մեմէ կուսե։ Իբրև. նախադրութիւն գործածուելով կոյս և կողմն բառերը՝ իրենց հոլովին համաձայն կ'առնեն իրենց խնդիրները. զոր օր. յինէն կողմանէ, ի էն կուսէ, յարեւելս կոյս, յարեւմտից կուսէ, ի թիկունս կոյս, ևայլն։ Կ'ըսուի նաև սեռական խնդիրով ի մեր կոյս է, ի ձեր կողմն է, ևայլն։

3

ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ ՅԻՍՈՒՍԻ

Բանիմ, բաց-ել (բանալէ կբա-
Անվկանդ, անքնաբել (-օրականը)
Ցնցուղ (լսելեաց), (ականջին)
Ի ձիգ արկանել, երկնչել/-ուցեալը

Համբակ, աշխէտ, անփորձ
Պարապ, յարմար ապէն մը, ժամու
Ցանգ, վէրք
Աղեգանիմ, ասպիսի ձեռնարկել

Տառապելոյ ազգին ի յայց յայնժամ գայր
Այր մի, թէ պարտ իցէ կոչել ըզնա այր,
Որ երևեալ յանկեան ուրեք ի խոնարհ՝
Սաստէ բնութեան աստուածապէս տիրաբար։
Բանին անլոյս բիւրք ի նորին ի բարբառ,
Ակնախարխուլ զմայլեալք յարփին ի պայծառ.
Նիգք ի սաստ նորա բեկուին անվըկանդ՝
Արկեալ խափան ի լըսելեաց ցնցուղս անդ,
Լուծեալ հաւերն ի կապանաց համարձակ
Շուրթն՝ ըզլուծիչն օրհնաբանէ ժիր ի ճուագ(1).
Հէքն որ ըզգօս էարկ զանգամս իւր ի ձիգ
Հլուսս ի ձայն նորա գտանէ զայնոսիկ(2).
Որ ի ցաւոց կայր ի մահիճս անդ անյոյս
Ըզթախծելոց սրբէ զորդւոցն արտասուս.
Ինքն խակ ի սաստ նորին զահի հարեալ(3) մահ
Եւ ըզդ աւարն առեալ ոչ ևս է վրսատահ...։
Ի մեզ ևեթ հրաշագործէ, մեզ ևեթ

(1) Սովորաբար ածականը գոյականէն առաջ անցած ատեն՝ անոր նախդիրը ինքն ալ կ'առնէ. բայց պէտք է գիտնալ որ քերթողական լեզուի մէջ իբրև գործիական կիրարկուած իով հայցականին նախդիրը կրնայ չկրկնուիլ ածականին վրայ։

(2) Ձիշել ներգործական բայի մը սեռի խնդիրին և ստորոգելիին համաձայնութիւնը։

(3) Հարկանել կամ Զարկանել բայի հետ գործածուած զահի, զխարի, զամօթի, զգեցնի բառերը զ նախդիրով սեռական կը նկատուին մեր քերականները, բայց նայելով անոնցմէ վերջիններուն՝ աւելի ուղիղ կը թուի զով վերջանալով տրական ճանչնալ զանոնք, վասն զի չըսուիր հարկանել զամօթոյ կամ զարկանել զգեցնոյ՝ իրենց սեռական հոլովներուն համաձայն։

Ըզզօրութիւն իւր ցուցանէ փրկաւէտ.
Բառնայ ըզցաւս ի մէնջ և զախտս ի բացէ,
Եւ զմեզ անդրէն դարձեալ ի լոյս վերածէ(4).
Ամենակալ բազկի նորին զօրութիւն
Առհաւատչեայ աստուածայնոյ է սիրոյն։

Սըրտին զնաւաւ զխմեալ ի լուր(5) ամբոխ հոծ.
Ինքն ի ծանուցմ անտի սասփիցըն խրոց
Ոչ ամոթէ աչառանօք ինչ(5), ի փոյթ
Ըզհետեւողացն ողոքելոյ ըզպայրոյթ.
Զուր և ընդվայր է քըրթմնջել հակառակ,
Հարկ պատգամաց նորին ի գոլ հըպատակ։
Չէ նըմա փոյթ թէ ոք ըզնա լըքանէ.
Մատչի համբակ ոմն և հայցէ ի նմանէ՝
Հրաժեշտ բնաւից տրտեալ՝ գրնալ նըմա գիեց(6),
Սակայն պարապ խնդրէ վայրիկ մի և եթ,
Մինչև հողոյ երթեալ ըզհայր իւր տացէ։
Իսկ նա, Այժմէն իսկ ե՛կ ըզհետ իմ, ասէ,
Եւ մեռելոց թո՛ղ ըզմեռեալսըս թաղել։
Հա՛պա, թողցուք, մի՛ ինչ լիցի մեզ արգել,
Թողցուք ըզբնաւս, և զհետ նորա գնասցուք մեք.
Այլ չէք գըլխոյ նորին(բ) գադար չի՛ք ուրեք։

Օրէնըսդրի այսպիսւոյ զի՞նչ լիցի յանդ.
Այն զոր Պղատոն առաքինւոյն գուժէ վտանգ(7),

(4) Փոխանակ «առ ի լսելի»։ Բայանուն բառը կամ բային արմատը՝ իբրև ընդունելութիւն կը գործածուի ընդհանրապէս սեռական խնդիրով, երբեմն ալ առանց խնդիրի. կ'ըսենք՝ ի լուր (բանիցն) = լսել (զբանս). ի ճնին (իբացն)= ի քննել (զիրս)։

(5) Իմն, ինչ (մը) երբեմն իբրև աւելորդ ղարդ կը գործածուին գոյականներու քով, բայց բայի խնդիր եղած ատեն՝ քան մը կը նշանակեն։ Հոս ինչը սեռի խնդիր է ամօթէ բային։

(6) Ամբողջ տողը սեռի խնդիրն է հայցէ բային։

(բ) Ձիշել նա էն յետոյ նոյնին գործածութեան սովորութիւնը։

(7) Եթէ կարդանք «վտանգն այն զոր Պղատոն գուժէ», այն ատեն յարաբերականը իր յարաբերեալէն առաջ գրուած կ'ըլլայ, իսկ եթէ հասկընանք՝ Այն (վախճանը) զոր Պղատոն կը գուժէ ընդ վտանգ, այս վերջինը ստորոգելին կ'ըլլայ ենթակային։

«Ընդ երեւել իւրում[8], ասէ, ի յերկիր,
«Բարձցի յերկրէ հալածական տարագիր,
«Աղեգանեալ և ընդ արիւն թաթաւեալ,
«Բազկատարած ի փայտ մահու բեւեռեալ[ը]։
«Ախաղաղութի՛ւն ծածկեալ ի խորըս սրտի,
«Առհասարակեայ անմեղութեան մահացուի,
«Դո՛ւ միայն դո՛ւ լինիս նըմա ի մահուն
«Մրախոյս՝ ընդդէմ վըշտացըն կալ աննըկուն»։

Լըցան ահա պատգամքն, արդարըն գենաւ,
Դըղըրդեցաւ երկիր, եհաս վաղ համբաւ.
Թըռեան քարոզք ընդ տիեզերս անվհեր,
Ի լուր ազգաց գայն և ազանց հռչակել[ը],
Եւ ընդ համայն երկիր բարբառ նոցին ել։

Թրգմ. Հ. Ե. ՀԻՒՐՄԻՒԶ

---

(8) Ցիշե՛լ աներեւոյթներու հետ ստացական ածականներու իրբև դերանուն գործածութիւնը. զոր օր. ի գալ իմում (= իմ), յելանել ձերում (= ձեր), յաղագակել հում (= քո), և այլն։

(ը) Մեր հին Տաղաչափութեան մէջ՝ անցեալ ընդունելութիւնները իրբև դիմաւոր բայ կը գործածուին առհասարակ։

(ը) Հոս ի լուրը կը նշանակէ՝ զի լուիցեն [ազգք եւ ազիւք]։— «լսել» բայը դրկի ընել իմաստով գործածուող բային արմատն ըլլալով՝ սոյն Դասին (4) մէջ յիշուած «ի լուր» բայանունին հանգամանքը չունի։ Նկատի ունենալ երկուքին առոյգները և իրենց խնդրառութեան տարբերութիւնը։

4

ՆԿԱՐԱԳԻՐ ԱՐԾԱԹԱՍԻՐԻ

Առնիւիք, առնուղներ
Վաւաիմ, ղինուել
Կերպարանել, նկարագրել
Խոխոմք, յորանջք (ունկն հնչեղ
Պաղպաջուն, փայլուն [կ'անցնի
Ընդխառնիմ, խառնել, ընդունել
Մարդկաբար (ած.) մարդկային
Հատանել (հուր, բոց), արձակուիլ
Գետ գետ պատառել, դիակի մը պես
Տագնապիմ, դողալ [բղխիլ
Ցողալ, որուն վրայ յարձակիլ
Առնիմ, ելլալ [դիմադրել
Զանգնեի կարծել, վրան առնելի
Ձղնմիլ, ձգձգել՝ ափսոս ելլալ [ը)
Դամպիւս լինել, փոնել, յեղուխ
Գլուխ, դրամագլուխ [բերել

Գրեալքիր՝ թէ լցեի ոք մարդ՝ որոյ հուր յաչացն արձակիցի, թուխ, չարատես, և փոխանակ երկուց ձեռացն՝ երկու վիշապք յուսոցն արձակեալ կախիցին, և ի բերանն փոխանակ ատամանց սուսերք կանգնիցին. և փոխանակ լեզուին՝ թունից և սպանող դեղոց աղբիւրս բխիցէ, և [որոյ] որովայն՝ բաւ զամենայն ճնոց՝ որ ինչ ի ներքս արկանիցի առագագոյն ծախիցէ, և ոտքն թեւաւորք (և) քան զամենայն բոց բորբոքեալ սաստկագոյն, և դէմք [նորա] չան և գայլոյ, և մարդկաբար(ա) ինչ բարբառ ընդ բերանն չհանիցէ, այլ և չարաճաճն և չախորժելի, և ի ձեռաց անտի հուր և բոց հատանիցի։

Թերևս ահագին ձեզ բաւիցէ բուիցի[1], այլ ոչ եւս արժանի[բ] կերպարանեցաք, ի սոյնս և այլ ինչ պարտ է յաւելուլ, զի զամենեցունց խակ՝ զկիսոց զմարմինս ուտիցէ, և զկէսս գէշ գէշ պատառեալ ցրուիցէ։ Այլ քան զայնպիսին չար գժնդակագոյն է արծաթասէրն. զամենեքումբք յածեալ չըլլի, իբրև զդժոխս՝ զբոլորս կլանէ, հասարակաց թշնամի է, սահեալ յողայ զամենայն ազգաւ մարդկաւ[գ]։ Զկամի թէ մարդ ուրեք գտանիւ-

---

(ա) Իբրև ածական գործածուած։

(1) Ցոգնակի տէրբայինին բայը եզակի կը գրուի երբեմն, եթէ բայը չէզոք կամ կրաւորական ըլլայ, և ենթական ալ իրբև հաւաքական բառ մը կիմբարկուի։

(բ) կարգա՛՝ ոչ ըստ արժանի։

(գ) Երբեմն յատկացուցիչը հոլովով կը համաձայնի իր բացառական (= կամ գործիական յատկացեալին հետ՝ զոր օր. կ'ըսուի՝ յերեսաց երկրէ(= երկրի). յորդւոց ի մարդկանէ (= մարդկան). ձայնիւ երգով (= երգոյ)։

ցի, քանզի զամենայն ախորժէ ունել, նաև յայնմ ևս չկայ (ոչ զկայ առնու), այլ յորժամ զամենայն եղծանէ ցանկութեամբ, ապա և զերկրին՝ ևս զբնութիւնս ապականել տենչայ, քանզի ոսկի փափաքէ տեսանել զաս, և ոչ միայն զերկիրս՝ այլ և զլերինս և զխոխոմս և զաղբիւրս և առհասարակ զամենայն իսկ երևելիս։ Եւ զի ուսանիցէք՝ թէ չև ևս զմոլորութիւն այնպիսւոյն յանդիման կացուցաք — բայց մի ոք մեղադիր լիցի եւ մի՛ տագնապեալ՝ զանձնէ և եթ կարծիցէ —. ի բա՛ց առ առ ժամանակ մի զահ օրինաց, և տեսանիցես զայնպիսիս սուբ առեալ և ընդ ամենեսեան ընդխառնեալ և ոչ ումեք խնայեալ(3), ոչ բարեկամի և ոչ ազգականի, ոչ եղբօր և ոչ հօրն որ ծնաւ զնա։ Մանաւանդ զի և ոչ առակի(ֆ) պէտք են ասա, այլ ցնա իսկ հարցցուք՝ թէ ո՞չ ցանգ այնպիսի հոգք գայցեն զմտաւ՝ գործել շուրջ զամենեցուն(ֆ), կոտորել մօտք և զազգականս և ըզբարեկամս և զծնողս իսկ զլխովքն։ Եւ ոչ առակաց (է) լինչ պէտք լիցեն, քանզի ամենեքեան իսկ զիտեն՝ [զի] որ յայնպիսի ցաւս ծնգիցին, և ընդ հօր ծերութիւնն տագտան. և որ[ինչ] ամենեցուն ցանկալի և քաղցր է՝ [որգիս ունել]՝ և ընդ որդւոցն եւս թախծին(ֈ), և բեռն համարին զնոսա։ Մի այսուհետև զարմանայցէք ընդ այն՝ թէ զարծաթասէրն այսպէս կերպարանեցի. զի և ես չար քան զոր ասացաք է։ Եթէ ուսանիցես ստոյգ զարծաթսիրութիւնն, լինես չահելոյ առաւել հակառակ է։ Բազումք բազում անգամ վասն մեծամեծ տոկոսեաց փոխ տալ կամեցան առ յուսոյ(ֈ) չահից, և չքննեցին զառնլիսն, և հանդերձ տոկոսեօքն և

(ֈ) Եբրեեն անցեալ ընդունելութիւնները՝ նման խօսքերու մէջ իրրև ստորոգելիներ ըլլալով հանդերձ՝ դիմաւոր բայի ալ դերը կը կատարեն ... զի սուբ առնու, ընդխառնի, ոչ խնայէ։

(ֆ) Ենթադրութիւն՝ ըստ յունին։

(ֆ) Այս խօսքը իմաստ չունի. թարգմանիչը յոյն բնագրին ի վերայ հասանել նշանակող բայը չվոխած կ'երևի գործել բային հետ. պէտք է կարդալ «յածել շուրջ զամենեքումբք»։

(է) Հարցումն՝ ըստ յունին։

(ֈ) Կիրք ցուցնող բայերու ընդով խնդրառութիւնը որոշ կանոն մըն է.— Զարտուղութիւն մըն է յոգնակի տրականով գնել բառը, ինչպես է հոս. պէտք էր ընդ որդիսն ըլլար բային խնդիրը։

(ֈ) Առ նախադրութիւնը տրականով կը նշանակէ համար. զոր օր. առ ահի, առ ամօթոյ, առ չարութեան, և այլն։

ի գլխոց իսկ ամենևին անկան։ Դարձեալ այլք ի վիշտս հասեալ՝ չկամեցան սակաւ մի ինչ ծախել, և զանձինս ևս հանդերձ ընչիւքն կորուսին։ Դարձեալ՝ կամ զպատիւս չահաւորս, կամ այլ ինչ ի նոյնպիսեաց գնել ճղճմիցին, և զամենայն կորուսին։

ՈՍԿԵՐԵՐԱՆ, անդ, ճառ ԻԸ.

*

«Ընդէ՞ր առնիցես ծառայ գիսաւուն ոգիդ՝ անիսու նիւթոյն, մօրն ամենայն չարեաց։ Եթէ անզգայուն նիւթոյն չառնիմք գերիվերոյ անմարմին զօրութեանցն գի՞րդ գամագիւտ լինիցիմք։ Եթէ զդոյդն հոգն չարհամարհեմք և զքարինան ընկեցեալս, գի՞րդ գիշխանութիւնս և գպետութիւնս ինազանդեսցուք(ֈ), կամ ո՞րպէս ցածութեամբն վառեսցուք. եթէ արծաթ պազպաջուն քայքայէ զմեզ, ե՞րբ զգեզ երեսաց կարասցուք քամահել։ Քանզի ա՛յնպէս իսկ ոմանք կապեալ են ընդ այն բռնութիւն, զի [ի] խրտղել ընդ գոյն ոսկւոյն, ասիցեն՝ եթէ և աչաց օգնէ պատկերաւգիր ոսկւոյն։ Այլ մի՛ խաղայցես գայնպիսի խաղս, ո՛վ այր դու, զի չիւք ինչ որ այնպէս վնասէ աչաց և մարմնոյ և ոգւոյ՝ իրրև զայն ցանկութիւն։

ՆՈՅՆ, անդ, ճառ Ծ.

(ֈ) փնկ. ընկլու՝ ինազանդեցուսցուք. — իմ լծորդութեամբ չէզոք բայերէն ոմանք երբեմն իրրև անցողական կը գործածուին, ներգործական կերպ ևմի փոխելով իրենց լծորդութիւնը. ըստ այմ՝ հնազանդիմը կ'ընլայ հնազանդեմ=հնազանդեցուցանեմ, յօժարիմը՝ յօժարեմ=յօժարեցուցանեմ. համարձակիմը՝ համարձակեմ=համարձակեցուցանեմ, և այլն։

5

ԱՋՆՈՒԱԳՈՅՆՆ ՅԱՐՈՒԵՍՏ Է ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

Բանիբուն, ճարտարախօս
Օդի, ից, ոգնական
Անկանել, հիւանդ
Ուղղութիւն, նպատակ
Նպաստ լինել, (ներգ.) նպաստ գալ
Բնիոն, լուծ [(չէզ.) ջնել
Կարս հարկանել, գոլեր կոբել
Դակու, կաչին
Մարեւորութիւն, գայտահատուած
Զրկելիք, ընդունել [ընդ-ն
Սայլ եւ կառուցս, կառնասայլեր
Օրան, որանեքս գերեզ
Կատարիմ, ջլուխ հանուիլ
Զիգ, կաշիէ լուսան

Եթէ արուեստին սեպհական իցէ ի պէտս լինել կատարել(ա), ապա յայտ է թէ քան զողորմածութիւնն չիք լինել պիտանացու: Զի և՛ արուեստ է և քան զամենայն արուեստս ազնուագոյն: Զի ոչ օգ ոմից գործէ մեզ, և ոչ հանդերձս անկանէ, և ոչ տունս կաւեղէնս չինէ, այլ զկեանս յաւիտենից առնէ, և ի մահու ձեռաց յափշտակէ, և այլ կեանս պայծառագոյնս ցուցանէ, եւ չինէ օթեվանս յերկինս և զյաւիտենից յարկսն հաստատէ, եւ լապտերաց մերոց չտայ չիջանել, եւ ոչ ազտեղի հանդերձիւք երևել ի հարսանիսն, այլ լուսանայ և քան զձիւն ապիտակագոյն(ս) գործիցէ: Նաև յիւրաքանչիւր իսկ երկրաւոր արուեստսն ուղղութիւնք լինչ պիտոյից կան. ի մշակութեանն՝ կեռակրեղն. և յոստայնանկութեան՝ զգեցուցանեղն(1): Մանաւանդ թէ և այն[ու] իսկ ոչ. քանզի՛ չէ մեզ բաւական այն՝ զոր յիւրմէ միայն նպաստ լինիցի: Եթէ կամիս՝ նախ զմշակութիւնն քննեսցուք: Եթէ ոչ ի դարբնութենէն ունիցի զբահն և զերկմանիկն, զխոփն, զգերանդի և զմանգաղ, զդակու և զուրագ, և զայլ լինչ բազում փոխ առեալ ի նմանէ, և ի հիւանդութենէ՝ արօր կազմել և լուծս յօրինել և սայլս և կամուրջս, զօրանն կրել և կասուլ, և ի փոխա-

(ա) Ոսկեդարեան լեզուի մէջ՝ ինչպէս ներգործական նոյնպէս եւ կրաւորական բայերու անեղեւոյթները եկ վերջաւորութեամբ են. իսկ ի գործածութիւնը վերջէն մուտ գտած է, չփոթութեան տեղի չտալու համար. «կատարել» = կատարիլ:

(1) Բայերու անեղեւոյթները իբրև գոյական կը գործածուին ընդհանրապէս, ինչպէս քիչ վերջը՝ կազմել, յօրինել, և այլն բառերը: — Տե՛ս եւ հետեւեալը (2)՝ իր կարգին:

հանուիլենէ՝ կարս հարկանել և ձիգս հիւսուլ, և ի չինողութենէ՝ եղանցն որ վարիցեն՝ եղնանոցս չինել, և մշակացն՝ որ զսերմանս հանիցեն՝ տունս, եւ ի մայրևորութենէ՝ փայտս հատանել(2), և ի հացարարութենէ. եթէ ոչ յամենայնէ առեալ՝ առանձինն ոչ կազմի: Նոյնպէս և ոստայնանկութիւնն՝ յորժամ գործէ՝ բազում այլ արուեստս կոչէ ընդ իւր նպաստ լինելոյ ի գործն որ առաջի կայ, և եթէ ոչ գայցեն և ձեռնտու լինիցին, և նա ըստ միւսումն կայ ի վարանս և ի տարակոյս: Եւ իւրաքանչիւր յարուեստից՝ այլոցն կարոտ է, իսկ յորժամ ողորմել պարտ է և ոչ իւիւ կարոտի[ւ,](3), բայց միայն կամաց:

Սպա թէ ասիցես՝ ընչից պետ են և տանց և օդից և ձորձոց, ընթերցիր զՊրիստոսի բանսն՝ զոր զայրուցն խօսեցաւ, և թէպետև կարի աղքատ իցես և ի մուրոդաց, և երկուս ընիոնս լուսմայից արկանիցես՝ զամենայն կատարեցեր. եւ եթէ ձոյլ ոսկւոյ չունիցիս, և զայն միայն (զլուսմայս) ունիցիս՝ ի գլուխ իսկ արուեստին հասեր: Այսպիսի հանճար կալցուք և գործեսցուք ուղղութիւնս, զի լաւ է զայն արուեստ գիտել, քան արքայ լինել և թագ ի գլուխ առնուլ:

Եթէ ոք առ ի յարգեանցն պահպանութիւն հնարս լինէ այնպիսի ուսուցանէր քեզ, զի՞նչ ոչ տայիր՝ թէ մարթ էր ի բազում ամս առանց վնասու պահել զցորեան: Իսկ նա աւանիկ զքեզ ոչ միայն ցորենոյն՝ այլ և ամենայնի խելամուտ առնէ, և թէ գիա՛րդ և լինչքա՛ն և ոգիդ և մարմինդ առանց վնասու ճնայցեն՝ ցուցանէ: Եւ զի՞ պիտոյ իցէ մանր զամենայն ուղղութիւնսն ասել զարուեստին, զի նա իսկ ուսուցանէ՝ թէ ա՛րդեօք լինիցիս նմանող Աստուծոյ՝ որ ամենայն բարութեանց գլուխ է:

Տեսանե՞ս զի ոչ մի միայն գործ է նորա, այլ բազում, և չէ կարոս այլում օգնականի. տունս չինէ, հանդերձս անկանէ, դանձս անծախս կազմէ, մանու գերիվերոյ(4) առնէ, Աստուծոյ

(2) Այս պարբերութեան մէջ գործածուած անեղեւոյթները սեռի խընդիր են ունիցի բային, իրենք ալ ունենալով իրենց որոշեալ կամ անորոշ սեռի խնդիրները:

(3) Կարոս ածականը թէ տրական և թէ գործիական հոլովով կ'առնէ իր խնդիրը:

(4) Փոխանակ ըսելու գերիվերոյ բան զգան... Բազդատական ածականի մը սեռական հոլովի խնդրառութիւնը՝ քիչ անգամ կ'երևի Ոսկեդարեան լեզուի մէջ:

նմանողս գործէ: Զի՞նչ լինչ այլ քան զայն արուեստ չահաւոր կայցէ, զի այլ արուեստքն՝ հանդերձ ասացելովքն՝ ընդ անցաւոր կենացս վախճանին, և ի խօթութեան արուեստագործացն՝ և ուրեք չերևին, և զգործս իւրեանց չկարեն ունել հաստատուն, և աշխատութեան կաros են և բազում ժամանակof և յաճախ պլովf իrof. իսկ նա, յորժամ աշխարհս անցանէ, յայնժամ առաւել երևի, և յորժամ մեռանիցիմք՝ յայնժամ սաստիկ ծագէ, և զգործեալ գործսն իւր միայն ցուցանէ: Ոչ ժամանակաւ և ոչ աշխատութեամբ և ոչ այլ իւիք այնպիսեօք կարօտ է, այլ մինչ խօթ լցես՝ գործէ, և ի ծերութեան չդադարէ, և ի հանդերձեալ կեանն ընդ քեզ ուղեկից լինի, և չթողու ուրեք զքեզ: Նաև քան զիմաստունս և զբանիբունն զօրագոյն կազմէ զքեզ: Նոքա ի մարգկան ատեան կան և չատագով զրկելոցն լինին, բազում անգամ իսկ զրկելեացն, և սա առաջի ատենին Քրիստոսի ոչ միայն չատագով լինի, այլ և զդատաւորն ևս ի հաւան ածէ լինելոյ չատագով այնմ որ դատիցին և զիրաւունս ի նա հանել(4):

Թէ աստէն հարցանիցեմք զմարգիկ՝ թէ զի՛նչ կամիցիք, իմա՞ատուն բազում լինել և բանիբուն, թէ ողորմածս և մարդասէրս· զերկրորդն լսեմք ամենեցուն ախորժել, և կարի իսկ յիրաւի: Ճարտարիսօսութիւնն թէ բառնայցի չիշատ լինչ աշխարհս, զի և յառաջ քան զայն կայր հաստատուն բազում ժամանակս, իսկ թէ զողորմելն բառնայցես՝ ամենայն վաստակքն կորնչին:

ՈՍՒ. Մեկն Մատթ. ճառ ԾԲ.

(4) Բայլ մը անհրեայերէն ուղղական կամ տրական ձևերով կը գրուի և դիմաւոր բայի մը խնդիր կ'ըլլայ:

6

ՄԵԾՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Բուն, բնիկ (աշխարհ) — Դեգերիմ, յաճախել, բանի մը հետ
Ընդխառնիմ, դառալ, խառնուիլ — Զուտառական, ընտտառական [ըլլալ
Յառնել, ելլել, երթալ — Անհաս, անհասանելի

Աստուած, յոր մարդն հաւատալ սրտի մըտօք հրամայէ,
Թէպէտ ծածկեալ է յաչաց, այլ չէ առանց վրկայի·
Շուրջ ընդնովաւ արդարև բազում վրկայք ժողովին,
Զի նորա իսկ են բոլորք և ի նմանէ և նովին:
Ասէ երկին, խօսի ծով· խօսեա՛ց և դու լինքն երկիր,
Ո՞ է հաստիչ քո և տէր, ընդնա ծանո՛ և երկի՛ր,
Կամ աղէ ո՞վ ետ զայն քոզ որպես հարսին՝ գիշերոյ(1),
Զոր չուրջ զիւրև արկանէ պայծառացեալ ի վերոյ:
Սոքա յայտնեն զարարիչն որում լինչ չի՛ք դժուարին,
Լուսոյն նորա ճառագայթք այսրէն յաչխարհ մեր վարին·
Ցանէ զաստեղս՝ որպես յանդրս մեր ըզմանըր փոչի,
Այլ լինքն անհասրն գեղով(2) յարարածոց որոշի:

Զարմանալիդ լուսաւոր, զոր Արուսեակըն բարեաւ
Այգուն այգուն աւետէ՝ զի սպասաւոր քեզ յարեաւ,
Ո՞յր հրամանաւ, արև դու, զաս երևեալ ի ծովէ,
Ջո ճառագայթ հասուցեալ զարգիւնըս մեր ժողովէ,

(1) Ինչպէս բան նախադրութիւնը՝ նոյնպէս և որպէսը իրրև չաղկապ կը գործածուի և նոյնահոլով երկու բառեր իրարու հետ կը կապէ իրրև բազդատութեան եղրեր: Ա՛յսպէս է նաև իբրեւ նախադրութիւնը. Օր. «իբրեւ փեսայի եդ ինձ պսակ». «Մի՛ խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս», և այլն:

(2) Փխնկ. ըսելու «անհաս գեղովն».— ցօղը՝ որ գոյականին միայն կը վերաբերի՝ կը գրուի երբեմն յառաջադաս ածականին վրայ: ցօղի այս տեղափոխութիւնը կը պատահի նաև՝ իբրև յատկացուցիչ եւ յատկացեալ, բացայայտիչ եւ բացայայտեալ, աներեւոյթ եւ խնդիր՝ իրարու հետ կապակցուած բառերու մէջ:— Իրենց պարզ ձեւին վերածէ հետեւեալ օրինակները. երագընթացն ծագմամբ. ի վերայ երկուցն եղբարց. — ցամենեցուն յարութենէ. նոցայն իմաստութիւն.— ցիսուսն անուն. ի Սինն անապատէ.— ի մեռելոցն յառնել. զմիսն ուտել, և այլն:

ՊԵՏ ԱՄՍ ԳՐԱԴԱՐԱՆ ГСС Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР

2092-87

Ֆոյոյ լուսոյդ կարօտեալք զօր ամենայն քեզ մընամք.
Երբեք ըզմեզ ոչ խաբեն դարմանական քո խընամք.
Մի՛թէ աճուռոցըդ ֆոյոց իցե՞մ վարիչ կառավար,
Կամ ե՞ս ըզքեզ կոչիցեմ զալ հալածել ըզխաւար։
Եւ դու որ ցանդ զայրագին հողմակոծեալ ի բացի՝
Կամիս սաստիւ կըլանել զերկիր որ քեզ է դրացի,
Ծով ահագին, ո՞ այդպէս կապեալ զալիս քո արգել՝
Որք ըզպատուէր հրամանին չիչխեն երբեք անարգել.
Դու վրէժխընդիր ես նոցա՝ որք չահ անձանց համարին
Զխրեանց ըզբուռնըն թողեալ երթալ յերկիր օտարին,
Որ ընդխառնեալ տան զանձինս համատարածըն տարեր.
Բազում անգամ դու զնոսին ահեղ ցասմամբ քով հարեր։
Ո՛հ չուառականք, այն լինչ մօտ հասեալք ի դուռըն մահուն՝
Տեսեալ զանձինս երերեալ և տատանեալ անկայուն՝
Ըզձեռս յերկինս ամբարձեալ, քանզի ի բնէ զայն ուսան,
Ի ձայն ողորմ արտասուաց երիտասարդ և կուսան
Աղաղակեն աղօթիւք առ օգնականըն վերին,
Զոր մոռացեալ էր նոցա, այժմ առ նմա դեգերին.
Ցայնպիսի վիշտս՝ դառնալ առ Աստուած մարդըն ջանայ
Ցորմէ այնպէս ընդ երկար մոլորեցոյց սատանայ։

Ազաս Թրգմ.

Հ. ՄԱՏԹԻԱ ԳԱՐԱԳԱՇ ՀՌԱԿԻՆՈՍ (Ռասին), Երգ վասն կրօնից Ա.

7

ՄԻ՛ ԻԻԻՔ ՀՊԱՐՏԱՆԱԼ

Ունել զանձն առ լաւս, առ ա-
ւազս, ընդվզիտը լաւ, ծեծի տեղ
Դրօշող, հանդակաբոծ [դնել
Երազահալուբիւն, դէրբամաբ-
Շառաւիղ, ոռ [ոռնիլն
Զող=ձողլ, ընձեռու (հասակ)
Զգել (գործիս), լաբել (գործիս)
Բազմահամուկ, խոպոռիկ բան-
Խորդ, կոռնդ [ոռած
Քրեական (ֆուրայ՝ բառէն), հան-
ցոյր, ֆէր [ի, բովի վէրաբերեալ
Անհամբոյր, դաժան
Ասպուճակ, պէսակ մը սոխակ (մը-
Ճարտարիկ, վարպետ [իւիկ?)
Խոզանիմ, խոշտանի պէս ցցուիլ
Խրձնաճալ, խոբչի պէս ըլլալ
Հարկանել (զճաճապարհ), ճամ-
Փոր, կարագ ընտելանը [բայ կորիլ
Ծանակ կալ, խաղ ըլլալ
Ի հանդիսի անցանել, հրապարակ
Անաւազ, փկար, սպորէն [գալ, մղիլ
Պահուռեել, ընդդարձիլ

Մի՛ ունիր զանձն առ լաւս, զի յայլոց մեծարիցիս. որ անձամբ զանձն վերացուցանէ՝ յայլոց չվերանայ, եւ որ անձամբ զանձն խոնարհեցուցանէ՝ յայլոց վերանայ։ Մեծ չարութիւն է հպարտութիւն։ Լաւ է մորոսանալ քան հպարտանալ։

Աղէ ասա, ի մարմինս իսկ զո՞ր (1) ասիցեմք առողջս. ըզյո՞յսն եւ զուռուցեալսն եւ զչքդողեալսն՝ թէ զնըբաւարսան եւ զկազմն և զձողն՝ որոց հարթ և ամփոփ իցէ տարրն։ Թէ այդպէս իցէ, և յոգիս ուռուցեալն՝ և՛ս չար յախտի է քան զչքդողեալն, եւ հեղն ազատ յամենայն ախտէ։ Հարկ է այսպիսւոյն (հպարտացելոյն) թշնամանիչ լինել և հարկանող և բարկացող և դառն և անհամբոյր, գազան մանաւանդ և ոչ մարդ։

Ուժգին իցես, և յո՞յն սակս մեծամտիցես. [այլ] առիւծ գազանագոյն քան զքեզ է և վարազ ուժգնագոյն, և իբրև զմժիկս մի ես առ նոքօք, և աւազակք և գերեզմանակրկիտք զօրագոյնք են քան զքեզ ... այն գովութեա՞ն լինչ արժանի իցէ։ Զկայցե՞ս

(1) Ո՞ր հարցականը ընդհանրապէս եզակի կը գործածուի, և առանց յօդի. հոս սաորոգելիին յոգնակի ձևը ինքնին կը յայտնէ ո՞րին իբրեւ յոգնակի գործածուած ըլլալը։

ծանակ այնպիսի լինչ իրօք մեծամտել(²)։ Այլ թերևս գեղեցիկ իցես և բարենշան ոք. և այն աղջկանց նազանի են(³). բայց սակայն քան զսիրամարդ գեղեցիկ չիցես, և ո՛չ այնպէս ծաղկալից համապայծառ թևս ունիցիս իբրև զայն թռչուն, որ վարսիւքն եւ գիսակօքն խրճնացեալ՝ խոզանեալ, և կարակնեալ բազմաճամուկ ssնովկն(ա) յաղթէ քեզ գեղեցկութեամբ։ Նաև փորն կարի իսկ գեղեցիկ է, և այլք ևս բազումք ի թռչնոց, ընդ որս թէ կամիցիս անցանել ի հանդիսի՝ ոչինչ ամենևին տեսանիցես զանձն։

Եւ թերևս զի մեծատո՞ւն իցես՝ հպարտանայցես. [այլ] ուստի՞ իցէ զոր ունիսն և կամ զինչ ունիցիս, ոսկի, արծաթ եւ ականս պատուականս... այն և աւազակաց և սպանողաց պարծանի են, եւ ոսկեհանաց եւ որք (=որոց) ի քրէական մեռաղան խոնջիցին. և այն պարծա՞նք լինչ իցեն [քեզ]։ Թերևս զարդո՞ւք լինչ և պաճուճանօք հպարտանայցես. զայն եւ ի ձիսն է տեսանել։ Պարսիկք և զչառաւունան ևս նկարեն և պաճուճեն. չամանե՞ս, չէրջի՞ս այնպիսի իրօք հպարտանալ՝ որով և անասունքն հանգոյն քեզ լինիցին՝ և ծառայք և սպանողք և աւազակք եւ գերեզմանակրկիտք։ Այլ ի տո՞ւնս լինչ գեղեցիկս պարծիցիս. քաղցրագոյն թռչունք ևս ի գեղեցիկ տունս բնակեն, մանաւանդ ճայք ևս առաւել պայծառագոյն քան զքո տունսն ունին բնակութիւնս։ Այլ թերևս ձայնի՞ս լինչ հպարտանայցես. քան զվուրն եւ զսոխակ և զասպուճակ չկարիցես երբեք ձայն լինչ քաղցր և հեշտական մրմնջել։ Այլ թերևս պէսպէս արուեստի՞ք. եւ ո՞վ ոք յայնմ վերուսօք զճարտարկօք անցանիցէ։ Ո՞ր դրօշող, ո՞ր նըկարիչ, ո՞ր գեհնաչափ գտանիցի քան զնոսա իմաստուն՝ որ կարիցէ ճարտարութեան մեղուաց նմանել։ Այլ թերևս բարո՞ք լինչ հանդերձիւք. այնու սարդք իսկ անցանեն զանցանեն զքե(բ)։

(²) Հոս անելևոյթը՝ խնդիրն ըլլալով բային՝ զրուած է իր պարզ ձևովը, փխնկ. ըսելու «մեծամտելով կամ մեծամտեալ ». — Տես քիչ յետոյ՝ «չամաչե՞ս... հպարտանալ» խօսքը։

(³) Ենթական եզակի ըլլալով՝ էական բայը յոգնակի կը դրուի, երբ առարկելին անեզական բառ մը ըլլայ. օրինակներ. Երկիրս երկինք են. — Ձարմանք են այս —. Պատուէրն այն կեանք են, ևայլն։

(ա) Տտուն, տտնոյ = տուտն, տտան։ Ասոր նման իրենց կրկնակ ձևերովը կը կիրարկուին կառակն=կառկին, տարփ=տռփի, կիրճ=կարիճ բառերը։

(բ) Ջ նախդիրին աստակացուցիչ հանգամանքը կը տեսնուի ինչ ինչ բայերու վրայ, որոնք երբեմն միասին ալ կը գործածուին. օր. յարդարեմ, զարդարեմ. կծեմ, գկծեմ. եղծանեմ, զեղծանեմ. հեղուլ, զեղուլ, ևայլն։

Այլ թերևս ոտի՞ց արագութեամբ. և այնու ևս անասունք գիեն, մանաւանդ նապաստակքն և այծեմունք։ Այլ թերևս ի տա՞ր աշխարհ լինչ երթալով. և այնու թռչունքն անցանեն զքե, մանաւանդ խորդք և ծիծառունք՝ որ գիւրաւ հարկանեն զտարաշխարհական ճանապարհս. ոչ պաշար բառնան և ոչ գրաստու կաթոտանան, այլ ընդ ամենայնի բաւական են նոցա թևքն։ Իսկ առողջութեամբ և երագահալութեամբ յոյժ իսկ առաւել են քան զմեզ անասունքն։ Այլ է լինչ բազում՝ որով ոչ հաղորդին ընդ մեզ անասունքն. զի՞նչ իցէ. աստուածապաշտութեամբ և վարուք առաքինութեան։ Տեղի տացեն մեզ աստ անասունքն։ Զգաստանամք, և այնո՛ չեն լինչ նոքա հաղորդք ամենևին. քան զնոսա անաւազ եմք, եւ տիրեմք նոցա. գործիս եւ թակարդս ձգեմք նոցա եւ այնու ըմբռնեմք, յանկուցանեմք, ի համբոյր ածեմք, զի ուսանիցիս զի որ արարն զքեզ Աստուած՝ զբանն չնորհեաց քեզ։

Եւ արդ լմացեալ զի և քան զանասունս ևս վատթարագոյնք եմք առանց առաքինութեան, ի նա (=յայն) կրթեսցուք, ի նոյն թևակոխեսցուք, զի լինիցիմք մարդիկ, մանաւանդ թէ հրեշտակք իսկ։

ՈՍԿ. Մեկն. Թղթոյն առ Փիլիպպեցիս, ճառ Ի.

8

ՊՕՂՈՍ ԵՒ ՆԵՐՈՎՆ

Ագաթիմ, բնչբրը անցընել, պահել
Արտաֆիճիֆ, ոչ-բրնապանեանը (նմա-
պոհնեը, ենբրուղնեը)
Խառաճ, վնչի լսան
Կարի իմն, լափալանց
Խաղտալուր, խժալսբ (խաղրեաց
լեղսն ալնարկնելով ընդբմանչին կող-
Ցանգ (=յանկ), մծ, ընդանի [ծե
Ի միչի ե (ընդ... ընդ...), պարբեբ-
բսնն-ն կայ (երկու բանեբու մչըլ)
Զբափել (ի բեռանոյ), բեբդնեն
Ո՞ղպիսի ինչ. ի՞նչպես. [նյբել
Պաշտօճ, պաշտելսնն
Սինկղիտոս, Ծնբակոյս, «խորհրդա-
կան» ըստ ընդբմանչին
Երեսք, անյ, պեմ
Սպասք, չինաղարդ
Նժուգաւոր, յիսաոր, հեձեձել
Սուտակասպասուբիւճ, ղաղմոբ
Ողոքանիճ, ֆաղաքացի [նաընի
Խոռւանդիչ, հին ղմենբ կարկող
Ձոխսուբիւճ, հեղինակնանի
Խղուրտիւճ, շընկոց, շփոր յոյն
Տգեղծ, պճեղ, պեհեղծ

Զիւք փառաւորել յերկրի. և եթէ փառաւորել կամիցիս, զի-տասջիր զի յանարգութեանն են փառք: Եւ արդ բե՛ր ի մէջ, յերկուս երեսս քննեսցուք [զայն], ի Ներոնէն և ի Պաւղոսէ (1): Նա զփառս աչխարհիս ունէր, և սա զանարգութիւնն: Ո՞րպիսի ինչ. նա իշխան էր և բուռն, և բազում պատերազմունս հարեալ եւ բազում յաղթութիւնս արարեալ. մեծութիւն յամենայն կողմանց եռայր. զօրք անչափ [էին նորա]. զմեծ մասն աչխարհն հնազանդեալ ունէր ընդ իւրեաւ, եւ զարքունական քաղաքն ընդ իշխանութեամբ. զինկղիտոսն զամենայն նուաճեալ՝ որք խորհրդականքն կոչին. զամենայն օրէնս թագաւորութեան մեծաւ փառօք(2): Եւ բազում սպասուք ելանէր և մտանէր, յոսկի և յարկանս պատուականս համակէր. եւ ի խաղաղութեան ծիրանեօք և թագաւ պայծառանայր. բազում սպասաւորս, բազում օժանդակս և սպասիկս, նժուգաւորս և նժոյգս զինի և առատ յօրինէր: Ծովու եւ ցամաքի տէր անուանէր. ինքնակալ աւգոստոս, կայսր եւ թագաւոր կոչէր, եւ այլ ևս բազում անուամբք անուանէր, որչափ ինչ ի սուտակասպասութեան ողոքանայ հնարիցին անուանս գտանել. և չէր ինչ ամենևին պակաս ի փառաց: Այլ և խմաստուն, զօրաւորք և թագաւորք դողային և սարսէին ի նմանէ. և ա՛յնպէս, ասեն, (թէ) կարի լիմն անօրէն եւ բուռն անագորոյն էր՝ մինչ զի եւ աստուած ևս կամէր անուանել. և զամենայն զղիս և զկուռս արհամարհէր, նաև զամենեցուն իսկ Աստուած, և իբրև զաստուած ոք պաշտօն խնդրէր:

Ածեալ [այցուսցուք հանդէպ նմա, թէ կամիք, զՊաւղոս, զայր մի կիւլիկեցի ի կիւլիկեցւոց աչխարհէն. և որչափ ինչ ընդ կիւլիկիա եւ ընդ Հռոմ ի միջի է՝ զայն ամենեքեան գիտեն: Այր մի կարուսակ, խրուանդիչ կարկատիչ, աղքատ, տնանկ, տխմար տգէտ յարտաճնոցն իմաստութենէ (3). զհեթրայեցի զխաղտալուր լեզուն միայն գիտէր՝ որ յամենեցունց պարսաւի և բոլորեցունց գարչելի և խղուրըտիւն թուի,— և մանաւանդ Իտալիացւոց՝ որք ոչ այնչափ զբարբարոսաց և զելլադացւոց և զայլոցն ամենեցունց լեզուս աղարտեն որպէս զաստրւոց կոկորդակիր(*) խղուրըտիւնն, քանզի յայն լիմն կարի յանգ է եբրայեցին. զի թէ զելլադացւոցն զպերճաբանն [լեզու] սեթևեթեալ այնչափ պարսաւեն [Իտալիացիք], ո՛րչափ ևս առաւել զՀեբրայեցւոցն և զԱսորւոցն—: Այր մի որ բազում անգամ սովամահ լինէր, եւ նօթի և անտուաղ ագանէր. այր մի մերկ և բոկ, և ոչ կապերտ անգամ զուսովքն գտանէր արկանել, ի քաղց և ի ծարաւ և ի մերկութեան մաչեալ. եւ ոչ այսչափ միայն, այլ եւ բանտարկեալ ընդ աւազակս և ընդ կախարդս և ընդ գերեզմանակրկիտս և ընդ մարդասպանս՝ նորին իսկ հրամանաւ իբրև զչարագործ մի տանջէր: Եւ արդ ո՞ փառաւորագոյն և պայծառ իցէ. զի զնորա եւ ոչ զանուն անգամ գիտեն բազումք. ըզսա Ցոյնք և բարբարոսք և Սկիւթացիք և ամենայն իսկ ծագք տիեզերաց ցանգ եւ հանապազ չթափեն ի բերանոյ:

---

(1) Փխնկ. ըսելու՝ յերեսս Ներոնէի և յերեսս Պաւղոսի.— Ցիչել՝ լռելեայն իմացուած յատկացեալի մը յօդին դրուելը իր յատկացուցիչին վրայ:

(2) Անեզական բառերուն՝ երբ եզակի նչանակութեամբ կը գործածուին՝ եզակի ածական կը տրուի. օրինակներ. այսու կենօք. իւրով կամօք. հասին այնմ աւետեաց՝ որում ցանկացեալն էին. աւա՛զ փառացս անցաւորի, և այլն:

(3) Կրնայ ըսուիլ նաև՝ «տգէտ արտաճնոցն իմաստութեան»: — Բացատական մասնիկով կազմուած բայարմատ ածականները ինչպէս են «տգէտ, անտես, անփորձ, և այլն, թէ՛ տրական և թէ բացառական հոլով խընդիր կ'առնեն՝ ըստ յարմարութեան:

(*) Այլուր «կոկորդակեր»: Ուղղելի՝ «կոկորդակերկեր» (կոկորդը պարողը). հմմտ. «կերկերեցաւ կոկորդ իմ առ աղաղակել իմում»:

Եւ ոչ ինչ զայժմուս՝ այլ զայնժամուն (1) իսկ քննեսցուք. ո՞ր պայծառագոյն և փառաւոր էր, կապեա՞լն՝ որ չղթայիւք իբրեւ խառնաւ ձգէր ի բանտէն՝ թէ որ գծիրանին զգենոյր և թագաւն և սպասաւորօք յարքունեացն խաղայր ելանէր: Ո՞չ ապաքէն կապեալն և կալանաւոր: Զի նա զօրօք հանդերձ և պէսպէս վայելչութեամբ նստէր յատենի յաթոռ թագաւորութեան, և զոր ինչ կամէր՝ չկարէր վճարել, և կապեալն կալանաւոր, որ իբրև զչարագործ մի կայր առաջի, տգեղծն կերպարանօք(2), ճոխութեամբ և իշխանութեամբ գործէր զինչ [և] կամէր: Ո՞րպէս և որո՞վ օրինակաւ. զի նա ասէր՝ Մի՛ սերմաներ զբանն աստուածպաշտութեան, և նա ասէր՝ Զանազամ, չառնում յանձն, զի Ոչ եթէ բանն Աստուծոյ կապեալ կայցէ: Եւ անզոսնէր արհամարհէր կիւլիկեցին խորանակար՝ կալանաւոր կապեալ՝ և սովամահ եւ աղքատ՝ զհռովմայեցին, զմեծատունն, զթագաւորն որ ամենեցուն իշխէր, որ բիւրոցն բիւրապատիկ պարգեւս բաշխէր, որ այնչափ զօրաց իշխէր և չկարէր ինչ վճարել: Եւ արդ ո՞ պայծառագոյն և փառաւոր էր. որ կապանօքն յաղթէր, թէ՝ որ ծիրանեօքն ի պարտութիւն մատնէր: — Եւ արդ՝ աղէ ասա, յորմէ՞ կողմանէ պարտութիւն մատնէր: — Եւ արդ՝ աղէ ասա, յորմէ՞ կողմանէ կամէիր լինել. ի Պաւղո՞սի թէ ի Ներոնէ: Եթէ հարթ ոք լսանայցէ, ի Պաւղոսի կողմանէ: Եթէ յաղթելն քան զպարտելն լաւագոյն իցէ՝ ապա նա իսկ փառաւոր է: Դարձեալ ասեմ զնոյն և չդադարիմ ի նոյն ասելոյ(3). Չղթայքն արքունական պսակին յաղթեցին, եւ գձուձ կերպարանքն պայծառագոյն քան զպայծառն գտանէին:

ՆՈՅՆ, Մեկն. Ր. Տիմոթ. Ճառ Դ.

(1) Այժմու և այնժամու ածական բառերը գոյականաբար գործածուած են հոս, և ա և ն յօդերն ալ ներկայի և անցեալի հանգամանքը կը ձեւացնեն: Պէտք է թարգմանել. ոչ թէ այժմեան՝ այլ այն ժամանակուան իրողութիւնները ինենք:

(2) Տես էջ 17 կ. 2:

(3) Պիտի ըսուէր՝ «ի զնոյն ասելոյ», բայց սովորական չէ:— երբ բացառական անեղեւոյթին սեռի խնդիրը առաջ անցնի՝ անորոշ հայցականով կը դրուի. Օր. «Ոչ դադարես յապիրատան խօսելոյ, յաւելորդն քննելոյ». փխնկ. ըսելու. . . . ի խօսելոյ զապիրատան, ի քննելոյ զաւելորդն: Այսպէս նաև՝ «ի չաբաթն լուծանել» (= ի լուծանել զչաբաթն), և այլն:

9

ԸՆԴԴԷՄ ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ

Կտղիմ, կաղկէլ (ցանկութենէ)
Ցածուքիւն, համեստութիւն
Փրփռեցուցանել, կորսնցնել, ջնջել
Վարատել, ցրուել
Սիկ, մրուր, ցեխ
Ալիս ածել, հալչիլը ծերմկցնել
Փանս, (ֆր.), ձանգակոտ
Ցարեան առնել, արհամարհել
Տուռն տուռն, կոնակ կոնակ (մանր ուսկիներ)
Ունելիք, բռնուելիք [ընչք]
Պարուրել (շուրջ), եղբ-էն կորցնելը
Իրանուքիւ, ոճով [յատկութիւն
Զգուշանալ, ուշ դնել, հոգ տանիլ
Ոսնատուքիւն, ոտից ցաւ, ապրուստ
Նղտիւր, լրբութիւն ջնջուն [ոճ
Կտտել, չորչորել, ծակծկելել

Ոչ միայն յորում աւուր արբենասն՝ կրես զվնաս արբեցութեանն, այլ և յետ այնր աւուր, և որպէս ի սարսուռ ի ջերմանեն(1) մնացեալ տենդն ապականիչ է, նոյնպէս և յարբեցութենէն մնացեալ թմբիրն (արբեցութեան) ուժէ զոգիս և զմարմինս. եւ հէք և թշուառական մարմինն դնի լուծեալ իբրև զնաւակիկ ինչ յալեաց ծըփանաց. իսկ որ և քան զնա հիւքագոյն հոգիս, ի նորա լուծանելն անկանելն(2)՝ զմրրիկն գրգռէ եւ զցանկութիւնն բորբոքէ. և յորժամ համարի զգաստանալ՝ յայնժամ առաւել մոլի և կողմ. գինի և կարասս եւ թակոյկս ըղձանայ: Եւ զոր օրինակ ի ցածնուլ մրրկացն՝ մնայ վնաս մրրկին, նոյնպէս եւ աստ գրեթէ ամենայն բարութեանցն վատնութիւն լինիցի, եթէ ցածութիւն իցէ և եթէ խմաստութիւն և եթէ հեզութիւն և եթէ խոնարհութիւն՝ զամենայն վարատէ ընկենու յանօրէնութեան ծովն արբեցութիւնն: Այլ որ ինչ առյապայն լինելոց իցէ չէ՛ ինչ այսմ նման, զի անդ յետ ընկեցիկ զբեռինն առնելոյ՝ թեթեւանայ նաւն, և աստ ևս քան զևս ծանրանայ, զի փոխանակ մեծութեանն ընդունի զաւազ և զչուր աղի, և բնաւ իսկ զսիկ արբեցութեանն.

(1) Իմա՝ ի սարսուռ ջերմանն: Համմ. էջ 11 կ. 2:

(2) Փոխանակ ըսելու՝ « ի լուծանել անկանելն նորա ». — Անեղեւոյթին ի նախդիրը կը դնէ, երբ իրմէ առաջ նոյն նախդիրով խնդիր մը ունենայ. օր. ի ճանապարհ անկանել նոցա, և մօտ ի քաղաքն լինել = յանկանել նոցա ի ճանապարհ և ի լինել մօտ ի քաղաքն. — ի քուն լինել մարդկան = ի լինել մարդկան ի քուն, և այլն:

միանգամայն ընկղմէ զամենայն որ ի նաւին իցեն, և՛ զնաւորդսն և՛ զնաւապետն և՛ զնաւն։

Եւ ոչ այնչափ միայն չարիք են, այլ և ա՛յլ ևս դժնդակագոյն տանջանս կրեն [արբեցողքն]. տրամաբանիլն անհանճարս, մոլ(որ)ութիւն, ծաղր կալ, նախատ լինել։ Եւ արդ որո՞ւմ ներելոյ (բ) արժանի լինիցին՝ որ ընդ այնպիսի չարեօք արկանեն զանձինս. չի՛ք և ոչ մի ինչ [թողութիւն]։

ՈՍԿ. Մեկն. Մասր., ճառ Ծէ.

*

Չէ բաւական յառողջութիւն զնետն միայն հանել, այլ եւ [պարտ է] վիրին դեղ դնել։ Փափկացո՛ր զառաջին ժամանակն. պահեա, և ջրով ևեթ վճարեա զպէտսն, զի զժանսն՝ որ անտի եմուտ՝ հանիցես ի բաց։ Պարուրեսցուք այսուհետև չուրջ զմեզսըն(գ), և զկենաւարարն չափոյ դեղ(դ) արբցուք, և զգուշասցումք(ե) հաւաստեաւ աղօթից։

ՆՈՅՆ, անդ, ճառ ժ.

* *

Զտեսանե՞ս և զմարմնոյ իսկ զաչս. յորժամ հանապազ ընդ ծուխ գայցեն՝ արտօսր բերեն. եւ յորժամ ի խաղաղ օդս եւ ի մարգս և յաղբիւրս և ի դրախտս զբօսնուցուն՝ առողջագոյնք և քաջատեսք [լինին]։ Նոյնպէս և մտացն ակն եթէ յեղուիւրս հոգևոր բանիցն ճարակիցի՝ սուրբ յատակ և քաջատես լինի. իսկ եթէ ընդ ծուխ ինչ աշխարհի իրացս գայցէ՝ բժաբեր արտօսրալից լինիցի, և զազգի ազգի լալիւնս լացցէ։

ՆՈՅՆ, Մեկն. Մասր. ճառ Բ.

(բ) Ցաճախ կ'ըսուի նաև ներել թողութեան, երկու համանիշ բառերու սովորաբար միասին գործածութեամբը. օրինակներ. Շահ օգտի. Մարտ պատերազմի. Շտապ տագնապի, և այլն։

(գ) Ըստ յունին, զանչափութիւնն։ — ἀμετρία բառը ἁμαρτία կարդացած է թարգմանիչը։

(դ) կարդա՝ զկենաւարարն դեղ չափոյ (ζωοποιὸν φάρμακον)։

(ե) կան բայեր որոնց իմաստը կը փոխուի՝ իրենց խնդրառութեան համաձայն. ըստ այսմ «զգուշանալ» որ. խնդիրով կը նշանակէ ուշադիր ըլլալ, հոգ պահել. իսկ բացառականով ընտրել. «Շրջուիմ բանասիրական զգուշացական գիտութեան» կը նշանակէ՝ փնտռտուքները պէտք է հոգ պահէն գիտնականի։ Նոյնպէս «վտարել» բայը իով հայց. խնդրով կամ տրականով կը նշանակէ ջրէն դուրս հանել (յինճն կամ ի՛ւր վտարել), իսկ բացառականով՝ ջրժնել, արտաքսել (վտարել յինճենէ կամ յիւրմէ)։

*

* *

Քան զփուշ և՛ս կտաւ փափկութիւնն, և մաշեն հոգք զհոգիս, և անհնարին ցաւս ածեն մարմնոյ և հոգւոյ։ Բայց ո՛չ այնչափ ի հոգոցն խոցին՝ որչափ յագեցութենէն։ Ծորժամ քունն յաչացն հատանիցի և իրանուցիմն(զ) ընդոստ ընդոստ խաղայցեն, և գլխոյն թմբրութիւն և աղեացն ցաւք ստիպեն զայնպիսին, քան զո՛րչափ փուշս չիցեն դժնդակագոյնք։ Որպէս՝ զփուշն ուստի՛ և ունիցի ոք՝ յարեան առնեն զձեռս ունելեացն, նոյնպէս և բարեկեցութիւնն զոտս և զգլուխս և զաչս և զամենայն անդամանս առ հասարակ ապականէ, և գօս և անպտուղ առնէ, և և՛ս չարքան զփուշս կտաւ, եւ տարաժամ ալիս ածէ, և խնու զգայունն, և կուրացուցանէ զաչս մտաց քաջատեսիկս, և զմարմինն բոյն վշասուց առնէ, և տուռն տուռն(է)՝ բլուրս առ բլուրս զանդամս մարմնոյն քրքռեցուցանէ, և մեծ և անչափ ծանրութիւնս ոսկերաց կուտէ, ուստի բազում և ստէպ ստէպ ոտնառութիւնք և յաճախ նաւակոծութիւնք լինին։

ՈՍԿ. Մեկն. Մասր. ճառ ԽԴ.

(զ) Հին հայերէնի մէջ քանի մը եզակի բառեր՝ յոգնակիի մէջ կը փոխեն իրենց նշանակութիւնը. Ա՛յսպէս են ակն (աչք), ունկն (ականջ), ուլն (ճիպ) բառերը, որոնց յոգնակիները տարբեր իմաստով կը գործածուին. ակունք (ջուրի աիր կամ աղիք ցաւեր), ունկունք (ամանի կռնիներ), ուլունք (ճիպոտ նախուանելի քաներ). այս կարգէն է նաև իրան (մարմին) բառը՝ որուն յոգնակին իրանունքը կը նշանակէ ցուն։

(է) Տուռն բառին հետ ծագումով նոյն է տուռն (τόμος) բառը. և հաւանաբար լտ. torus էն կուգան երկուքն ալ։

10

ԳՈՒՂԻՍ ՊԱՏՄԷ ՉԵՐԱՋ ԻՒՐ

Անդամաթիւ(f), բաժնուած անձ
Զրնել, բղխել [դուռնէր
Շոշեալ, չայչայուած, փրած
Զանցուցանել, ջերմաղանջել
Գալ ի համբոյր, հաշտուիլ
Ապօռպել, չափշտակել
Ի միտս լինել, խելքը գլուխը գալ
Երախակալ, սուրբն կրնը
Անհափեսf, ապրուիլ, վախ
Անկանիլ ի սիրs, դուն էդնալ
Ճեմելիf, չալուած
Շաղիղ, հոմ մը

Ի պահու խաւարակուռ խոր գիշերոյն արհաւրաց
Մ՚այրն իմ Յեզաբել եկն եկաց լինձ յանդիման...
«Դազաղի՛ր, ասէ առ իս, արժանաւոր լինձ դուստր իմ,
Անողորմն Աստուած Հրէից զանցուցանէ և ըզքեզ.
Ցաւէ՛ լինձ, զի անկանիս, դուստր իմ, յահեղ ձեռս նորա»:
Ի վախճան զարհուրելի սոցին բանից՝ թըւեցաւ
Թէ ուրուն իւր ի կողմըն կորացաւ անկողնոցս,
Եւ ես թևըս ձըգէի փարել զիւրև գիրկ ընդ գիրկ,
Բայց ո՛չ այլ ինչ գըտի բայց քսմնելի խառնակոյտ
Ոսկրոտուոյ, չոչեալ չազդոց ընդ սիզմ ընդ գեռ թաւալեալ,
Գարշելի անգամաթիւս, ձրձեալ պատառս արիւնուռչտ,
Զոր լափէզ չընեբան ապշոպէին ի միմեանց...
Ի սա՛ն իսկ ի չըփոթ՝ աչաց իմոց երևի
Մանո՛ւկ մի մատաղ ի պատմուճան լուսերանգ՝
Որպիսի եբրայեցւոցըն քահանայք ըզգենուն:
Տեսի՛ւ իւր զարթնոյց ըզնուաղեալ ոգիս իմ.
Իսկ իբրև ի միտս եղեալ ի մահաբեր աղմըկէս՝
Պըշնուի՛ նդ հեզ և ազնիւ պարկեշտագեղ երեսս իւր,
Ըզգացի յեղակարծումն արիւնաբբուռ պողոպատ՝
Զոր նենգողն եհար մըխեաց ցերախակալն ի կշտիս...:
Ոտնջ ուրեմն յոտոց գլխս խուճապէին արհաւիրք(1)՝

(1) Այսինքն «յարհաւրաց որ խուճապէին գլխս»: Յարաբերականը՝ առաջ անցնելու սահն՝ յարաբերեալին հոլովը կ՚առնէ, եւ յարաբերեալն ալ յարաբերականիը՝ փոխադարձաբար: Օրինակներ. Ապստամբութիւն ազատացանես որոց ի հեթանոսս ամենայն Հրէից որք...). Զորս գլխոն կռոնսոի և Աբրամազդայ պատմութիւնք իցեն՝ ամաչեմ ասել, (=... ասել զպատմութիւնսն որք...), և այլն:

Առ Բահաղ զնայի յաղերս՝ զի հակեսցէ ի կեանս իմ,
Եւ առ ոտըս բաղնաց նորա խնդրել լինձ հանդիստ:
Զի՞նչ մըտաց մահկանացուաց ոչ գործիցեն ահափետք:
Ի տաճա՛ր այսըր Հրէից մըղեաց ազգուսն իմըն գլխս,
Եւ անկաւ լինձ ի սիրտ զԱստուած նոցին առնել հաշտ.
Ընծայիւք ցածուցանել համարեցայ զցասուսն իւր,
Թէ Աստուա՛ծն այն, զի՛նչ և է, գայցէ նոքիմբք ի համբոյր:
Մըտանեմ. ժողովուրդըն փախչի, զոհն առնու դուլ.
Քահանայն մեծ յիս գիմէ սրամըտութեամբ մոլեգին:
Մինչդեռ լինքն առ իս խօսէր, ո՛վ հիացումն, ո՛վ երկիւղ,
Տեսի գնոյն լինքըն մանուկ՝ որ ըսպառնայր լինձ մահու,
Որպիսի ահեղ աւուրջին ի միտս ըզնոյն ներկարեաց:
Տեսի գնա, նոյն կերպարանք, նոյն և հանդերձ կըտաւի,
Ձեմելիք ոտիցն և աչք, նըկարագիր համօրէն,
Նոյն նա է: Զոյգ առ մեծի քահանային ընթանայր.
Բայց խոզոյն անհետ ըզնա յաչաց իմոց արարին:

ՌԱՍԻՆ, Գոթողիա, Հանդէս Բ. Տեսլ Ե.

11

ՎԱՌՈՒՄՆ ՀՐՈՅ ՅԵԿԵՂԵՑԻՈՑ ՕՐԻՆԱԿԱՒ ՀՐԴԵՀԻ

Ամենածախ, ամէն բան այրող՝ ապա-
Սապաս, արկղ [տող
Հարկանել (հրոյ՝ զտանէ, զփայ-
տից), բռնկիլը փան, ֆայթըռան
Ժտել, չանդգնիլ
Ձեպել ընդ անձին, անչէն հա-
Գայտել պատկիլ [մար էրար անդնիլ
Հապ, դիչեր, շտապով
Եղագ=աղագ, անցք, ծամբայ
Կանառանոց, հաստատուելու տեղ
Խոտարբուն (խուն), ձանր (ւոան)
Վրէպ (գոյ.), վնաս
Տալ (բոցոյ՝ ի ծխնուածն), (բոցին)
Աւր, մաղձ [ղարնելը՝ մտելը շրնչելն
Կօշարայ, շինշ (անուշ խոզ)
Զերծանիմ, ղերծ կամ ղարկ ձեռ
Ի վսեր գալ, վտանգը ալ առնել
Ախաւեղագիս, խոյակներուն վը-
Ջամբ, կէր, ծարակ [րևի մասը
Ցանկարծ ուրեմն, պատահաբար

[Զ]իցէ՞ [քո] տեսեալ, յորժամ հրդեհ զմեծամեծ տանց հարկանիցի՝ զի՛րդ ցոլանայ բոցն, եւ ծուխն անդր յերկինս կցի.

և չիք որ ժոմ մատչել և զչարն չիջուցանել, այլ ամենայն ոք ընդ անձին ճեպն և զիւրն միայն դիտէ. և հրդեհն ոչ մեղմով՝ այլ սաստիկ զամենայն ճարակեսցի. և բազում անգամ ամենայն քաղաքն չուրջ կայցէ եւ տեառ աւեթ չարեացն լինիցին, և ոչ զօրավիգն և օգնականք: Եւ անդ լոյծ տեսանել զի ոչ ինչ օգուտն լինիցին որ չուրջն կայցեն, այլ իւրաքանչիւր ոք զձեռս ձգիցեն և նոցա որ առժամայն լոցեն եկեալ՝ զտեղի լմն ցուցանիցեն, կամ ընդ պատուհանս զբոցն ցոլացեալ, կամ զգերանսն որ հա՛պ կիսայրեաց անկանիցին, կամ ողջոյն իսկ զփողոցսն՝ որ միանգամայն ի սեանցն և ի մուխից զերծանիցին և յերկիր կործանիցին: Իցեն թերևս և բազում յանդգնեալք և ի վսեր եկեալք՝ որ և մօտ իսկ ժոխցին ի հրդեհ չինուածոյն հասանել, ոչ զի ձեռն տայցեն և զչարն չիջուցանիցեն, այլ զի ցանկալի լմն զտեսիլն համարիցին՝ յորժամ ի մօտոյն ստոյգ կարիցեն նչմարել, որոց՝ մինչ ի բացեայն կայլն՝ չերևէր այնպէս: Եւ եթէ զեղեցիկ ևս և մեծամեծ չինուածքն իցեն, զայն համարին եղուկ և ողորմ և բազում արտասուաց արժանի: Նա և է իսկ ողորմ տեսիլ. քանզի սիւնքն հանդերձ ախաւեղագէս խոյակօքն մանրիցին և ի յատակսըն կործանիցին. և իցէ լինչ բազում զոր լինքեանք բեկտիցեն. կէսն ի հրոյն այրեսցի, և զկէսն չինողացն ձեռքն մղիցեն ընկենուցուն, զի մի՛ ևս քան զևս սաստիկ ջամբ հրոյն լինիցի: Անդ լոյծ տեսանել և զբազում պատկերսն զոր[1] ազգի ազգի նըկարուք քանդակեալ դրօշեալ, յորժամ ձեղունքն բանայցեն(*) և մերկ յարկացն լինիցին, բազում անչքուխեամբ մերկացեալ խանձատեալ ճեաւակ կացցեն. եւ զազգի ազգի զհանդերձսն եւ զոսկեղէն և զարծաթեղէն անօթսն՝ զոր յանկարծ ուրեք տանուտէրն հանդերձ իւրով միայն ամուսնովին տեսանէր, սապատ հանդերձիցն եւ խնկոցն կօշարայք[2] ի մարմարակուռ սենեակսն յերփներին կճէից դրուագացն. ամենայն միանգամայն ի միոյ հրոյն գռեհիկ կաճառանոց լինիցի: Եւ հասանէ տեսանել այնուհետև աղբակիրս, որթաւորս, թիաւորս, զամենեսեան խառն եւ անհարց ի ներքս մտեալ: Եւ այլ ինչ ոչ լոյծ անդ տեսանել՝ բայց միայն ջուր և հուր և կաւ և մոխիր և զփայտսն թերայրեացս...

Արդարև իբրև զհրդեհ լմն կամ իբրև զբարկութիւն ինչ ի վերուստ եկեալ եմուտ ի յարկս եկեղեցւոյ [սնապարծութիւն], եւ չիք ոք որ ընդոստչի. այլ տունն հայրենի այրի, և մեք անցեալ գայթեմք խորարթուն քնով, յանզգայս յանհոգս յապահովս[3]: ... Եկեղեցի այլ ինչ ոչ է, այլ մերոց ոգւոցս չինուած. այլ ո՞ դառն արտասուք. զի զայն ամենայն բորբոքեաց այրեաց սնապարծութեանն բռնութիւն՝ ամենածախ բոցն, և կամք ամենեքեան ընդ բոցն պչուցեալք, եւ չիք ոք որ զչարիսն չիջուցանել կարիցէ: Թէպէտև չիջուցանեմք առ սակաւ մի ժամանակ, այլ յետ երկուց և երից աւուրց, իբրև յաճեան կայծակն ծնացեալ, զարձեալ բորբոքի և զառաջին վրէժսն գործէ: Նոյնպիսի ինչ և աստ լինի՝ որ և ի չինուածոցն հրայրեացս սովորութիւն է լինել: Եւ պատճառք ամենայնի՝ զի նախ սիւնքն անկան ի հաստատութենէ, և անտի ճարակեցաւ եկն յամենայն չինուածն. նախ զնոքօք որ զչինուածն ունէին ի վեր՝ վառեցաւ հուրն, և ի նոցանէն յայլ ևս չինուածն ետ բոցն: Նաև ի չինուածսն, յորժամ զփայտիցն հարկանիցի հուրն, յայնժամ առաւել վառի եւ տայ ի քարինսն: Յորժամ մոլիքն՝ որ զչինուածն ի վեր ունիցին՝ անկանիցին, ապա բազում իսկ դիւրութեամբ ամենայնն յերկիր կործանեսցի: Նոյնպէս և այժմ եղև յեկեղեցւոջ. զամենեցունց հուր հարաւ, հրդեհ վառեցաւ:

ՈՍԿ. ՄԵԿՆ. Թղթոյն առ Եփեսացիս, Ճառ Ժ.

*

Քանզի կուրութիւն [սրտին] ոչ յայլ ումեքէ (Ընդ.՝ յայլ իմեքէ) լինի, բայց յանզգամութենէ, զի այն իսկ է որ խնամ

(1) Հոս զոր յարաբերականը՝ համաձայնելով իր յարաբերեալին՝ հայցական դրուած է, փոխանակ որի. ուստի՝ կարդա «որ... քանդակեալ դրօշեալ [էին]... նշաւակ կացցեն»: Կրնանք նաև «քանդակեալ և դրօշեալ» բայերը ներգործական նկատել, լռելեայն իմանալով «մարդիկ» ենթական. ըստ այսմ՝ զոր օր. «Ոչ էր աշխարհս բաւական տանել զգիրսն՝ զորս եթէ (= որ եթէ) գրեալ էին» խօսքն ալ կրնայ բացատրուիլ:

(*) Պէտք է բային կրաւորակերպ ձեւովը իմանալ հոս իբրև «բանայցին»։— «բանամ, բառնամ» Հայլն ներգ. բայերու կրաւորական ստորադասականները, չէզոք նշանակութեամբ գործածուելու առեն, ներգործականին ձեը կը պահեն ընդհանրապէս. Օր. բանայցեն աչք ձեր. բառնայցէ վիճակ նոցա, Հայլն:

(2) Ասոնք բացայայտիչները կը նկատուին նախորդ առարկաներու:

(3) Այս երեք մակբայները, ինչպէս կը տեսնուի, ի նախդիրով և յոգնակի ձեւով չինուած են ածական բառերէ. այսպէս ձեացած են նաև յանգէտս, յանծանօթս, ի գաղտնիս, Հայլն մակբայները:

զեղագան: Յորժամ աւրն մածեալ ի մի վայր ժողովիցի, մեռա-
նի անզգամն (բ) և անզգայ լինի. թէպէտև խարիցես և հատանի-
ցես, կամ գի՛նչ և առնիցես, ոչ զգայ: Նոյնպէս և նոքա, քան-
զի միանգամ մատնեցին զանձինս գիջուլեան, թէպէտև հրով
այրիցես և իբրև զերկաթ զբանն ի գործ արկանիցես, չմերձե-
նայ չազդէ ինչ ի նոսա, քանզի միանգամ մեռաւ անդամն. եթէ
ոչ նախ զանզգայութիւնն պարուրիցես, և որպէս թէ յողջ ինչ ան-
դամս մատչիցիս, ի զուր ջանաս և ընդ վայր վաստակիս:

ՆՈՑՆ, անդ, ճառ ԺԳ.

12

ԲԱՐՔ ՄԵՂՈՒԱՑ

Սրաճալ, արագ ելանել
Պարս, ծղոտներու ջոնջը
Միահամուռ, Միաբազմայն } ամէնը ծէկ
Նկատել, արշալ
Առնիմ, ընտել
Խերեւեաս խերեւեաս, ընդր ընդր
Դորականեւ, դորակի՝ ելբուլ չէով
Պարուտական, պարուտակը՝ բարակ
Զրի, լոյծ, ջրոտ [հակառակ կորած
Մաղ, բջջիկ
Ուզիս արկանել, ելիրը խորել
Նուագ, անգամ
Անգայս, նօսր
Բերան ի բերան համբուրել, քե-
Գլիմ, ելբուլ [րան քերնի ելալ

Են և ի թռչունս բարք բնածինք ազնուականք. զի ամենեքին միաժողով միաբան յորդորին, և ի մի գործ հասարակաց միահամուռն ելանեն մեծաւ փութիւ, ինքնակամ յօժարութեամբ՝ զոր ունին առ պէտս գործոյն, իւրաքանչիւր ամենայն պարզ (ա) մեղուացն՝ զորս տեսանեմք ի գործ միով հաւանութեամբ միա-

(բ) կարդա «անդամն», ըստ յունին:

(ա) Պարզ կամ պարս (մեղուաց). վերջինը նախորդին ժողովրդականը կը թուի ըլլալ՝ հայցական ձևի տակ, ինչպէս են՝ աւետիս = աւետիս, պահս = պահս, չորս = չորս, և այլն: Նոյնը կը դիտուի յատուկ անուններու վրայ ալ. Մասիս = Մասիս, և այլն:

բանեալ: Քանզի ի միասին կեան և ի միասին գնան, միանգա-
մայն ժողովին և միանգամայն թռչին. և մեծ քան զամենայն
այս է՝ զի ընդ իշխանաւ և ընդ առաջնորդաւ են, և ոչ մատ-
չին ի գործ եւ ոչ իշխեն երթալ ծաղկաքաղ ի մարգս, մինչեւ
տեսցեն զթռչուն թագաւորն իւրեանց սկսեալ ի գործ վաստակոցն
իւրեանց: Եւ ունին թագաւոր՝ ոչ որ նկատեալ ընտրեցաւ ի վե-
րայ նոցա թագաւորել, այլ որ անդստին յիւրեանց բնութենէ [է]
և ի նոյն ծնեալ: Ո՛չ որպէս առ մեզս անարժան գործք գործին
[առ նոսա], զի առանց քննելոյ և ընտրելոյ՝ կացուցանեմք մե-
ծով ընտրութեամբ մեզ իշխանաւորեն (բ)... և ոչ, որպէս աստ առ
մեզս լինի— զի ասն փափկութեանց և գրգռութեանց և ցանկու-
թեանց գլխոյ անկանին մարդիկ յիշխանութենէն — նոյնպիսի ինչ
առ տակաւ ազգս թռչնոց գտանիցի, այլ յընդարձոյս բնութենէ ու-
նին գիշխանն՝ առ ի կարգել ի նոսա զկարգս արժանաւորս: Եւ
այնպէս ունին ազնուական արգասիս յանձին, չքեղ մեծութեամբ,
գեղեցիկ կերպարանօք, հեզ, ցած և համեստ:

Նմանեսցուք առանձնագործ գործոցն մեղուաւ, զոր իւրո-
վին իւրոյ (= իւրում) անձինն համբարէ. զի գինչ որ ոչ ի՛ւր
իցէ՝ զայն ոչ ապականէ, և այլոց արարած(ոց) ոչ առնի վնա-
սակար, այլ անձամբ ինքն ի՛ւր համբարս համբարէ: Ջմաղս մե-
ղերն մոմակերտ գործով չինեալ յարդարէ, եւ զմոմ մաղուցն
ի ծաղկաբեր մարգացն մեծաւ փութով անդադար ժողովէ. եւ
զմեղրն՝ որ նման ցօղոյ զքաղցրամբք եւ զոստովք եւ զտերեւօք
ծորեալ իջեալ կայ, քաղեալ առեալ ի բերանն ճեպով բերէ և ի
խորս մոմակերտ գբոցն ունչս արկեալ համբարեալ գնէ: Եւ յա-
ռաջին նուագին՝ ի սկիզբն սկսուածոյ գործոյն՝ անգայտ մաղով
անօսր գործոյն զգործած գբոցն յօրինէ, վասն ջրի եւ լոյծ նո-
րոգ զմեղրն ժողովելոյ. իսկ յորժամ յաճախեալ բազմասցի մեղրն,
խաւ ի խաւ՝ մթեր առ մթեր ժողովեալ կուտիցէ, և [եթէ] բազ-
մօրեայ ժամանակօք ի վերայ անցեալ գտանիցի [մեղրն], իբրև
թէ առաւել լիոն առաւելութեամբ հասեալ եփեալ գեղեցկանայ:
Որ հնարագէտ իմաստութեամբ չտեմարանս մեղր կազմէ, եւ
մեծաքանչ գործով առագաստաձև՝ թաղանթազարդ՝ խերևէչս
խերևէչս զմոմն անօսրէ, և անդէն ի նմին խիտ առ խիտ մի առ
միով դորակաձև բոլորակ գծակս գբոցն բոլորէ, որմ յորմ կըց-

(բ) Պէտք է կարդալ՝ «իշխան անօրէն». (Համմ. էջ 7 (է)):

եալ, ի մի չինուած կապեալ և միմեամբք զմիմեանս հաստատեալ, զբազումս ի մի գործ չինուածոյն բովանդակեալ(ս). և այսպէս բազում գուբք մոմակերաք զմիմեամբք հոծ՝ հանդէպ միմեանց հայեցեալ, մի զմիով յարեալ: Այնքան մեծաւ գգուշութեամբ և հնարագէտ իմաստութեամբ փութացեալ ճեպին անչարժ զչինուածն հաստատել, զի մի՛, յորժամ թափանցանց ծակք գբոցն բերան ի բերան զմիմեանս համբուրիցեն, ծանրաբեռն ծանրութիւն մեղրն պարուտակաւ լաստակոտոր զգուբս մաղոցն առնիցէ, և իւրովք յեռեւսխաղաց խոնաւութեամբն արտաքոյ ամբաձածուկ չեմարանացն ծորեալ ելեալ հեղուցու:

ԲԱՐՍԵՂ, Վեցorեf, ճառ Ը.

*

Զոր օրինակ յաման լինչ ազաեղի կամ ի հանդերձ անսուբը ոչ երբեք իջանէ ազգ մեղուաց, վասն այնորիկ և խուննկ ծխեն, և այլ լինչ՝ որոյ հոտ անույշ իցէ՝ զվայրօքն ցանեն, և որ այնպիսի իրաց խեղամուտ իցեն՝ զինի սրսկեն մեղուանոցացն, զի պարան որ ելանիցէ՝ վազվազակի անդ[ը] իջանիցէ, զի և մի՛ լինչ յոռի հոտ խրտուցանիցէ և ի բաց հալածիցէ. նոյնպէս և Հոգւոյն սրբոյ աման է մեր ոգիս (= անձն մեր) և մեղուանոց, որ ըզպարս չնորհացն հոգևորացն ընդունիցին: Իսկ եթէ իցէ ի ներքս մաղձ կամ դառնութիւն կամ սրտմտութիւն, խրաչի պարան, արանայ և չհալի:

ՈՍԿ. Մեկն. Թղթոյն առ Եփեսացիս, ճառ ԺԵ.

13

. ԱԶԳԻՔ ԻՆՉ ԹՌՉՆՈՅ ԵՒ ԲԱՐՈՅԻՔ ՆՈՅՆ

Ի բուռն գալ, յԵռ֊ էյնալ	Հոգաբարձութիւն, ֆՆամֆ
Հասաքիս, հասա քէֆեր ռՆէցող	Ձայ, ապֆէլ
Հասաքեսս, ամռը	Դալակիմ, ալէֆաթլ
Առնուլ խաղալ, ռէսիլ ֆալՆէ՝ շըր֊	Պահանգ, պաճի ծէՉ գրուաՃ ֆայրնէր
Արկանել (ձու), հաֆկէր ճՃնէլ [ֆիլ	Աղկիոն, ֆովչիլն ըռուբռն մը (al֊
Հոլամուկ, ռՉէյի	Դեպ տալ, պապահիլ [cyon)

Բազում ազգք են թռչնոց՝ որ ունին զպէսպէս կերպարանս: Այլ ազգ գիշակեր հաւուցն է. քանզի այլակերպ կերպարանօք իրրև առ ի պէտս որսոյն պատշաճեալ են. մաղիլս սուրս և հաsաքեsus (ընդ֊՝ հաստաբիտս) ունին, և կտուցս կոր և սուր եւ խիստ, եւ թիւս երագունս առ որսոյն պատրաստութիւն. եւ որ ինչ ի բուռն գայ՝ գիւրաւ լմն յօշեն և պատառեն: Եւ ա՛յլ կերպարանք այնց են՝ որ ի կտոյ սերմանեաց դարմանին, և ա՛յլ կազմած այնց՝ որ յորսոյ կեան: Եւ բազում այլակերպ նմանութիւնք գտանին ի թռչունս. զի կէս ազգք երամ երամ միաժողով չըրջին, բայց ի գիշակերացն՝ որ միշտ յորսոյն կեան եւ սպասեն. քանզի ոչ ունին համբոյրս ընկերութեան ընդ երամակիցս իւր [եանց], բայց ընդ միում միայն՝ որ է ընդ նոսա հաղորդակից ամուսնութեամբ. և բազում այլ ազգք են որ համագունդ երամ [երամ] չրջին, իրրև ծիծեռունք և կռունկք եւ ճայք և հոլամուկք և սարիկք և տարմահաւք: Կէսքն առանց գլխոյ եւ իշխանի՝ բնածին օրինօք ունին գերամս իւրաքանչիւր, եւ կէսք ընդ առաջնորդօք հնազանդեալք, այսինքն են խորդք: Եւ գարձեալ ի նոսին պէսպէս փոփոխմունք գտանին. զի կէսքն ի նոցանէ չուօք յաճխարհի յաճխարհ(1) չրջին, և կէսքն յիւրաքանչիւր տեղիան կան մնան գեաեղեալք, և կէսքն մօտ ի ձմեռն չուեն

(1) Այս կերպով կրկնուած բառերը (բացառական և իով հայց.) կը պահեն իրենց նախդիրները, բայց երբեմն անոնցմէ առաջ գրուածը կրնայ մնալ նաև առանց նախդիրի. զոր օր. ի փառաց ի փառս=փառաց ի փառս.— գուռն ի գրանէ = գրանէ ի գուռն, և այլն:

խաղան ի ամերոցս յաչխարհ հեռաստան, և կէաք ի թռչնոցն գան ի ձեռս մարդոյ ի համբոյր և ի սնունդ, բայց միայն ի տկար թըռչնոցն՝ որ ահաբեկեալ զարհուրին և ոչ ժուժայ (ժուժան) թէ մերձեսցի ի նա (ի նոսա) ձեռն մարդոյ։

Բազում փոփոխմունք գտանին յիւրաքանչիւր ազգս թըռչնոց ե՛ւ կերպարանօք ե՛ւ բարոյիւք ե՛ւ բարբառովք։ Զի կէաքն ի նոցանէն խորամանկք են և կէաքն միամիտք. կէաքն զեղեցկաձայն և քաղցրաբարբառք, և կէաքն խստաձայնք և տգեղաբարբառք։ Աքաղաղ հպարտ է եւ սէգ, եւ սիրամարդ զարդասէր է և պայծառաթեւ. կաքաւ նենգաւոր է և խորամանկ եւ հնարագէտ և որսորդախաբ։ Մորդք կան իբրև զպահապանս ի պահու, և ունին պահ միմեանց ի գիշերի. կէաքն ննջեն և կէաքն արթուն կան, չուրջ գան զբունովք, և յաճախեն զգուշութիւն, մինչդեռ այլքն ի քուն կան և հանգչին. և իբրև անցուցանէ մին զպահն իւրոյ ժամուն՝ բարձրաձայն բարբառի ի յետին նուագի, և այնուհետեւ լինքն ի քուն մտանէ, և ապա յառնէ յետ նորա միւս ևս այլ, հաստուցանել արթնութեամբ [ց]զգուշութիւնն՝ որ եղև ի վերայ նորա՝ ընկերին, մինչև լինքն ի քուն կայր։

Ձայից ծերացելոց հնօրէից հոգաբարձութիւնն՝ որ անդէն ի նոցունց նոցին(*) լինի՝ բաւական է լինել [օրինակ] որգւոց ի պատուել զմարս և սիրել զծնողս իւրեանց։ Գանդի չիք ոք ի մարդկանէ՝ որ պակասեալ ի մտաց և ի գիտութենէ լցել, որ ա՛յնչափ խոնարհագոյն քան զթռչունս գտանիցի, եթէ ոչ ամօթոյ և պատկառանաց լիցի արժանի։ Իբրև տեսանեն ձայք թռչնացեալ զթեւս հօրն իւրեանց ի ծերութենէն, աստի և անտի մտանեն, և բառնան զնա ի վերայ թեւոց իւրեանց, և առնուն խաղան, և մեղմով ըստ նմա գնան, և ջամբեն կերակուր լինչ գո՛ր և գտանեն, և որպէս ախորժէ երթալ նա, ա՛յնպէս ըստ նմին երթան հանդարտիկ, չուրջ պատեալ գնովաւ յաջմէ և յահեկէ։ Եւ այսմ, զոր ասացաք, բազումք վկայեն՝ թէ այս ա՛յսպէս է։ Եւ մարդք բարեգործք որ առնեն բարիս ընկերաց, այսպէս անուանեալ կոչին. ձայից պես պատուադիրք։

Մի ոք կարի յոյժ տրտմեսցի վասն աղքատութեանն, և մի՛ ոք այնչափ մոռասցի (յոռասցի?) մինչև զանձին հատանել զյոյս, յորժամ ոչինչ գտանիցի ի տանն։ Նայեսցի ընդ ծիծառն անջատ և

(*) Թարգմանէ՝ էրէնց էոչնէ էրէ՛նց։

միանձն։ Տեսանե՞ս զնա՛ դալակիցն, [և] տկար զօրութեամբն առնիցէ զադաբս անձին։ Զի յորժամ զտառապանաց բունիկն կամիցի չհնել, բերանացի քաղէ տանի չիղս. եւ քանզի ոտիւքն ոչ կարէ կրել կաւ, զծայրս մագլացն (ըստ յոնէն՝ թևոցն) ի ջուրսն թանայ, և ելանէ ընդ մանր փոշի գնայ, և այսպիսի տառապանաց հնարիւքն ընու զկարօտութիւն կաւոյն կրելոյ(²). և առ սակաւ սակաւ հնարի չհնել զվարանացն զբունիկն. գնէ նախ զկաւն, և ապա զչիղն ի վերայ իբրև զպահանգս կապէ, և այնպէս կատարէ զչհնուած բունոյն, զի հանէ ի նմա ձագս, և սնուցանէ ի նըմա զձագսն։ Եւ եթէ դէպ տացէ ցաւել աչաց միոյ ուրուք ի ձագուց անտի, և կամ հարցի ընդ լմիք և վնասեսցի՝ գիւտս բըժշկութեան ունի բնութեամբ՝ մատուցանել աչաց ծննդոց իւրոց և բժշկել։ Զայս ամենայն հնարս այսր տկար թռչնոյս առցէ մարդ աղքատ ի մխիթարութիւն իւր, զի մի վասն աղքատութեանն անկցի ի գործս չարեաց. և յորժամ վիշտք լինչ անհնարինք հասանիցեն ի վերայ մեր յաչխարհի, մի՛ վհատեալք եւ լքեալք անյոյս լինիցիմք, այլ յուսացեալ ապաւինեսցուք յԱստուած, որ և ի վերայ ծիծառանց ունի հոգաբարձութիւն, քանզի նորա արարածք են։

Աղկիոն գարձեալ թռչուն է, որ առ ծովեզերք բնակէ, եւ անդէն առ ծովեզերքն դնէ բոյն յաւազոյն վերայ, եւ արկանէ զձուս, և ի մէջ ձմերայնոյն նստի ի ձուս բխել(³), յորժամ բըռնութիւնք հողմոյն և գառնաշունչ սառնամանիքն ամբոխեալ ըզծովն՝ ալէկոծս առնիցեն զեզերսն։ Եւ յայնպիսի մրրկեալ ժամանակի կակղանան բռնութիւնք հողմոյն և ցածնուն ալիքն ամբոխեալք, և գագարէ ծովն ի խռովութենէ, մինչև տկար թըռչնոցն աղկիոն թխսէ զձուս զեօթն or, եւ ի կատարել եօթն աւուրն հանէ զձագս ի մեռեալ ձուոցն ի կենդանութիւն, եւ յորժամ հանիցէ զձագսն՝ զեօթն օր ջանայ սնուցանել եւ զարգացուցանել։ Ամենայն նաւորդք լմանան, եւ զաւուրսն գայնոսիկ յանուն աղկիոն թռչնոց անուանեն եւ կոչեն՝ Աղկիոնի դիտակ (կամ՝ աղկիոնի տեսակ) աւուրք։

ԲԱՐՍԵՂ, Վեցorեf, ձառ Ը.

(²) Այսինքն՝ կրելոյ զկաւն (Տես էջ 4 կ. 1)։

(³) Փոխանակ ըսելոյ՝ ի բխել զձուս (Տես էջ 24 կ. 5, համմ. վերջին օրինակին հետ)։

14

ԽՕՍԻ ՏԷՐ ԱՒ ՅՈՔ Ի ՄՐՐԿԷ ԵՒ ՅԱՄՊՈՅ

(Ա)

Վեմ անկեան, անկեանաքար — Գոգել, ըմբռնել (արմ. և «գոգցես»)
Գիշախաւնձ, գիշակ բղխող — Պատրուակ, խոչ, վարքագոյր
Սանձակոծել, սանձահարել — Մազարովք, (եբր.), համառօտեալ
Վաւ վաւ կարդալ, օ՛ֆ օ՛ֆ ընել — Ուր ուրեք, որ որ [ինչ]ն ինչ (Պատկ?)
Դափր հատանել, յիւրն՝ ոտով — Յո՞ր վերայ (=ի վերայ ո՞ր ի—
Աղխ, օղակ, շրջանակ [ջնջումը ձեռքով — Uou, հպարտ [տիկ), ի՞նչ քանի վրայ

Ո՞վ է դա, որ ըզխորհուրդս իմ յանդգնի հետազօտել.
Պնդեա ըզմէջ քո իբրև այր, հարցից և տուր պատասխանի.
Ո՞ւր էիր յորժամ հիմունս արկանէի ես երկրի,
Պատմեա ինձ աղէ՛, թէ խելամուտ ես հանճարոյ։
Ո՞ եղ ըզչափ դորա, կամ ո՞վ արկ ի վերայ դորին լար.
Յո՞ր վերայ աղխք դորին յեցեալ, ո՞ զվէմն անկեան էարկ ի դմա։
Փակեցի զբրամբք ըզծով՝ զալիս նորա սանձակոծեալ,
Յորժամ իբրև ի յարգանդէ մօր ելանէր զայր նա ի լոյս.
Եդի նմա զմէգ ի հանդերձ և զմառախուղ ի խանձարուրս(1),
Եդի սահմանըս նմա, եդի նմանի փականս և դրունս.
Ասացի ցա՛յդ վայր եկեսցես, մի՛ այսր անդր անցանիցես,
Այլ անդրէն ի քեզ ալիք քո ամեհիք խորտակեսցին։

Հասեա՞լ իցես յակըն ծովու, չրջեա՞լ ընդ հետս անդընդոց.
Խելամո՞ւտ լայնութեանն առ ի ներոյ(ա) երկնից իցես,
Աղէ պատմեա՛ դու ինձ ըզչափ դորա, գոգչիր(2) ո՛րչափ իցէ.
Ձի՞նչ երկիր իցէ՝ ուր լոյսն ազանիցի, զի՞նչ ուր խաւար։
Խելամո՞ւտ իցես կարգի արփիաճեմ Բազմաստեղից.
Քո՞ զպատրըւակ Հայկին ի վեր առեալ՝ ածեալ զայն ի տեսիլ.

(1) Յիշել՝ իբրև ստորոգելի գործածուող գոյականներու քերականական կանոնը։

(ա) Առ ի ներոյ = ի ներոյ

(2) Գոգել պակասաւոր բայ մըն է, և ապառնի ու հրամայական ձեւերով միայն կը կիրարկուի։

Դո՞ւ զմազարովքըն բանայցես ծագել յիւրում ժամանակի,
Քե՞ւ ի վերայ վարսիցն իւրոց Գիշերավարըն վարիցի։
Գիտիցե՞ս ըզչըրջանակս երկնից և ինչ որ(է) ընդ երկնաւ,
Արձակիցե՞ս չանթս ընդ երկին, թօթափիցե՞ն յակնարկել քում,
Եւ ասիցե՞ն ցըքեզ՝ թէ Ձի՞նչ տաս դու հրաման, աւասիկ կամք։

Ո՞վ ետ կանանց իմաստութիւն ոսայնանկել նոցա զբեհեզ,
Ո՞վ ետ նոցին հանճար՝ առնել ասղամբ կիտուած նըկարակերտ։
Դո՞ւ զխըրխինջ եռուր ձիոյ և զգեցուցեր իւր զօրութիւն,
Եդիր ահ ի պարանոցն, և եռուր գնա՛ցըս սոս ի ճեմ.
Փառըս ըռնջաց նորա դո՞ւ արկեր ըզխրտխտա յանդգնութիւնն,
Զի սրոտայ ի դաշտի և վրընջելով դափր հատանէ.
Ելանէ զօրութեամբ զխամպրաւեալ ի պատերազմ,
Անվեհեր ի ճարճատել նետից, անդարձ ի յերկաթոյ։
Շողան ազեղն և սուսեր, չկահէ զնովաւ տէգ ընդ վահան,
Ինքն անհանդարտ խըլտխէ մինչև ուրեմն հարկանի փող.
Եւ իբրև փող հարկանիցի, վաշ վաշ կարդայ վազս առնելով
Եւ փըընչելով, ի հեռուստ առեալ ըզհոտ պատերազմի։
Քոյո՞վ խմաստութեամբ եկաց բազէ թևատարած՝
Հայել անչարժ ընդ հարաւ, զի ըզգեցցի նորափետուր.
Կամ ի քումմէ՞ հրամանէ սլանայ արծուի բարձրաթըռիչ,
Եւ անգղ ի բոյն իւր բարձրաբերձ ըզկայ առեալ դագաղիցէ՝
Ի քարանձաւըս վիմաց և յանմատոյց ի քարաժայռս.
Ի հեռուստ կորովաբիլ աչք իւր դիտեն զաւարն անկեալ՝
Յոր ճեպի զիչախանձ, և արեամբ ձագք իւր թաթաւին.
Զի ուր գէշ ուրեք իցէ, անդր հասանեն վազվազակի։

Եւ ասէ Յոբ ցՏէր.

Զի՞նչ տաց առ այդ պատասխանի, բայց եթէ գոլ ափիբերան.
Միանգամ խօսեցայ, և յերկրորդումն(3) ոչ յաւելից։

Տաղաչափեալ
ի Հ. Ե. ՀԻՒՐՄԻԶԵԱՆԵ

ԳԻՐՔ ՅՈԲԱՅ Գլ. ԼՐ–ԼԹ.

(է) Ինչ որ = որ ինչ. Օր. «Գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ ի տօնիս»։

(3) Այսինքն՝ յերկրորդումն նուագի (երկրորդ անգամ)։

15

ԿԵՐՊԱՐԱՆՔ ՓՂԻ

Խարակաձեւ, ժայռէ յիւ ուռնեցուղ	Մաճ, մանուածոյ
Քնքուշոց, պապիճ, կոշտոտած մորճ	Սոքեալ, կոտ ու կոշտ
Մկանուցիք, կուակ	Փոր (ած.), ջլը պաշտ
Ուռնել յանձին, վրան ուռենալ՝ կրնել	Ժոյժ ուռնել, զիմանալ
Անարի, խոշոր, անճոռնի	Ի խոնարհ կոյս, զեղի վարի կողմը
Կիմ, ծռիլ, խոնարհիլ	Շաղղայեղց, լեռւոյ մը կապած
Ուռնել, ուռենալ	Ողուցիք, ուղնայարի վրայի մասը

Զի՞նչ մարթասցուք զմտաւ ածել և կամ խորհել զչինուածոյն և [զ]ապարանազարդ կերպարանաց փղի՝ մեծ եւ ահագին գազանին՝ որ անհնարին մեծանգամ, յաղթ մարմնով և վիթխարի է յանասունն ամենայն՝ որք չրջին յերկրի, և ահագին տեսիլ կերպարանաց ունի յանձին, մարմնեղէն, չաղղայեղց, անարի: Եւ բարիոք (= բարւոք) կազմեցաւ այնպիսի գործուած ահագին և յաղթ գազանին՝ որ իբրև զվէն և զզարդ ունի մարմնոյն՝ զմարթն հաստակաշխ: Իսկ եթէ պարանոց երկայն ունէր փիղն՝ որ(ա) զայր հասանէր յոտիցն հաւասարութիւն, ծանրագնաց եւ ծանրախաղաց առ ի պէտս իւրոյ դարմանոյ լինէր՝ վասն ծանրաբեռն մեծութեանն, որ կախեալ [և] զնմանէ՝ միշտ հանապազ յերկիր հակէր եւ կքէր: Իսկ այժմ կարճ պարանոցաւ սակաւ ողմբքն՝ որ անդ ուրեմն մօտ ի մկանուանն են՝ հաստատեալ կայ գլուխն, եւ փոխանակ երկայն պարանոցին ունի զերկայն պատիճն՝ որ բաւական է լնուլ զտեղի երկայն պարանոցին առ ի դարման կերակրոյ և առ ի պէտս ջրոյ լմպելոյ: Ոտք փղոց անյօդք են, և այնպէս հաստատեալ կազմեալ կան ի նմա իբրեւ զսիւնս հաստատունս եւ իբրև զմոյթս հաստաբեստս՝ բառնալ զծանրաբեռն ծանրութիւն բազմադիզն մարմնոյն: Զի թէ փոր եւ լի ուղղովք էին սրունքն եւ բազմակապ յօդուք

(ա) Հիներու չարադրութեան մէջ նշմարելի թերութիւն մըն է՝ որ յաբաբերականին անմիջապէս իր յարաբերեալին քով չդրուիլը, ինչ որ իմաստի չփոթութիւն կրնայ պատճառել երբեմն: Պէտք է կարդալ՝ Իսկ եթէ ունէր փիղն պարանոց երկայն որ...:

ոտքն, յօդակոտոր ի միմեանց յօդքն քակտէին ի մեծանեխատ ծանրութենէն՝ որ յենոյր ի նոսա և ճնշէր: Գանզի ոչ կարէին ոտքն յօդակապք հանդուրժել ժոյժ ունել բազմակոյտ յաղթանդամ մարմնոյն թանձրութեան: Առ պճղամբքն միայն ի խոնարհ կոյս կապէն ոտք փղի, քանզի ոչ եթէ կրկնելով կրկնիւ(1) ծունկք ըստ օրինակի ուղտուց յօդից. զի եթէ այնպիսի կերպարանս ունէր, ոչ կարէին յօդքն ժուժել, այլ կոտորէր հատանէր ի սաստիկ ծանրութենէն՝ որ կայր ի վերայ: Եւ զպատիճն երկայն՝ որ մինչև ի յոտսն հասանէ՝ վասն այնորիկ հաստատեաց եդ ի նմա Արարիչն, զի եղիցի ի պէտս գարմանոյ նորա:

Զիցէ՞ տեսեալ քո կամ լուեալ՝ [զի] ըստ օրինակի աշտարակաց խարակաձեւք հաստատեալ՝ կան ճակատեալ ընդդէմ պատերազմողաց ի գլուխս բանակաց ըստ օրինակի մարմնեղէն բըլրոց. և չիք ինչ որ կարող լիցէ կալ առաջի սաստիկ զօրութեան նոցա՝ յորժամ յարձակեալ փլուզանիցեն զճակատս պատերազմողացն ի պատերազմի, և այսր անդր թափանց(անց) ընդ գունդս մարտիկ նահատակացն անցանիցեն(բ): Զի եթէ ոչ հաստահարուստ անդամս ունէին ի ներքոյ՝ ըստ համեմատութեան վերին ծանրութեանն, ո՛չ այնչափ երկար ժամանակս կարէին կալ (կո՛ կեալ) յաշխարհի. քանզի այսպէս ասեն զփղաց՝ եթէ աւելի քան զեբեւեքհարիւր ամ ձգին կեանք նոցա. զի սեղմ են ոսկերք փղաց, և ոչ բազում յօդս ունին յանդամս իւրեանց: Արդ՝ փիղ զկերակուրն պատճառիւ համբառնայ հանէ յերկրէ ի բարձրաբերձ մարմնոյն բարձրութիւն, եւ իբրև օձի քնթռնոցք երևին ի պատիճան՝ յորժամ այսր անդր չրջչրջիցէ, քանզի ամենեւին մսեղէն է: Եւ զայն գազան ահագին՝ որ այնչափ մեծութիւն և զօրութիւն ունի՝ մեզ հնազանդեաց(2) Աստուած և ընդ հրամանաւ մերոյ բանի եղ, զի յորժամ ուսուցանիցեմք զնա՝ անսայցէ մեզ, և յորժամ կապիցեմք և հարկանիցեմք՝ յանձին կալցի:

(1) Միևնոյն բային քով քովի այսպէս գործածութիւնը, որ սովորական դարձած է մեր լեզուին մէջ ալ, Ս. Գիրքի յատուկ բացատրութեան ձև մըն է, գործողութիւնը աստկացնող. Օր. լսելով լուիլիք, տեսանելով տեսջիք, և այլն:

(բ) Բառին բուն ձևն ըլլալով թափ անցանել (Նափանցել) «թափանց անցանել»ը՝ մանաւանդ «թափանցանց անցանել»ը՝ տարապարտ կրկնուած մը կը մատնեն, գրչագրական վրիպակներու հետևանքով հաւանաբար:

(2) Տե՛ս էջ 13 կ. 6:

Եւ արդ՝ ոչ եթէ մեծամեծ անասնովքն միայն երևի անքնին մեծութիւնն Աստուծոյ, այլ եւ ոչ մանունքն թերագոյն գտանին՝ կացուցանել զմեզ վասն նոցա ի զարմանս: Քանզի ոչ եթէ միայն ի լերինս մեծամեծս պարտիմք զարմանալ՝ որք բոլորեալ և սոքեալ ի բարձրաբերձ բարձրութիւն ամպոցն հասանեն, և վասն մշտախաղաց օգոյն ի բարձրութեան նոցա շնչելոյ՝ ցուրտ բունեալ եւ քնակեալ [է] ի նոսա: Այլ եւ ընդ խորաձորս նոցա պարտիմք սքանչանալ, [զի] փոխանակ խստաչունչ ցրտոյն՝ որ ի բարձունս լերանցն շնչէ, ջերմն եւ քաղցրախառն օդ շնչէ ի խոնարհ չուրջ զատորատովքն նոցա:

Դարձեալ ոչ կարի յոյժ զարմանամ ընդ մեծութիւն զօրութեան փղի՝ կամ ընդ այլ ևս մեծամեծս յանասնոց, որպէս զառիւծամ ընդ մկան եւ ընդ մժղոյ(3)՝ որ խոռվիչք և դողացուցիչք են փղի, եւ ընդ ճուրբ խայթոցն կարճի՝ թէ զիա՛րդ կոբացեալ և կրկնեալ՝ կազմի հարկանել՝ ըստ օրինակի մանեւ կոր կերպարանաց փողի, և զիա՛րդ արկանէ զթոյնն յայնոսիկ՝ որ հարկանիցին:

ԲԱՍԵՂ, Վեցօրեաց, Ճառ Թ.

(3) *Փոխանակ ըսելոյ՝* ընդ մուկն եւ ընդ *մժեղ*: — *Կիրք ցուցնող բայերու խնդրառութեան մէջ երբեմն կը տեսնուի այս զարտուղութիւնը, մանաւանդ ընդի կիրարկումը յոգնակի տրականի հետ. Օր. ընդ տակաց հոգալ. ընդ որդւոց թախծիլ, և այլն. (հմմտ. էջ 12 և. 4):*

16

ԴԱՐՁԵԱԼ ԿՐԿՆԵԱԼ ՏԵԱՒՆ ՅԱՄՊՈՅՆ ԱՍԷ ՅՅՈՒ

(Բ)

Նիաւգ, ձովային ջաղաց	Կնիւն, ոչխ
Զրնկեցուլ, ընդ ընթ, ծեփել ձիեր	Արդն (= գեղարդն), տեփ
Հաշուել, համարիլ	Խալամ, ջլատիկ էշու՝ ջալանի
Հագնի, ձառ մը (Agnus)	Դրդուիմ, խախտիլ
Սցնաճել, ընտրել	Ամպահարիմ, ընդհատարուիլ
Ակնակապիճ, աչքին ամանը	Շնորհեալ եզ, տեղի ընդհատած է
Անոսս, անշարժ	Դանդաճաւանդ, սանձ
Ուռն (չեչ. ուռուճի), մարդ, լախտ	Երգիծանել, ծեղտել, ջնջ բառնալ

Ոչ այդպէս, այլ արի՛, պնդեա ըզմէջ քո իբրև այր,
Հարցիցց և տուր պատասխանի. մի՛ զդատաստան իմ զընկենուր.
Արդ ապէ, ա՛ռ բարձրութիւն, ա՛ռ զօրութիւն թէ կարիցես.
Ցայնժամ ծանեայց զի հրզո՛ր է ի փրկել ազ քո ըզքեզ:

Ակն ի գազանն(ա) ա՛րկ անհեթեթ՝ որ իբր արջառ ճարակի խոտ,
Զօրութիւն նորա զմիջով իւրով և այժ իւր ըզպորիս.
Կանգնէ զարտուն իւր իբր ըզնոճ, ջիլք իւր պատեալ կուռ զիրեր.
Ողն նորա իբրև ըզձոյլ երկաթոյ, կա՛զք իւր պըղընձիք: [րօք.
Հըզօրագոյն ի կենդանիս(1) ըզնա հրամանն արարչական
Կացոյց ի սկիզբն արարածոց, այլ խաղալիկ է հրեշտակաց.
Նըմա լերինք մատուցանեն ճարակ, և հոյլք չորքոտանեաց
Պար ըզնովաւ առեալ խայտան. նընջէ 'նդ ծառովք ազգի ազգի,
Բերկրի յեղտիւրա առ պըրտուով՝ առ եղեգամբք և առ կնիւնով.
Հովանի առնեն նըմա ծառք անտառի և ձողք հագնուոյ:

(ա) Զիագետի կամ Ռնգեղջիւր կենդանին, որ չուրի մէջ Լեւիաթան կը կոչուի և ցամաքի վրայ Բեհեմովթ: Նկարագրութեան վերջին մասերը կոկորդիլոսին ալ կը պատշաճին:

(1) Բազդատական ածականները՝ ոչ միայն նաև զնախադրութեամբ՝ այլ և իւով յոգն. հայցական խնդիր կ'առնեն, ինչպէս հոս: երբեմն կ'առնեն նաև բացառական խնդիր՝ իբենց դրականին համաձայն. Օր. հեռի ի նոցանէ=հեռագոյն ի նոցանէ, և այլն: (Հմմտ. նաև էջ 15 (բ)):

Յանձնապաստան է, չէ ինչ փոյթ նըմա՝ հեղեղ թէ լինիցի,
թէ Յորդանան ի վերա՛յ նորա դիմեալ գայ սպառնալից՝
Յակնակապիճս իւր ընկալցի ըզնա ի ճեմ իւր անյողդողդ.
Սակայն չնորհեալ քեզ ըզնորայն ծակել ուընգուննս և նըւաճել:
Կարիցե՞ս ըզվիշապն ի վեր առնուլ կարթիւ յալեաց,
Դընել պախուց նըմա զցըուկով, կապել ի քիթ նորա անուր,
Եւ ընդ կըզակըս նորին անցուցանել գանգանաւանդ:
Խաղայցե՞ս դու նովաւ իբրև հաւու, և կապեսցե՞ս
Ըզնա կապով իբրև ըզձագ, որով փիւնիկ կերակրին ազգք:
Ո՞չ զօրեսցէ նաւալուղակ թեփ ի տըտնոյ նորին բառնալ,
Եւ ո՛չ ըզխալամ նորա ի նաւ ձըկնորսական:
Ո՞ զպատրըւակ նորին մերկեալ՝ մըտցէ ընդ աղխըս պատենիցին,
Եւ զերեսաց նորա ո՞ բացցէ ըզդրունսըն փեռեկեալ.
Շուրջ զատամունք նորա ահ, փոր իւր վահան պըղընձակուռ,
Անքափանցք օդոյ զերդ վէմ գայլախազ յօդք իւր ամրախիտք՝
Մի ըզմիոյ կրնի կըցեալ կուռ ի մխեանց անմեկնելի:
Ի փըընչելոյ իւրմէ ջրացայտ փայլատակունք հատանին.
Աչք նորա լուսափայլ իբր ըզտեսիլ Արուսեկի.
Ի բերանոյ նորա թափին ջահք բորբոքեալք բոցածաւալ,
Թօթափին անկանին չանթիք հըրոյ ընդոստուցեալ.
Ծուխ ընդ ուընգուննըս նորա իբր ի հնոցէ հրոյ ելանէ.
Շունչ նորա արծարծանչէ փըքոցուռոյց ըզկայծակունս,
Եւ բոց ի չըրթանցն իբրև զհեղեղ բխէ հրեղէն:
Ոյժ ի յուլան նորա բնակէ, սով առաջի իւր ընթանայ:
Ամրակուռ և հաստաբեստ անդամք մարմնոյ նորա մածեալք,
Եւ ո՛չ դրգուռին ի բարկանայր չանթից ի սաս ամպահարեալ.
Սիրտ նորա վէ՛մ է գայլախազ, իբրև ըզսալ դարբնաց անոստ.
Ի խըլըրտել նորա սարսեն նըշանգք ծովու ահաբեկեալ,
Գազանք երկրի զահի հարեալ, զարհուրին հոյլք չորքոտանեաց:
Ոչ ըսանանեն նըմա արգունք, ոչ զէնք նիզակք թէ պատահեն,
Արհամարհէ, համարի յա՛րդ զերկաթ և փուտ փայտ ըզպըղինձ.
Ջերգիծանէ ի զրահամորթ նորա աղեղըն պըղընձի.
Համարի խոտ ըզոըմբաքար, և եղեգունս հաչուէ զուռունս,
Ծաղր առնէ ըզսուսերօք, մահիճք նըմա տեգք սայրասուրք:
Որասուզէ ոսկի անբաւ ի խորս ալեաց իբրև ըզկաւ,
Յառվէ զանգունդըս ծովու եռացուցեալ իբրև զկաթսայ,
Համարի զծով որպէս ոչինչ, որպէս զերի մի զտարտարոս.

Հզջուբս համատարած համարեցաւ իւր ճեմելի.
Ձիք լինչ յերկրի նըմանն ընդմա, չիք ի ծովու հանգոյն ընդվին,
Այլ նա ի ձեռս հրեշտակա՛ց խմոց է զոյզն լինչ խաղալիկ:

Եւ ասէ Յոբ ցՏէր.

Այո՛, կարես դու զամենայն, և տկարանայ լինչ ոչ ի քէն.
Եւ ո՞ զխորհուրդըս քոյին ի միտ առցէ հետազօտեալ.
Խօսեցա՛յ որ լինչ ոչըն գիտէի, բարբառեցայ
Զորոց(²) չէի խելամուտ. արդ լուր լինձ, Տէր, և ուսո՛ զիս,
Լըսէի զքե՛ն ի լուր ունկան, աչք իմ այժմիկ տեսին ըզքեզ.
Խոտեցի՛ լանձն և հալեցայ. գիտե՛մ զի հող եմ և մոխիր:

Տաղաչափեալ
ի Հ. Ե. Հ.

ԳԻՐՔ ՅՈԲԱՅ, Գլ. ԽԱ–ԽԲ.

17

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԵՑՅ

Ցուշկապարիկ, [լաւիկ? նմանո–
ըրնեամբ՝ ոգի. (յն. ὀνοκένταυρος, լ–
Մեղանչել, [ընասել [շտյո–լ)
Համբառու, կնոջ նմանո–ըրնեամբ՝
Պարիկ, ոգի (փերի) [երջոյ ոգի
Առանց անձանց, անանձն, [անձնա–
Երագագանի, ոգոյ ոգոջայրներ [ոգ
Պայ, տգրդու նմանո–ըրնեամբ ոգի
Կարծիք մտաց, գիտուի վիճակ, երևա–
Փոկ, ծովո– հոգի [կայո–ըրնե–ն
կեղծս ի կեղծս, [ինձնո– կերպերով
Ընդ nsu անկանել, ոգոյ պատե–ալ
Աւալիզ } [ան նմանո–ըրնեամբ ոգի
Աւլիզ }
Շահապետ վայրաց, գերդի հըպա–
հապան ոգին (լ. genius loci)

Թէպէտև ասին լինչ անուանք ի Գրոց՝ յուշկապարկաց կամ համբարուաց կամ պարկաց(³), ըստ կարծեաց մտաց մարդկան ասին՝ և ոչ ըստ բնութեան: Որպէս յորժամ քաղաքք և գիւղք

(²) Փոխանակ ըսելու՝ Բարբառեցայ զայնցանէ որոց չէի խելամուտ: — Այն յարաբերեալը երբ կը զեղչուի՝ որ յարաբերականը անոր հոլովը կ'առնէ: Ըստ այսմ՝ այնմ որ = որոմ, յայնցանէ որք = յորոց. Օր. Գոհացիր զորոց առերն = գոհացիր զայնցանէ զորս առերն, և այլն:

(³) Պարիկ բառը Աստուածաշունչի հայ թարգմանութեան մէջ տեղ չունի առանձին:

աւերեսցին, և անդ գնաք բնակիցեն և կեղծս ի կեղծս յայտնիցին, և մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եդեալ՝ զոմն յուշկապարիկ, զոմն պարիկ, զոմն համբարու կոչիցեն, նոյնպէս և Դրոց՝ ըստ մարդկան կարծեացն եկեալ՝ առ ի նշանակելոյ զսաստկութիւն աւերածի աշխարհին՝ յուշկապարկաց ասեն բնակել յաւերակսն, զոր յոյն լեզու իշացուլս ասէ: Ապա ուրեմն յայտ է՝ եթէ անուանք առանց անձանց են յուշկապարկաց և իշացլուց, իբրև գծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն, եւ զպայն (իմն) ի մարդկանէ, և զառլէզն ի չանէ: [Եւ] զի ի մարմնաւորէ աներեւոյթ ինչ ոչ ելանէ և ոչ յանելևութէ իմիք մարմնաւոր, ա՛չ երբեք ի մարդկանէ ելեալ պայն՝ եթէ առ երես առածիցի(բ), եւ ոչ ի կովուց ծովացուլն ելեալ՝ եթէ ի ծովակս բնակիցէ: Զի մարմնաւորի(գ) չէ հնար՝ թէ ի ջուրս կեցէ, որպէս եւ ոչ ջրականին՝ թէ ի ցամաքի կեցէ, և ոչ ի չանէ ինչ ելեալ՝ եթէ ընդ աներեւոյթ զօրութիւնս ինչ կեցէ(1), և յորժամ վիրաւոր ոք անկեալ ի պատերազմի դնիցի՝ լիզիցէ եւ ողջացուցանիցէ, զոր արաւէգն կոչեն: Այլ և վիճեալ ևս պնդին ի բանիցն վերայ. Մին ասէ՝ թէ ի մերում գետղ (= գեղջ) ծովացուլ զկով գործեաց(դ), եւ զգուշիւնն [ծովացլուն] հանապազ մեք լսեմք ամենեքեան. և միւսն ասէ. Զպայն ի՛մ իսկ աչօք տեսեալ է: Մի՛թէ և զարալիզէն ևս ոք կարիցէ՞ ասել՝ թէ և զայն ուրուք տեսեալ իցէ: Եթէ յառաջին ժամանական արաւէգք ՚ի լիզէին զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն, ո՞չ նոյն պատերազմունք են և նոյնպէս վիրաւորք անկանին:

Այլ և վիշապք, ասեն, և նահանգք կեղծս ի կեղծս լինին: Վիշապն որ մարմնաւոր է՝ զիւր կերպարանն ոչ կարէ փոխել. զի որպէս մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս լինչ յո՛ր և կա-

(բ) Տպագրին և Ձեռագիրներու «առ երես առառած իցէ» խօսքն իմաստ չունի:

(գ) Կարդա՝ ցամաքայնոյն, ինչպէս կը պահանջէ խօսքին ճշգրիտ համեմատութիւնը:

(1) Սոորաղասականն է կեամ բային: — Եղնիկ որ կը սիրէ համանիշ բառերով զանազանութիւն տալ իր ոճին, հոս երեք անգամ կը կրկնէ միևնոյն բայը:

(դ) «Գործել»ը ծնիլ նշանակութեամբ կը հասկնան ոմանք, բայց աւելի ճիշդ է զուգաւորուիլ իմաստը տալ բառին. քանի որ՝ ծովացուլը որ արու է և կովէն է ելած, ինչպէս կ'ըսուէր, չէր կրնար կով մը ծնիլ. (հմմտ. ֆր. besogner բային ծաղրական ոճով առումը):

միջև, նոյնպէս եւ ոչ վիշապք: Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց(ե) կրեն. և ոչ գրաստ գոյ ընդ նոցա՝ եթէ զարդիւնս ի կալոց ուրեք կրիցեն(զ). և ի գո՛ւր է կա՛լ կա՛լն(է) ասել ի կալս և ո՛չ Ա՛ս ա՛ս: Զի վիշապն՝ որ ինքն գրաստ է, այնու զի անասուն և անխօսուն է, զիա՞րդ (որ ինքն գրաստ է) զայլ գրաստ վարիցէ. զի վիշապին այլ ազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի: Եւ այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց օձք մեծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիւք ծովականք, զորոց ասեն թէ լեռնաբերձք և մեծամեծք են և որս եւ կերակուր նոցա մանր ձկունք են, որպէս եւ օձից մեծամեծաց՝ մանր մանր ինչ ճճիք և անասունք: Եւ ոչ որս երբեք՝ որպէս մարդկան՝ արարեալ է վիշապաց, կամ առնիցեն. և ոչ տաճարք՝ իբրև մարդկան՝ են նոցա ի բնակութիւն, եւ ոչ զոհ ի թագաւորաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի: Այլ որպէս զԱղեքսանդրէ խաբէին դեւք(ը)՝ թէ կենդանի կայցէ, որոյ՝ ըստ եգիպտական հնարագործութեանն՝ կապեալ արկեալ կախարդանօք զդև ի չիչ՝ կարծեցուցանէին թէ Աղեքսանդրոս կենդանի իցէ եւ մահ խնդրիցէ: Նոյնպէս եւ մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց՝ թէ զոմն Սրտաւազդ արգիլեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ և նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս. եւ ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք [Հայոց], որպէս և Հրեայք որ ի զուր ակնկալութիւն կապեալ կան՝ եթէ Դաւիթ գալոց է չինել զերուսաղէմ և ժողովել զՀրեայս, և անդ թագաւորել նմա նոցա:

Կարծեցուցանէ սատանայ՝ եթէ և նահանգք ինչ իցեն գետոց, և չահապետք վայրաց: Եւ յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կա՛մ ի վիշապի կերպարանս կամ ի նահանգի ինն եւ ի

(ե) Տոհմականք և արդիւնք բառերը նոյն նշանակութիւնն ունին: Նոյնանշան բառերու քով քովի գործածութիւնը՝ իրրև յատկացուցիչ եւ յատկացեալ՝ գրաբարի զարդերէն մին կը համարուի. Օր. պատիժ պատուհասի. մարտ պատերազմի. ներկել թողութեան, հայլն: (Հմմտ. էջ 26 (բ)): Նոյն ձևով կը գործածուին համանիշ բայեր ալ. Օր. հաճեալ հաւանել. մարտ եդեալ կռուիլ. կշտամբեալ յանդիմանել, հայլն:

(է) Թարգմանէ՝ կալերէն տեղ մը կրեն՝ ասելին:

(զ) Հայ գիւղացին՝ ցորենի կալը և ունիմ բային հրամայական կա՛լը իրրև բառախաղ գործածելով՝ կը կարծէր գևերը խաբած ըլլալ, որոնք, կ'ևրևի, լեզուական այդ նրբութիւնը ըմբռնելու չափ վարպետ չէին:

(ը) Կարդա՝ դիւբ: — Ո՛չ գևերուն՝ այլ դիւբերուն պէտք էր ընծայել այդ կախարդանքը զոր կ'ընէին «դիւթական արուեստի խաբէութեամբ»:

չահապետի, զի այնու զմարդն յիւրմէ Աբարչէն թիւրեսցէ։ Զի եթէ էր ինչ նհանգն անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր, եւ երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր. այլ կա՛մ կինն կին կայր, կամ փոկն փոկ։ Նոյնպէս և զոր չահապետ վայրաց կոչեն՝ ոչ մերթ մարդ երևէր եւ մերթ օձ։ Նոյնպէս և վիշապն ո՛չ միանգամ օձաձև երևէր եւ միանգամ մարդակերպ, որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ՝ թէ որ մարմնաւոր լինէ է յայլ կերպարանս չկարէ փոխել։

Այլ թէ ի կալս ջորւիք և ուղտք երևիցին՝ զիւաց կերպարանք են այն և ոչ վիշապաց. և եթէ ի դաշտս երազազանք ձըգիցին, և հեծեալք իբրև զմարդիկ զհետ երթոց արշաւիցեն՝ կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն լինէ իրաց. և եթէ ի գետս ի կանա[ն]ց լինէ ի կերպարանս երևիցին, սատանայի կերպարանք են։ Եւս՝ եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն՝ ոչ եթէ եզամբք լինէ անուանեալովք բառնայցի, այլ ծածուկ զօրութեամբ Յաստուծոյ հրամանէ, զի մի՛ չոգին՝ մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ։

ԵԶՆԻԿ Ա. ԻԴ-ԻԵ.

18

ԲՆԱԿԱՆ ԱԶԴՄՈՒՆՔ ԱՆԱՍՆՈՑ ԵԻ ՄԱՐԴԿԱՆ

Բայոց, ոՐՂ
Ալի, -ւոՀ. ալուց, խորը, ՝ևբէյն
Սրաճի, աղբէյն վՀրէ մաՀերը [խոչ՚ը
Կարեւոր ձվեռն} սահմէն յԱՀ-
Կարամվեռն}
Մարմանդ, քաբեխառն պաշտեր
Ծմակ, անաքՀ յոր
Հոյզ, հէ-ր, խէՀ (ձաՀէ)
Տարածոց արկանել, քէօչ՚ը փՀել
Դիտաւորութիւն, դէօեւը, պես-
Զեղծիմ, անհոգ՝ ինյՀ ըսլաՀ [ՀՀլը
Փլոմոս, (յն. φλόμος), խոշոպաս
Ականել, պեանՀել, ՀայՀել [ինյ՚ը
Պիտուս, (յն. πίτυς), սոճի ձառը
վարիմ, վՀաՀել, պէրՀել
Դաղձն, վայրէ անաւոՀ

Ե՛ն յանասունս ազդմունք լինէ բնականք՝ որովք հանդերձելոց իրիք(1) իրաց ազդ լինի նոցա։ Որպէս ձիոյն [ազդ լինի]՝ ի սմբակէն վարելոյ, և եզինն՝ ձմերանի ընդ ալուց կողմն նստելոյ և մօտ ի գարուն ընդ դրաց կողմն դառնալոյ, և ծիծառն՝ յառաջ քան զաշունն ի ջերին տեղիս ի ձմերոց երթալոյ, և խորդոյն՝ [ի մանալ[ոյ] յառաջագոյն զձմերուն կարևորս և վազ ի մարմանդ տեղիս փութալոյ, և ճայից՝ վաղագոյն տարմատարմ չրջելոյ, և աղաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղալոյ, և ագռաւուց՝ ի ծմակաց վաղագոյն ի ջերին տեղիս գնալոյ, եւ անգեղջ՝ ի հեռասանէ (զ)գիւոյ ականելոյ դիտաւորութեան(2)։ Եւ այլոց ևս սմենայն անասնոց և.թռչնոց, որպէս և մրջեան [ազդ լինի]՝ յամարանոյն պատրաստելոյ գկերակուրն և ընդ երկու գհատն կրտրելոյ՝ զի մի բուսանիցի, և ի ջեր ժամանակս հանելոյ գկիսկն յորջէ անտի և ցամաքեցուցանելոյ, և մեղուաց՝ զդուրս մեղանոցացն յառաջ քան զցուրան ականամամով խնդոյ, և արջոյ՝

(1) Իմն, իբ, ինչ մասնական անուններըը՝ ածականաբար գործածուելու առեն՝ հոլովով միայն կը համաձայնին իրենց գոյականներուն հետ, որովհետև յոգնակի չունին։

(2) Գերականական անկանոնութիւն մը կը դիտուի այս տողերուն մէջ. «գիչոյ»ի գ նախդիրը աւելորդ է բոլորովին, եթէ խօսքը թարգմանենք՝ Անգղերուն ազդեցութիւն կ՚ըլլայ դիակը հեռուէն տեսնելու կամ դիտելու, հարկ է որ «գիչոյ ականելոյ» ձևը վերլուծուի իբրև «զգէշն ականելոյ» կամ «ականելոյ զգէշն» (Տես էջ 4 կ. 1)։ Իսկ «ականել դիտաւորութեան» համանիչ բառերը՝ կը յիշեցնեն ներել բողոքեան ձևը (Տես էջ 47 կ. 2)։

յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ։ Եւ այս ամենայն ազդեցութիւնք բնականք են յանասունսն և ո՛չ խորհրդականք, որ յարարչէն նոցա տնկեալ են ի նոսա՝ առ ի յօժարելոյ յօգտակարն և խորշելոյ ի վնասակարացն։

Եւ ոչ միայն յանասունսն են բնական ազդեցութիւնք՝ այլ և ի մարդկան, որ խօսունք և իմաստունք են։ Որպէս յորժամ ակն խաղայցէ բնական ազդեցութեամբ՝ վասն զնորոգ ոք տեսանելոյ լինի, ասեն, նշանակ, որք այնմ ստէպ միտ դնեն։ Յորժամ յերանս միս խաղայցէ՝ նշանակ հեծանելոյ ուրուք է, ասեն, կամ հանդերձս ալնիւս ագանելոյ, կամ սիրելւոյն պատահելոյ, կամ գան ըմպելոյ։ Նոյնպէս և յորժամ ոտն.կծիցէ կամ ձեռն՝ մին, ասեն, ճանապարհի գնալոյ(3) նշանակ է կամ անձրևի, և միւսն՝ առնելոյ լինչ յումեքէ կամ տալոյ։ Նոյնպէս և փնչելն և լեզուին կծել և ունկանն հարկանել ո՛չ եթէ յայսոյ ումեքէ լինի, այլ ի բնական ազդեցութենէ անտի՝ զոր տնկեալ է Արարչին յանդամսըն [մարդոյ], զի յորժամ ի խորհրդական զգուշութենէն զեղծիցի՝ բնական ազդեցութեամբն պատսպարեսցի։ Եւ յօրանջելն և ձգտիլ, որպէս կարծեցին ոմանք, ոչ ի դիւէ լինի՝ այլ ի մեղկութենէ և ի թուլութենէ մարմնոյն. ուստի զստէպ յօրանջելն և ձգտելն հմուտ բժիշկք ի մթերելոյ մաղասոց ասեն, զոր և փորձն իսկ յայտ առնէ։ Զի յորժամ ստէպ ոք յօրանջիցէ՝ սարսափիւն գայ զոսկերօքն և քաամունք գնան ընդ անդամսն։ Եւ ոչ փընչելն ի հրեշտակէ է, այլ կա՛մ ի ցրտոյ, կամ վասն այլ իրիք բնական ազդեցութեան։ Նաև յոգւոցն հանել՝ երբեմն յիշատակաւ լինի և երբեմն առանց յիշելոյ զոք. և զի բնական ազդեցութիւնք են և ոչ ի դիւաց՝ յայտ անտի է զի և յանասնոց բնութիւնս գտանին նոյնք։

ԵԶՆԻԿ, Բ.

*

Գտանեմք զի առանց ուսման ունլին [անասունք] ի բնածին քարոյն զպատչաճ[ս] պիտոյից կենաց իւրեանց. զի արջ՝ յորժամ վէրս առնու յանձին՝ լինքն զանձն բժշկել գիտէ բնածին բարոյիւք՝ զոր եգիտ իւրովի յիւր օգնականութիւն։ Երբայ խլէ զարմատ մի որ անուանեալ կոչի վղոմոս։ Բնութիւն արմատոյն այնորիկ ցամաքեցուցիչ զօրութիւն ունի ո՛ւր եւ դնիցի. վաղ

(3) Իմա՝ «զճանապարհ գնալոյ». (Համմ. գարձեալ՝ էջ 4 կ. 1)։

վաղակի փութով դնէ ի վերայ վիրացն, զի առցէ բժշկութիւն, առ ի ցամաքեցուցանել դեղոյն զթարախ վիրաց իւրոց։ Գարձեալ և ազուէս ըստ նմին օրինակի իմն առնէ, եւ բժշկէ զվէրս իւրոյ հարուածոյն ի հուզոյ՝ որ լինի ի ծառէ միոջէ, որ անուանեալ կոչի պիտուս։ Գարձեալ եւ ջրայնն կրայ՝ եթէ ուտիցէ ի մսոյ լժի եւ տագնապ լինչ հասանիցէ նմա ի կերակրոյն, երթայ ուտէ դաղձն և այնու անցուցանէ զտագ նեղութեան ի մարմնոյն, զի մի վնասեսցի ի գիշոյն՝ զոր կերաւ։

Այլ եւ զօգոյ փոփոխմունս կանխաւ իմանան անվրէպ ասունք. եւ թերևս յոյժ մօտ են ի գիտութիւն մարդկան՝ զգայուն բարք նոցա։ Ոչխարք վաղագոյն իմանան զմերձնալ ժամանակի ձմերայնոյ, եւ վասն այնորիկ մեծաւ փութով աւելի կերակուրս ճեպեն ամանել յորովայնս, վասնզի գիտեն՝ թէ նուազութիւն լինելոց է նոցա ի կերակրոց ի ժամանակս ձմերայնոյ։ Եւ արջառք յորժամ բազում ժամանակս զոմամուտ լինելոյն ի ձմերանի՝ ի խստութենէ կարաձմեռն ձմերայնոյ, իսկ եւ իսկ իբրև սկսանին օգքն պարզել եւ կակղանալ՝ իմանան եւ ի միասին միահոյլ խաղան ելանեն յիւրաքանչիւր կայանից, եւ զուարթութիւն ցուցանեն յերեսս վասն գառնաշունչ սառնամանեացն կակղանալոյ։ Գարձեալ եւ ոմն ի մտադիր մարդկանէ նեացն կակղանալոյ։ Գարձեալ եւ ոմն ի մտադիր մարդկանէ սպասեաց եզիտ զոզնի մի ցամաքային՝ զի երկու դուրս օգամուտս արարեալ էր ծակուն՝ յորում կայր, եւ յորժամ հիւսիսի սկսանէր չնչել՝ զհիւսիսային կողմանն զծակն խնոյր, և յորժամ հարաւ չնչէր՝ զհարաւային կողմանն զծակն խնոյր, եւ զառաջինն՝ զոր եխէց՝ բանայր։

Նմանեսցուք մրջեանն՝ որ ամարայնոյն պատրաստէ աշխատութեամբ զհամբարս ձմերայնոյ, թէպէտև ոչ է մօտ նեղութիւն ձմերայնոյ՝ ոչ ծուլանայ եւ ոչ հեղգայ ի պատշաճից պիտոյիցն նեղութեան ժամանակին, այլ մեծաւ փութով անգադաղ տայ զանձն ի գործ և ի վաստակ, մինչև ժողովեսցէ դիցէ համբարս ի չտեմարանս՝ բաւական իւրոյ դարմանիցն(4)։ Եւ զկնկակուրն զոր ժողովէ՝ ոչ ծուլութեամբ (=ոչ յանհոգս) համբարէ [միայն], այլ խմաստուն եւ խորագէտ հնարիւք զարժան իրացն կատարէ. զհատ կամ զկորիզ իրիք յորժամ տանի ի ծակն՝ ընդ

(4) Դարմանիք բառը եզականաբար գործածուած է, ինչպէս կ'երևի իր ստացական ածականէն՝ որ եզակի դրուած է։ (Համմ. էջ 22 կ. 2)։

մէջ կտրէ և դնէ, զի մի՛ բուսցին ի հիւթոց խոնաւութենէ, եւ վրիպեալ ելանիցեն ի դերեւ [ի] պիտոյից կերակրոց։ Եւ զարձեալ՝ եթէ խոնաւասցին հատքն, հանէ առ եզերք մրջևնոցին, արկանէ տարածոց և ցամաքեցուցանէ։ Բայց ո՛չ եթէ հանապազ հանէ, այլ յորժամ գիտէ՝ թէ արևկայ եւ պարզ լիցին [օդք] և ոչ անձրև։

ԲԱՐՍԵՂ., Վեցօրեաւ, ճառ Թ.

19

ԱՌԱՋԻՆ ՅՈՅԶՔ ԱԴԱՄԱՅ

Հաստատութիւն, երկինք	Բիբել, յաքերան քի՛ քի՛ յայնելը
Ի ֆիրմն հարկանիմ, երթնել	Առ ակաւ, ալէ ար-ջև
Փայտ, ծառ	Անցանել ընդ..., ալէ անցընել..
Խալալիֆ, մարդին յօդուածները	Տախտ, նոպաթան
Զգայուն, զգայարան	Ջօճոտել, հրապուրել
Բաստ, բախտ	Առ ֆոյս կալչիր, ետիդ համաբէ

Որպէս ա՛յն լինէ զարթուցեալ ի խոր քնոյ՝ գըսպի ես զիս
Ընկողմնեալ հեշտաբար ի գետնափոս ծաղկածաւալ,
Ի քիրան հարեալ խնկապատառ՝ զոր արեգակըն ցամաքեաց(1),
Իւրով ճառագայթիւքն ըզծըխաչունչն արբեալ խոնաւ։
Դէպ ուղիղ ընդ երկինս յածեցի զաչս իմ հիացեալս,
Եւ վայրիկ մի հայեցայ 'նդ լայնատարածն հաստատութիւն.
Մինչև ապա յարուցեալ ի բնեւ բերմամբ ոստեայ ի վեր՝
Իբր ի փոյթ անդրր ելից(2), և կանգնեցայ կացի յոտին։
Շուրջ զինեւ տեսի բըլուր, հովիտ և ծառս հովանաւորս,
Դաշտավայր արեգաւէտ և լոյծ սահանս ջուրց խոխոջից.
Տեսի ստեղծուածս անդ կենդանիս՝ չարժուն, գնայուն և կամ թըռ-
Ի թաւ ո՛ստըս ծառոյն՝ հաւուց երամ բիբեալ ճճուեալ։ [չուն,

(1) (Տես էջ 13 կ. 6)։

(2) Փոխանակ ըսելոյ՝ «ի փոյթ անդր ելանելոյ».—եւ բայարմատ բառը՝ իբ բային համաձայն՝ առած է անդր մակբայը։

Ամենայն լինչ ծիծաղէր, սիրտս ողողէր ի խինդ ու ի խաւնկ։
Ցայնժամ ընդ անձն իմ անցի, զննեցի յօդ առ յօդ զիրանս,
Մերթ գնացի, մերթ ընթացայ դիւրադարձ իմըն խաղալեօք,
Որպէս զիարդ և վարէր կենդանաւէտ զիս զօրութիւն.
Բայց ո՛վ էի, ո՛ւր և յորմէ՞ եկեալ ի գոյ՝ գիտէի ոչ։
Ի խօսել փորձ փորձեցի, և նոյն հեառայն բարբառեցայ.
Հըպատակ գըտաւ լեզուս և բաւական կարողապէս
Ի յօդել արագ արագ զանուանս իրաց որ առ ական։
Արեգա՛կն, ասացի, գեղեցիկ լոյսդ, և դու երկիր
Ի նմանէ լուսազարդեալ՝ գալարապուարճ՝ գեղածիծաղ,
Դուք բըլուրք և ծորձորք, դուք գետք, մայրիք, մարգագե-
Եւ դուք չըքնաղ արարածք որ ի նոսին կեայք և չըրջիք, [տինք,
Ասացէ՛ք, օ՛ն, ասացէք, եթէ տեսեալ լինչ իցէ ձեր,
Ո՛րպէս յայս կերպարանս եկի, գիա՛րդ կամ աստանօր,
Ապաքէն ո՛չ լինձէն, այլ ի մեծէ ոմն առաչէ.
Պատմեցէ՛ք ազէ գիա՛րդ լինձ ճանաչել լինիցի գնա.
Զո՛ր պաշտօն մատուցանել(*)՝ յորմէ չարժիմս, կեամ ու իմանամ։
Մինչդեռ ա՛յսպէս ձայնէի մոլորելով ոչ գիտեմ յո՛վ,
Եւ ոչինչ ընկալայ ուստեք գարձուած պատասխանուոյ՝
Նըստայ մըտայոյզ ի տախտ ուրեք կանաչազարդ
Թանձրախիտ հովանացեալ և չըռայլեալ ի ծաղկանց հոյլս։
Անդանօր նախ զառաջինն անկաւ զինեւ քուն մի անոյշ,
Եւ քաղցրիկ ծանրութեամբ զիմբերեալ զգայունս իմ նըւաճեաց։
Եւ ահա յեղակարծուստ եկն ի անարից եկաց իմոց
Ո՛մն աստուածակերպ, որ խօսեցաւ և ասէ ցիս.
«Տեղիդ քո քեզ ակն ունի, արի՛, Ադամ նախաստեղծ մարդ,
Որում կայ նախահայր լինել տոհմի անթիւ մարդկան»։
Եւ ընդ բանիցըն բարբառել(3) ըզձեռանէս կալեալ յարոյց,
Եւ ընդ դաշտըս և ընդ ջուրս՝ իբրև ընդ օդս անքայլ գնացիւք՝
Ա՛ւ տարաւ զիս կացոյց ի լեառնն մի անտառախիտ
Եւ սարահարթ, ուր ցանկապատ գեղեցկատունկ էր պարտէզ.
Ծառք լըցեալ չըքնաղ պտղո՛վքըն զաչս ի ճօճ զօշոտելով՝

(*) Իմա՝ այնմ կամ նմա...

(3) Փոխանակ ըսելոյ՝ «ընդ բարբառել զբանսն» (իր խօսքերը խօսելուն պէս). — Նկրգործական անեզևոյթին սեռի խնդիրը՝ փոխանակ հայցականի չատ անգամ սեռական հոլով կը դրուի, մանաւանդ եթէ նախադաս ըլլայ. (Հմմտ. էջ 4 կ. 1)։

վարէին բուռն ի տենչանըս քաղելոյ և ուտելոյ։
Եւ անդէն զգաստացեալ զըմի արդեամբք ակն յանդիման
Զոր ճչգրիտ եր երազոյն կենդանագրեալ ինձ ի պատկեր։
Ներախամիտ և պատկառոտ իմն երկիւղիւ առ ոտն անկայ
ի խոնարհ երկրըպագու. նորա կանգնեալ՝ ասէ հեզիկ.—
«Զոր խնդրեաց՝ ես եմ, Հաստիչ ամենայնի՝ զոր տեսանեիր
ի վերոյ քան ըզքեզ կամ չուրջ ըզքեզ կամ ի ստորև։
Քեզ տամ ըզդրախտս, առ քոյս կալջիր՝ ի մըշակել և պահպանել
Եւ վայելել ի պտղոցն. իշխանաբար և զուարթամիտ
Կերիցես յամենայն բուսեալ ծառոց ի պարտիզիդ.
ի սովոյ մի՛ զանգիտեր. բայց ի փայտէն՝ որոյ ճաշակ
Գիտութիւն ածէ զբարւոյ եւ ըզչարի(1), և է անկեալ
Առ ծառոյն կենաց, քեզ յո՛չ պատուիրանիս լինել խըրատ,
Զգոյշ լեր անտի մի՛ ճաշակել, և ապրեսցիս ի դառն արդեանցն։
Ուշիմ լեր. յորում աւուր ըստուգագաւեալ(2) զայս մի հրամանս
Ուտիցես ի նմանէն, առ օրին լեալ մահկանացու՝
Անհրաժեշտ մեռանիցիս, և կապտեսցիս ի պերճ բաստէդ՝
Վըտարեալ աստուստ յաշխարհ տառապանաց և աղեաց։

Թարգ.

Հ. Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՄԻԼՏՈՆ, Կորուստ Դրախտին, Գիրք Ը.

(1) Փոխանակ ըսելու. «Գիտութիւն բարւոյ եւ զգիտութիւն չարի». Հոս յատկացեալը իբրև անորիչ հայցական դերանվոլ իր նախդիրը յատկացուցիչներն առած են. Օրինակներ. Թագ առ նա զԱսիացւոց (=առ նա զթագ Ասիացւոց). Եռուն նմա գիրս զեսայեայ մարգարէի. Ոչ տայը Թոյլ ական հատանել զտան իւրոյ. Բայց յոյս մի ունիմք զաճմանն հաւատոց ձերոց, Հայլն։

(2) Ստուգագաեել բայը թէ՛ հայցական և թէ տրական ու բացառական հոլով խնդիր կ'առնէ՝ ըստ պատեհին։

20

ԿՐՕՆԲ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՑ, ԵՒ ՀԵՐՌՈՒՄՆ ՆՈՅԻՆ

Եանակալութիւն, Նախանձոտ-
Դանդաչել, ափեղբեղ խօսել[ընդ
Կրօնք, սովորութիւն, կարծիք
Լաւութիւն, երջանկութիւն
Ցընչաց ետրել, բանի պէս ընդել
Հիւղ, հիւլէ (յն. ὕλη)
Աստուածականաց, Աստուած
Իդոս, առանձնայատկութիւն (յն.
Կարգել, ճառել, սահմանել [εἶδος)
Անարար, դիւք մը չտեսնուած
Նախիր, արջառներու խումբ
Անհաս, որ չի կրնար (հիւլէ)
Կրօնաւորիլ, ղեռչանալ, ժողովել
Հողամարմ, մանրամաղ փոշի [ւել

Ա. Փիլիսոփայութիւն մի՛ութիւն և խնամակալութիւն ասեն, և չզոհել աստուածոց։ Եգ կրօնս Փիլիսոփայի՝ զչնչաւորաց միս չճաշակել և ի գինւոյ ժուժկալել. եւ ի լուսնոյ և ի վեր զամենայն լինչ որ է՝ անմահ համարել և որ լինչ նորա ի ներքոյ՝ մահկանացուս. և փոփոխումն չնչոց ի մարմնոց ի մարմինս մինչև ցանասունս և ցճճիս անգամ։ Եւ լուսթեան կրօնս սահմանեաց. և յետոյ գիւր անձն աստուած անուանեաց։

Բ. Պղատոնեանք [ասեն] աստուած՝ և հիւղ և իդոս, որ(1) առաջինն նիւթ է, և երկրորդն առանձինն ինչ ուրուք(ա). և զաշխարհս արարած և եղծանելի [ասեն], եւ զչունչ՝ անարար եւ անմահ և աստուածական, որոյ երեք մասունք են՝ բանական, ցասնական եւ ցանկական, և զկանայս հաւասարակաց ամենեցուն համարել։ Միանգամայն և աստուածս բազումս ի միջէ ելեալ սահմանէ [Պղատոն]։

Գ. Ստոյիկեանքն մարմին զամենայն լինչ եդին, և զերեւելի աշխարհս աստուած համարին. իսկ ոմանք ի հրոյ էութենէ համարին ունել ամա զբնութիւն։ Եւ աստուած զմիտս սահմանեցին, և մարմին նմա՝ զամենայն լինչ որ է՝ եդին, և աչս՝ զլու-

(1) Հոս քերականական անսովոր ձև մըն է որ յարաբերականին անհոլով գործածութիւնը իբրև անորոշ ածական. կրնանք սակայն չաղկապ ալ նկատել զայն, զի կամ վասնզի նշանակութիւնը տալով անոր։

(ա) Կը թարգմանուի. ինչ որ յատուկ է մէկու մը, այսինքն՝ բանի մը տեսքը, ձևը, կամ գոյութեան հանգամանքը։

սաւորսն: Եւ զմարմինս ամենեցուն կորստականս, և զչունչս՝ փոփոխելիս ի մարմնոց ի մարմինս.

Դ. Իսկ Եպիկուրեանքն ասեն. Անհատ և անբաժինք մարմինք էին զառաջինն, և անտի եկաց ամենայն լինել: Եւ վախճան լաւութեան ցանկութիւն սահմանեցին. և թէ՝ ոչ Աստուած գոյ և ոչ հնամակալութիւն՝ որ վարիցէ զամենայն:

*

Ա. Գլուխ փիլիսոփայիցն նոցա Պիւթագորաս ասէ՝ Մի մի- ութիւն պատճառ ամենայնի, և խնամակալութիւն: Զոր (զխնամակալութիւն) ո՛չ ի նմանէ (ի միութենէ) ասէ, այլ թէ՝ զօրութիւն լինի ելեալ առանձինն հնամակալութիւնն: Եթէ՝ որպէս [զպ]- պատճառ ամենայնի ի միոջէ միութենէ տայ[ը] և զխնամակալութիւնն ի նմանէ գնէր, զեղեցիկ և զովութեան արժանի կարգէր. բայց զի յայլմէ զպատճառն կարգէ և յայլմէ զխնամակալութիւնն, պարսաւանաց արժանի է և ոչ յարգանաց: Եւ զարձեալ՝ զի աստուածոցն ոչ հրամայեաց զոհել, այնու զովելի է. բայց զի ոչ յայտնի քարոզեաց՝ թէ մի Աստուած է և ոչ բազումք, այնու կարի դժուարիմ:

Դովելի և առաւել գովելի, զի վասն կարեաց և ցանկութեանց յաղթելոյ՝ ի կերակրոցն կրօնաւորեցաւ. բայց զի փոփոխմունս ոչուց ի մարմնոց ի մարմինս եղ, այնու յոյժ եպերելի է. որպէս թէ արդարոցն մեռելոց ոչինք յայլ ի սուրբ մարմինս փոխելոյն՝ կա՛մ ի մարգկան կամ յանասնոց սրբոց. Եւ այն նոցա իբրև ընդ հաստուցման բարեաց գործոց լինելոյն. և մեղաւորացն ոչինք յաղտեղի մարմինս փոխելոյն՝ կա՛մ ի մարգկան կամ ի գազանաց եւ ի ճճեաց եւ ի սողնոց, եւ այն նոցա ընդ հաստուցման չարաց գործոց լինելոյն: Եւ զմիտն չուտել՝ եթէ վասն զկարիս մարմնոյն խափանելոյ հրամայէր՝ բարւոք և յիրաւի առնէր, ապա եթէ ի պղծոյ խմէքէ արարածոյ հրամայէր հրաժարել, վատթարագոյն: Այլ յայտ են պատճառքն՝ ուստի զմիտն չնչաւորացն հրամայէր չուտել. որպէս թէ հոգի աստուածեղէն իցէ ի մսեղիսն, և վասն այնորիկ չիցէ պարտ ուտել զմիս կենդանեացն: Նոյնպէս և ոչ հրամայէ անասունս զոհել գից, որպէս թէ չիցէ պարտ զոհել աստուածս աստուածոց, քանզի հոգի աստուածեղէն ասէ յանասունսն: Կարի անարժան գործ էր և ի լուսնոյ ի վեր զամենայն լինչ անմահ համարել. յայտ առնէ՝ թէ զայն

ամենայն աստուածս կարծէր, և անտի և ի խոնարհ մահկանացուս գնելով՝ ցուցանէր թէ հուրդ և օդ և երկիր կենդանիք լինէ լեգեն և մեռանիցին. որոց ոչ զկենդանութիւնն զգացեալ, և ոչ զմահու ազդումն առնուն, որ չնչաւորացն է և ոչ անչնչոց: Եւ հնազամեայ լռութիւնն՝ զոր նոր յաշակերտութիւն եկելոցն սահմանեաց՝ թէպէտև մեծի ժուժկալութեան օրինակ էր, քանզի և ոչ հարցանել լինչ իշխէին՝ բայց միայն լսել, այլ ոչ լինչ կարի յօգուտ էր: Եւ որ անհնարին յիմարութեանն ի(²), յետոյ, ասեն, վիւր անձնն աստուած անուանեաց. որ յառաւել հպարտութեանէն գիպեցաւ նմա:

Բ. Իսկ Պղատոն որ աստուած՝ և հիւղ եւ լպոս պնէ էութեամբ, ցուցանէ թէ կերպարանաց արարիչ է Աստուած եւ ոչ բնութեանց... որպէս թէ Աստուծոյ արուեստգիտութիւնն ի կերպարանս եւեթ կարաց ածել զհիւղն՝ որ խառն ի խառն վարէր, և ո՛չ ի չգոյէ ի գոյ ած զամենայն, այլ կարօտ եղև յայլմէ (ի հիւղեացն) նիւթ մուրանալ. որով ոչ լինչ առաւել քան զարուեստագէտսն գտանի, և իբրև զնոսա կարօտ լեալ նիւթոյ: Եւ զաչխարհ արարած եւ եղծանելի ասէ. եթէ արարած եւ եղծանելի է՝ զի՞րդ մշտնջենակից Աստուծոյ լեալ: Եւ չունչքն՝ թէ վանդի յԱստուծոյ էութենէն լեգեն՝ անարարք և անմահք լեգեն, երեք մասունքն ի նոսա ուստի՞ լեգեն, բանականն և ցասնականն և ցանկականն. զի թէպէտև մինն (բանականն) լեալ յԱստուած, և ցանկականն. զի նա է աղբիւր ամենայն բանաւորութեան, այլ ի ցասմանէ և ի ցանկանալոյ ի վեր և ազատ է Աստուած, քանզի առանց կարեաց և առանց մասանց է աստուածականն: Եւ եթէ լինքն (Պղատոն), որպէս ասենն, կոյս վճարեցաւ յաշխարհէ, այլոց զի՞րդ հրամայէր զկանայս հասարակաց համարել: Եւ եթէ, որպէս դանդաչենն, բազում աստուածք ի միոջէ Աստուծոյն ելեալ լեգեն... այլ թերևս աստուածս գատարկս եհան յիւրմէ. Եւ գատարկ(ք) աստուածքն ո՞ւմ պիտոյ լեգեն:

Գ. Իսկ Ստոյիկեանքն մարմնապիշք հայեցեալ յերևելի աշխարհս՝ զամենայն լինչ մարմին կարծեցին, և զերևելի աշխարհս

(²) Փոխանակ ըսելոյ՝ Որ անհնարին յիմարութիւն է. — Իական բային հետ նման ասացուածով գործածուած սեռական խնդիրին քով լռելեայն կ'իմացուի զործ կամ իրք բառը. Օր. Որ յետոյ ամպարշտութեան է. կ'իմացուի՝ «որ գործ է յետին ամպարշտութեան» կամ՝ «որ է յետին ամպարշտութիւն»:

աստուած համարեցան... և ոչ յայլոց ուսանել կամեցան՝ եթէ է լինչ զօրութիւն որ զերևելիսս չարժէ, և զչարժի՛չն պարտ է աստուած իմանալ եւ ոչ զչարժունսն: Ոմանք ի նոցանէ ի հրոյ էութենէ ասեն զբնութիւն աշխարհիս, վասն զարեգակն առաւել զարմանալի համարելոյ եւ զբնութիւն հրոյ սաստկագոյն իմանալոյ, եւ հայեցեալ ի միտս՝ թէ զամենայնէ մօտ նկատել մարթեն, վասն այնորիկ զմիտս աստուած համարեցան, իբրև զչունչ երկնից և երկրի եւ ամենայնի որ ի նոսա, և ա՛չս՝ զլուսաւորսն: Որք ըստ անարժան անմտութեանն՝ եւ ոչ պատասխանի առնելոյ արժանի են:

Դ. Իսկ Եպիկուրային(բ) բնաւ լինքնակաց իսկ համարին զաշխարհս. որպէս թէ նախ հողամաղք ընթանային: Որպէս յորժամ չողն ընդ երդ մտանիցէ և հողամաղք լիմն երևին ի չողն՝ այնպիսի, ասեն, մարմինք անհատք և անբաժինք էին զառաջինն, և անտի թանձրացեալ յօդեցաւ լինքն աշխարհս, և թէ՝ ոչ աստուած և ոչ խնամակալութիւն լինչ է որ վարիցէ զաշխարհս: Զորս և փիլիսոփայքն յընչաց քերեն եւ ամենևին չհամարին զնոսա (զԵպիկուրայս) աղանդս: Որոց այնքան կամակոր յամառութիւնն եղև, մինչեւ յայնչափ ի բազում (ի) նախընաց փիլիսոփայիցն աստուածոց և ոչ մի աստուած ըմբռնել(գ):

ԵՂՆԻԿ, Գ. Դ. ԺԱ-ԺԳ.

(բ) Եանիք կամ այլ յետամանիկները, տոհմի կամ ընկերակցութեանե վերաբերութիւն մը ցոյց կուտան:

(գ) Կարգա ա՛յսպէս՝ Մինչև և ոչ մի աստուած ըմբռնել [նոցա] յայնչափ ի բազում աստուածոց նախընաց փիլիսոփայիցն:

21

ԱՐՈՒԵՍՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Փոխանակ ասուսան, պէրանուն	Վարիմ (իւիմ), ջոյնամանը (բանը)
Առանձինն բանիմ, յատկապանու-	Շլմորիմ, շէմրիլ
Մթարգմանութիւն, մրուրիւն [րիւննէր	Ցանախել, շաղնիլ
Խարխալել, խախխիլ, խարխիլ	Բան, բարբառ, բառ
Հիւթանիւթիմ, առաջին պարբեր,	Հասանել, հասու ելլալ, հասնիլ
Պատճառիմ, յարմաբեցնամ [հիւլէ	Սրբել զմիտս (բանին), (խոհին)
Ընծայութիւն (մտաց), արդայա-	Առնիմ, ելլալ [ինձապը պարբեր
Հանդէս, ցուցում, ջոյց [պուրիւն	Դիր, դրութիւն, ջոյնամունութիւն

Եթէ ոք կամիցի զաւեհայն լեզուաց նովին բանիւք զզօրութիւնն թարգմանել, չկացուցանէ յանդիման զբանիցն ասացելոյ զմիտս: Քանզի բազում են ըստ իւրաքանչիւր լեզուաց առանձինն բանք, որք եթէ անդէն ի տեղւոջ մնայցեն՝ գեղեցիկք եւ լուսաւորք և յայտնիք և պատշաճողք թուին այնոցիկ՝ որք զլեզուսն ի կիր արկանիցեն, բայց նովին բանիւք յայլ լեզու (փոխ)նոսա ի կիր արկանիցեն, զմտացն զօրութիւն: Բազում լինչ փոխեալք՝ չընծայեցուցանեն զմտացն զօրութիւն: Բազում լինչ այսպիսի և պէս պէս գտանեմք ի Հեբրայեցւոց լեզուն և ի նորին դրացւոյն, յԱսորիս(1): Եւ յայնոսիկ որ զՀին կտակարանսն թարգմանեցին՝ բազում մթարութիւն է տեսանել, որք ըստ բանիցն թարգմանեցին՝ զի երևեսցին ստուգագոյնս լինչ առնել, փութացեալք ի բանիցն թարգմանութիւնն՝ ի կարգ մտացն, որ ի բանիցն ապականէր, յայն(2) ոչ հայեցան: Քանզի այն իսկ պատշաճագոյն էր՝ թողուլ զբանիցն զառանձինն պայման ըստ իւրաքանչիւր լեզուացն, և զմիտս թարգմանել և յանդիման կացուցանել, և ոչ առանձինն բանիցն պատշաճիւք զզօրութիւնն մտացն խարխալել:

(1) Փոխանակ ըսելու՝ «ի լեզու դրացւոյ նորին՝ յԱսորին»: — Հոս բացայայտիչ եւ բացայայտեալ են ի [լեզու] եւ յԱսորին բառերը, երկուքն ալ նոյն հոլովով դրուած, ինչպէս կանոն է:

(2) Փոխանակ պարզապէս ըսելու՝ «ի կարգ մտացն... ոչ հայեցան»· — Հոս յայնը աւելադրութիւն մըն է, միջանկեալ նախադասութենէ մը եառքը դրուած, խօսքը աւելի ուժգին ընելու համար:

Եթէ ոք ոչ այսպիսի պայմանաւ թարգմանութեանն վարիցի՝ բազում աշխատութիւն ընթերցողացն յառնէ, առ ի չսըբքելոյ զմիտան հանդիսիւն զոր առաջի դնիցէ եւ բռնադատիցէ զայն կարգ որ անդ կայցէ՝ յայլ միտս, զոր ոչ եւ բանքն իսկ յանձն առնուցուն: Քանզի և հարկ իսկ է այնոցիկ՝ որ զյոյն լեզուն ունկնդրին և զնոյն ի կիր արկեալ վարիցեն՝ տգեղ լինել հեբրայական առանձինն բանից: Զի որ Յունաւն առանձինն բանիւքն վարիցին՝ ընթերցեալ զթարգմանեալսն ըստ Հեբրայեցւոց բանիցն բարբառոյ՝ չլմորին: Այլ որպէս ասացի իսկ, բարւոք է զլեզուին՝ որ թարգմանիցի՝ թողուլ զառանձինն բանն, և զմիտան թարգմանել: Իսկ յորժամ առանձինն բանիւքն վարիցին (= վարեցան) թարգմանիչք լեզուին յայլ լեզու(3), որպէս և այժմ յԵբրայեցւոցն ի յոյն լեզու, զմտացն ընծայութիւնն երբեմն կասեցուցին և երբեմն ամենևին իսկ մթացուցին. եւ զայս յայնցանէ՝ որք զՀեբրայեցին իսկ գիտէին՝ տեղեկացեալ(ք) գրոչմեցաք:

Բայց պարտ է գիտել՝ եթէ ե՛ն բանք յԵբրայեցին՝ զորս նոյնաբանութեամբ թարգմանել չէ հնար, վասն առանձինն բանիցն խորութեան, և ի հարկէ թարգմանիչքն զմիտան ևեթ զբանիցն ի յայտ ածել ջանացան: Զի զ«Ի սկզբանէն արար Աստուած զերկինս և զերկիր» ո՛չ «Ի սկզբանէ» ասէ Եբրայեցին՝ այլ «Ի գլխոյ»: Ակիւղաս(ա) և զյայտնաւորութիւն մտացն մթացոյց, «Ի գլխոյն ասէ, արար Աստուած զերկինն և զերկիր»: «Զգլխոյն» [ասելով]՝ Յոյնք ոչ գիտկզբանէն գիտեն (=իմանան)՝ այլ «Կարճ ի կարճոյ»: Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր.— զոր Յոյնք յանդգնեցան ասել զՄովսէսէ՝ թէ զնգիպտացւոց իմաստութիւնն [էր] ուսեալ, որ՞ ասէն՝ եթէ ի նիւթոյ ինչ (=իմեքէ) որ առաջի կայր՝ արար Աստուած զամենայն. և զնմանէ ասեն ի նմին կրօնս կալ մնալ, զի «Արար»ն ասեն, ոչ ի չգոյէ նշանակէ, քանզի է՝ եւ ի նիւթոյ ինչ որ առաջի կայցէ՝ առնել, որպէս յերկաթոյ՝ զմանգաղն: Բայց արդ մարթի ի հեբրայական բարբառոյն տեղեկանալ՝ թէ [=զի] «Արար»ն բաւականութեամբ իսկ յայտ առնէ թէ

(3) Ներգործական բայածականները՝ սովորական սեռական խնդիրէն զատ տարբեր հոլովով խնդիրներ ալ կ'առնեն իրենց բային համաձայն. հոս թարգմանիչ բառը երկու ձևերով ալ խնդիր առած է:

(ա) Ակիւղաս (Բ. գարու սկիզբները) Հին կտակարանը Եբրայեցերէնէ փոխած է Յունարէնի, տառացի թարգմանութեամբ:

ի չգոյէ եղեալ է: Քանզի [Մովսէս] ընդդէմ այնոցիկ կայր՝ որ զհիւթանիւթեան մուծանէին: Բայց թարգմանացն ի դէպ էր չգիտել ո՛չ զՄովսիսի զմիտան՝ որ յայնպիսի իրս յորդորեցան զնա ածել, և ոչ զայնոցիկ [միտան] որք զնոյնս խծբծելոց էին:

Եւ այն զի՞նչ իցէ՝ զի զձայնաւոր նշանագիրսն՝ որ ընդ անձայնսն խառնին՝ ոչ գրիցեն, այլ միայն զանձայնսն. եւ ապա յընթերցուածոյն կարգէ՝ որպէս և հասանել կարէ որ ընթեռնուն՝ ածէ ի վերայ իւրաքանչիւր անձայնիցն զձայնաւորսն, եւ մարթի զնոյն [բան] ա՛յլ և այլ ազգ ընթեռնուլ: Այսպիսի ինչ. Համարեաց թէ գրիցէ զկենն միայն և զրէ առանց ձայնաւորացն, եւ հարկ լինիցի ընթերցողին յաւելուլ զձայնաւորսն [յ]իւրաքանչիւր ումեք անձայնիցն, եւ ասել իբրև ի կարծեաց՝ կեր, կուր, կոր, և այսպէս՝ իբրև փոխիցէ զձայնաւորսն՝ այլ և այլ բարբառս ցուցանեն: Այսպիսի չատ ինչ առանձինն կայ յԵբրայեցին: Եւ բազում ինչ է որ յԵբրայեցին արուաբար ասի, եւ ի Յոյնն իգաբար: Լուսինն եւ ծով անդ արուաբար ասի, եւ ի Յոյնն՝ իգաբար: Եւ փոխանակ միաւորին զբազմաւորն դնէ [Եբրայեցին], որպէս յորժամ ասիցէ երկինք՝ փոխանակ ասելոյ թէ երկին, եւ այս յԱսորին եւ յԵբրայեցին նոյնպէս գտանի: Նաև Եբրայեցին և Ասորին՝ արուին այլազգ ասեն զե՛րթն և զե՛կ [և զկե՛ր եւ զԱ՛րքն], եւ իգին՝ այլազգ, [դիւրիւ] փոխանակ աճուանցն(բ), որ առ մեզ գտանի: Զի յասելոյ անտի միայն՝ թէ ե՛րթ, արուն զիւրն ուրոյն իմանայ, և էգն զիւրն: Նաև այն զոր ասէն՝ թէ «Ի վերայ լերին բարձու ե՛լ աւետարանիչդ Սիոնի», ոչ արուաբար՝ այլ իգաբար ասի. և քանզի ի մեր լեզուս չէիք այնպիսի բան որ զայն նշանակիցէ, չկարաց յայտ առնել՝ արուաբա՛ր իցէ թէ իգաբար:

Ամենայն լեզու որ նոյնաբանութեամբ յայլ լեզու թարգմանիցի՝ մթին առնի. զի որ առ մեզ երկին ասի, եբրայեցերէն բազմաբար ասի թէ երկինք:

Սուս-կիւրեղ. Աղեքսանդրացի — Մեկնութիւն Ս. Գրոց

(բ) Թարգմանէ՝ պէսպէսութիւն պրօեկլվը, այսինքն թէ՝ բային վրայ իբրև յհատամասնիկ գրուած գերանուանէն կը հասկցուի որ խօսքը արուի՞ ուղղուած է՝ թէ էգի:

22

ՉԻՊՉ ՆԱԽԱԾՆՈՂԱՅՆ

Հարբնում, իջուէլ
Տապիմ, սասպին պենալ, այբէլ
Կափուլ, ուրֆայի, ձուզակ
Ես ընդ Ես, անիջապէս
Ցակն անկանել, երևնալ, ապէ
Ազգ, սեռ [դուէլ
Շուշականիճ, յուցասէրութիւն
Մատն եւ տուր լինել, մատնել
Շորիկ, պահասպիտ
Ի դեմս ածել, ներկայացնել
Ցանկ, պարշտ
Ընդ վայր հարկանիմ, երեսե ընկ-
Կողաշեն, կողաձին (ես) [նել
Թիրախ, նպատակ նետի

Բարձրաձայն հեծէը Ադամ ի լըռութեան անդ գիշերոյ.
Անկեալ կայր տարածեալ գետնաթաւալ ընդ ցուրտ երկիր,
Եւ հագըստեպ անիծիւք զարարչութիւն իւր նըզովէր։
Տրտընջէր և յաճախ գյապաղելոյ մահուն ի գործ՝
Որ յաւուր անդ յանցանացն յայտ յանդիման էր քարոզեալ։
«Զի՞ է՝ զի ոչ գայ մահ ի մի հարուած բարեբաստիկ
Զիս վըճարել. դըրժեսցէ՞ ճշմարտութիւն խոստման իւրում.
Արդարութիւն աստուածեղէն ո՞չ փութասցի լինել արդար։
Իբրև հէքն Եւա եռես՝ ուստի նըստեալ կայր թախծալից՝
Ըզնա յայս սուգ կարևոր, մաուցեալ գուն գործէր հնարէր
Անուշակ բանիւք յօճան անհընարին բուռըն ցաւոցն,
Այլ մերժեաց նա ի բաց ահագնացայտ ակնարկելով.
«Ե՛րթ յաչաց ի բաց, օձ դու. քեզ այս անուն յանկ է և հուպ,
Քեզ՝ ընդ իւր գաշնաւորիւդ՝ որ եաղ խակ սուտ և ատելի։
Ո՛չ լինչ այլ քեզ պակասէ՝ բայց կերպարանք նըմին հանգէտ,
Եւ թոյր լին օձային՝ ի դէմս ածել ըզսըրտիդ նենգ.
Զի արարած ամենայն ըզգոյչ յապայս ի քէն կացցեն,
Գուցէ ընդ գեղովդ երկնային ի գըժոխոց անկցին կափուլ։
Առանց քո յաւերժաբար երջանկաւէտ լինէի ես.
Եթէ քո յաւակնութիւն և չըջմոլիկ նազանաց միտք,
Մինչ էէրն խակ յապահովս, էէրն ըզխրատս իմ զընկեցեալ։
Տապէիր գիւրին անգամ յակն անկանել չոչականօք,
Զոր ա՛կն խակ ունէիր խաբել, չորիկ ամբարհաւաճ.
Բայց օձին պատահեալ՝ ծաղըր կացեր և պատրեցար,

Դու ի նմանէ, ես ի քէն, հաւատալով կողաշինիս։
Կարծեցի զքեզ իմաստուն, անզրդուելի հաստն մըտօք,
Ծամենայն մարտ անվըկանդ, չառեալ ի միտ՝ եթէ ի քեզ
Ամենա՛յն լինչ երևոյթ էր՝ ոչ արդեամբք լինչ լաւութիւն։
Ոչ լինչ այլ յաւել Ադամ, և ի նմանէ զարձոյց զերեսս.
Իսկ Եւա չհարթուցեալ՝ և արտասուօք անհատանոս՝
Հերարձակ անկաւ յերկիր և փարեցաւ զոտիւք նորա՝
Աղերսել ի հաչտութիւն, և զայս ողբոյ արձակեաց ձայնս.
«Մի զիս ա՛յսպէս թողուր, Ադամ, զերկինս ունիմ վըկայ
Սեռն և սիրտ սիրոյ սրտիս և պատկառոտ մեծարանաց.
Քեզ յաղերս անկեալ խնդրեմ ողորմութիւն, փարիմ զծնգօքդ,
Մի՛ զրկեր զիս յորմէ կեամս, ի քաղցր աչացդ, ի նըզպաստիցդ,
Ի խորհըրդոց՝ որ ի սկիզ յաւէն տագնապ տարակուսի
Են միայն իմ զօրութիւն և միայն մոլի հաստատութեան։
Առ ի քէն ընդ վայր հարեալ՝ յա՛վ մեկնեցայց, ա՛ւր ապրիցիմ.
Մի՛ յիս զոխսըդ թափեր վասն ապեիցըն հասելոյ՝
Ցիս արդեն իսկ կորուսեալս(1), յիս ի բըշուառըս քան զքեզ։
Երկոքեանըս մեզաք, դու Տեառն ևեթ, ես Տեառն և քեզ.
Երթամ անդրէն ես ի տեղի անդըր գառնամ դատաստանին,
Եւ կախան բարձեալ ի ձայն մեծ թախանձեմ զերեսս երկնից,
Զի անցցէ դատակնիքն ի քոյ գլխոյդ, և յիս անկցի,
Ցիս յիս միայն՝ ի բուն ժառանգըս բարկութեանն աստուածայնոյ»։
Վախճանեաց հեկեկալով, և կայր մընայր խոնարհ, անշարժ.
Որ և այս յողորմ ի գութ՝ յարզահատանս ձըգեաց զԱդամ.
Որպէս ա՛յր մի գինապերծ՝ մերկացեալ նա զսրամըտութիւնն՝
Թէ կարող լինչ էր աղերս ըզբարձրելոյն փոխել հրամանս՝ [մուտ.
Փութայի կանխել քան զքեզ անդր ի տեղի դատաստանին
Եւ ուժգնագոյն գոչէի՝ կանգնել զիմ գլուխ ևեթ թիրախ,
Ներել քում տըկարութեանդ, և ապիկար ազգիդ քոյոյ՝
Որ յիսն հաւատացաւ և մատն և տուր ես ինքն եղէ։
Զի՞նչ ունիմք լաւ լինչ առնել՝ բայց ի տեղի գառնալ դատին՝

---

(1) Փոխանակ ըսելու՝ «յիս... ի կորուսեալս»։ — Հոս բացայայտիչը չէ առած բացայայտեալին նախդիրը։ Համեմատէ անմիջապէս ետևէն եկող «յիս ի թշուառս» խօսքը։

Խոստովան լինել անդ ըզմեղսս մեր խոնարհութեամբ,
Ինդրել մեզ թողութիւն՝ թացեալ զերկիր յորդ արտասուօք
Ցերաչխիս անկեղծաւոր զըղջման և խոր տառապանաց»։
Զայս մերն ասաց հայր՝ զիղջ ի սիրտ, հարաւ չՅեա նոյն խէթ խըզճի
Ետ ընդ ետ չոգան ի վայրն ուր ըզնոսին դատեցաւ Նա.
Եւ եղեալ խոստովան ըզմեղս իւրեանց խոնարհութեամբ՝
Ինդրեցին թողութիւն՝ թացեալ զերկիր յորդ արտասուօք,
Ցերաչխիս անկեղծաւոր զըղջման և խոր տառապանաց։

Թարգմ.

Հ. Ա. Կ. Բ. ՄԻԼՏՈՆ, Կորուստ Դրախտին, *Գիրք Ժ.*

23

ՔԱՂԴԷԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՔ ՅԱՂԱԳՍ ՈՎԱՆԱՅ ԵՒ ԲԵԼԱՅ

Մօրական, *ճահիճէ ծով ապրող*	Դպրութիւն, *գիր, գրականութիւն*
Զառաւցելոց առասպելք } *ընդ-*	Երկեկից (Ընդ-՝երկակեաց), *եր-*
Առացիկ ճառք } *դիմաբան առասպելներ կամ խօսքեր*	Գոնգ, *ոտքէն արմատ ըլ [կաճենացաղ*
Խալ, *ծանծաղ տեղ*	Կնճիթ, *սոսամ*
	Գալ զգրովք, *գիրերով ընթանալ*

[Յոյնք] ընդ երկար ժամանակս մինչև ցկատմեալ ազգն ամենևին գրով ինչ ոչ վարէին։ Քանզի կազմոս, ասեն, նախ եբեր նոցա գիր ի Փիւնիկեցւոց աշխարհէն։ Եւ յերաւի խակ ի Պըղատոնի գիրսն(ա) անգոնանէ եգիպտացին զՍողոն. «Ով Սողոն, ասէ, *[դուք]* Յոյնք*[դ]* միշտ մանկտի էք, քանզի ծեր յոյն այր եբեք ոչ գտանի, եւ չիք առ ի ձէնջ ուսանել ուսումն զինի ժամանակին»(1)։ Իսկ Եգիպտացւոց բազում ինչ առանցնիկ ճառք պատմին, նոյնպէս և Քաղդէացւոց։ Զի սոքա քառասուն և չևս

(ա) Պղատոնի «Տիմէոս» անուն տրամախօսութեան մէջ։
(1) Տես էջ 54 ծ. 4.

աւելի բիւրս ամաց(2) համարին զգրեալ իւրեանց ժամանակն, եւ եգիպտացիք դից իմն և այլոց ոմանց դիւցազանց, և առ այնու(բ) ուրուականաց և մահկանացուաց այլոց թագաւորաց բազում ինչ զառանցելոց առասպելս տողեն։ Բայց ես վասն իրացն որ առաջի կան զհնոցն գրովք եկեալ՝ նախ եդից զքաղդէացւոցն ժամանակագրութիւն։

Ո՛ն առ այսր(գ)՝ սեացուք զառ ի քաղդէացւոց գիւրեանց նախնեաց պատմեալ զժամանակագրութիւնն։

Բերոսոս (պատմիչն քաղդէացւոց) բայ ասէ(3) յառաջնում Բաբելոնական մատենին՝ լինել ևմա(4) ի տիս Աղեքսանդրի Փիլիպպեայ։ Եւ գրել զբազմաց մատեանս(դ), որ (և) ի Բաբելոնի բազում զգուշութեամբ պահէին յերկերիւր և ի հնգետասան բիւրուց ամաց [հետէ], յորում թիւք ժամանակաց, և գիր պատմութեանց գերկնից և գերկրէ և զծովէ և զնախակերան արարչութենէ եւ զթագաւորաց եւ գնոցուն իրաց եւ զգործոց պատմէ։ Եւ նախ, ասէ, զԲաբելացւոց երկիրն հաստատեալ ի վերայ Դկղաթ (Տիգրիս) գետոյ, եւ Արածանւոյ (Եփրատայ) ընդ մէջ անցանել. եւ եւ յիճիճ կայ (թերևս՝ իճիճակայ) վայրենի ցորեան եւ գարի եւ ոսպն եւ ոլոռն եւ կնճիթ երկրին բերել, եւ ի խաղս եւ ի չամբս

(2) Երբեմն թուական ածականները սեռական խնդիր կ'առնեն մասնական անուններու պէս, մանաւանդ եթէ մեծ թիւ մը նշանակեն. Հոս ամաց սեռական խնդիրն է ի... բիւրս ին։ Օր. Հազար մի հեծելոց. Բիւրս բուց բիւրս մարդկան. Ընտրեաց ցհսոս երեսուն հազար արանց, *և այլն*։

(բ) Թարգմանէ անոր վերայ, կամ անկէ ղատ, ինչպէս կ'ըսուի նաև՝ առ այսու, առ այսոքիւք, առ որով, *և այլն*։

(գ) Այս խօսքը իրրև միջարկութիւն կը թարգմանուի, օ՛ն, աղէ, սկսի՛ն։

(3) Աւեմ բային հետ գործածուած բայ բառին (բամ՝ բաս ձևերովը միասին) բայական արժէք մը տալէ աւելի՝ ի դէպ է հաստատական միջարկութիւն մը նկատել զայն։

(4) Նէմա փոխանակ ըսելու իմեեան։ Թարգմանէ այսպէս. Բերոսոս կ'ըսէ արդարեւ թէ իմիր տարեկից կամ ժամանակակից էր Աղեքսանդր Մակեդոնացիին։ Սոյն ամբողջ հատուածին մէջ՝ ուսանողը ստէպ պիտի հանդիպի անընդհատ քով տրական հոլով տերբայներու։ Ընտրելի է այս ձևը՝ ասէ, պատմէ, *և այլն* բայերուն վերաբերող պատմական նախադասութիւններուն համար, փոխանակ կազմելու դանոնք թէ չակոսով և ըստ այնմ դիմաւոր բայով, *և այլն*։— Պէտք է դիտել տալ սակայն՝ թէ թարգմանիչը տեղ տեղ որոշ կանոնի մը չէ հետևած։

(դ) Բնագիրին ճշդութիւնը պահելու համար՝ պէտք է կարդալ. եւ զբազմաց գրեալ մատեանս։

գեաոյն արմատոց լինչ ուտելեաց գտանել՝ որոց անուն կոչիցին գոնգք, ուենել առմատոցն զօրութիւն գաբուոյ հացի (= գարեղէն հացի)։ Լինել անդ և արմաւ և խնձոր, և այլոց ևս ազգի ազգի մրգոց և ձկանց և հաւուց վայրենեաց և մօրականաց։ Լինել և Արաբացւոց (արաբական) կողմանցն նորա անջրդիս եւ անպտուղս, և դէմ յանդիման Արաբացւոց աշխարհին՝ լեռնայինս եւ պտղաբերս, եւ ի Բաբելոնի բազմամբոխ այլազգեաց մարդկան բնակել ի Քաղդէացւոց աշխարհին, և կեալ նոցա անառակութեամբ իբրև զանասունս և իբրև զգազանս։

Եւ յառաջնումն ամին յայտնեալ ի կարմիր Ծովէ, անդէն խակ ի մէջ սահմանացն Բաբելոնի, ահագին լինչ գազանի՝ որոյ անուն կոչիցի Ովան, որպէս և Ապոլոդորոս(Ե) պատմէ ի մատենին՝ թէ ամենայն մարմինն ձկան էր, եւ ընդ գլխով ձկանն ա՛յլ գլուխ առ նմին պատչաճեալ, և ի տուընն ոտք իբրեւ զմարդոյ, և բարբառ [նորա] ըստ մարդկան բարբառոյ, որոյ պատկերն և ցայժմ գրեալ պահի։ Եւ գազանին այնմիկ, ասէ, ցերեկ ընդ մարդկան շրջել, և ի կերակուր լինչ ամենևևին չհպել, և ուսուցանել (= աւանդել) մարդկան գպրութիւնս և գպեղպէս հանգամանս արուեստից. զձեւս քաղաքաց և զմեհենաց պատչաճութիւնս և գօրինաց խելամտութիւնս և սահմանաց և բաժնից պայմանս (ուսուցանել). և զսերմանց և գպտղոց ժողովս ցուցանել, և ամենևևին իսկ որ լինչ ի դէպ ընտանութեան կենաց իցէ աշխարհի՝ աւանդել մարդկան. և յայնմ ժամանակէ հետէ այլ ուսեաւ (= այլուստ ուսումն)լինչ աւելի չգտանել։ Եւ ի մտանել արեգականն՝ Ովանն գազանի միւսանգամ անդրէն ի Ծովն վխել և գցայգ ի համատարած ծովուն գտեղել (=գնստեղել), և այնպէս երկեկից լինն կեանս կեալ, և յետոյ այլոց գազանաց նմանեաց ևնին յայտնել. և գՕովանայն ասէ՝ զարարածոց և զառաքինութեանց գրել, և տալ խօսս և ճարտարութիւն մարդկան։

Եւ գԲելայն ասեն, որ Յունարէն Դիոս թարգմանի (և Հայերէն Արամազդ)՝ թէ ընդ մէջ կարեաց գխաւարն, և գատանել ի միմեանց գերկինս և գերկիր, և յարդարել յօրինել գաշխարհ. և գազանաց ոչ ժուժել լուսոյ գօրութեանն և սատակել։ Տեսանել Բելայ աշխարհ լինչ անապատ եւ պտղաբեր, հրաման տալ միւսում ի գինն՝ յարենէն որ ի հատեալ գլխոյն իւրմէ իջանիցէ՝ զանգանել ընդ հող և ստեղծանել մարդիկ և այլ անասունս եւ գազանս՝ որ կարիցեն այսմ օդոյ ժոյժ ունել. հաստատել Բելայ գաստեղս եւ գարեգակն եւ գլուսին եւ գհինգ աստեղսն պատրաւացս(Զ)։ — Զայս, ըստ Բազմավիպին(Է), Բերոսոս յառաջնում մատենին պատմէ։

ԵՒՍԵԲԻՈՍ, Քրոնիկոն (Ժամանակագիր Կանոնի).

24

ՎԱՍՆ ՋՐՀԵՂԵՂԻՆ

Ցալ ծանօթս, գեղեցկութեան գաւ
Շար, 3600 գարիներս չրջան (տեսական բառս ը, յն. σάρος)
Ի գրի հարկանել, գիրէ առնել
Վտաւան, արյակառաջ նեռի ը չափը
Ջնջոց, քառանման գեղ
Ջիւ լինել յաչաց, անհետանալ
Կռովն=Կռոնոս (յն. Κρόνος)

Քսիսութրոս նոյն է որ ի յԵբրայեցւոցն Նոյ կոչի, առ որով եղև մեծ ջրհեղեղն, զորմէ եւ Բազմավիպին (Ալեքսանդրի) գերազ տան ծանօթս. քանզի գրէ գնմանէ այսպիսի լինչ.

Ի վախճանել, ասէ (Բազմավէպն), Ուրիարտեայ, նորին որդւոյ Քսիսուբրայ թագաւորել չարս ուրեմնս, և առ նովաւ լինել մեծի ջրհեղեղին։ Եւ ի գրի հարեալ մի ըստ միոջէ այսպէս պատմէ։

Կռովն, ասէ, նմա (Քսիսուբրայ) ի քուն յայտնել (զոր հայրն անուանեն Արամազդայ, և այլք ժամանակ) ի հնգետասաներորդում Դեսիոս ամսեան՝ որ է Մարերի՝ մարդկան ի ջրհեղեղէն սատակել(1). հրաման տալ գամենայն գառաջինս և գմիջինս և գվերջինս մատենից՝ փորել եւ դնել յՍիպար քաղաքին Սիպարացւոց։ Նաւ գործել և ի ներքս մտանել հանգերձ ազգականօք և կարեւոր բարեկամօք. համբարել ի ներքս ռոճիկս եւ ըմպելիս. մուտ

(Ե) Յոյն պատմիչ և քերական (Բ. գար նախ Ք. գիս.)։

(Զ) Մոլորակ նշանակութեամբ, բայց ո՛չ ճիշդ թարգմանութեամբ։
(Է) Ալեքսանդր Բազմավիպ, յոյն պատմիչ (Ա. գար նախ Ք. գիս.)։
(1) Ամբողջ խօսքը սեռի խոպիրն է յայտնել բայլին։

ծանել և գազանս և թռչունս և չորքոտանիս և ամենայն կազմածովք պատրաստ լինել ի նաւարկել: Հարցեալ թէ յո՛ ուրեք արդեօք նաւարկիցէ, պատասխանի արարեալ [Կրոմվէլի]՝ թէ առ դիան. [վասն որոյ] և աղօթս առնել՝ զի բարիք մարդկան լինիցին: Եւ չստունգանէր (Խնխուէթրոս) գործել զգործ նաւագործուբեանն(²), որոյ երկայնութիւնն էր հնգետասան վտաւան, և լայնութիւնն երկու վտաւանք:

Հանդերձեալ կազմեալ ըստ ամենայնի՝ որպէս և առ հրաման զկին և զորգիս և զկարեւոր բարեկամս ի ներքս մուծանել. ի հասանել ջրհեղեղին և վազվազակի ցածնուլ, թռչունս ինչ արձակել Խնխուէթրայ, եւ [նոցա] չգտանել ուտել ինչ եւ ոչ տեղի և դադար իջանելոյ, դարձեալ միւսանգամ առնուլ զնոսա ի նաւն: Եւ յետ սակաւ ինչ աւուրց՝ դարձեալ արձակել ա՛յլ հաւս, եւ նոցա ևս միւսանգամ անդրէն ի նաւն գալ(ա) կաւով թաթախ զմագիլսն բերեալ: Ապա երրորդ անգամ արձակել, և անդրէն միւսանգամ չգալ ի նաւն: Ցայնժամ իմանալ Խնխուէթրայ՝ եթէ յայտնեալ բացեալ է երկիր. քակել զկողմն մի ձեղուան նաւին, և տեսանել երթեալ յեցեալ նաւն ի լեառն ինչ: Ելանել կնաւ և դստերբք միով հանդերձ և ճարտարապետաւ նաւին, և երկիր պագանել յերկրի, բագին կանգնել և զոհ[ս] դիոց մատուցանել, և այնուհետև չիք յաչաց լինել նոքօք հանդերձ՝ որք ընդ նմա ի նաւէն ելանէին: Եւ որք անդէն ի նաւին մնային չէլանէին ընդ Խնխուէթրեանց. ելեալ յետոյ խնդրէին գնա, և յանուանէ չըմբէին գոչէին կոչէին: Խնխուէթրայ չերևեալ այնուհետև նոցա, բայց ձայն բարբառոյ յօդոցն եկեալ պատուէր տայր՝ եթէ պարտ է նոցա դիւցազպաշտս լինել, և եթէ՝ լինքն (Խնխուէթրոս) վասն դիւցազպաշտութեանն երթեալ բնակիցէ ի բնակութիւն դիցն, և կնոջն նորա և դստերն և նաւապետին ի նոյն պատիւ վայելել: Եւ դուլ եւ պատուէր տալ նոցա՝ երթալ միւսանգամ ի Բաբելոն, եւ թէ այնպէս ինչ հրամանք դիցն լցեն, նոցա երթալ ի Սիպարացւոց

(¹) Մինչեայն բառով ձևացած այսօրինակ նախադասութիւնները յաճախ կը կիրարկուին Ոսկեդարեան գրուածներու մէջ. Համմ. «Զգործ չարագործութեան գործեն» (եղնիկ). «Զի մի՛ պատահեսցին ի պատահարութենէ պատահար արմատոցն» (վկայօրէք Բարսղի), և այլն:

(ա) Պէտք է մանաւանդ ուշադրութիւն դարձնել տրական տէրբայի ուղղեցող այն անորևոյթներուն, որոնց պիտի հանդիպի ուսանողը ցվերջ հատուածիս:

քաղաքէն փորել հանել զմատեանն որ ծածկեալ կայցեն անդ, և տալ մարդկան, և եթէ՝ տեղին յորում վայր(³) ելեալ կային՝ Հայոց աշխարհն է:

Եւ նոցա լուեալ զայն ամենայն՝ զոհս դիոց մատուցանել, և ի հետոտս ի Բաբելոն գնալ: Եւ ի նաւէն որ չորքաւ դադարեաց ի Հայս, և ցայժմ սակաւ ինչ ի կորդուացւոց լերինն ի Հայոց աշխարհին մնալ նչխար (նաւուն) ասեն. և ոմանց քերել բերել ի ձեփածոյ նաւին նաւթոյ՝ ի բժշկութիւն եւ ի ջնջոց ցաւոց ինչ բժժանաց: Եւ նոցա երթալ հասանել ի Բաբելոն, փորել ի Սիպարացւոց քաղաքին և զմատեանն հանել, և բազում քաղաքս չինել և մեհեանս դիոց կանգնել, և միւսանգամ զԲաբելոն նորոգել:— Եւ զայս Աբիւդենոս(բ) ևս [վիպէ] ի Բազդեացւոց պատմութեանն զջրհեղեղէն:

ԵՒՍԵԲԻՈՍ, Քրոնիկոն.

25

ՄՐԻԿ ՄԵՇ ԵՒ ԱԼԷԿՈՇՈՒԹԻԻՆ

Այս մրրիկ, փոթորիկ, ըմբոստ	Դանդաչոտ, երերուն, շեղուկոտ
Սաւառնաձայն, ընկերոջ ձայնը	վիշտ վտանգի, փորձանք
Դիւտակ, փլուխ, ձայր [հանող	կուփել կոծել, ջարնել ձեծել
Ցո՛ւպէս յո՛ւկամ, ըստ հաճոյից	կարկուրայ (= կարկուրէ), նա-
Կորճ, փելշակեր ընկերն ոք	Սեպհ (փոխ.), ցցուած հասեր [ակ
Փեռեկ, պարուած, քացուած	Լրբատեսիլ, մրնշաղ լայուով
Ամբոխ, էրբանցուած, շփոթ	Հողմամոլ, ծովային քամի ոք

Արեգակն ընդ Հայ լերինսըն ծաւալէը ծայրակարմիր:
Հսկըսաւ խաղալ ոգին ի սեաւ վըհէն խոր մըրընչմամբ,
Կալով գայր ա՛յսըն մրըրիկ և ցոլանայր տակաւ յերկինս:
Շարժէին ծառք և դիտակք մայրեաց բարձանց և հեծէին,
Ծուխ և մէգ, և սպառնալից ըզգլուխ լերին պատէին ամպք:

(³) Փոխանակ ըսելու. յորում վայրի կամ յոր վայր:
(բ) Ցոյն պատմիչ (Բ-Գ դար յետ Քս.ի):


Գեղեցիկ այգն ի մրուայլ ի մուք ըզդէմսըն ներկանէր.
Ի հարաւ կուսէ երկինք խոժոռէին լրթաատեսիլ։
Ի ծայրից ծըփանացըն թևածեալ սաւառնաձայն
Փախչէին հողամաղք կարկաչելով ի ցամաք կոյս։
Նախ քըստմնեալ կապուտակէր գեղածիծաղ ծովուն ծըփանք,
Ցանդընդոց անտի ապա խռովեալ յամբոխ մրրատեսիլ՝
Ալիս զալեօք լեռնաձևըս կուտակեալ կանգնէր դիպան,
Փրփուր աղի, խըճախառն աւազ ընդդէմ ժայթքեալ երկնից։
Սահէին անցանէին լեռնակարկառ երկայն կոհակք
Տըբեալ այսուն ըզթիկունս կորաքամակ, և քիւ առեալ,
Թաւալեալ բախէին երթեալ յափունըսըն քարաժեռս,
Եւ զցընցուղըսն շամանդաղ մինչև յաստեղըս սրըսկէին։
Ծովեզերք, խութք և կղզիք գոչեն մրունչ որոտաձայն.
Նա մոլէր մրըրկէր զերկին և զօդ, զերկիր և ըզծով։
Ձըչեաց այն ի կայմ նաւուն և յառագաստըս գոյժ մահու,
Սուլեցին զուգաձայն սրաշուինչ ճըղուղք և ճախարակք,
Ճարճատեն առասանք և ուժգնապիրկ պարանոց լարք.
Նաւապետք ի նաւազին կան գոչեն ուսկի անլուր հրաման։
Ամենեքեան յայս եւ յայն տագնապէին վիշս վըտանգի,
Ըզմի և զնոյն մահ առաջի աչաց անչուշտ նըկարելով։
Մերթ պըտուտկեալ ամբարձեալ ի գանդաչոտ կոհակաց ծայրս՝
Հայէին ի բարձանց ի չըջասփիւռ բլրոցըն սեպս,
Ակն ունելով յամենայն ժամ գահավէժ տապալելոյ.
Մերթ իջեալ սուզեալ ի վիհըս խորափիս լոյծ վիրապաց՝
Ներքոյ զկոկորդ անգընդոց նըկատէին փեռեկ ի կուլ,
Ի վերայ գլխոց իւրեանց կարկառ լերինըս ջըրամած՝
Մօտալուտ ըսպառնալեօք փլանել թաղել անդ կենդանւոյն։
Ընդ յուսոյն նաւուղիղք և զարուեստին հնար կորուսեալ՝
Թողուին զկարկուբէից զերասանակըս վարչութեան՝
Ցո՛ւպէտ յո՛ւկամ ըստ բախտի դեղևել գնալ ի կեանս ի մահ։
Ցարհաւիրս ծովուն խառնեալ էջ սեաւ սոսկումն և սարսափ.
Եւ հրացան բարկութեանց պատուհասի փայլատակունք
Շառաչմամբ կայծակնաթափ տեղան յերկիր բոց բարկաճայթ.
Շողան չանթք նաւացն ի կայմս և զաչս արանց չըլացուցին.
Մրըրկատարափ կուռ կարկուտ կըռփէր կոծեալ ի կառափունս։
Որ յառաջըն միախուռն ընթանային նաւք միաչու,
Իբր աղաւնեաց պար ձագախառն ի ծաղկաճեմ թռուցեալ ի մարգ՝

Ցոր յանկարծ խոյանայցէ յամպոց երկնից կորճ աւազակ՝
Ուռճապեալ ցըրուին, և այր զընկերն ինքս ոչ իմացաւ.
Այսպէս օցտեալ ցընդհեցան ի մռայլ երեսս անհուն ծովուն.
Ոչ մնացին երկու ի մի, զո՛ր խութք առին, զո՛ր խիստ ծանծաղք,
Ո՛ր յափունս հեռաստանեայս, ո՛ր(1) ի կըզգիս սահեալ անկան,
Ի տանջանս առ հասարակ վայրենամիտ կոծեալ ալեաց։

Հ. Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Դրուագ ժ.

---

(1) Զո՛ր, ո՛ր դերանուններըը իբրև հարցական անուններ գործածուած են հոս։



ՄԱՍՆ Բ.

(ԳԱՐԳԵԱՑ)

I

ԵՐԱԶՆ ԼՈՒԿԻԱՆՈՍԻ

Խորհուրդ ունել, խորհել, որոշել	Դրոց, դպրոցական դպրեվանք
Շինականագոյնս (մն.), կոպոր-	Բդիմի ի ցասումն, բարկանալ
Տպանալ, պպաոզոր-ել [ընեմք	Ի վեր հարեալ, սրտաբ [ընել
Մածանել յանդրի, որչան կորել	Սպաս առնել, ծառայել, պարպաս

Մինչդեռ էի, ասէ, ինգեաւսաան ամաց մեկնեալ ի գպրոցէ, խորհեցաւ զինէն հայրն իմ ընդ բարեկամս. և բազմաց ոչ հաճոյ թուեցաւ տալ զիս ի գպրութիւն, զի յոլով ժամանակի և ծախուց պէտք էին վարժելոյ յայն. և զի չքաւոր էի, պարտ էր ինձ ուսանել զարուեստ՝ առ ի սուղ ժամանակի հայթայթել զկեանս իմ, առանց ծանրանալոյ հօր իմում և ազգատոհմի: Զայս խոհուրդ կալեալ, եաւն զիս ի ձեռս հօրեղբօր իմոյ ճարտար քանդակագործի: Ինձ իսկ ոչ անհաճոյ էր արուեստն, զի և յառաջագոյն զբօսնուի՝ մանուկս առեղծանելով անդրիս ի մոմոյ, և զի դարձեալ անդրիագործութիւն ոչ առուեսս թուէր ինձ՝ այլ զբօսանս իմն համեստ: Եւ աշակերտեցայ ի փորձ նախակրթութեան. այլ իմ չինականագոյնս ի կիր առկեալ զգրոցն ի դիւրաբեկ վէմն՝ որ եղաւ առաջի իմ ի քանդակ՝ բեկի զնա, և հօրեղբօր իմոյ՝ ի ցասումն բրդեալ՝ գան եհար զիս սաստիկ, և այսպէս արտասուօք նախակրթեցայ: Ընթացայ ի տուն լալով, և պատմեցի զվիշտս իմ՝ զկապուտակս գանիցն ցուցանելով, ընդ որ յոյժ տրտմեցաւ մայրն իմ: Եւ յերեկոյին երթեալ ի մահիճս, ցնորէի զգիշերն զամենայն, և տեսի երազ որ խորհ ի միտս իմ տպացաւ:

Տեսանէի երկուս կանայս. մին գեղջուկ և գիւսախուխ, ձեռք նորա աղտեղի, բազուկք ի վեր հարեալ, դէմք ի քիւրն և ի փոչի համակեալ, յար և նման կերպարանացն՝ զոր յանձին բերէր հօրեղբայրն իմ ի գործելն զանդրի. իսկ միւսն վայելուչ կերպա-

րանօք, զուարթագէմ, հաճոյ ի տեսանել, զգեցեալ մաքուր և համեստ: Խօսեցաւ առաջինն և ասէ. Որդեակ, ես եմ Քանդակագործութիւն՝ զոր դու յանձն առեր և ուսար ի մանկութենէ, և որով հօրեղբայրն քո պայծառացաւ: Եթէ կամիցիս գալ զկնի իմ, և ոչ ի գգուանս ուսոխին իմոյ գրաւիցիս, արարից զքեզ երևելի, ոչ որպէս զնա բանիւք՝ այլ գործովք: Զի լիցիս կորովի և հզօր իբրև զիս, և ստացիս համբաւ ի վեր քան զնախանձ, և որ ոչ ածցէ ի վերայ քո կորուստ որպէս զհրապոյրս այնորիկ՝ որ հնարի պատրել զքեզ: Մի՛ հանդերձ իմ գժպհի քեզ թուեսցին, զի են Փիղիայ և Պոլիկլետայ և այլոց ճարտար անդրիագործացն՝ որ ի քանդակս լուբեանց մեծարին, և պաշտին ընդ դիսն՝ զորս գրօչեցին: Տե՛ս արդ, զի եթէ եկեսցես զհետ չաւղաց նոցա, ո՛րպէս պատուեալ փառաւորեսցիս, և քանի՛ խնդութիւն յաւելցես հօր քումմ և ազգատոհմի:

Այսպիսի ինչ տիկինն այն խիստ և խոշոր ձայնիւ, որպէս արդարև արուեստաւոր, խօսեցաւ ընդ իս: Ապա միւսն ասէ. Ես եմ Իմաստութիւն՝ որ իշխեմ ամենայն գեղեցիկ գիտութեանց: Ես եմ Քանդակագործութիւն պանծացոյց առ քեզ զպարգևս իւր. այլ եթէ լուիցես նմա, եղիցիս ձեռագէտ թշուառ, յարհամարհութիւն եւ ի բռնաման ամենեցուն, և ստիպեսցիս սպաս առնել մեծաց՝ առ ի չահել զկեանս քո: Եթէ գերազանց իցես յարուեստին՝ զարմասցին և եթ ընդ քեզ, և ոչ նախանձեսցին ընդ բախտին՝ զարմասցին և եթ ընդ քեզ, և ոչ նախանձեսցին ընդ բախտ քո. այլ եթէ զհետ իմ եկեսցես, ուսուցից քեզ որ ինչ չքնաղ և գեղեցիկ գուցէ յաչխարհի, և որ երևելի ինչ ի սկզբանէ ժամանակաց լեալ իցէ: Պանծալի առաքինութեամբք զարդարեցից զքեզ, համեստութեամբ, ուղղութեամբ, երկիւղածութեամբ, հեզութեամբ, արդարութեամբ, խոհեմութեամբ, համբերութեամբ և սիրով պատշաճից և գովելի իրաց, զի սոքա են անկապուտ զարդք հոգւոյ: Փոխանակ գծուծ հանդերձից՝ պերճս զգեցուցից քեզ որպէս զիմս, և զչքաւորդ և զանծանօթ՝ արարից ճոխ եւ երևելի, արժանի ամենայն աւագութեանց և յայնս հասանելոյ: Եթէ ճանապարհորդել կամիցիս ի տար աշխարհ՝ առաքեցից առաջի քո զհամբաւ. ամենայն ուրեք խնդրեսցեն իքէն պատգամ եւ մեծարեալ պաշտիցիս յամենեցունց: Եւ յաւելից զգեղապանձն տալ քեզ զանմահութիւն, զի կեցցէ յաւէժ յիշատակ քո ի մարդիկ: Հայեաց յեսքինէս և ի Դիմոսթենէս՝ որք լինև եղեն միշտ զարմանալիք: Սոկրատ ի սկզբանն զհետ երթեալ ուսոխին իմոյ Քանդակագործութեան, զի կեցցէ յաւէժ յիշատակ քո ի մարդիկ:

դակագործութեան, ընդ ճանապէղն զիս՝ եթող զնա և եկն զկնի իմ. և մի՛թէ ստրջացա՞ւ ընդ այն: Եւ արդ մերժեալ զայսքան փառս և զմեծութիւն և զհամբաւ՝ երթիցե՞ս զհետ անձանօթի աղքատին՝ որոյ է ի ձեռին ուտն և դուբ, և այլ ինչ ոչ ունի տալ քեզ բաց յանարդ գործեացն, և որում հարկ է ի ձեռացն աշխատութենէ կեալ, եւ ունել ի մոլ յղկել զվէմ՝ ընդ զանձն: Եւ մինչդեռ նա զայս խօսէր, ես ի խոստմանց աստի յորդորեալ, և չէ ևս զհարուածս զանիցն մոռացեալ՝ զիմեցի ի գիրկս նորա: Յայնժամ միւսն առ զայրոյթ սրամտութեանն յանդրի մածաւ, որպէս զնիոբեացն պատմեն: Իսկ Իմաստութիւն ի վարձ ընտրութեան իմոյ՝ հեծոյց զիս ընդ իւր ի կառս, եւ մտրակեալ զօգապարիկ երիվարսն՝ ած զիս յարևելից ի մուտս, սիրեալ յինէն երկնային իմն եւ աստուածային չգիտեմ որպիսի ինչ, ընդ որ զարմացեալ առհասարակ մարդիկ ի վեր հայէին, և օրհնէին զիս եւ գովէին: Եւ գարձոյց զիս ի հայրենիս իմ պսակեալ փառօք և պատուով, և յանձնեալ զիս հօր իմում որ մեծաւ անձկանօք մնայր լինձ, եւ ցուցեալ նմա զհանդերձս իմ՝ ասէ. Տե՛ս յորմէ երանութենէ կամէիր զրկել զդա առանց իմ:

Եւ զարթեալ յերազոյ:

Թարգմ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ ԵՂԲԱՐՑ ՌՈԼԷՆ, Հնախօս., Զ.

2

ԱԽՏ ԻԴՈՄԵՆԵԱՅ

Ցանգգաստից, առանց ընթացեալ — Գնալ զիւրովին, ինքնին սպաննել
Իվերայ կալ, հասնիլ — Անցուդարձ, անթօրթ
Խուն ինչ, տէր մը — Զգել (յանձն), հրաւիրել (իր վրայ)

Իդոմենէս որդի Դեւկալիոնի, թոռն Միւնովայ, ընդ այլս ի թագաւորացն երթեալ էր ի պաշարումն Տրովադայ. և յետ կործանման քաղաքին իբրև դառնայր այսրէն, յարեաւ մրրիկ սաստիկ, մինչև նաւապետին եւ ամենեցուն իսկ՝ որ փորձք էին նաւարկութեան՝ համարել անհրաժեշտ ի վերայ հասեալ կորուստ: Ամենայն ոք առաջի աչաց նկատէր զմահ, ամենայն ոք տեսանէր զանդունդս բացեալ առ ի կլանել զնա, և ամենայն ոք ողբայր զազէտս իւր՝ ոչ ակն ունելով ախուր հանգստեանն, յոր թաղելոցն ևեթ վայելեն հոգիք՝ ընդ ստիւգականն անցեալք ընդ գետ: Յայնժամ Իդոմենեայ զաչս յերկինս ամբարձեալ՝ բազկատարած կարդայր առ Պոսիդոն. Լուր, աստուած հզօր, իշխեցող ալեաց ծովու, լո՛ւր հիւքիս. եթէ լիցի տեսանել ինձ միանգամ զկրետէ՝ ապրեալ ի գայրագին մրրկացս, մատուցից քեզ զոհ՝ [զայն] որ նախ ելցէ ինձ ընդ առաջ:

Յայնմ վայրի որդի նորա անձկանօք տեսութեան հօրն՝ փութայր ընդ առաջ նորա, գիրկս արկանել նմա. ոչ գիտէր հէքն՝ զի թայր ընդ առաջ նորա, գիրկս արկանել նմա. ոչ գիտէր հէքն՝ զի յօրհաս իւր ճեպէր: Մազապուր ի մրրկէն՝ անդր ի նաւահանգիստն ցանկալի ժամանեաց հայրն գոհանալով զՊոսիդոնէ՝ վասն ուխտիցն լսելի լինելոյ. այլ ծանեաւ անդէն թէ քանի՛ աղիտաբեր էր նմա այն: Անդստին նախազգեցիկ իմն գիրչ ընդ ուխտ իւր անհանճար ճմլէր զսիրտ նորա. խիթայր հանդիպել իւրոցն, և թուէր նմա տեսանել [զայն] որ քան զամենեսեան սիրելի էր նմա: Իսկ անողոքելին ի դիս անողորմն Նեմեսիս, որ հսկէ ի պատուհաս մահկանացուաց՝ և մանաւանդ զոռոզ արքայից, մահահամբոյր աներևոյթ ձեռամբն մղէր զԻդոմենէս յաղէտսն: Հասեալ ի ծովեզրն և այն ինչ զաչս ի վեր առեալ՝ զարհուրեալ ընկրկեցաւ նա ի տեսիլ որդեկին, և աչք իւր չուրջ յածեալ հետազօտէին զայլ ոք ի նուազ սիրելեացն՝ առ ի զոհ: Իսկ որդին զհայրենի պարանոցաւն անկեալ՝ ոչ կարէր ի վերայ կալ անկարեկիր ապաշաւանաց հօրն, եւ տեսեալ զարտասուս նորա՝ ասէ. Առ ի՞նչ է տրտմութիւնդ քո, հայր, յետ բազմամեայ պանդխտութեան դարձ արարեալ յաթոռ քո ի ցնծութիւն որդեկիդ, եւ ընդէ՞ր տրտմեալ կաս. զի՞նչ վեղայ, զի դարձուցանես զաչս քո յինէն: Բայց հայրն հեղձամղձուկ ի վշտացն՝ վայրիկ մի անբարբառ՝ և ապա հառաչանօք ի խորոց սրտէ ասէ. Աւա՜ղ, զի՞նչ երդուայ քեզ, ո՛վ Պոսիդոն, քանի՛ ծանրագնի փրկեցեր զիս ի նաւաբեկութենէ. մատնեա՛ զիս անդրէն ալեաց և ծովու ի կոծումն, զի կորիցեմ ես, և որդեակն իմ կեցէ: Ահա արիւն իմ, աննուէր դիք, փոխանակեսցի արիւն իմ ընդ նորայն: Ասաց, և զոյգ ընդ բանին՝ մերկեաց (մերկացաւ) զդաշոյն գնալ զիւրովին. այլ որք մերձն կային հասին կալան արգելին զնա:

Անդ ծերունին Սոփրոնիմ՝ թարգման դիցն կամաց՝ եցոյց նմա, զի չէր լինչ հարկ մխել զձեռն իւր յարիւն որդեկին առ ի հաչտ առնելոյ զՊոսիդոն, և ասէր. Ցանդուգն երդուար. անհաճոյ է դից՝ պաշտօն անզթութեան. զգո՛յշ լեր չյաւելուլ ի մեղս երգմանդ զկատարումն նորին՝ հակառակ օրինաց բնութեան: Զի՛ն Պոսիդոնի զուարակս հարիւր սպիտակս քան զձիւն. հե՛ղ զարիւն նոցա չուրջ զծաղկապսակ բազնաւ նորա, և ծխեսցեն խունկք քո ի հոտ անուշից առաջի դից: Բայց Իդոմենէս՝ գլուխ ի վայր արկեալ՝ կայր անմռունչ. բորբոքէր յաչս նորա մոլեգնութիւն. մահատիպ դիմաց նորա այլափոխեալ արագ արագ չրջէին գոյնք, և դողդոջէին անդամք նորա: Իսկ որդին ասէր. Ահաւասիկ ես, հայր իմ, ահաւասիկ որդեակ քո պատրաստ ի մահ, առ ի հաչտ առնել զդիս, մի՛ ձգեր ի վերայ քո զցասումն աստուածասաստ բարկութեանն. մեռայց մտադիւր, զի դու զերծանիցիս ի մահուանէ. հա՛ր զիս, հայր, մի՛ երկնչիր. չեմ լինչ վատասիրտ, և հօրդ առաքինւոյ անարժան որդի: Ցայնժամ Իդոմենէս խելայեղ այսահարեալ լմն ի ժանտից դժոխայնոց, յանդգաստից որոց մերձն կային՝ մխեաց զսուսերն ի սիրտ պատանւոյն, եւ յետս ձգեալ զայն ծխաչունչ արիւնաթաթաւ՝ մինչ կամէրն արկանել ի կողս իւր, դարձեալ ի վերայ հասեալ որք չուրջն կային՝ արգելին զնա:

Անկաւ մանուկն յարեան իւրում թաւալգլոր. ծանրացան արտեւանունք նորա ի սուսերս մահու, և աչք նորա կիսաբացք՝ առ խուն լինչ նշոյլ լուսոյ ո՛չ ժուժեալ՝ փակեցան ի սպառ: Որպէս չուչան չքնաղագեղ հարեալ առ արմին ի խոփ սայրասուր տապատ անկանի ի դաշտի, չև կորուսեալ զգեղ ձիւնափայլ, չև զպայծառութիւն ակնապարար, այլ ոչ ևս ընդունի մնունդ ի յերկրէ և ոչ ևս կեայ, այսպէս զաւակն Իդոմենեան իբրև զծաղիկ մատաղատունկ ի դեռաբուսիկ հասակին անկանէր հնձեալ: Ցանհնարին վշտացն հայր նորա անզգայեալ՝ անգիտանայր ուր էրն, որ լինչ գործեալն էր, և զոր պարտէրն գործել. դանդաչէր տատանէր ընթանայր ի քաղաքն կոյս, հարցանելով զորդեկէն իւրմէ: Իսկ ամբոխն չարժեալ ի գութ ընդ աղէտս մանկանն, և զարհուրեալ ընդ խուժադուժ որդեսպանութիւնն արքային՝ աղաղակէր և ասէր, եթէ Աւդարատատ դից մատնեալ էր զնա ճիւաղաց գժոխայնոց:

Թրգմ. Հ. Ե. ՀԻՒՐՄԻՒԶ.

ՖԵՆԵԼՈՆ. Տելեմաք

3

ՄԱՀ ԻՊՊՈԼԻՏԱՅ

Մտրակ ի կուշս առնել (ձիոյ), Դեղնաւտորք, դեղնորակ
Շրուշակ, սանդ (թրաչել (ձեռ) Կապուս, կոչպոտ, խլեակ
Բուռն հարկանել ի, բռնել Անպարտակիր, յանդգնաւէտ կրօք
Առաքուր, ոտի պոկ Ապաժոյժ, վաղող արիւն
Սօս, սէգ, հպարտ Ցայրիւս կալ, ըղձաւոյծ սրտմտիլ
Լոյծ դաշս (ձիոյ), ծուլ Թեմ, ծոռ (ընկերք բռնաբարել
Անճասս, անդադրելի Այեր, օդ

Այն լինչ ի դրանց ասաի Տրեզեն քաղաքի եկ նա ընդ մեզ
Բազմեալ ի կառս անդ իւր, կայրն ըզնովաւ լուռ իբրև ըզնա
Թիկնապահք թախծեալ, և գնայր դէպ ի Միկէնըս մըտայոյզ,
Թողեալ ի ճօճ ըզձիովք զերասանակսըն տատանեալ.
Սօս երիվարք, որք լի երբեմն ի վեհ աշխոյժ կառավարեալ,
Սրդ կորագլուխ տըխրահայեացք՝ թուէին նմա գոլ վշտակից:
Զայն ահագին եկ ի խորոց ծովուն, այերք պըղտորեցան,
Եւ ի ծոցոյ երկրի հընչեաց եղերաձայն զարհուրելի
Առ բարբառն ահարկու պատասխանի տալով հեծմամբ.
Սրիւն ի սիրտս մեր պաղեալ, և ի յայթիւս կացելոց
Ջըստմնեցան բաշք երիվարաց. ի մըկանունս անդ լոյծ դաշտին
Ցորձնեռանդն յայնժամ ի վեր ամբառնայր լեա՛ռըն ջրակուտակ:
Մատեան ալիքն, և փրփրագեղ բեկտեալ ի դուրս ժայթքեին
Հրեղ կատաղի՝ ահեղ եղջերըք գինեալ ի լայն ճակատուն,
Զրահամարթ ծածկեալ իրանն ամբողջ ի թեփ դեղնաչորթ.
Ցուլ ամեհի, վիշապ անսասա, ի ծամածուռ քընթըրընոց,
Ի թեք գաւակ իւր գալարեալ. և սարսեին ծովեզերք
Ի մըրընչել գազանին յերկարաձիգ ի մըրընչիւն:
Երկինք ընդ հրէշըն վայրենի պակեան, երկիր սարսեցաւ.
Պըղծեցան օգք, ծով որ ըզնայն ած՝ ընկըրկէր ահաբեկեալ.
Եւ բնաւք փախեան, ոչ ոք յումպէտ արիութիւն խրախուսեաց.
Ի մեհեան անդըր մերձակայ անկան բոլորք ապաստանել:

Իպպոլիտ եւեթ՝ զաւակ արժանաւոր դիւցազին՝
Կացոյց ըզձիս. բուռն ի գեղարդն հարեալ, ի հրէշ անդըր դիմեալ՝
Ի չեշտակի հարուած բանայր խոց լայնատարը ի կըշտին:

Ի զայրոյթ և ի կըսկիծ նըշանգն ի վեր ընդոստուցեալ,
Եկն առաթուր երիվարացն անկաւ անդէն մըրընչելով.
Եւ թաւալգլոր ըզբոցաչունչ որկորն ի դէմս ածեալ նոցին՝
Ընկլոյզ ծածկեաց ըզձիանն ի հուր ի ծուխ և յապաժոյժ.
Ահ ըզնոսա խռովեցոյց, և խուլ յանժամ ևեթ վարչին՝
Հեռանալ սաստից և չրուշակաց, մինչ նա զրաջան տագնապէր,
Ներկանէին կարմիր ըզսանձս յարիւնախառն ի փըրփուր։

Աւեն տեսեալ իսկ յահագին ազմըկի անդ զոք ի զից՝
Մարակ ի կուշտըս փուշելից երիվարացն առնելով։
Վարէ ընդ ժայռս ահ ըզնոսա. ճռընչեալ լիսեռնըն բեկանի։

Ինքն Իպպոլիտ անվեհեր դիտակն ի կառսըն խորտակեալս
Եւ ի բեկորսն ընդ օդս ի թիւռ, անկանի 'նդ սանձսըն խառն ի խուռն։
Անողորմս այս տեսարան, ներեալ իմումըս վըշտի,
Լիցի աղբիւր լինձ յաւերժից լալեաց. տեսի, տէր արքայ,
Տեսի զորդին քո հէք ձրգեալ ի ձեռասուն ձիոցն ի furc։
Յետս ըզձիանըն կոչէր, նոքա սաստիւքըն սարտուցեալ
Գնային սրարշաւ. թաթաւէր համակ ի վէրս իրանն ողջոյն։
Հընչեաց դաշտավայրն յաղիողորմ աղաղակ մեր։
Բուռն ապա թափ նոցին մեզմեալ՝ ըզկայ առին ոչ լինչ հեռի
Ի վաղեմեացըն չիրմաց, ուր թագաւանց հաւուց նորա
Պահի աճիւն ցուրտ. դիմեցի ես անդր յոգւոց հանելով,
Ա՛նդր և թիկնապահք նորա՝ ըզհետ իմ հասին,
Հետք ճապաղեաց արիական արեանըն մեզ առաջնորդեալ.
Ժայռք ի նոցունց կարմրաներկք, փուչք և մացառք արիւնաթորք
Ըզկապուտ բոսորատիպ վարսից չինքեանըս բեբէին։
Հասի առնա, ձայն եառու. նա կարկառեալ զաջ իւր առ իս,
Եթաց վայրիկ մի զառկայծեալ աչն և անդրէն փակեալ՝ ասէ.
Երկինք զանմեղ կեանն իմ բառնան, ո՛վ սիրեցեալըդ Թերամեն.
Եթէ երբեք հայրն իմ զերծեալ յաւուր միւսմ ի պատրանաց՝
Ողբայցէ զանպարտակիր աղէտս որդւոյն, գոգջիր նըմա,
Առ ի զբողոք արեան իմոյ և զբռստուերաց ցածուցանել,
Զի քաղցրութիւն արասցէ ընդ Արիկեայ, տացէ նըմա...

Ասա զիւցազն անշնչացեալ՝ զմարմինն ևեթ անկերպարան
Եթող ի գիրկս իմ յաղթանակ տխրատեսիլ գիցըն ցասման,
Զոր և ոչ ակն հայրենի ըզնա կարող էր ճանաչել։

Թրգմ. Հ. Ե. ՀԻՒՐՄԻՒԶ

4

ԿԵՐՊԱՐԱՆՔ ԵԻ ԿԵՂՑԻՔ ԿՈՒԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ

Անպատեհութիւն, տրտուղ բան, Ձգնել, վտանգի մէջ դնել, վնեղել
Կարիք, հէք [յայնդպհութիւն Մեհենազարդ (ծով.), ծովեզեր պահապան՝ վերակացու (néocore)
Գլխապար, ջլախիտ խոնջուղ
Գալ ի յանդիմանութիւն, յանդիմանուիլ, վերնեբեկուիլ Բանդագուշեալ, ցնորած
Անկեր, վտի՝ կատած ըմոնեցող

Կառապաշտութիւն տկար լինի և անզօր կարծի, և դժուարաւ իսկ առնումք ի միտ՝ թէ այնչափ բռնութեան պէտք եղեն վասն զնա քակելոյ։ Այլ անպատեհութիւն ցուցանիցէ՝ թէ որչափ դըժուարին էր առ յաղթել. եւ բարւոք խորհրդոցն խոտորումն յայտ առնիցէ՝ թէ զի՛ւղ եղծեալ եւ ապականեալ էր սկիզբնն։ Աչքարհն ի կառապաշտութեան ծերացեալ էր, եւ ի կռոցն թովչութենէ խլացեալ՝ բարբառոյ բնութեանն չլսէր, որ հանապազ զգրօսնէ չելոցն բողոքէր։ Արդ ո՞ր զօրութիւն բաւական էր արկանել ի միտս մարդկան զճշմարիտն Աստուած՝ զոր ամենևին իսկ մոռացեալ էին, եւ զարթուցանել զազգ մարդկան ի գլխապարն թմբրութենէ։

Ամենայն զգայուն (զգայութիւնք), եւ համօրէն կարիք, և բոլոր չահք ի վերայ կառապաշտութեանն կուուէին։ Խաղ լինի և խնդոյ էր այն. ուրախութիւնք եւ տեսիլք [թատերականք] եւ անառակութիւն իսկ՝ ընդ Աստուծոյ պաշտօնն խառնէին։ Տօնք տարեկանաց նորա խաղք էին. և ոչ ուստեք ի կեանս մարդկան այնպէս մերժեալ էր ամօթ, որպէս ի խորհրդոց պաշտաման կռապաշտութեանն։ Զի՞րդ զայնպիսի միտս եղծեալս՝ ի կարգս կրօնից ճշմարտութեան ի զգաստն՝ ի խիտն՝ եւ ի հակառակորդն զգայնոց՝ և ի ցանկութիւն աներևոյթ բարութեանցն մարդ էն ածել։ Պօղոս ընդ Փելիկայ ոստիկանի Հրէաստանի խօսէր վասն արդարութեան եւ ժուժկալութեան եւ հանդերձեալ դատաստանին։ Զահի հարեալ Փելիքս՝ ետ պատասխանի. Դու առ ժամանակ։ Զահի հարեալ Փելիքս՝ ետ պատասխանի. Դու առ ժամանակ երթ, և յորժամ ժամ լիցի՝ կոչեցից զքեզ։ Որ անխիղճ այժմ երթ, և յորժամ ժամ լիցի՝ կոչեցից զքեզ։ Որ անխիղճ անխէթ յերկրաւոր բարութիւնս կամիցի վայելել, այնպիսին արժան համարի զայն բանս յապաղել եւ ի հեռի լինչ ժամանակ ձգել։

Կամ[illegible] և զհնարս չահիցն տեսանել, որ զմարդկօրէն իրս զամենայն չարժէն: Մինչդեռ եղծանել սկսանէր կռապաշտութիւնն յԱսիացւոց աշխարհին ի քարոզութենէն Պօղոսի, անդ ճարտարքն և ձեռագէտք, որ զկեանս անձանց չահէին մեհեանս փոքրիկս արծաթիս Արտեմեայ եփեսացւոց գործելով, եկին կուտեցան, և որ ճարտարապետն էր արուեստին ասէ ցձեռագէտսն՝ թէ չահն մեր խափանելոց է: Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմնս գալ ի յանդիմանութիւն, այլ եւ զմեծին աստուածոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել. նա եւ քակելոց ևս իցէ մեծութիւն նորա, զոր ամենայն Ասիա և տիեզերք պաշտեն:

Քանի՛ բուռն և հզօր է չահ, և զի՛նդ յանդգնի յորժամ յաստուածպաշտութեան կեղծիս կեղծաւորիցի: Աստի իսկ անհնարին յուզեցան ձեռագէտքն. ելին համօրէն միանգամայն իրբև զմոլեկանս բանդագուշեալս չրջէին գոչէին՝ Մեծ է ԱՐՏԵՄԻՍ ԵՓԵՍԱՑԻՈՑ. եւ զուղեկիցսն Պօղոսի ձգեցին ի թէատրոնն՝ ուր ամենայն քաղաքն խռնեալ էր: Յայնժամ մեծաբարբառ յանդղգնեալք գոչէին իրրև ժամս երկուս, եւ հնչէր հրապարակ քաղաքին ի ձայնէ բարբառոյ նոցա՝ թէ Մեծ է ԱՐՏԵՄԻՍ ԵՓԵՍԱՑԻՈՑ: Իսկ Պօղոս և ուղեկիցք նորա հապիւ յամբոխէ անտի մազապուր պրծանէին ի ձեռն հազարապետացն, զի մի՛ ևս աւելի անկարգ ինչ ի խռանն գործիցի: Յայսց չահից վերայ, որ ոմանց միայն էր, յաւե՛լ դու և զչահն քրմացն՝ որ ընդ դիցն (ընդ դիսն) իւրեանց անկանելոց էին. յաւե՛լ յայնը վերայ և զքաղաքացս պարծանն՝ որ կռոցն պաշտամամբ երևելի լինէին, որպէս բաղմիցն եփեսացւոց մեհենազարդ Արտեմեայ դիցն, որ տաճարաւն առաւելեալ իմն էր, և որ ի տար աշխարհաց բերեալ պատարագօք և ընծայիւք մեծացեալ էր յոյժ: Որպիսի՛ ինչ մրրիկ հակառակ եւ կեղեցւոյ՝ որ նորոգ ծնեալն էր՝ յառնելոց էր. և զի՞նչ զարմանք իցեն տեսանել՝ զի ա՛յլ իմն չահ մեծագոյն, այն է՝ աշխարհին (պետութեանն) օգուտ՝ զծերակոյտն եւ զազգն Հռոմոց եւ զկայսերս յուզեալ դղրդիցէ:

Բազում ժամանակք էին, յորմէ հետէ ծերակուտին հրամանք արգելին զպաշտամունս օտարոտիս: Ընդ նոյն և թագաւորք հաճեալ էին, և ի խորհրդեան ուրեք խափանեցին զնորա կրօնութիւնն, զի մի՛ խռովութիւնք ի քաղաքի լինիցին: Կարծէին իմն՝ թէ ի հիմանց խախտէր և խարխալէր քաղաքն Հռոմոց, յորժամ անարգէր ոք զդիսն նորա: Պարծէր Հռոմ թէ քաղաք սուրբ իցէ ի քնէ, և հմայիւք ի սկզբանէ նուիրեալ: Փոքր միւս ևս և կարծէր՝ թէ fան յերկինս ի կապիտոլիոնին մանաւանդ մօտ իցէ Արամազդ, և կռոց պաշտամամբ զիւր յաղթութիւնն ստացեալ համարէր: Նովին (այնու) և զազգս և զդիսն նոցա ընդ ձեռամբ նուաճեալ էր, քանզի այնպէս իմն համարէին ի ժամանակին յայնմիկ, եթէ դիցն հռոմայեցւոց պարտ իցէ տեառս այլոց ազգաց դիցն լինել, զոր օրինակ և հռոմայեցիք այլոց ի մարդկանէ տեարք էին:

Թարգմ.
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ ՎԻՆՆԱՅԻ

ԲՈՍՈՒԵՏ (ՊՈՍԻԻԷ)
Bosuf վասն տիեզր. Պատմ. Բ.

5

ԵԳԻՊՏԱՑԻՔ

Համօրեն, ա՜համաբակ
Զօդ, կապ
Դուշակել, իմաց տալ
Կեիւ հասարակ, հա՜սարաբ
Աւհամարհ, ընչին, անպատիւ
Առաջնորդ, հեղինակ, հասակ
Բազում ինչ (մկ.), շատ, շատ ան-
Թրթրակ, լեզուանի, սպասուս [գամ
Դիահանութիւն, ընդոտ
Ծնանելիք, ծնողք

Եգիպտացիք զառաջինն զկարգս առաջնորդութեան աշխարհի կալան: Այս ազգ զգաստ և իմաստուն յառաջնմէ իսկ ծանեաւ՝ թէ զի՛նչ ինչ ճչմարիտ կէտ (վախճան) օրինաց քաղաքի լիցէ, որ է՝ զկեանս անդորր առնել և զժողովուրդս՝ երանելիս: Օգն՝ այնու զի ցանգ և միշտ միագոյն կերպարանս ունի յաշխարհի անդ նոցա՝ զմիտս նոցա հաստատունս և պնդակազմս առնէր: Եւ քանզի առաքինութիւն համօրէն ամենայն միաբանութեան հիմն է, վասն այնորիկ նոքա մեծաւ խնամակալութեամբ այնմ պատկառ կային: Գլխաւոր առաքինութիւն նոցա չնորհակալութիւնն էր: Քանզի երախտիք զօդ են հասարակաց և առանձինն միաբանութեան, և որ միանգամ ոք զերախտիս երախտաւորին ծանիցէ, կամ զի և ինքն երախտաւոր առ այլս գը-

տանիցի. եւ իբրեւ զապախտաւորութիւնն ոք ի բաց ի մէջոյ բառնայցէ, յայնժամ այնպէս հաճոյ և հեշտական բարերարութիւնն գտանի, զի չիք ոք որ այնմ չիցէ յօժար:

Օրէնք նոցա յատակ էին և արդար, միաբանիչք քաղաքացեաց ընդ միմեանս: Եթէ ոք չփրկէր զհարստահարեալն և զնեղեալն իբրեւ ձեռնհաս էր, զնոյն կշիռ հասարակ պատիժս պատուհասից ընդ սպանողին կրէր: Եւ եթէ ոք չէր ձեռնհաս օգնել տառապելոյն, պարտ էր նմա զառաջնորդ բռնութեանն գուշակել: Սովին օրինակաւ իւրաքանչիւր քաղաքացի պահապան էր ընկերին, եւ բովանդակ աշխարհն միաբանեալ հակառակ չարագործացն:

Չէր օրէն չէր պատշաճ անպիտան ումեք յաշխարհին գտանել. յօրինաց անտի կարգեալ էր միւում միւում իւրաքանչիւր գործ առանձինն՝ զոր որդի ի հօրէ առնուին: Ջմարտիէր ումեք երկուս գործս միանգամայն ունել կամ զարուեստն փոփոխել, բայց և ամենայն արուեստք մեծարոյ եւ պատուական էին: Առ եգիպտացիս՝ քրմացն եւ զինուորաց առանձինն նշանակք էին պատուոյ, բայց և այլ ևս արուեստքն՝ եւ անարգազոյնք ևս՝ չէին ինչ արհամարհ. և մեզս լիմն համարէին անարգել զքաղաքացիս՝ որ իւրեանց աշխատութեամբն յօգուտ հասարակաց նպաստս լինէին: Գործ մի էր հասարակաց ամենեցուն՝ ուսուցմն օրինաց և իմաստութեան, եւ ոչ ոմեք, յորմէ եւ իցէ կարգէ, չէր օրէն տգիտանալ զիրս կրօնիցն և զյօրինուած (զսահմանութիւն) քաղաքին: Չիք իսկ ուրեք ժողովուրդ իբրեւ զնոսա՝ որ այնպէս հաստատուն զիւր օրէնս և զսովորութիւնս պահեալ իցէ:

Դարձեալ կարգ դատաստանացն ևս բազում ինչ ի պահպանութիւն օրինացն նպաստ լինէր: Ի գլխաւոր քաղաքաց որոշեալ առնուին դատաւորս երեսուն՝ արս իմաստունս և գաստատեսս՝ յորոց կայր ժողովն, որ զհամօրէն թագաւորութիւնն դատէր: Թագաւորն կարգէր նոցա հասս և ռոճիկս, որպէս զի յամենայն հոգոց տանն և ընտանեաց զերծեալ՝ զամենայն ժամանակս իւրեանց յայն ևեթ ծախեսցեն, զի օրէնքն ամենայն ուրեք հաստատուն պահեսցին: Եւ զի մի՛ դիւրաւ խաբիցի ոք, զրով գիրն վճարէին ի ժողովն անգ. երկուցեալ ի բաց փախչէին ի սնոտի ի թրթռակ լեզուի խաբէութենէ՝ որ զմիտս շլացուցանէ և զկարիսն գրգռէ (յուզէ զկիրս). ջանային զճշմարտութիւնն ամենևին առանց պաճուճանաց պատմել: Եւ որք չունէին

ինչ դատախազութիւն և որոց արդարութեամբ էին կեանք նոցա, ի քննութենէ անաչառ առենին ապրել նոքա կարէին:

Չէր համարձակ յեղիպատացւոց աշխարհին զամենայն մեռեալս խառն ի խուռն անխտիր գովել, այլ հասարակաց դատաստանաւ պարտ և պատշաճ էր արժանի այնմ գտանել: Արդ՝ վաղվաղակի իբրև մեռանէր ոք՝ ի դատաստան զնա ածէին. անդ մատուցեալ խօսէր հասարակաց դատախազն, և եթէ յայտ առնէր և ցուցանէր լինչ՝ եթէ չար են կեանք նորա, անդէն զնորա չիշատակն դատապարտէին, և պիտանութեան իսկ չլինէր արժանի: Ժողովուրդն զարմացեալ սքանչանայր ի վերայ օրինացն զօրութեան՝ որ և յետ մահուն իշխէր. և վասն այսորիկ ամենեքին զահի հարեալ յօրինակէ անտի, փոյթ յանձին ունէին չառնել արհամարհ զյիշատակս իւրեանց և զանուն ազգատոհմին: Այլ եթէ յանցանս լինչ ի նմա չգտանէին, յայնժամ մեծաշուք փառաւորութեամբ յուղարկէին զնա. խօսէին բանս գովութեան զնմանէ, յորում ոչ լինչ բանք զազնուականութենէ տոհմին լինէին, զի ամենայն եգիպտացիք առհասարակ ազնուականք էին. և դարձեալ՝ սոյգ գովութիւն զայն համարէին, զոր իւրով իսկ առանձինն գործովք ոք ստանայցէ:

Ցայտ իսկ է ամենեցուն՝ եթէ որպիսի՛ խնամով եգիպտացիք զդիակունս մեռելոց պահէին. և այժմ իսկ ի սմին ժամանակի ամենայն ուրեք զնոցա զմոսեալ դիակունս գտանեմք. վասն որոյ և չնորհակալութիւն նոցա առ իւրեանց ծնանելիս անչնջենաւոր էր. քանզի ուստերք իբրև զդիակունս հարցն տեսանէին, վաղվաղակի զմտաւ ածեալ յիշէին զնոցա առաքինութիւն քաջութեան՝ զորմէ առհասարակ ամենայն աշխարհն վկայեալ էր. և նովին յօժարէին զհետ երթալ օրինացն՝ զոր նոքայն թողին:

Թրգմ. ՆՈՑՆԻ

ՆՈՑՆ, անդ, Գ.

6

ՄՆՈՏԻ ԿԱՐԾԻՔ ՉԱՍՏԵՂԱՑ

Ծննդաբաշխ, բախտը ասողբէն — Ասղաճի, խախբդախան ըԼ՝ էձէյ,
Օրաչար, բէԼ օբ [բօՀշակօղ — Ջաղ, ձաղբ, խաղտ [Ե-այլն
Ընդելանիմ =ընդելնում, վար- — Փաւդէուբիւն, խախբդօ-ըԼ-ան
Ժամաչար, Հաբ ձամ [ձօ-էԼ — Անարի, վախօդ

Ազգք որ բնակեալ նըստէին յափըն մեծ այնըր գետոյ,
Որ արբուցեալ զեգիպտոս դառնայ ի չափ իւր յետոյ.
Վասըն վըճիտ լինելոյ օդոց իւրեանց գաւառին՝
Ջաստեղաց դիրըս ճըշդիւ ի միտ քան զայլ ոք առին։
Եւ առ բարւոք նըշմարել ըստ այլ և այլ չըրջանաց,
Կարգել կայան և անուն լմաստուն ազգըն ջանաց.
Բայց քանզի միշտ աչք նոցա էր ընդելեալ յերկրածին
Ճարակաւոր անասունս՝ որ աստ առ մեզ արածին,
Ցայն սակըս զեզն և ըզխոյ յաստեղատունսըն տարան,
Ըզզարդ հովտաց և բըլրոց վայելչութեան ամարան։
Իսկ թէ ո՛ր չահ յանհանճար ի ցնորական հընարից
Այնց առաջնոց լեալ էցէ՝ և զայն իսկ յայտ արարից։
Քաւդէութեանըն ցընոր անտի յաշխարհըս տեղաց
Ծընընդաբաշխ հըմայիւք պատճառաւոր աստեղաց։
Եթէ մանուկն ի կըչռոց աստեղատան ծընանի
Բարենըշան գալոց է, ըստ վրիպելոցըն բանի.
Իսկ թէ էցէ ի կարճի աստեղատան ժամ նորին,
Զար գայ, ասեն, և այդպէս բանդագուշեալ ցընորին։
Որատիոս դողայցէ երկուցեալ իմըն կարի,
Թէ գուցէ ոչ ի ժամ իւր դիպեցաւ աստղ բարի.
Ցանգիր գընացս աստեղաց հաստատութեան կամարին՝
Ըզպատահարըս մարգկան քաւդեայք դրոշմեալ համարին...
Լուր ցո՛ր վայր միտք մարդկեղէնք զուզղորդըն բան կորուսին.
Ցորժամ ցերեկ արեգակն և կամ ըզցայգըն լուսին
Ամփոփեցին գիւրեանց լոյս, խառնիճաղանճն անարի՝
Չի մի՛ գիչեր տիրեցէ՝ բազում հընարս հընարի,
Կէսքըն ձայնիւ զոչելով, կէսք ի բախիւն կաթսային

Փարատել իմն ըզխաւար աղջամըղջին յուսային։
Իսկ ո՞ւր թողից և զայն աստղ՝ ոյր գիսաւոր է անուն,
Զոր այր առանց գըպրուածեան և կասկածոտ ի մանուն,
Թէպէտև չէ, բայց կարծէ ըզնոյն պատճառըս չարի,
Եւ օրաչար ժամաչար անտի անձին համարի.
Իչխան, ասեն, մեռանիլ յորժամ նոյն աստըղ ծագէ.
Զի՞նչ փոյթ է, այր դու, աստեղն ըզծ[illegible]րանուոյ և զթագէ։
Այլ որ կարի ծաղուն է, յորժամ յանկարծ ի տանիս
Բռնաբերգիցէ, տագնապեալ և զարհուրեալ գըտանիս։
Ոմըն նեղեալ յանըրջոց ի տուն դիւթին ընթանայ.
Զի ոչ ի զուր զայնպիսիս հընարեցաւ աստանայ,
Կիսոց և դեղ բըժժանաց առեալ կապեալ ընդ անձին՝
Եւ ասղանեօքն և յուռթիւք զարդարին իմն առանձին.
Ի սընոտի յոյս կապեալ թողին չարեաց նըշանակ՝
Որ զայդ այդպէս խորհեցան և եղեն ձաղ և ծանակ։

Ազատ Թրգմ.
Հ. Մ. ԳԱՐԱԳԱՇ — ՀՌԱԿԻՆՈՍ (ՌԱՍԻՆ), երգ վասն Կրօնից, ե.

7

ՍՈՒՏԱԿԱՍՊԱՍՆ ԵՒ ՄԱՐԴԱՀԱՃՈՅՆ

Առանց ինչ ընդ բանս ածելոյ,
առանց առաքելս՝ պէմպրելս
Ոգի կլանել, ըսնել առնել
Որգոսայ, հրապարակ, շուկայ
Սուիչ, յայն, առաջ
Լուս ի լուս, լուսելով
Ժմեիմ, ձպռիլ
Ունգ (յարդի), հղէղ
Արկանելիմ, հաբնէլէ+ լմ
Պաշտել, պաշտօրթել
Մանուկ, ձառայ
Բարձիկ (յոբ. Բարձկնեար)

Ա. Սուտակասպաս այն է՝ որ ճանապարհակից ումեք եղեալ, ասիցէ. Առնո՞ւս ի միտ՝ թէ ո՛րպէս ի քեզ ակնկառոյց կան մարդիկդ. ոչ ումեք յորոց ի քաղաքիս են լինել այս՝ բաց ի քէն. երէկ գովեցար ի սրահին Սաուլիկեանց, ուր իբրև արք աւելի քան

զերեսուն ակմբեալ էին, և զրոյցք ի մէջ անկան՝ թէ ո՛ լաւագոյն իցէ. ասաի (յինէն) սկսեալ՝ ամենեքեան ի վեր եւ ի վայր զքո անուն յեղյեղեցին: Եւ այլ ինչ այսպիսի ասելով՝ առնու զգուշութեամբ ի հանդերձէ նորա զծիւն փոքրիկ. եւ եթէ ունգ ինչ յարդի արկեալ իցէ հողմոյ ի վարսս գլխոյն՝ ծայրիւք մատանցն խնամով ի բաց քաղէ, ժմոի և ասէ. Տեսանե՞ս, երկու աւուրք են զի չեմ տեսեալ զքեզ, և ահա մօրուքդ ալևորեալ է. սակայն և այնպէս առ տիրոջ հասակիդ՝ տակաւին ոչ ինչ ընդհատ յայլոց քաջաթոռս են հերքդ: Եւ ի խօսել նորա՝ սաստէ այլոց լուռ լինել, և նմա լուռ ի լուռ գովէ զնա, և իբրև դադարիցէ [ի խօսելոյն]՝ ծափ զծափի հարկանէ, ձայն առնու՝ վկայէ թէ «բարւոք» խօսեցաւ: Ի կատակել նորա ցուրտ (ցրտութեամբ)՝ ծաղր արձակէ, և զձորձան ընդ բերանն պնդէ, որպէս թէ ոչ կարացեալ ժոյժ ունել [ի ծաղուէ]: Որ յուզուոյ ընդ առաջ պատահիցեն՝ պատուէր տայ նոցա զտեղի առնուլ մինչև նա անցանիցէ: Եւ գնեալ տանձ եւ խնձոր՝ բերէ տայ որդւոց նորա ակնյանդիման նորին, և ողջագուրեալ ասէ. «Բարի հօր սիրուն ձագունք»: Եւ յորժամ նա հողաթափս գնիցէ՝ զոտնն բարեձեւ ֆաո զօդն լինել ասէ: Եւ եթէ առ բարեկամ ոք ուրեք գնայցէ նա, յառաջեալ պատգամաւոր ընթանայ՝ թէ Ահա քեզ գայ. և անդէն ընդ առաջ նորա դարձ արարեալ պատմէ՝ թէ Ագդ արարի: Առանց ընդ բանս ինչ ածելոյ և ոչի կլանելոյ կարող է պաշտել և յորգուոտայն կանանց: Ի սեղանակիցս լինել, յառաջ քան զամենայն ոք ինքն ի գովութիւն առնու զկինն, և թէ մերձ բազմեալ իցէ՝ Ո՛հ, ասէ, ո՛րպէս յուշիկ ուտես. և առեալ ինչ ի սեղանոյն՝ Աղէ զա՛յս տես, ասէ, քանի՛ համեղ է: Եւ հարցանէ՝ թէ մսիցի՞, եւ խնդրիցէ՞ այլ ևս արկանելիս. և զայս ասացեալ ծածկէ զնա վերարկուաւ. և կարկառեալ յունկն նորա՝ չշնջէ. և ի խօսելն ընդ այլս՝ ի նա ինքն կառուցեալ պիշ ունի զակն: Եւ ի թատերն յաւփըշտակեալ ի մանկանէն զբարձկնեաւն՝ ինքնին արկանէ նմա: Ջտանէ նորա ասէ՝ թէ Դեղեցկաչէն է, և զպարակէն՝ թէ Քաջատունկ, և զկենդանագրէն՝ թէ Ճչգրտահան: Եւ գլուխ ամենայնի, զամենայն ինչ ասել և առնել թուի սուտակասպան, ոբով կարծէ հաճոյ լինել:

Բ. Իսկ մարգահաճոյ նա է, որ ի հեռուստ [տեսեալ] զոք՝ ձայն արկեալ բարբառիցի և այր զօրութեան կարդայցէ [զնա],

և յոյժ զարմանայցէ [ընդ նա] և երկոքումբք ձեռօք պինդ ունելի [և ոչ թողուցու]. և սակաւիկ մի ուղեկցեալ հարցանիցէ՝ թէ ե՞րբ միւսանգամ տեսանիցէ զնա. և այլ ևս գովութիւնս նըմա ասացեալ՝ այնպէս ուրեմն ի բաց գնայցէ: Նա ինքն եթէ չիբաւարարութիւն կոչեսցի, ոչ միայն յորոյ կողմանէն կայ՝ նմա ևեթ հաճոյ լինել խնդրէ, այլ և ոսոխին, զի հասարակաց նոցա իրաւարար լինել թուիցի. եւ զեկացն ասէ թէ ուղիղ ևս քան զքաղաքացիսն իրաւաբանեն: Եւ եթէ ի ճաշ ուրեք հրաւիրեսցի, աղաչէ զկոչնատէրն ձայնել զորդիս իւր. և ի մտանել նոցա առ նա՝ Վա՛շ, ասէ, քան թուղ թզոյ՝ առաւել նման են սոքա հօր իւրեանց. և առ ինքն ձգեալ՝ համբուրէ, և նստուցեալ նոցա ննջել ի գոգ իւր, թէպէտև նեղիցի: Եւ զտղայն առեալ ի սանտուէն՝ ինքնին ծամէ եւ ջամբէ ինչ նմա, եւ ի սուիչս (կամ յաւաչս) մանկականս փաղաքշի, և ճարպիկ և ճարտար քան զհաւն (զպապն) կոչէ զնա:

Թրգմ. Հ. Ա. ԲԱԴՐԱՏՈՒՆԻ — ԹԷՈՓՐԱՍՏՈՍ, Նկարագիրք

Ը

ԱՆԱՓԱՌՆ ԵՒ ԱՆԱՊԱՇՏՆ

Ուշ առնել, ջանալ
Աբեւրայ, կաքաւոտակ
Սկնդուկ (Սկուտդ), ընկոյզ
Ամղաճ, վէրքիկ
Սաբազիոս, փոխ-եպիսկոպոս
Ճայ, թռչուն մը ափրա [ոսոխը
Կոճ, ծառ, վէրք (խաչելու ոսկոր, լծոտ)
Մահակ, ֆառաշան
Պարիսաս, պէտրոս մը (հն. Πα-
Եկատէ, լուսոյ դիցուհին [ρείας
Կիւսահմայ, երազներու մեկնիչ
Վերնոս, լուռնոս
Պարապ առնուլ, ապերն ֆռնել
Զարակնել, չար ակնով նայիլ
Մկնսոխ, ծովային ոսոխ մը
Հերմաֆրոդիտական, երկսեռ և եզ

Ա. Անափառ այնպիսի ոք է, որ թէ ի կոչուն ուրեք հրաւիրեսցի փութայ ճեպէ առ կոչնատերն ոտպ բազմել յընթրիսն:

Զորդին ի Դելփիս տանի փոքրել զհերան, և փոյթ մեծ ունի՝ զի սպասաւոր եթովպացի զկնի իւր չերջեսցի, և ի տալ ումեք ինաս [ինչ արծաթոյ՝ ուշ առնէ զնորն տալ: Եւ թէ զեզն պատարագ մատուսցէ, զմորթ խալատոյն եղջերուքն հանդերձ առաջի դրաց տանն ընդ ցից հանեալ վարսէ (կամ կախէ զձողոյ), չուրջ բոլորեալ զնովաւ պսակս մեծամեծս, զի որոց մտանեննն երևելի կայցէ՝ թէ զեզն է զենեալ: Եւ յետ ընդ ասպետսն ի հանդէս ներծաձեալոյ, ապա այնուհետեւ իջեալ յերիվարէն՝ զամենայն [ինչ զայլ թողու ի մանուկն՝ դարձուցանել ի տուն, և ինքն զամպանն միայն արկեալ զիւրև՝ մարակք յոտն ճեմ առեալ զգնայ ի հրապարակի անդ: Եւ իբրև սկզնուկն իւր մեռանիցի, չերիմ կանգնէ նմա և արձան, և գիր ի վերայ՝ թէ «Շառաւիղ Մելիտինոյ»: Ձայնն՝ զոր ի տանն բուծանէ՝ ոչ մոռանայ գնել սանդղիկ, և առնէ վահանակ պղնձի, զի առեալ զայն ձայնն՝ ոստոստիցէ ընդ սանդղամատուռնան: Եւ նուիրեալ օզ (կամ մանեակ) պղնձի մեհենին Սակղեպեայ՝ այնչափ արկանէ ի նա պսակս, և [չփեալ] օծանէ զօր ամենայն՝ մինչև մաշեսցի: Ստէպ ստէպ սափրէ զգեստն, և զատամունն ունի սպիտակ փայլուն, եւ զգեստն՝ որ դեռ ևս պատուականք (կամ պիտանիք) իցեն՝ ի բաց ընկենու զգեստ, և խզովք անուշիւք օծանի հանապազօր: Ի հրապարակս զսեղանաւորօքն գայ, և ի կրթարանն՝ ա՛նդ դեգերի ուր հուժկու մանկտին ընդ մարզս ելանեն, և ի տեսլարանս՝ յորժամ խաղք վինիցին՝ երթայ մօտ առ զօրավարան նոսին: Եւ ոչ մի ինչ յիւր պէտն ո՛չ ստանայ՝ այլ առ օտարականս առաքէ [վաճառս] ի Բիւզանդիոն, ի Կիւզիկոն՝ չուննս լակոնացիս, և մեղր Հիւմեттացի՝ ի Հռոդոս. և ապա քաղաքացւոցն քարոզէ՝ թէ զայս ինչ և զայն գործեցի: Գիտէ և կապիկս ի տան սնուցանել և աղաւնիս սիկեւիացիս, և ստանալ կոճս վայրի վիթաց (կամ վէգս այծեմանց), և չիչս բոլորչիս Թուրիացիս, և խեզաթիւր մահակս (կամ գաւազանս գալարուննս) ի Լակեդեմոնէ, և սրահակս նկարէնս անկուածոյս ի կերպարանս Պարսիկ արանց, և գաւիթ (մրցարան) ի պէտս ասպարիսի բռնամարտից եւ գնդաձգութեանց, եւ չուրջ յածեալ ցոյցս առնէ՝ տալ զայն ի սպաս իմաստասիրաց, զինաչարժից և նուագողաց. եւ ինքն յետոյ ապա գայ մտանէ ի հանդէս անդր, զի այս ոք կամ այն ի հանդիսականացն ասիցէ՝ թէ Դորա խակ է խազեղագ: Դուն գործէ և առ պետական աւագորերոյն, զի զազդեցութիւնն զոհից ինքն արասցէ առ ամբոխն, և զգեցեալ պատմուճան պայծառ՝ պսակ ի գլուխ ելանէ առ նոսա և ասէ. Սրք աթենացիք, զոհեցաք նահապետքս զոհս մօրն աստուածոց եւ ընդունելի են պատարագք մեր և բարենչան, և դուք ի բարիսն վայելեսջիք: Ապա յետ այսր ազդարարութեան՝ գնայ ի տուն պատմել կնոջ իւրում՝ թէ ո՛րպէս առաւել քան զոր կամէրն յաջողեցաւ նմա ամենայն:

Բ. Մնապաչա է, որոյ լուացեալ յաւուր չարի զձեռսն եւ սրսկեալ զջուր սրբութեան, առեալ դափնի (տերև դափնւոյ) ի բերանն՝ այնպէս չերջի զօրն ցերեկ: Եւ զճանապարհայն՝ եթէ անցցէ զնովաւ կատու, չգնայ յառաջ՝ մինչև երթիցէ ոք ընդ այն, կամ թէ ինքն ընկենուցու քարինս երիս ի վերայ ճանապարհին: Ցորժամ օձ ի տանն տեսանիցէ, եթէ պարիսան իցէ՝ զՍաբազիոս կարգայ, իսկ եթէ «սուրբ» ասացեալն, անդէն վազվազակի բազին կանչէ: Որ ի կիւս ճանապարհաց վեմք կայցեն օձեալք՝ մատուցեալ հեղու ի վերայ նոցա զչիչ իւղոյն, և ի գուռս անկեալ երկիր պագանէ և գնայ: Եթէ մուկն զպարկ ալերն կրծիցէ, երթեալ զկիւսահմայ հարցանէ՝ զի՛նչ գործել իցէ. և առեալ պատասխանի՝ թէ ե՛րթ տուր կարկատել մորթեգործին, ոչ անսայ, այլ ի բաց թողու զպարկն և զոհս ընդ այնր մատուցանէ: Ստէպ ստէպ սափրէ զմորուս իւր, ասելով թէ Եկատեայ թովչութիւնք և յաճախ սրբէ զտուն իւր, ասելով թէ Եկատեայ թովչութիւնք ի ներքս կան անկեալ: Եթէ չերթալն ի տուն զբուոյ ձայն լսիցէ, խռովի և գոչէ. Վե՛հդ Աթենաս. և այնպէս ապա անցեալ գնայ: Ոչ ի գերեզմանս ելանէ, ոչ յուղարկ մեռելոց և ոչ առ ծննդաբերս կան կանայս առնու յանձն գնալ. այլ պիտոյ է լինձ, ասէ, սուրբ լինել ի պղծութենէ: Ի չորրորդս և յեօթներորդս աւուրց (ի չորեքշաբթի և ուրբաթ) հրաման տայ ընդ եւ ի քսան եւ չորրորդ աւուրս ամսեան) հրաման տայ ընդ եւ ի քսան եւ չորրորդ աւուրս ամսեան) հրաման տայ պինի եփել ի տան, եւ ելեալ գնէ մրտենիս՝ կնդրուկ եւ աթեպայս. եւ մտեալ պսակէ զօրն ի բուն զհերմափրոդիտական դրօչեալսն. եւ իբրև երազ տեսանիցէ, գնայ առ երազահանս և հարցանել՝ թէ առ ո՛ւ ի դից կամ ի դիցուհիս և հաւագէտս, հարցանել՝ թէ առ ո՛ւ ի դից կամ ի դիցուհիս հեաց արժան իցէ յաղօթս կալ: Եւ ձօնեալ զանձն առ Որփէական խորհրդակատարսն՝ երթայ ամսոյ ամսոյ հանդերձ կնաւն. իսկ եթէ կինն չառնուցու պարապ, ածէ ընդ իւր զդայեակն և զորդիսն: Եւ եթէ ի ծով լոգանալ կամիցի, և հայիցի ոք ընդ նա, խստորս զգլխոցն արկանէ, զի մի՛ ոք չարակնեսցէ ի գեղ նորա: Եւ ելեալ ի կիւս փողոցաց՝ լուանայ զգլուխն, և կոչե-

ցեալ քրմուհիս՝ խնդրէ սրբել զինքն մկնասխով և սկնդկաւ (կամ դիակամբ սկնդկի)։ Մոլի զոհ կամ վերնոտ թէ տեսանիցէ, սոսա կացեալ քամձեալ ի ծոցն թքանէ։

Թրգմ. ՆՈՅՆ ՆՈՅՆ, անդ

9

ՌԻՍԵԻՍ ՅԱՆԴԻՄԱՆԵԱԼ ԿՇՏԱՄԲԼ ՋԹԵՐՈՒՏԻՆ

Ընկապնիմ, կապ-էլ, ընդ-էլ	Շաղաւաշուրթն, ցած -- գոհ
Խառնաղանճ *(ած.)*, գր-ելի	Խեղ, չէն *[քաներ խօսող.*
Զարակեղտ, վարանոտ	Լորտ, ծոյլ, ընայ
Ձամարտակել, զբաղ-ել	Առաւիր, ի ընդ
Բծկաճ, արատաւոր	Լեճկ, լերկ
Դարով առնել, նախատել	Չչարիմ, նեղ-ել, ընչրանալ
Կորովեալ, կորացած՝ ծռած	Խուել *(զոհ)*, գեղ վարդ-ել *(գեղո-*
Շամբռիմ, խեղանալ, խենդեր-ալ	Լեպեռտի, լէրք *[մը հեռ)*

Զոր ոք տեսեալ ի ռամկաց յաղագակելն անդ ըմբռնէր՝
Հարկանէր գաւազանաւն և կըշտամբէր ի սաստ բանից.
«Ա՛յ չըւառ, նի՛ստ անխըլիրտ, այլոց ձայնի լեր ուշկընդիր՝
Որ ի վեր են քան ըզքեզ, դու վատասիրտ և ապիկար,
Ոչ մարտից լինչ երբեք՝ ոչ խորհըրդոյ ի համարի.
Ոչ բոլոր աքայեցիքս արքայասցուք աստ ապաքէն.
Զէ բարւոք բազմացն իշխել, մի ոք ևեթ իշխան լիցի,
Մի թագաւոր, ումմ չնորհեաց կորովամիտ Կրոնիեանըն ճետ
Իրաւունս և գաւազան՝ թագաւորել ի վերայ մեր»։
Այսպէս սա ճոխ ճեմելով տայր բանակին դուլ և պատուէր,
Որ դարձեա՛լ ի հրապարակ անդր ի նաւուց և ի վրանաց՝
Դիմէին ի ձայն ճնչման, որպէս յորժամ գոչող ծովուն
Մոընչեն ալիք ի մեծ ափունս և գոռան խորք անդընդոց։
Սրդ բազմեալ կային այլք ի նըստարանն և ընկապճեալք։
Թերսիտէս գեռ ևս միայն չաղաւաչուրթըն կարկաչէր

Որ հըմուտն էր ի սըրտին չաղփաղփ խօսից և խառնաղանճ՝
Առաւիր և անհեդեդ ճամարտակել ընդ թագաւորսն՝
Որ զի՛նչ և ծաղրածու թըւէր նըմա յԱրգիացիս։
Ոչ քան զայս ոք լեպեչսի 'նդ Իլիոնիս եկեալ էր այր.
Խեղ աչօք և մլով ոտամբըն կաղ և սապատողն,
Ուսքն ի լանջսըն կորովեալք, իսկ ի վերուստ կուսէ սրագլուխ,
Եւ ի լեչկըն կառափին ցըցուէր անօսր աղուամազ սուղ։
Ատելի էր մանաւանդ Աքիլլևսի և Ոդիսեայ,
Զորըս ցանգ թըշնամանէր. այլ արդ գիւցազն Ագամեմնոնի
Սուր ճըչիւ ձըգէր լուտանս. իսկ ընդ նըմին Աքայեցիքն
Անհընարին ախացեալ ըզչարչին ի սիրտս իւրեանց,
Սակայն նա բարձրաբարբառ զԱգամեմնոն առնէր դըսրով.
«Ատրիդէս, գի՞ տըրտընջես, կամ ի՞նչ իւիք իցես կարօտ.
Պղընձով լի են վըրանդք, և ի խորանոգ ընտիր ընտիր
Կանա՛յք կան բազումք, զորըս յառաջ քան զամենայն
Ինձ չնորհեմք Աքայեցիքս՝ յորժամ զաւար լինչ առնուցումք։
Մի՛թէ ոսկւո՞յ ևս կարօտիս՝ գի ի Տրովեանց քաջածխոց
Մի՛թէ ոսկւո՞յ ևս կարօտիս՝ գի ի Տրովեանց քաջածխոց
յիլիոնէ առեալ բերցէ ոք ի փլկանս իւրոյ որդւոյն՝
Զոր ածխցեմ ես կալ և կապ, և կամ թէ այլ ոք յԱքայեանց։...
Է՛ լորտք բըծկանք չարակեղտ, աքայուհիք՝ ո՛չ աքայիկք.
Օ՛ն ի տուն դարձցուք նաւուքս, և զգա լըքեալ թողցուք այսրէն,
Ըմբռչխնել հալել զպարգևսն աստ ի Տրոյա, գի գիտասցէ
Թէ իցե՞մք լինչ արգեօք օգուտ նըմին մեք, եթէ ոչ։
Ոչ մարտից լինչ երբեք՝ ոչ խորհըրդոյ ի համարի.
Ոչ բոլոր աքայեցիքս արքայասցուք աստ ապաքէն.
Զէ բարւոք բազմացն իշխել, մի ոք ևեթ իշխան լիցի,
Մի թագաւոր, ումմ չնորհեաց կորովամիտ Կրոնիեանըն ճետ
Իրաւունս և գաւազան՝ թագաւորել ի վերայ մեր»։
Այսպէս սա ճոխ ճեմելով տայր բանակին դուլ և պատուէր,
Որ դարձեա՛լ ի հրապարակ անդր ի նաւուց և ի վրանաց՝
Դիմէին ի ձայն ճնչման, որպէս յորժամ գոչող ծովուն
Մոընչեն ալիք ի մեծ ափունս և գոռան խորք անդընդոց։
Սրդ բազմեալ կային այլք ի նըստարանն և ընկապճեալք։
Թերսիտէս գեռ ևս միայն չաղաւաչուրթըն կարկաչէր
Որ հըմուտն էր ի սըրտին չաղփաղփ խօսից և խառնաղանճ՝
Առաւիր և անհեդեդ ճամարտակել ընդ թագաւորսն՝
Որ զի՛նչ և ծաղրածու թըւէր նըմա յԱրգիացիս։
Ոչ քան զայս ոք լեպեչսի 'նդ Իլիոնիս եկեալ էր այր.
Խեղ աչօք և մլով ոտամբըն կաղ և սապատողն,
Ուսքն ի լանջսըն կորովեալք, իսկ ի վերուստ կուսէ սրագլուխ,
Եւ ի լեչկըն կառափին ցըցուէր անօսր աղուամազ սուղ։
Ատելի էր մանաւանդ Աքիլլևսի և Ոդիսեայ,
Զորըս ցանգ թըշնամանէր. այլ արդ գիւցազն Ագամեմնոնի
Սուր ճըչիւ ձըգէր լուտանս. իսկ ընդ նըմին Աքայեցիքն
Անհընարին ախացեալ ըզչարչին ի սիրտս իւրեանց,
Սակայն նա բարձրաբարբառ զԱգամեմնոն առնէր դըսրով.
«Ատրիդէս, գի՞ տըրտընջես, կամ ի՞նչ իւիք իցես կարօտ.
Պղընձով լի են վըրանդք, և ի խորանոգ ընտիր ընտիր
Կանա՛յք կան բազումք, զորըս յառաջ քան զամենայն
Ինձ չնորհեմք Աքայեցիքս՝ յորժամ զաւար լինչ առնուցումք։
Մի՛թէ ոսկւո՞յ ևս կարօտիս՝ գի ի Տրովեանց քաջածխոց
Մի՛թէ ոսկւո՞յ ևս կարօտիս՝ գի ի Տրովեանց քաջածխոց
յիլիոնէ առեալ բերցէ ոք ի փլկանս իւրոյ որդւոյն՝
Զոր ածխցեմ ես կալ և կապ, և կամ թէ այլ ոք յԱքայեանց։...
Է՛ լորտք բըծկանք չարակեղտ, աքայուհիք՝ ո՛չ աքայիկք.
Օ՛ն ի տուն դարձցուք նաւուքս, և զգա լըքեալ թողցուք այսրէն,
Ըմբռչխնել հալել զպարգևսն աստ ի Տրոյա, գի գիտասցէ
Թէ իցե՞մք լինչ արգեօք օգուտ նըմին մեք, եթէ ոչ։
Այլ ասաց նախատելով զԱգամեմնոն զհովիւն ազանց
Թերսիտէս, առ որ խակոյն հուպ Ոդիսևս հասեալ դիւցազնն
Եւ խեթիւ հայեցեալ ի նա սաստեաց ծանրը բանիւ.
«Թերսիտէս լեզուագար, թէև ճըռուող ճոռոմաբան,
Կարկեսջիր, վի՛ դու միայն ընդ թագաւորս խեռել ժրտիր.
Ոչ կարծեմ քան ըզքեզ վատթարագոյն զայլ ոք լինել
Ցընդհանուրս՝ որ եկին ընդ Ատրիդեանս այսր յիլիոն...
Եթէ ա՛յլ ևս լինչ ըզքեզ գըտից չամբչեալ՝ իբր աստ արդէն,
Մի՛ ևս ա՛յլ այնուհետև յուսս իւր կացցէ գլուխս Ոդիսեայ,
Եւ ոչ յա՛յնմ լինչ հետ Տելեմաքայ կոչիցիմ հայր,

եթէ ոչ կալեալ ըզքեզ և ի ձորձոց այսոի լերկեալ՝
ի մեկնոցէդ ցըշապիկսդ և որ ծածկենըն զամօթոյսդ,
Այնպէս ըզքեզ վարեցից յերագաթև նաւս յատենէս՝
Գանալից կականաւոր չարակոչկոճ խայտառակեալ».

Զայս ասացեալ՝ ըզթիկունն և զուսս եհար գաւազանաւն.
Ինքըն կարկամ կծկեցաւ, յաչացն անկան յորդ արտասուք:
Երաչխէպ արիւնաներկ կապուտակեալ էլ ի միջնոզն
Ընդ ցըպովն ոսկեզինաւ. ի նիստ եղև նա պակուցեալ,
Եւ կըսկըծեալ՝ այլանդակ հայեցուածով ջընջէր զարտօսր:

Թրգմ. Հ. Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ — ՀՈՄԵՐՈՍ, Իլիական Բ.

IO

ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՔ ԾԵՐՈՒԹԵԱՆ

Բարուրք, պաշտօն, ընծայումն	Ձպհտս առնել, հոգ չտանիլ
Ցոր սակս, որոն համար	Երգահան, ոչքերգիչ
Ձոխութիւն, հեղինակութիւն	Պահանջիմ (հայց. խնդր.), կ'ուզեմ
Ի տէս կալ, տեսնել, դիմանալ	Ցափչել, խափանուիլ, մոլիլ [ընդդէմ
Դարովութիւն, պարտաւ, ապրանք	Անխառն, առանձին
Ձափ (աշ.), չափաւոր	Ձանգիտել, վախնալ

Ցորժամ միտ եդեալ հայիցիմ, չորս բարուրս գտանեմ, յոր սակս եղուկ կարծիցի ծերութիւն: Նախ՝ զի ի գործոց խափանիցէ. երկրորդ անգամ՝ զի զմարմին տկարագոյն գործիցէ. երրորդ՝ զի գրեթէ յամենայն ցանկութեանց զրկիցէ. չորրորդ՝ զի չիցէ հեռի ի մահուանէ:

Թէ հաճոյ թուեսցի՝ դիտեսցուք տեսցուք եթէ ո՛րչափ եւ քանի՛ արդարք եւ իրաւացիք մի մի իւրաքանչիւր ի պատճառաց անտի լցեն: Ի գործոց, ասեն, դադարեցուցանէ. յորո՞ց գործոց. յայնցանէ՞ ինչ արդեօք՝ որ ի մանկութեանն եւ ի զօրութեան գործիցին: Եւ արդ չգո՞ն ինչ ծերոց իրք, որք թէպէտ եւ տկար մարմնով ո՛չ, սակայն մտօք մատակարարեսցին: Արդ՝ ծերքն

(հռոմայեցիք)՝ Մաքսիմոս, Փաբրիկիոս եւայլք, մինչդեռ խորհրդով եւ ճոխութեամբ պաշտպանէին քաղաքին՝ գործ ինչ ո՞չ վճարէին: Որք չառնուն յանձն՝ թէ ծերութիւն ընդ գործ ինչ գայցէ, չբերեն ի մէջ [բանս հաւանեցուցիչս], եւ նոցա նման են, որք զնաւավարէ ի նաւարկելն ասիցեն՝ թէ ոչ մի ինչ գործ գործէ. մինչ այլք ընդ կայմն ելանեն, այլք ընդ տախտակամած յատակն ընթանան, կէսք զջուր մխոցաւ [արտաքս] հանեն, իսկ նա զսամին ուղղիչ նաւին ի ձեռն առեալ ի խելն նստի հանդարտիկ: [Թէպէտեւ նաւուղիղն] չառնէ զայն զոր պատանիքն գործիցեն, այլ մեծամեծս յոյժ եւ ազնուագոյնս գործիցէ: Ոչ զօրութեամբ կամ երագութեամբ կամ սաստկութեամբ մարմնոց մեծ ինչ իրք վճարիցին, այլ խորհրդով եւ իմաստութեամբ, յորոց ոչ միայն չէ սովոր վրիպել ծերութիւն, այլ եւ յաճախէ (աճէ) եւս նոքիմբք: Թէ սոքա ի ծերսն չէին, ոչ զգըլխաւոր խորհրդականութիւնն մեր աւագք (նախնիք) ծերակոյտ կոչէին: Առ ի Լակեդեմոնացւոց եւս, որ զմեծ իշխանութիւնն ունիցին՝ նոյնպէս ծերք կոչին, որպէս եւ են իսկ. եւ եթէ կամիցիք ընթեռնուլ կամ լսել զարտաքնոցն, գտանիցէք զի քաղաքք մեծամեծք ի ծերոց կանգնեալք եւ հաստատեալք՝ յերիտասարդաց կործանեցան: «Աւա՛, զիա՞րդ զայնչափ քաղաքն ձեր այնպէս վաղ կորուսէք»: Քանզի ցնա՝ որ այնպէսն հարցանէր՝ որպէս ի Նեւիոսի խաղն կայ, այլովք հանդերձ եւ այս պատասխանի տուաւ. «Ցառաջ գային ճարտարախօսք նորք, անհանճարք, երիտասարդք»: Քանզի յանդգնութիւն ծաղիկ հասակի է. իմաստութիւն (խոհականութիւն)՝ ալեւորեալ տոյց:— Այլ ուշ չիշատակացն նուազէ: Առնում յանձն, թէ զայն չկրթիցես, կամ թէ ի բնէ հեղգագոյն իցես: Թեմեստոկլէս զամենեցուն քաղաքացեաց զանուանս գիտէր. արդ՝ մի՛թէ համարիցի՛ք զնմանէ՝ թէ յորժամ յառաջադէմն լեալ իցէ հասակաւ՝ որ Արիստիդէսն իցէ զնա Լիւսիմաքոս կոչեալ ողջոյն տայցէ: Եւ ոչ ծերոյ ումեքէ լուայ՝ զի մոռացաւ թէ յո՛րմ վայրի զգանձն թագոյց: Կան ինձն ծերոց հանճարք, թէ միայն փոյթն եւ յօժարութիւն ի տէս կայցէ: Սոփոկղէս ի պարարտ ծերութեան երգահան երեւեցաւ, եւ վանն նորին փութոյ, իբրեւ տան իրաց չպէտս թուէր առնել, դատափետ առնաքարշ յիւրոց որդւոց ի հրապարակ կոչեցաւ, զի զնա՝ իբրեւ աղճատեալ եւ ի մտաց անկեալ՝ ի տանն իրաց մերժիցեն դատաւորք: Ասի թէ յայնժամ ծերն՝ զառաստպելն (զողբերգու-

թիւնն)՝ զ«Եգիպտոս ի կողոնա»՝ զոր ի ձեռին ունէր եւ ի ժամանակին յայնմիկ գրեալ էր՝ ընթերցաւ առաջի դատաւորացն, եւ եհարց թէ այն երգ աղճատելո՞յ ինչ թուխցի։ Իբրեւ գայն ընթերցաւ, ի վճռոյ դատաւորացն զերծաւ։

Եկեսցուք ի միւս ևս դպրովութիւն ծերութեանն։ Ոչ ցանկամ ինչ այժմ ընդ այժ եւ ընդ զօրութիւն առն երիտասարդի, որպէս յերիտասարդութեան՝ չըզձանայի զզօրութիւն ցլուց եւ գիլաց։ Զանգիտեմ թէ դուցէ տկարանայցէ ծերութեամբ ճարտարախօսն. քանզի գործ նորա ոչ մտաց միայն է, այլ ուժոյ եւս, եւ զօրութեան։ Այլ ոչ գիտեմ զիա՛րդ կամ որո՛վ օրինակաւ բարբառ ալեւորացն ի ծերութեան պայծառանայ, եւ վայելուչ է բան ծերոյ, հանդարտ եւ ցածուն. եւ բազում անգամ պեղեցիկ եւ մեղմական ճառք ծերոյ ճարտարախօսի՝ ինքնին լ՛ւր ունկնդրութիւն գործէ։ Մի՛թէ զայն եւս զօրութիւն չիմացուցո՞ւմք ծերութեան, զի զերիտասարդն ուսուցանիցէ եւ խրատիցէ, եւ առ ամենայն իսկ պաշտամանցն պարտոյս թեքեալ կազմիցէ։ Թէպէտեւ այն զօրութեան նուազութիւն բազում անգամ յերիտասարդութեանն չարեաց (յանառակութեանց) գործ եւ ոչ ծերութեան. քանզի երիտասարդութիւն ցանկասէր եւ անխառն՝ մարմին տկարացեալ աւանդէ ծերութեան։ Տեսանէ՞ք զիա՛րդ ի Հոմերոսի գիրսն՝ բազում անգամ Նեստոր զիւր առաքինութիւնն քարոզէ։ Եւ որպէս Հոմերոս ասէ՝ ի նորա լեզուէն քան զմեզր եւս քաղցրագոյն հոսէր բանն. եւ ոչ կարօտանայր ինչ իւիք մարմնոյ զօրութեամբ առ այնպիսի քաղցրութիւնն. եւ սակայն զօրավարն Յունաց աչխարհին (Ագամեմնոն) չըզձանայ թէ տան Այիակայ (Էասայ) նմանս ունիցի, այլ թէ Նեստորի, զոր եթէ դեպք տայիս, համարի թէ վաղ կորնչէր Տրովացւոց քաղաքն։... Զի՞ք զօրութիւն ի ծերութեան։ Բայց չպահանջեն զօրութիւն ի ծերութենէ. զի ըստ օրինաց եւ ըստ սովորութեանց գերծ է հասակ մեր յայնպիսի վաստակոց՝ զորս չէ մարթ առանց զօրութեան բառնալ. վասն որոյ ոչ միայն զոր չկարեմք, այլ եւ ոչ որչափ ինչ կարեմք, պահանջիմք։ Այլ զոն բազում ծերք այնպէս դողդոջուք, զի ոչ մի ինչ գործ կամ կենաց պաշտաճս ամենեւին մարթեն վճարել։ Այլ եւ այն չէ ինչ առանձինն ծերութեան, այլ առհասարակ հիւանդութեան։ Զի՞նչ զարմանք իցեն թէ ի ծերն երբեմն հիւանդք իցեն, ուր եւ երիտասարդք

իսկ յայնմանէ ապրել ոչ կարեն։ Այլ պարտ եւ պատշաճ է հակառակ կալ ծերութեանն, եւ բազում փութով զնորա թերակատարութիւնն լնուլ։ Պարտ է իբրեւ ընդ ախտի ցաւոց՝ այնպէս ընդ ծերութեանն կռուել։ Պարտ է զպայման առողջութեանն ունել. չափ ինչ կրթութիւն ի կիր արկանել. այնչափ ինչ ուտել եւ ըմպել զի արծարծեսցի զօրութիւնն եւ մի նեղիցի։ Եւ ոչ մարմնոյ միայն պարտ իցէ դարման տանել, այլ եւ մտացն եւ ոգւոց յոյժ իսկ առաւել։ Զի եւ նոքա, թէ ոչ ի ճրագ ձէթ արկանիցես, չիջանին յափչին ծերութեամբ։ Եւ մարմինք աչխատութեամբ եւ կրթութեամբ ծանրանան, իսկ ոգիքն վարժեալք թեթեւագոյնք լինին։

Թրգմ. Հ. ՅՈՎՍԷՓ ԳԱԹՐՃԵԱՆՑ ԿԻԿՆՐՈՆ, Վասն ծերութեան

II

ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՔ ԾԵՐՈՒԹԵԱՆ

(Ցաջորդ մասն վերոյն)

Վճռաս, յանդգնութ, ամբաստանութիւն	Խրատիմ, սորվեմ, ուսուցանել
Վարձակ, երբեմն՝ խաղցող կին	Առձակերտասանակ, անառնչ
Ախտարակիմ, բնական կերպեր	Փարգաս, տա՛ր լեցի
Տիալութիւն, անհոգութիւն	Իշխանութիւն, աթոռապատուհաս
Խանձ, կեր, խոյժ	Վայելչութիւնք, վայելուչ [ըն-

Գայ այսուհետեւ երրորդ դպրովութիւն ծերութեան. զի ասեն թէ ի փափկութեանց և ի ցանկութեանց անկանիցի։ Ո՛հ մեծապայծառ պարգեւի տիոցն, քանզի արդարև հանէ ի մէնջ զա՛յն՝ որ չարաչար իմն յերիտասարդութեանն է։ Առէք ի ձեռս, երիտասարդք առաքինիք, զհին ճառս Արքիւտեայ տարենատացւոյ առն մեծի եւ աւագի. ոչ մի ինչ գլխաւոր ժանտագործ ցաւս քան զմարմնոյ ցանկութիւն, ասէր, տուեալ յախտարակաց. եւ այնր ցանկութեան անյագ տենչանք խառն ի խուռն եւ արձակերասանակ զրգռեն առ ստանալ [յոր փափագենն]։ Եւ թէ անտի

աչխարհի մատնութիւնք, անտի հասարակաց իրաց կործանմունք ծնանին, անտի գաղտագողի պատգամաղնաց ի թշնամիս լինել, եւ ամենեւին չէք իսկ լինչ եղեռն եւ ոճիր՝ յոր չդրդիցեն տենչանք ցանկութեան, եւ բնաւ իսկ յոռութիւնք ոչ այլ ուստեք հրապուրեալ զրգռին թէ ոչ ի ցանկութենէ. և փոխանակ զի բնութեան և կամ դիյ ուրուք ոչ լինչ ազնուագոյն քան զմիտս մարդոյն տուեալ իցէ, այնմ աստուածեղէն պարգևին չէք լինչ այնպէս թշնամի՝ որպէս զցանկութիւն: Նմին իրի՝ չէք լինչ այնպէս զազիր և ժանտաբեր քան զցանկութիւն, զի թէ մեծ իմն և երկարագոյն իցէ այն, չիջուցանէ զամենայն հոգւոյն զլուսաւորութիւն: Եթէ զցանկութիւն մտօք և իմաստութեամբ չկարիցեմք քամահել (արհամարհել)՝ պարտևպատշաճ է յոյժ չնորհակալ ծերութեանն լինել, զի զոր չէ՛ արժան՝ չառնէ մեզ հաճոյ: Քանզի արգել լինի խորհրդոյ՝ ցանկութիւն, թշնամի է իմաստութեան, եւ, որպէս բանից կարգ է ասել, չլացուցանէ զաչս մտաց, եւ ընդ առաքինութեան չունի լինչ հաղորդութիւն: Ի կոչունն, ասեն, չվայելիցէ ծերութիւնն, և ի բազմախորտիկ սեղանն յարդարեալս և ի յաճախ գինըմպելիս.— ապա ուրեմն և ի գինեզինութենէ և ի տհալութենէ և ի քնահատն լինելոյ ազատ և ի վեր է: Բայց եթէ չնորհել լինչ պարտ իցէ ցանկութեանն, քանզի նորա ողջքանացն չլինիմք գիւրաւ դիմադարձ,— և Պղատոն աստուածեղէն մտօք «կեր չարեաց» զցանկութիւնն անուանէ՝ քանզի զի նովին ըմբռնին մարդիկ՝ որպէս խանձիւ ձկունք,— թէպետև յանչափ կոչունս չվայելէ ծերութիւն, սակայն ի չափ լինչ խրատ խուսնս մարթի ուրախ լինել: Այլ թերևս ի ծերոն չգոն խափիզքն տենչանաց. առնում և ես յանձն, նա և ոչ բուռն ցանկութիւն այնպիսի իրաց գոյ ի նոսա: Զէ լինչ ծանր և դժուարին, որում ոչն ցանկաս, չունել: Քաջիկ ասաց Սոփոկղէս յորժամ ծերն էր և եհարց ոք ցնա թէ վարիցի՛ Աստղկան ցանկութեամբ. Օ՛ն անդր, ասէ, փարդաստ, քաւ լիցի. զի մտադիւր իսկ ի նմանէ իրև յաղիտարար տեառնէ և ի մոլելոյ ելի մազապուր փախստեայ: Թէպետև ոչ զրկիցի որ ոչն ցանկանայցէ, իսկ ես ասեմ՝ թէ և՛ս հեշտականագոյն է քան զվայելելն՝ չցանկալ: Նա և այն փո՞քր լինչ իցէ, մտացն իրև ի վարձու ունել զամենայն ցանկութիւն և զփառս և զհամօրէն կիրս, զի համակ ընդ իւր լինիցին և ընդ իւր կեցեն: Եթէ ունիցի լինչ ծերութիւն իրրեւ ճարակ փութոյ (խոկման) և ուսման, չիք լինչ քաղցր քան զպարապորդ ծերու-

թիւն: Գիտեմք զի Կ. Գալլոս գոգ մեռանէր ի ջանս անդ վաստակոցն չափելոյ զերկինս և զերկիր, և քանիո՛ն ուրախ լինէր նա, յորժամ զարեգական և զլուսնի նուազութիւն կանխագոյն պատմէր բազում ժամանակօք: Արդ՝ զբազում ծերս ի նոյն փոյթ վառեալս բորբոքեալս տեսանեմք: Եւ Մ. Կեթեգոս՝ զոր յիրաւի Ուղեղ հաւաքեցուցիչ կոչիցէ Եննիոս (քերթողն)՝ քանիո՛ն փութով եւ ի ծերութեանն ի ճարտարխօսութիւն կրթէր: Եւ արդ՝ զի՛նչ այն կոչնոց եւ խաղուց եւ վարձակացն վայելչութիւնք ի ցեղն՝ յորժամ այնպիսի վայելչութեանց դնիցին համեմատ: Մանաւանդ զի այս ամենայն ջանք վաստակոց են ուսման վարդապետութեան, որք յանձինս իմաստնոցն եւ բարւոք խրատելոցն զոյզ ընդ տիոցն աճեցեալ զարգանայցեն. որպէսզի ելանիցէ ի գլուխ սքանչելի բանն Սողոնի զոր զանձնէ ասաց, թէ բազում ինչ հանապազօր ուսեալ՝ այնպէս ծերանայցէ. եւ ճան զայն չէ ինչ մարթ եւ հնար թէ լցէ ինչ յանախագոյն ուրախութիւն: Բայց յուշ լիցի ձեզ թէ ամենևին զայն ծերութիւն յարգեմ՝ որ մանկութեանն հիմամբք հաստատեալ կայցէ. եւ թէ եղուկ այն ծերութիւն է որ բանիւք անձինն պաշտպանիցէ: Ոչ ալիք, ոչ խորչք յանկարծակի վաղվաղակի զիչխանութիւնն մարթեն ի բաց հանել, այլ առաջին հասակն՝ որ պարկեշտութեամբ անցեալ լցէ՝ զվերջին տոհմականս արդեանց իշխանութեանն առնու: Քանզի և այնք իսկ մեծարանաց են՝ որ թերևս ագոյնք և հասարակաց հիմն կարծիցին. ողջոյն տալ, մերձենալ, հրաժեշտ առնուլ, յոտն կալ, խորհուրդ հարցանել, որք և առ ի մէնջ և յայլ ևս քաղաքս՝ որ ազնուական բարս ունիցին՝ հաւաստեալ կան պահին: Զկիւսանդրեայ Լակեդեմոնացւոյ պատմեն թէ սովոր էր ասել՝ եթէ Լակեդեմոնացւոց քաղաքն պարկեշտագոյն իմն բնակութիւն լցէ ծերոցն: Զի եւ ի յիշատակարանս իմն կայ՝ թէ յորժամ յԱթենացւոց քաղաքի, ի խաղսն, եկն ծեր այր ի թատրն, ի բազմամբոխ ժողովն անդ չտուաւ նմա տեղի ուրեք յիւրոց քաղաքացեաց, իսկ իրրև առ Լակեդեմոնացիս մատեաւ, ամենեքին յոտն կացին և զծերն առեալ նստուցին: Արդ այսպէս՝ որչափ յառաջ ոք մատչիցի տիով, գոյնչափ զկարծեաց եւ զմտաց զառաջին իշխանութիւնն ունիցի: Արդ՝ զի՞նչ ցանկութիւնքն իցեն մարմնոյ՝ յորժամ ընդ ճոխութեանն վարձուց համեմատեալ կշռիցին:

Կան ինան և չորրորդ պատճառք, որ թուի թէ աւելագոյնս

զմեր հասակս նեղեալ տագնապիցէ. մահուն մերձենալ. որում և չէ մարթ թէ կարի հեռի ի ծերութենէ իցէ: Որ թշուառական ծերոյն, որ յայնչափ երկայն տիս չառ ի միտ թէ պարտ է զմահ արհամարհել... Այլ եկից ի մահն հասեալ ի վերայ. զի՞նչ այն վնաս իցէ ծերութեան, եթէ գնոյն և յերիտասարդութեան է տեսանել, զի հասարակաց ամենայն հասակաց է մահ: Այլ ակն ունի, ասեն, երիտասարդն թէ ընդ երկար կեցցէ, իսկ ծերն չմարթի նմին ակն ունել: Այլ նովիմբ քան զերիտասարդն՝ եւս ապնուագոյն է ծերն. զի յայն ինչ զոր նայն յուսայ՝ սա եհաս. նա ընդ երկար կամի կեալ, և սա երկարագոյն եկեաց: Եւ սակայն, ո՛վ բարերար զիւք, ո՞ր այն երկարագոյն կեանք իցեն ի կեանս մարդկան: Զամենայն ինչ՝ որ ըստ բնութեանն լինիցին առ բարւոքս պարտ է ունել, և զի՞նչ ինչ այնպէս ըստ բնութեան իցէ՝ որպէս ծերոցն մեռանել. եւ ինձ այնչափ քաղցր և հեշտական է, զի որչափ մօտագոյն ի մահ անդր մատչիցիմ, իբրև զգամաք տեսանել համարիցիմ, եւ թէ յերկայն նաւարկութենէ ի նաւահանգիստ հասանելոց եմ: Եւ կենաց բարւոք վախճան այն է՝ յորժամ ողջ միտքն իցեն եւ այլ եւս զգայունք, եւ իմին զիւր գործ՝ զոր միախուռն ի մի վայր գումարեալ յօդեաց բնութիւնն, քակիցէ: Վասն որոյ Պիւթագորաս արգելու առանց իչխանին հրաման տալոյ՝ այն իսկ է Աստուծոյ՝ ի պահպանութենէ եւ ի կայից կենդանութեան ի բաց գնալ: Կայ իսկ արձանագիր Սողոնի իմաստնոյ, յորում յայտ առնէ թէ չեն իւր կամք, զի առանց վշտաց եւ հեծութեանց բարեկամացն իցէ մահ իւր: Գիտեմ թէ սիրելի իւրոցն կամի լինել. այլ ոչ գիտեմ թէ ազնուագո՛յն ինչ արգեօք ենթիոս [ասաց]. Մի of գիս արsաuեuof պաsուեsցի, եւ մի՛ of ողբով յուղարկեսցի գիս: Չհամարի աչխարանաց զմահն՝ զորոյ զհետ գայցէ անմահութիւն:

Թրգմ. ՆՈՅՆ

ՆՈՅՆ, անդ

12

ՊՈԼԼԻՈՆ

(Դարձ Ոսկեդինիկ դարուն ըստ Սիբիլլական պատգամաց)

Ելանել, վիճակիլ
Կումակաւ տալ, կռահիլ տիքիլ
Գաղձն, քեշ խոտ [լայն երիքը
Կոյս = Աստրեա, արքարքրիան
Աստեւոր, ղբաւոր, կորիճ [գիլդոհին
Ականք, քոշ մը լայն ու յեաւոր
Ոլորտ, պիլեղբտ [պեքեռնեքով
Պատպղին, բաղեղ
Կասիմոն, պեսակ մը կաչխա (գարնան)
Ամոմոն, անուշաբոյր բոյս մը
Զաւիկ, տրտուճի պեսակ ծառիկ մը
Ցաւիսեաւն, դար [(ղբրնըճք)
Ցանկարծ (մլ.), երանի ըլե
Տարրել, պոքորել, իբր՝ նեղիլել
Իւ, ուրվ
Փոցղ, որմոխ (ընբրնճք)

Սիկելեան Մուսայք, առէք վըսեմագոյնս լինչ երգեսցուք.
Ոչ բոլորից ախորժելի թուփք և ցածուն են մոչենիք.
Զանտառս ի յերգ առցուք, օ՛ն, ի ճահ անտառք են բըզեչխին:
Դարձաւ կումականին այժմիկ տաղի նախկինն այն դար.
Շըրջանացն յաւիտենից կարգ մեծ ըսկիզբն առնու անդրէն.
Դարձ այժմիկ առնէ կոյսն, և դարձ կրոմվեանն արքայութիւն.
Նոր այժմ աւասիկ լիջանէ զարմ յերկնից բարձանց:
Մերձ ևեթ եթէ կացցես դու զգաստասբըզ Լուկինա
Մանկանըն նորածնի, իւ երկաթեայն առեալ գադար՝
Ընդ հանուր տիեզերս յարիցէ դարն ոսկեղինիկ:
Կենակից լինի նա դից, և ըզգիւցազն որեարն ընդ դիս
Տեսցէ պարակից, և տեսցի լինքն իսկ ի նոցանէն.
Եւ տիրեսցէ ընդ տիեզերս ուղղութեամբք հօրն անդորրացեալս:
Այլ քեզ ի ձօն նախընծայ ածցէ երկիր լինքնայորդոր
Նարդոս վայրի, ո՛վ մանկիկ, ընդ պատաղիճ թափառական
Եւ խառն ընդ կասիման յորդեալ ականթ գեղածիծաղ:
Այծք լինքնին ուռուցիկ պըտկունս ի տուն ածցեն կաթամբ.
Մի՛ յառիւծուց ամեհեաց երկընչիցի խաչն և անդեայ:
Եւ որոթա՛ն քո ծաղկունս անուշահոտս բըմխեսցէ.
Մեռցի իժ, և մեռցի՛ դըրուժան խոտըն չարաթոյն.
Ծընցի ամոմոն հասցն ուրեք ասորական:

Այն ինչ ապա զդիւցազանց դըրուատ և զհօր քո զարութիւնս
Ընթեռնուլ կարիցես և գիտել գի՛նչ է լաւութիւն,
Արտորայք ի հասուն տակաւ ի հասկ խարտեչասցին.
Ի գաղձըն մոլախոտ՝ ողկոյզ ի կախ կայցէ խայծեալ,
Եւ կաղնիք կարծրաբունք քըրտնեսցին մեղրըր ցօղազանգ։
Աստուեր ապա տիոց այն ինչ ածեալ քեզ զաւագոյթ՝
Տեղի նաւազն իսկ ի ծովէ տացէ, և մի՛ լաստ եղևնեայ
Վաճառ ընդ վաճառս յայնժամ գնասցէ փոխանակել։
Զամենայն ինչ ամենայն ուրեք յայնժամ բերցէ երկիր.
Ոչ ըզփոցղ անդաստան, ոչ ըզյօտոց կրեսցէ այգի.
Անդ զեզինս ի լըծոյ լուծցէ հուժկու արօրագիր.
Եւ ոչ ասր ի պէսպէս երանգս ուսցի կեղծաւորել,
Այլ ի մարգս անդ ինքն իսկ խոյ մերթ ի կարմիր քրքմատեսակ
Տարրեալ ըզգեզմն իւր, և մերթ վայելչագեղ ծիրանեւփնեալ.
Զառիկ զամիկս ինքնակամ ըզգեցուսցէ ճարակաւորս։

Ընթացե՛ք, գարքդ այդպիսիք, դիցն անյեղլի կացցէ հրաման...
Ի բարձր ի բարձ ե՛լ ամբարձիր, վաղ իսկ հասցէ քեզ ժամանակ,
Ո՛վ սիրասուն դիցըն զաւակ, և սանդղ վեհ Որմըզդական.
Տե՛ս զոլորտըս խորանարդ բեռամբըն ճօճ առեալ ի թինդ,
Զերկիր և զերկին անդընդախոր և զծով ծաւալ.
Տես ի՛բր ընդ գալուստ յա՛ւիտեանին հըրճուլին բընաւք։
Երկարաձիգ եթէ յանկա՛րծ մնայցէ կեցաց մասն ինձ վերջին,
Եւ զքո երգել արուեստիս որչափ ինչ բաւ է ինձ ոգի,
Ոչ Թրակացւոյն Որփէի տեղի տացէ, ոչ Լինեայ.
Ինքն իսկ Պան ընդ իս ի լուր Արկադիոյ թէ մըրցեսցի,
Ինքն իսկ Պան կորանս ի յանձն առցէ ի լուր Արկադիոյ։
Իսկ դու սկըսիր, ո՛վ մանկիկ, ի ժպիտ ըզմայր քո ճանաչել.
Մօր քում վիշտ երկարատև երկիցս հնգեակ ածին ամիսք.
Աղէ սկըսիր, ո՛վ մանկիկ. որում ծնողացըն չել ժըպիտ,
Ոչ դիք ի ճաշ, ոչ դիցուհի ընկալցի զնա ի յառագաստ։

Թրգմ. Հ. Ե. ՀԻՒՐՄԻՋ

ՎԻՐԳԻԼԻՈՍ, Հովուականք Դ.

13

ՄԱՐՏԻԱԼԷՍ, ԼԱՏԻՆ ՔԵՐԹՈՂ

Լեղ=լուղ
Հայիլ (հայց. ԽՆԴ.), ԹԵՒՆԵԼ

Լաֆեսիս, Պաբլո՛ն-էքէն ՊՆ (=Մահ)
Զուռնա, ՏՈՒՐՔ, ՃԻՃԱԿ

Էր ինքն Սպանիացի ի Բիլբիլեայ քաղաքէ, ծնեալ առ կղօդեաւ [կայսերք]. քսանամենի եկն ի Հռոմ, առ Ներոնիւ, եւ եկաց անդ զամս երեսուն, սիրելի լեալ ինքնակալացդ, մանաւանդ Դոմետիանոսի՝ յորմէ բազում չնորհս ընկալաւ։ Եւ յետ մահու նորա անտես լեալ՝ որպէս թուի, մեկնեցաւ գնաց ի քաղաք իւր. այլ ձանձրացեալ զի ոչ եգիտ անդ կենակիցս ի՛ւր արժանիս՝ ցանկացողս բանասիրութեան, անձկայրեաց սիրով յիշէր յաճախ զՀռոմ։ Զի անդ յիմաստախնդիր քաղաքին տաղք նորա ախորժելի լեալ փառաւորէին, իսկ ի Բիլբիլ նախանձորդս և չափ բախօսս յարուցանէին նմա, որոց զօրհանապազ երկայնամտել ժուժկալութեամբ դժուարին է յոյժ։

Մեռաւ Մարտիալէս յաւուրս ինքնակալութեան Տրայիանոսի, իբր ի հարիւրերորդի ամի թուականութեան Փրկչին։ Սորա պահին չորեքտասան գիրք արձանագրացն և միւս այլ տեսարանք։ Պլինիոս (Կրտսերն), զորմէ Մարտիալեայ յօրինեալ էր նացն։ Պլինիոս (Կրտսերն), զորմէ Մարտիալեայ յօրինեալ էր նացն։ Պլինիոս (Կրտսերն), զորմէ Մարտիալեայ յօրինեալ էր նացն։ արձանագիր, եւ նմա արծաթ բազում ի մեկնել նորա ի Հռոմայ. զի ի բախտին ժլատութենէ չբաւեր էր։ Վասն որոյ ասէ Պլինիոս՝ թէ հինք սովոր էին վարձս չահեկանս և պանծալիս տալ այնոցիկ՝ որք զվիպասս քաղաքաց կամ զիւրաքանչիւր ուրուք հռչակէին. այլ արդ սովորութիւնն այն բարձաւ ընդ այլս բազումս՝ որք ոչինչ նուազ վեհք եւ ազնուականք էին, զի յորմէ հետէ ի գործ վեպի գործոց կասեցաք, ապախտ առնեմք եւ զգովութիւն։ Սա

յաւուրց Տիբերեայ եւ Կալիգուլայ փոխանակեցին զկիրթ ա-
խորժակս աւուրցն Օգոստեայ, տակաւ յաճախեալ՝ յոյժ հաճո-
յականս արարին զտաղս Մարտիալեայ. այլ չատ ինչ պակասէ,
եթէ ոք զամենայն արձանագիրս նորա համանմանս վարկանիցի.
զի առ նա ինքն ի դէպ ելանէ զոր ասեն.

«են որ ընտիրք, են որ միջակք, յոռիք յոլով»։

Ցընտիր ընտիր արձանագրացն նորա՝ ի մէջ բերիւ աստ
զոմանս.

Ի ճարտարագործ բանիդակ ձկանց

Որ ըզփիդեան արուեստին գործ չըքնաղագեղ
Հայիս ձըկուցս, յաւե՛լ ըզՁուր, անկցին ի լեղ։

Ի վարագիրայ դանդաղ

ԸզԼուպերկեայ մինչդեռ ըզդէմսըն չըպարէր
Վարագիրայն եւտրապէզ՝ չուրջ առեալ դեզեր,
Նոր արձակէր ընդ գերծելոց մորուացըն ներ։

Առ ի զգոյշ կալ ի դատից

Զոր դատաւորն և դատապաց պահանջէ,
Դատախազին ևեթ «հատո՛ քում, Սեքստէ։

Ի բազմայաղթ ճահճատակ վաղամեռիկ

Ես եմ Սկորպոս, փառք բազմամբոխ կըրկիսին,
Պարծանք քո, Հռոմ, և բերկրութիւն սուղ քոյին.
Զոր բարձ երից ինուանց ամաց՝ Լաքեսիս,
Ցաղթանակացս ի թիւ առ ծեր կալեալ զիս։

Ծանգրութիւն ագահ մեծատանց

Ընդ սարսուռ մերկ բարեկամիդ անկարեկիր՝
Զանձն ի ցըրտոյ պահես՝ ըզձունձդ արկեալ ի կիր.
Իցէ՞ յերկուց ձորձոց զրկելն ազէտ մեծ.
Այդ ո՛չ ըզքեզ ջնասէ, Նեւոդ, այլ ըզցեց։

Պարգեւեալն գանձ է անկապուտ

Զարկղըն բեկեալ՝ ըզդրամս առցէ գող խորամանգ,

Ցանագորոյն բոց վատնեսցին հարց ապարանք...
Ի հարուածոց բախտին զերծ են
Ինչք չընորհեալք բարեկամի.
Որ ինչ ետուըն այլուս՝ քեզէն՝
Այն է քո գանձ անկապտելի։

Ներբող եւ նկարագիր սկրնդկի

Իսսա փափուկ
Քան զկատուլեայն է ճընճղուկ.
Իսսա մաքուր
Քան զաղաւնւոյն է համբոյր,
Եւ չողոքրդի
Քան զամենայն օրիորդ։
Իսսա գոհար
Քան ըզհընդկին է լինձ քար.
Շընիկն Իսսա
Քաղցր ըսփոփուճն է Պոբղեայ։
Զի թէ խընդրես՝
Նա բարբառի լիճն ընդ քեզ.
Է զգայակից
Ի խընդութիւն ու ի թախիծ.
Նիրհէ անհեծ
Ընկողմանեալ յուլն իւր յեց։
Կարեացն ի հարկ
Ոչ արատէ ըզվերարկ,
Այլ մեզմ ի գաստ
Խըթէ ըզտէրն, առնէ ազգ,
Ի բազմոցէ
Էջս առ ի պէտսըն հայցէ։
Համեստ չընկանն
Ակնածութիւն էր այսքան...։
Զի մի համայն
Բարձցէ յեսինն արև զայն,
Ի տախտակի
Զնորին պատկեր եզ Պոբղի,
Համանըման՝
Որչափ Իսսա չէ ինքեան։

Դի՛ր ըզպատկերն
Եւ զնախատիպն առընթեր,
Կամ երկոքին
Ինձ կենդանիք թըւեսցին,
Կամ նըկարէն՝
Երկաքանչիւրն համօրէն։

Թրգմ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ ԵՂԲԱՐՔ — ՌՈԼԷՆ, Հնախօս. Զ.

14

ԵՒՔԻՆԷՍ ԱՇԲԱՍՏԱՆԷ ԶԴԻՄՈՍԹԵՆԷՍ

Անձին առնել, ընչից պատճառել — Յողն անկանել, կոնակէ վերայ
Կակաչել, ատլըէ պես կանչել — Պայազատել, յաղթըթել [հանդիսել
Աղ, (ֆէքր.) աղօհաց ընկերք՝ բա- — Առ ականե, երեսպաշտօրինաբ
Ստկել, ըղձտրնել [րեկամանեան — Փաշաման կրել, ծեղտրտել
Վտարանդի տալ, օտարել յերկրէն — Ապախս լինել, բանէ պես ընդհատել
Բաղայի, պատճառանաւ [յանդնել — Ընկերահաւաքի, հոգիպետու-
Նամակագիր, ըրով ամբաստանող — Կրթել հանել, վերաբերել [ընդ
Ընդ գործ մտանել, ըրծիթ լծուել — Ուշ ի կուրծս, լաւ դաժանելով

Կամիմ ասել կարճ ի կարճոյ վասն բամբասանաց նոցա զի- նէն։ Սակ լինի ինձ զի Դիմոսթենէս ասել հանդերձեալ է, թէ քաղաքիս օգուտ բազում է լինքենէ (ի նմանէ), իսկ լինէն վըն- նաս յոյժ, և զամենայն չարիս Փիլիպպեայ և զԱղեքսանդրի՝ յիս- կրթել հանել։ Զի այնպիսի ոք դժնեայ ճարտարող է բանից, որ- պէս թուի, մինչև՝ ոչ զայն ևեթ բաւական վարկանել՝ զի եթէ վար- չութիւն լինչ կալեալ է իմ առ ձեզ կամ ճառս լինչ հրապարա- կախօսեալ՝ զայնցանէ ամբաստան լինել, այլ և զցածութենէ կե- նացս չարախօսէ և զվատութենէս դատախազէ, զի մի՛ ծնասցէ ինձ տեղի ազատ ի զրպարտանաց. և զյամենս ընդ պատանեական յե- րիտասարդանոցս՝ պախարակէ, և զդատաստանէ աստի յայսմանէ՝ անդէն ի գլուխ խօսիցին՝ բաղայս իմն յառաջ մատուցանէ, ասել՝

իբր ոչ եթէ վասն քաղաքիս լինչ զդմանէ ամբաստան լինիցիմ, այլ ի ցոյցս Սղեքսանդրի՝ առ ատելութեան նորա առ դա։ Եւ, երդուեալ յԱրամազդ, որպէս լսեմ՝ հարցանելոց ևս է զիս, թէ ընդէ՞ր բովանդակ զքաղաքավարութիւն իւր պարսաւիցեմ հա- մօրէն, և ոչ մի ըստ միոջէ խափանեցի առժամայն, և չեղէ ամ- բաստան, այլ յողն անկեալ, և ի գործս տեսչութեանն չյաճախ- եալ, հուսկ ապա ուրեմն եղէ նամակագիրս։

Իսկ իմ չէիք նախանձեալ ընդ պարապմունսն Դիմոսթենի, և ընդ լսես ոչ ամաչեմ, և ոչ զբանս իմ խօսեալս առ ձեզ՝ ա- պախս լինչ լիցեն կամիցիմ, և ոչ, եթէ զդորայն էր իմ խօսեալ յատենի, զարև տեսանել առնուի յանձն։ Իսկ զվատութիւն իմ, ո՛վ Դիմոսթենէս, պարկեշտութիւն կենացս յօրինեաց. զի սա- կաւիկ լինչ չատ է լինձ, և մեծամեծաց ոչ ցանկանամ չարաչար. վասն որոյ լուռ կամ, և խօսիմ ևս՝ ուշ ի կուրծս, ոչ ի հարկէ ծախուց բռնադատեալ։ Իսկ դու, կարծեմ, ի կաշառելդ կարկեալ կաս, և ի վատնելդ կակաչես. և խօսիս՝ ոչ յոյժամ բարւոք լինչ թուիցի քեզ, եւ ոչ զոր կամիսն, այլ յոյժամ վարձահատոյցդ պահանջիցեն. և ոչ պատկառես ճամարտակել զորոց նոյնհետայն ատախօս յանդիմանիս։ Զի ահա ամբաստանութիւնս այս, զոր ոչ վասն քաղաքիս, այլ առ ի ցոյցս ասես լինէն ի մէջ ածեալ, յա՛յն- ժամ մատուցաւ՝ մինչ դեռ տակաւին կենդանի կայր Փիլիպպոս եւ Սղեքսանդրի չէր պայազատեալ պետրութիւնն։ Եւ զիա՞րդ էր լինձ կանխել յառաջագոյն առ ականէ ցոյցս և չոչականս առ- նել Սղեքսանդրի, բայց եթէ զնոյն աւուրսդ և իմ ընդ Դիմոս- թենի աւուրսդ ևս, զի ոչ ստէպ լինէր։ Այլ պատուհասակոծ առնես զիս, զի ոչ ստէպ յաճախեմ առ ժողովուրդն, այլ ընդ ժամանակս ժամանակս. և համարիս թագչել ի մէջն, զի զճոխութիւնդ (զկարծեալ իրա- ւունս) զայդ ոչ յընկերահաչատեաց, այլ յայլմէ օտար քաղաքա- կանութենէ առեալ ի ներքս մուծանես։ Վասնզի ի սակաւուց իշ- խանութեան (ի սակաւապետութեան) ոչ որ կամին ոք, այլ որ բուռն լինչ ոք է՝ նա լինի ամբաստան. իսկ յընկերահաչիս՝ ո՛չ ումեք և կա՛մ իցէ և յոյժամ հաճոյ նմա թուեսցի։ Երբեմն եր- բեմն յատեան գալ ի խօսս՝ նշան է առն ըստ պետս և ըստ օգտի քաղաքավարելոյ. իսկ և ոչ or մի վրիպել՝ հարկաւ ընդ գործ մտելոյ և վարձկանելոյ։ Իսկ յաղագս չէ ևս լինէն ի դատ վա- րելոյդ եւ կրելոյ զպատիժ ապիրատութեանցդ՝ յոյժամ ի բանս այսպիսիս փախուցեալ անկանիս, կա՛մ զունկնդիրսդ համարիս

մոռացկոտս, կա՛մ անճամբ զանձն խաբես: Քանզի զամպարըշտութիւնս քո եւ զկաշառաբեկութիւնդ, ի վերայ անցելոց ժամանակաց՝ յորս յայտ յանդիմանութեամբ կշտամբեցար լինէին, ակն ունիս թերեւս թէ մոռացեալ լեալ ժողովրդեան: Իսկ ըզյափշտակութիւնդ յերս նաւացն և նաւակառուցից ո՞ր ժամանակ սուզանել մարթիցէ:

Մինչդեռ լինձ զքէն առաջի կայր ամբաստան լինել, հնարեցար զըմբռնուիս Անաքսիասի, որ վաճառս վասն Ոլիմպիայ գնոյ առնոյր, և զելարանօք խոշտանգեցեր զայրն՝ քով ձեռամբդ զբրելով դատաւճիռ, մահու զնովաւ ածել պատուհաս: Եւ սակայն առ նմա օթեցար, ի նմին սեղանոյ կերար և արբեր և նուէրս հեղէր, և այ յայլ արկեր՝ արարեալ զնա քեզ բարեկամ վասն ասպընջականութեանն: Եւ դու զնա սպանե՛ր. եւ զայսմ ամենայնէ՝ առ ամենայն Աթենացիս փաչաման լինէն կրեալ, և հիւրասպան կարդացեալ, չեղեր յուրաստ յամպարշտութենէ անտի. եւ տուր պատասխանի, առ որ աղաղակ եբարձ ժողովուրդն և հիւրք ամենայն՝ որ միանգամ չուրջն կային զհրապարակաւն, զի ապացեր. զաղս քաղաքիս առաւել մեծարեցի քան զսեղանն հիւրասէր:

Լռեմ զսուտ նամականին և զկալանս լրտեսաց և զխոշտանգանս ի պատճառս անգոյ յանցուածոց. որպէս թէ կամեցեալ իմ՝ միաբանութեամբ ոմանց օտարութիւն լինչ մուծանել ի քաղաքս: Եւ յետ այսր ամենայնի, հարցանելոց է զիս, որպէս լսեմս, ո՞ր այն բժիշկ լեալ՝ որ ախտացելոյն չտայցէ լինչ խրատ ի հիւանդութեանն, և ի մեռանելն՝ ի յուղարկումն եկեալ նորին, առ ընտանիսն ճառ արկեալ պատմիցէ, թէ ի՛ւ իւիք հնարիւք գոյր նմա գալ յառողջութիւն: Իսկ զանձնդ ո՞չ հարցանիցես. ո՞ր այն լեալ վարիչ ժողովրդեան՝ որ կարող լեալ ստկել նմա, և զդէպ ժամանակս փրկութեան քաղաքին տայցէ վտարանդի, և զքաջախոհսն՝ բանսարկութեամբ արգելուցու ի խորհրդոց. և փախուցեալ ի վտանգաց և զքաղաքն անհնարաւոր տուժիւք պաշարեալ, եկեալ ապա խնդրիցէ առաքինութեան պակ. բարի և ոչ մի լինչ գործեալ, եւ ամենայն աղետից եղեալ պատճառք... Ո՞չ եւ այն srsմուրեան լեալ, արք Աթենացիք, զի դուք անպսակ եւ առանց քարոզութեան լինիջիք եւ դա հռչակեսցի: Եթէ յողբերգակ քերթողացն ոք, որ յետ այսորիկ հանդիսանալոցն են, զթերսիտէս յողբերգութեանն պսակաւոր ցուցանիցէ ի հելլենաց, ոչ ոք ի ձէնջ ունիցի ժոյժ, զի անարի և զրպարտիչ զնա լինել ասէ Հոմերոս. և դուք յորժամ զայդպիսիդ պսակիցէք այր, ո՞չ կարծիցէք լինել ի չէիւն (յայսն կատականաց) մտացն հելլենացոց. քանզի հարքն ձեր զփառաւորս եւ զվայելուչս իրաց՝ ժողովրդեան ընծայէին, իսկ զնուաստս և զխոնարհս՝ ի յոռի ճարտարսոսն տանէին. բայց կտեսիքդն արժան համարի բառնալ ձեզ ի Դիմոսթենեայ զանչքութիւն, և զժողովրդեամբն արկանել: Երջանիկ ասէք զանձինս, որպէս եւ էքդ խակ ի յաջողելդ. խակ տայցէ՞ք վճիռ հրամանի՝ թէ թողեալ լքեալ ի բախտէն՝ ի Դիմոսթենեայ գտեալ լցէք բարիս. և որ անպատեհ քան զամենայն է, ի նոյն ատեանս՝ զըմբռնեալսն ի բասրանս կաշառոց անարգիցէ՞ք, իսկ զոր ինքնին զիտէք վարձուք քաղաքավարեալ՝ պըսակիցէ՞ք: ... Եւ մի՛թէ դդա՞ պատուիցէք, թէ զձեզ անարգիցէ՞ք: ... Եւ մի՛թէ դդա՞ պատուիցէք, թէ զձեզ անարգիցէք և զ՛ ի վերայ ձեր վեռեալսն ի ճակատու, զորս դի՛ք ի մահ տեսանել յողբ և ի կական՝ եթէ դա պսակեսցի: Քանզի և անհնարին իրք լցեն, ո՛վ արք Աթենացիք, զի զփայտս և զքարինս նարին իրք լցեն, ո՛վ արք Աթենացիք, զի զփայտս և զքարինս եւ զերկաթ՝ զանմռունչն եւ զանիմաստս, եթէ յուրուք վերայ անկեալ սպանանիցեն, տարագիր ըստ սահմանս վտարիցեմք, և եթէ անձին ոք առնիցէ՝ զձեռնն որ զայն գործեաց՝ ուրոյն ի մարմնոյն թաղիցեմք, իսկ զԴիմոսթենէս, ո՛վ Աթենացիք, որ մարմնոյն թաղիցեմք, իսկ զԴիմոսթենէս, ո՛վ Աթենացիք, որ զյետին արշաւանն [Քերսոնեայ ճակատամարտին] հրամայեաց եւ զզօրականն մատնեաց ի կորուստ, զդա դուք մեծարիցէք: Թըշնամանեսցի՛ն ուրեմն վախճանեալքն. վհատեալ տարակուսեսցին կենդանիքն, տեսեալ՝ զի առաքինութեան մրցանակ պահի մահ, և յիշատակ անհետ կորուսեալ:

Թրգմ. Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՍԲԻՆԷՍ, ճառ ընդդեմ Կտեսիփոնի

15

ՍԱԽՈՂ ԵՒ ԱՔԻՄԵԼԷՔ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

Աճիոյք, խաղաղ, ապահով
Պարտաւորել, յանդգնութիւն ընել
Պահոյն, ընդդէմ
Ցանձն մտանել=յիմիճն գալ, խե-
Նոյն (դ.), նոյնպէս [լատիւել

վճարիմ, վերջանալ
ձեպեմ, փութանալ
կացուցանել, հաստատել, ընել
Դուոյք տալ, բաղմութեամբ յարձա-
Գուպարած, կռիւ [կիւ

Աբիմելէք

Եթէ զիս պարտաւորես՝ դատապարտես անձամբ զանձն։

Սաւուղ

Իսկ ուստի՞ գուք ի ձեզ ի fահաճայադ, անողո՛րմք,
Ամպարիշտք, և արեան հանապազօր ծարաւիք...
Որ ոք գլուխ ընդդէմ իւրում տեառն ամբառնալ յողայեղ,
Գըտանէ ի ձեզ թիկունս և ապաւէն և ասպար.
Զեզ ա՛յլ հոգք, թո՛ղ ըզսեղանն, են սիրելիք ամենայն։
Ո՞վ էք դուք, դուք ո՞վ իցէք, ազգ ապիրատ և անգութ,
Որ զմերոցըս վըտանգաց յանքոյթ ամրի ծիծաղիք,
Եւ յանօսր ի կատաւ պատեալ՝ ժըպրհիք ըզմեօք անցանել,
Ըզմեօք՝ որ ընդ քիւրն և 'նդ ապաժոյժ գամք ի զէնս,
Ըզմեօք՝ որ ընդ արիւն, ընդ արհաւիրս և ընդ մահ՝
Վասն հարանց և զաւակաց և ձեր ինքնին իսկ անձանց՝
Աւուրըս սոսկալիս տառապագին վարեմք ցանգ։
Եւ արդ դուք, վատք և անգործք՝ ոչ ինչ ընդհատ ի կանանց՝
Արհամարհ գաւազանաւ և ի պաճոյճ մրմընջոց
Նըւաճել նըկըրտիցէք ըզսուրըս մեր և ըզմեզ։

Աբիմելէք

Մուտ ի քեզ յանձնըդ, Սաւուղ, չես ինչ բայց հող թագա-
ես ոչինչ իսկ եմ ինձէն, սակայն փայլակն եմ, մրընրիկ, [զարդ.—
Փոթորի՛կ եմ՝ եթէ յա՛նձն իմ տէր Աստուած իջանէ,
Մեծն Աստուած քոյդ արարիչ՝ որոյ հազի՛ւ հազ ի քեզ

Գամ մի ա՛կն արկեալ հայել, և ո՞ւր գըտցի անդ Սաւուղ։—
Մի՛թէ սուր հարկանիցէ՞ եթէ ոչ Տէր կամեսցի,
Ըզվըրէժս իւր Աստուած գըրէ յարձանըս կըճեայս,
Եւ որպէս ի փղչտացին, նո՛յն յիսրայէլ աւանդէ։—
Սոսկացիր, Սաւուղ, ահա ի թուխ ամպրոպս ի բարձունս
Սաւառնեալ հրեղէն թևօք հայիմ զիրեօսակըն մահու.
Մերկանայ մխով ձեռամբ ըզհրաշէկ սուր վրէժխնդիր»
Մխսով բուռն հարկանէ գլխոյդ անօրէն։
Դողացիր, Սաւուղ, տես ո՛վ է որ ճեպէ զքեզ ի մահ.
Սա ինքն ա՛յս Սբեններ, սատանային հարազատ,
Որ ըզսիրտ քո զառամ կասկածանօք պըղտորէ,
Որ ըզմեծ պատերազմողդ առնէ նըւազ քան զմանուկ,
Դու պանդոյր, ըզբուն բընիկ տան քոյ նեցուկ և զամուր
Հալածես վըտարանդի։ Ո՞ւր իցէ տուն Սաւուղայ,
Նա յալիս զայն հիմնեցոյց. ահա դղըրդի, անկանի,
Աւասիկ յաճիւն դառնայ, ահա մղեղեալ կայ յոչինչ։

Սաւուղ

Մարգարէ՛ իմոց չարեաց, այլ դու քոյոդ ոչ եղեր.
Ի բանակըս չէ եկեալ՝ թէ ի մահ գաս չիմացար.
Զայն ես քեզ պատմեմ կանխաւ, և Սբեններ հանցէ յանդ։—
Մըտերիմդ իմ Սբեններ, ե՛րթ արդ փոխեա զամենայն
Ըզկարգածն անօրինին Դաւթի՝ յորս նենգ կայ ծածկեալ։
Ցելանել արուսեկին վաղիւ տացի պատերազմ.
Աստղըն այն պայծառ՝ վըկայ գուպարածի կացցէ ինձ։
Խորհուրդ չար էր Դաւթի, արդ տեսանեմ, զի կացոյց
Ի մուտս արեգական ի թըշնամին տալ զըռոյթ,
Դողցես իմն ի նըշան խոնարհելոյ իմ բազկիս.
Այլ տեսցուք։— Զամենայն ոգիս իմ յիս տեսանեմ
Կազդուրեալս ի սպառնալեացդ. ես եմ վաղիւ սպարապետ.
Առ նախճիրըն մեծամեծ զոր գործեցիր առ վաղիւ՝
Տիւն ողջոյն կարճատեսցի։— Դու հա՛պա զայրդ, Սբեններ,
Ցերեսաց իմոյ քարչեա վաղվաղակի, և սպանցի...։

Աբիմելէք

Զիս, արքայ, չկարէ ոք զրկել յարդար մահուանէ,
Վասն որոյ՝ քաղցր է ինձ մահ և ոչ սակաւ փառաւոր...

Օ՛ն երթամք. զվերջին պատգամս առ ամպարիշտն յԱստուծոյ Յոսեցայ. և խոսել զըտաւ. պաշտօնն իմ լի բովանդակ վըճարեալ է արդ այժմիկ. ըզկեանս ուղիղ ծախեցի։

Թարգմ.
Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԱԼՓԻԷՐԻ
ՍԱՒՈՒԼ, Հանդէս Դ, տեսիլ Դ.

16

ԴԻՄՈՍԹԵՆԷՍ ԸՆԴԴԷՄ ԵՍՔԻՆԵԱՅ

Կրկտել, պըպոել	Գերախանձ, սասպիւռաճ, կամ՝
Աստհն եւ աստ, ըռովՀ	Գռեհ, ֆոըց [քարչէր ըռալովՀ
Յամօթ առնել, ամչըցնել	Հոլանել, ծրկացնել, բանալ
Յանկոռդել, յամճախել	Շուռմռայ, վայրէ սասկը
Համաճխարհ, հայրենաձկց	Նհուռակիր, մաղ կրող
Սեւակ, սևապեղ, ծելան	Սպհs=սապաս, կողով
Քարուսկաճք, խայտառակութիւն	Վիճապակ, օձի յամբ
Կաշառագնաց լինել, կողռուել	Լորտու, անձնաս օձ ճը
Փերեւերեմ, հաքռնչնել	Շչել, սուլել

Եթէ քեզ, Եսքինէս, հաճոյ է ապաքէն զիմ բախտն կրկըտել, և քո՛յդ հայեաց. և եթէ լաւագոյն զիմն քան զքոյդ դատնիցես, դադարեա ի բամբասելոյ զայն։ Հայեաց արդ աստէն եւ աստ անդստին ի սկզբանէ։ Եւ մի՛ ոք, արք աթենացիք, երդուսցի յԱրամազդ տուեալ և ի դիս՝ այծ լինչ և անհամ չիս ըստգացէ։ Զի եթէ զաղխատութիւն ոք այսն առնիցէ զուրուբ, ես և ոչ միտս անգամ համարիմ ունել նմա, և ոչ, եթէ ի ճոխութեան անեալ, և այնիւ (այնու) սիզացեալ նազիցի։ Այլ յերեսաց հայհոյութեան եւ ամբարտաւանութեան ժանտիդ այդորիկ ասկսիմ յայսպիսի բանս գալ անկանել, որովք պաշտեցայց չափ ևեթ ըստ մարթելոյ խոժոռանն։

Արդ ինձ՝ մինչ մանուկն էի, Եսքինէս, եղեւ ցանկորդել յարժանաւոր վարժարանս, և առ ձեռն ունել զինչ և վայելէ ուսեալ՝

որ առ կարօտանաց չառնիցէ լինչ անպատեհս։ Եւ իբրև ելի ըստ մանկութիւն, որ լինչ այնուհետև պատչաճն էր՝ զայն առնել. պարապետ կալ հանդիսից խաղուց, նաւս հանդերձել պատերազմի, հարկս հարկանել, ոչ ուրեք պակասել յառաձգին եւ ի համալխարհն առատաձեռնութենէ, այլ քաղաքիս և բարեկամաց պետանի լինել։ Իսկ իբրև հաճոյ թուեցաւ լինձ մատչել ի գործ հասարակաց, այնպիսի առաքինութիւնս ընտրել, որպէս զի բազում անգամ պսակ ժառանգել ի հայրենեացս եւ յայլոց հելլենացւոց, և ոչ առելեացդ իսկ համարձակել գէթ բիծ դնել պարսաւել զընտրութիւնս իմ։ Արդ ես այսպիսեաւ կենցաղավարեցի բախտիւ։ Բայց թէպէտև բազում լինչ է լինձ ասել զնմանէ, [ո՛վ արք աթենացիք], զանց առնեմ, զգուշացեալ՝ մի՛ գուցէ տրտմեցուցանիցեմ զոմանս որովք գովիցիմն։

Իսկ դու, մեծարոյդ այր եւ այլոց անգոսնիչ, առ սովաւ միտ եդեալ նայեա, որո՛վ լեւիք վարեալ ես բախտիւ. յորում, ի մանկութեանդ յետին կարօտութեամբ անեալ, ընդ հօրդ կանխեալ սկէիր առ դպրոցին, զսեակն լեսուլ, զնստարանն սրբել սպընդով, աւել ածել դասատան մանկտւոյ, ի ծառայի կարգ և ոչ մանկան ազատի։ Իսկ իբրև եղեր այր, մայր քո որ ձօնիս նուիրեր՝ դու առ նմա զրակարդաց կայիր, և այլ եւս ընդ նմին տանէիր ապաս. եւ զցայգ՝ մորթովք եղնորթուց փերեւերեալ, եւ լեւով թաղուկաւ արբեցուցեալ եւ սրբեալ ըզնուիրեալսն, և չըփեալ կաւով և թեփով, և յարուցեալ ի սրբութենէն հրաման տալիր ասել. «Փախեայ ի չուռչն, գոմ գլաւն». և պանծալիր՝ թէ չէիք ուրուք երբեք այնպիսի առնացեալ։ Այնպէս համարիմ և ես լի՛ակ եւ լսակ, զի մի՛ կարծիցէք՝ թէ այսպէս մեծամեծս գիտէ բարբառել, այլ ո՛չ և գերախանչ ղօղանջել։ Իսկ ի տուէ զչըքնաղ կաքաւիչսն ընդ գռեհս ածեալ, պսակեալս ի չումրայ եւ ի սօսի, վիշապակս լորտուս ի ձեռսդ ճմլելով, և ի վեր քան զգլուխդ ամբարձեալ աղաղակելով. ե՛հ, եհ՛, վա՛չ վա՛չ Սպանդաբաժեաս», և կայծս հարկանելով «կեցցէ Աստէս, Աստէս կեցցէ»։ Եւ ի պառաւանց՝ նահատակ, պարագլուխս, սպէտաբարձ և նքուբակիր և այլ լինչ այսպիսի կարդացեալ հռչակէիր. և վարձս առնուիր ի նոցանէ կարկանդակս՝ քաքարս եւ բլիթս. ընդ որոց ո՞վ ոչ երանեսցէ արդարև դմա եւ բախտին իւրում։ Իսկ յորժամ ընդ քաղաքացիս գրեցար ի՛ւ եւ է օրինակաւ, — զի զայդու զանց առնեմ, — սակայն իբրև մտեր ի վեր համարոյ,

ընտրեցեր առեր քեզ զգեղեցկագոյնն ի գործս. գպիր կալ եւ սպասաւորել ստորին իշխանութեանց: Եւ իբրեւ անտի ևս ընկեցար, զամենայն զոր զայլոց չարախօսես՝ քո ինքնին արարեալ եւ կատարեալ, ոչ յամօթ արարեր, երդուեալ յԱրամազդ, եւ ոչ մի ինչ յառաջնոց գնացիցդ՝ վարուքդ որ գկնի. այլ ի վարձու տուեալ գքեզ առ մեծահառաչ անուանեալ խեղկատակսըն, առ Սիմիլոն եւ Սոկրատէս, գուսանամուտ լինէիր ի կարգ երրորդ, թուզս և ողկուզուկս և ձիթապտուղս քաղելով՝ իբրեւ մրգավաճառ ոք՝ յօտարին ագարակաց, և յանախագոլնս առեալ անտի վերս՝ քան ի ճակատամարտիցն յորս դուք [արք աթենացիք] ընդ ոգւոց ձերոց ճգնեալ նահատակէիք: Այլ զանց արարեալ զորովք չքաւորութեան ոք արդեօք մեզ դնիցէ, անցից ի բուն իսկ ի վարուցդ դպրովութիւն: Քանզի այնպիսի ախորժեցեր քաղաքականութիւն, որով ի յաջողութեան աշխարհիս, կեցեր կեանս նապաստակի, սարսափեալ եւ դողացեալ, եւ ցանգ հարուածոց ակն կալեալ վասն որոց անկրաւ գքեզ ըստգտանէր մտացդ խիղճ: Արդ, թէպէտեւ այլ ինչ չատ կայ ինձ ասել, թողից ի բաց. զի ոչ զամենայն զոր գոյ ինձ հոլանել ի դմա farուականս եւ այպանելիս՝ պարտ անձին համարիմ ասել յախտուռն և վարկպարազի, այլ որչափ ինչ չիցէ ինձ ամօթ խօսել: Արդ դու ի հարցփորձ մատո առ միմեանս եղեալ գքո և զիմ վարս, հեզաբար եւ մի՛ դառնութեամբ, եսքինէս. ապա հա՛րց զսոսա, զո՞յր բախտ ընտրիցէ մէն մի ի սոցանէ:

Ուսուցանէիր նշանագիրս, և ես ի վարժարանն հանապազորդէի. ձօնիս նուիրէիր, էի և ես նուիրեալ. ի պար անցանէիր, և ես էի պարապետ. գպիր կացեր, և ես ժողով կոչէի. կացեր գուսան երրորդական, և ես ի գնին կայի. չաջողէիր, և ես չէի, զամենայն ի չնորհուկս թչնամեաց քաղաքավարեցեր, եւ ես ի չնորհս հայրենի աշխարհիս. թողում զայլսն: Բայց այժմ այսօր ես վասն պսակելոյ փորձ գտանիմ, և վկայիմ ոչ ինչ ապիրատ գործեալ. իսկ քեզ՝ զրպարտողի կարծիս առնուլ ճնայ. և ի վըտանգի կաս՝ թէ այլ ևս առնիցե՞ս արդեօք զայդ, եթէ պսականեալ կարկեսցիս, չառեալ զհինգերիր մասն քուէիցն: Արդ գեղեցկանահ կենցաղիւդ յերեսի,— ո՞չ տեսանես, -- զիմ բախտն իբրև զխոտան ինչ դարով առնես:... Բազում ինչ և գեղեցիկ և մեծամեծ ընտրեաց կալաւ քաղաքս, եսքինէս, եւ ինև յաջողեաց, զորս և ոչ մոռացաւ. եւ նշանակ՝ աւասիկ: Քանզի ընտրել առեալ ժողովրդեանս զոք, որ զդամբանականն առենախօսեսցէ զկատարելոցն յայն անցս արկածից, ոչ զքեզ ընտրեաց, թէպէտև ընծայեցար, ո՛չ զքեզ զքաջաձայնդ, և ոչ զայլ ոք ի ձէնջ, այլ զիս:...

Եւ ապա կաս հարցանես զիս, ընդ որո՛ւմ առաքինութեան խնդրիցեմ ինձ պատիւ փոխարէն: Եւ ես ասեմ քեզ. փոխանակ զի ուր ամենայն քաղաքավարք ի Հելլէնս կաշառագնաց եղեն, սկսեալ ի քէն, նախ ընդ Փիլիպպոսի և այժմ Աղեքսանդրի, զիս ոչ ժամանակ, ոչ քաղցրաբանութիւն, ոչ մեծութիւն խոստմանց, ոչ յոյս, ոչ երկիւղ, ոչ չնորհ և ոչ այլ ինչ բնաւ դրդուեցոյց, և ոչ հրապուրեաց վաստանդել ինչ յորոց միանգամ իրաւունս և օգուտ հայրենեացս գատեցայ: Եւ ոչ, զոր ինչ խրատն եառ սոցա, ձեզ նման իբրև ի կշիռս ինչ՝ ի շահն կոյս մէտ լինելով եառ, այլ յուղիղ և յարդար և յանկաշառ մտաց գործեցի զառնայն. և իրաց մեծամեծաց առ իսեւ մարդկանս վերակացու եղեալ, զամենայն ողջմտութեամբ և արդարապէս և պարզաբար տնտեսեցի: Սոցին ահա սակս խնդրեմ առնուլ պատիւ:

Թրգմ. Հ. Ա. Կ. Բ. ԴԻՄՈՍԹԵՆԷՍ, Յաղագս պսակին

17

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԻՒԹԱԳՈՐԵԱՆՑ

Անգործ (ք.), հանգստութիւն
Ընդվայրաբանիլ, ընթ պեղը հե-
Գնացք, վագր [տատրտրոող
Բարբառ, բառ, խօսք
Բազմական, ամպրան
Պատաղիմ, ջերուէլ

Բազմութիւն աշակերտաց ընկալան զաղանդն Պիւթագորայ, և ժողովեալք ի նմանէ ի բնակարան մի մեծ, էային ի միասին՝ բաժանեալք ի դասս: Կէսք ի տեսութիւն երկնայնոցն իրաց պատեալք, այլք ի զարգացումն գիտութեանց և մանաւանդ երկրաչափականին և աստեղաբաշխութեան, և կէսք զարձեալ՝ տընտեսքն անուանեալք կամ քաղաքավարք՝ զպէտս տանն յանձանէին, և որ ինչ առ ի նոյն պատկանեալ իրք: Ոչ ամենեցունն

էր անխտիր խառնել ի թիւս աշակերտացն. այլ քննէր Պիլթաղոր զբարս նոցա, զսովորութիւնս, զգնացս, զխօսս, զլռութիւն, զտպաւորութիւն զգալեացս ի նոսա, և թէ զիա՛րդ իւրաքանչիւր ուրուք ընդ ծնողս իւր և ընդ բարեկամս լեալ: Եւ ընտրեալքն աւանդէին առաժամայն զամենայն ինչս իւրեանց ի անտեսս:

Ժամանակ հանդիսից քննութեանն տևէր զամս բազումս, այլ համառօտէր զարգացելոցն վազ ի կատարելութիւն: Նորընծայեալն զերեամ մի ի միաբանութեան խոտան եւ արհամարհ կայր նշաւակ նախատանաց. եւ ապա զամս հինգ դատապարտեալ ի լռութիւն՝ ուսանէր նուաճել զընդվայրաքնին խոյզս, հրաժարել յաչխարհէ և յաստուածայինս պատաղել. ի մկրտութիւնս և ի պէսպէս հրահանգս կրօնիցն պարապէր, և երբեք երբեք լսէր զբարբառ Պիլթազորայ՝ որ յետոյսէ թանձր վարագուրի խոսէր ընդ նմա, և ի բանից նորա ի միտ առնոյր որ ինչ էին ի նմա: Որ քաջ զարգանայլն՝ մտանէր յուսումն սրբազան գիտութեանն, իսկ որ զյոյս վարժապետացն ի գերև առնէր, արձակէր ի բաց, առեալ զինչս իւր անդրէն հանդերձ բազմապատիկ տուկոսեօք:... Որք ի միւսին կայլն աշակերտին՝ վաղայարոյցք լինէին ընդ առաւօտս, և երկու ինչ ընդ յառնելն զմտաւ ածէին. որ ինչ յերէկն խօսեցեալ էր նոցա կամ գործեալ, և որ ինչ զայն օր պարտ էր նոցա առնել. զառաջինն ի հրահանգս յիշողականին, զերկրորդն յուղղութիւն վարուց: Աբկեալք զիւրեամբք հանդերձ սպիտակ և մաքուր ամենևին, առնուին քնար եւ երգէին օրհնութիւնս մինչև յարևածայրս, եւ ապա երկրպագեալ արեգական՝ զնային իւրաքանչիւր առանձինն ճեմել ի ծառաստանս դալարագեղս կամ ի զուարճալի վայրս ամայիս: Տեսարան եւ անդորը զեղեցիկ վայրացն ազդէր ի նոսա խաղաղութիւն, և կազմէր զմիտս նոցա ի գիտական խօսակցութիւնս՝ յոր ապա դառնային: Գրեթէ միշտ ի մեհենի խօսակցութիւնքն լինէին, և ճառք նոցա զչափական գիտութեանց և գինդրոց բարոյականաց: Վարժապետք քաջահմուտք նախակրթէին եւ ածէին զհամբակս ի տեսականն բարձրագոյն ծայր արուեստին: Առաջի դնէին նոցա առեղ ի մտածութիւն՝ իմաստս բազմաբեղուսն և առածս պարզս: Պիլթագոր որ ի քթթել ական տեսանէր զամենայն, և ի մի բառ յայտ առնէր, յաւուր միւսմ ասէ ցնոսա. Զի՞նչ են տիեզերք, բայց կարգ միայն. Զի՞նչ է բարեկամութիւն, բայց հաւասարութիւն ևեթ: Սահմանքս այսոքիկ վսեմք, եւ ըստ այնմ

ժամանակի նորք, խելամուտ առնէին զլսողս և ամբառնային ըզմիտս նոցա: Հրահանգաց մտաց յաջորդէին կրթութիւնս մարմնոյ, ընթացք և գօտեկռիւ, այլովքն հանդերձ, և մրցութիւնքս այսոքիկ մեզմականք կատարէին ի ծառաստանս և ի պարտէզս:

Բաշխէր նոցա հաց և մեղր առ ի ճաշ, դուն ուրեք և գինի. բայց նկրտեալքն ի կատարելութիւն սովորաբար հացիւ եւ ջրով չատանային: Եւ յարուցեալք ի սեղանոյ՝ պարապէին ի գործս յանձնեալս իւրաքանչիւր յօտարաց: Եւ ապա զոյգ զոյգ կամ երեք երեք միաբանեալ գառնային ի ճեմել, խօսակիցք լինելով զվարժից զոր ընկալեալ էր նոցա առաւօտուն: Բայց ի խօսից նոցա հեռի էին չարախօսութիւնք և թշնամանք, խելագատակուրթիւնք և գատարկաբանութիւնք: Դարձեալք ի տուն՝ մտանէին ի բաղանիս, և ի բաղանեացն ելեալ՝ մեկնէին ի սրահս, յոր պատրաստեալ կային սեղանք, ի միում միում բազմականք տասն: Ցետ ընթրեացն՝ կրտսերագոյնն ի նոցանէ ընթեռնոյր ի լուր նոցա զգիրս զոր երիցագունեին անկ էր ընտրել: Սա եւ նախ քան զարձակել զժողովն՝ յիշեցուցանէր նոցա զխրատս զայսոսիկ կարեւորս. Պատուեա զգիս, զհոգիս և զգիւցազունս. մեծարեա ըզբնաւորս. Պատուեա զգիս, զհոգիս և զգիւցազունս. մեծարեա ըզծնողս քո եւ զբարերարս, եւ հա՛ս ի վրէժխնդրութիւն օրինաց: Եւ առ ի յորդորել զնոսա ի հեզութիւն և յարդարութիւն՝ յաւելոյր. Զգո՛յշ լեր չխլել զծառ կամ զտունկ օգտակար մարդկան, և չսպանանել զկենդանի՝ որ չիցէ նոցա վնասակար:

Զամենայն աւուրս կենաց իւրեանց երկու կամ մանաւանդ մի ինչ հոգ ի մտի էր նոցա. միանալ ի ներքուստ ընդ գիս եւ կատարելապէս ընդ մարդկան: Կարևորագոյն պարապումն նոցա էր յաստուած, ունել միշտ զնա առաջի աչաց, և ըստ կամաց նորա ուղղել զամենայն. նմին իրի յորդորէին հանապազ զմիմեանս՝ մի՛ մերժել յանձանց զհոգի աստուածոյ որ հանգչէրն ի սիրտս իւրեանց: Աստի յառաջ գայր սէրն որ կոչէր զնոսա ընդ միմեանս և ընդ այլս: Ոչ ոք հանգոյն Պիլթագորայ ծանեաւ և զբարեկամութիւն. նա նախ զբարբառն քաղցր եւ զեղեցիկ քան զամենայն բարբառս, զոր ինքն զբարեկամն կոչելով: Ուսանէին անտես առնել զանձինս, խոնարհեալ ի կարծիս եւ երբեք յանձին զբարեկամութիւն կասկածանօք կամ միմեանց, չվշտացուցանել զբարեկամութիւն կասկածանօք կամ ստութեամբք, կամ տարադէպ կատականօք, եւ կամ աւելորդ խոստմամբք: Ուսանէին զարձեալ երկնչել և ի թեթև ինչ ցրտութենէ սիրոյ: Եթէ ի զրուցատրութիւնս անդ խմաստասիրականս

քան լինչ պառնութեան ելանէր ի բերանոյ ուրուք, ոչ թողոյր մտանել արեգական՝ մինչչև տուեալ ընկերին աղ հաչտութեան: Մի ումն ի նոցանէ ի հանգոյն իմն դէպս դիմեալ առ բարեկամ իւր՝ ասէ. Դիւցուք զցաւումն ի բաց, եւ լեր դու պատասուր խնդրոյս մերոյ. և միւսն ասէ. եղէց մտադիւր, այլ լի ամօթով. զի երիցագոյն գոլով հասակաւ, յեռնեալ գտայ քան զքեզ: Դաստիարակք արդոյք և հեզք ածէին զնոսա յուղղութիւն, տալով նոցա ի դէպ ժամու և առանձինն խրատս քաղցունս՝ որ աղերս թըէէին քան յանդիմանութիւն:

Որպիք մեծի ազգատոհմիս սփռեալք ի տար աշխարհ, անծանօթք միմեանց՝ ճանաչէին զիրեարս ի նշանաց լինչ, եւ անդէն ընդելանէին ընդ միմեանս որպէս անդատին ի մանկութենէ ծանօթք իրերաց. այր զընկերին օգուտ համարէր իւր չահ: Եւ թէ քանի՛ վատահք էին յիրեարս, լո՛ւր զհաւատասին՝ որ գրուեցան զսիրտ: Մի ումն ի նոցանէ ճանապարհորդեալ հետի, եւ մոլորեալ ընդ անապատ, հասանէ պարտասեալ ի պանդոկի մի, եւ հիւանդացեալ դնի անդ ի մահիճս: Եւ ի չունչ վախճանին չուշ նելով լինչ ի հատուցանել ընդ խնամոցն՝ զոր առնէր նմա պանդոկապետն՝ էառ տախտակ և գծեաց ի նմա զոզդոզոտ ձեռամբ նշանագիրս լինչ, և ասաց դնել զայն ի տեսիլ՝ յարահետ ճանապարհին: Անց ժամանակ բազում յետ մահուս նորա, և այլոյ ուծմեծ Պլութագորականի պէս եղև ի հեռաւոր կողմանն յայնոսիկ անկանել: Որոյ տեսեալ զնշանագիրսն և գիտացեալ զարկածս աշակերտակցին՝ զկայ էառ, եւ հատուցեալ գծախս պանդոկապետին տակաւնաքն հանդերձ, անց գնաց զճանապարհ իւր:

Թրգմ.
Հ. ե. ՀԻՒՐՄԻՒԶ

ՊԱՐԹԵԼԸՄԻ
Ուղեւոր. Անճաբասեայ, Գլ. Հե.

18

ԱՆՔԻՒՆԷՍ Ի ԴԺՈԽՄ՝ ԶԳՅԱԼՈՅՍՆ ՊԱՏՄԷ ԸՐԴԻՈՅ ԻՐՈՒՄ ԵՆԷԱՍԱՅ

Զաւակ, աբրուանդ
Բամովիճ=Եռամովիճ
Զառ ի յետոյս (մոռանալ), Եռե
Գրոհ, աղէ [Ճաշացանը (մոռնալ)
Ցեսիճ, պապտայ աբրուանդ
Արգադիր նուէր, սուրբ Նուէր
Կայկայել, հասպարեզ [ոխակ
Զիախարոխս, չէս ընտրէ՝ ուժով

Յայնժամ եառեալ Ենէաս ի մեկուսի հովտի անտառ
Շըրջափակ, և յանտառի անդ թըփաստան խարշափուն,
Եւ ըզգետըն Լեթեան չուրջ ըզխաղաղ վայրօքն հոսեալ.
Անհամար ըզգեստովք ազգք և ազինք ճախր առնուին,
Որպէս ի ջեր ամարայնի թռուցեալ ընդ մարգըս պար մեղուաց
Ցածի զամբիծ չուչանօք, և յերփնագոյն բազմի ծաղկունս.
Գընայ բըզգիւն չուրջանակի ընդ դաշտավայրն համօրէն:
Անգէտ իրացն Ենէաս և ահաբեկ ի տեսլենէն՝
Հարցանէր. Զի՞նչ գետք է այդ. և ո՞ որեարդ այդ խըռնեալ
Առ գետեզերբս: Յայնժամ [ասէ] հայրն Անքիսէս. Հոգիք՝ ոյց այլ
Ճակատագրեալ են մարմինք. դոքա յաւէրժ մոռացօնս
Ի ծոցոյ լեթեական գետոյդ ըմպեն ի խաղաղ ջուրսն:
Ինձ վաղուց իզձք են պատմել և ցուցանել քեզ յանդիման.
Եւ ի հանդէս ածել քեզ զիմոցս յետնոց զարմ և սերունդ,
Որով յաւէտ բերկրեսցիս ի ժամանելդ Իտալիա:—
Ո՜ հայր, իցէ՞ թէ վեհք ոմանք հոգիք ի վեր աստի գնայցեն,
Ի դանդաղկոտ ի մարմինըս վերըստին առնել դարձ.
Ուստի՞ հիքացն այնոցիկ այդքան լուսոյ տենչ ըզժընդակ:...
— Ի հոլովել ամենեցուն սոցա զանիւ ընդ հազար ամ,
Կոչեն հրամանք դից բամովին ի լեթեան գետ՝ զառ ի յետոյս
Ի մոռացօնս արկանել, ի խորանարդ անդր ի վերին
Ելանել, և վերըստին դարձ ի մարմինս ըղձանալ:...
Ապա ասէ Անքիսէս. Ե՛կ արդ ցուցից քեզ որ լինչ
Դարդանեան զաւակին առ ի յապայս հանդերձին փառք.
Ո՛յք լցեն իտալական ազին թռուունք, ո՛յք վեհազունք
Եւ ո՛յք յանուն մեր եկեսցեն, ցուցից և զքոյդ ճակատագիր:
Տեսանե՞ս ըզպատանիդ՝ որ կայ յեցեալ ի չինչ նիզակ

Մեռն ի լոյս վիճակեալ վայր. յարփիական այերս ի վեր
Դա լինքըն նախ յարիցէ, խառն ընդ արիւն խոյալական,
Սիլուիոս կոչեցեալ Ալբայեցի, զոր ծնցի քեզ
Ցետ մահուդ Լաւինիա հա՛րն, և սընուսցէ զնա ի մայրիս,
Զորդի ծերունւոյդ, զարքայ և զհայր արքայից.
Ի նմանէ լիցի գրոհիս մերում տիրել յերկային Ալբա։...

Այսր ըզկըրկնակ զաչսըդ դարձո, և տես զորեարդ հռոմայեցի,
Զազգ քոյին. աստ է կեսար, աստ ամենայն սերունդ Ցուլեայ,
Որ հանդերձեալն է ընդ մեծաւ երկնից գընդաւ երևել.
Աստ խոստացեալըն քեզ յաճախ ահա դիւցազն Աւգոստ կեսար,
Այն որ ըզդարն ոսկեղէն նորոգեսցէ ի Լատիոն,
Ի տեղւոջ ուր վազ ուրեմըն Սատուրնոս թագաւորէր.
Եւ ձգեսցէ ցՊարամանս և ցՀընդիկս ըզպետութիւն.
Երկիրն այն է անդրագոյն քան զաստեղաց և ըզտարւոյ
Եւ զարևուն ճանապարհ, ուր երկնաբերձն Ատլաս ի յուս
Հոլովէ ըզբևեռն յեռեալ արփիւք բոցեղինօք.
Ցոտին նորա՝ դողան արդէն կասպիականքըն պետութիւնք
Ի դիցաստաստ պատգամաց, և մէովտեան սարսէ երկիր,
Եւ եօթնակնեանըն Նիլոսի ահիւ մեծաւ դղըրդին բերանք.
Ոչ Ալկիդէս ցայն վայր ընդ ծագս երկրի յածեալ չըրջեցաւ,
Այն որ զեղնիկըն պըղընձոտն եհար, հանգոյց զանտառախիտն
Երիմանթ, և ի Լեռնա՞րկ ազեղամբըն սարսափիւն.
Եւ ոչ Բաքոս յաղթականն, որ ուռենեօք սանձիւք՝ ի կառս
Ըզվագերս լծեալ վարէր բարձր ի ծայրեհ Նիսայ լերին։...

Հայեաց քանի՛ փառաւորեալ ճոխ աւարաւըն Մարկելլոս
Ձեմ առնու յաղթապանծ գեր ի վերոյ ամենեցուն.
Սա զպետութիւն հռոմէական կայկայեսցէ ձիախրոխտ
Ըզդըղըրդեալն յաղմուկ մեծ, և ըզփիւնիկն և զապըստամբ
Գալլիացին կործանեսցէ, և զայս երրորդ առեալ աւար,
Ի նըւէր արդադիր կըվերինեայ հօր կախեսցէ։

Աստ ենէաս ի տեսանել անդ ընդ նըմին ընթացակից
Պատանեակ զեղանի փայլեալ ի զէն և ի զարդ,
Այլ թախծադէմ զաչսն ի խոնարհ արկեալ. ասէ, Ո՞վ է դա, հայր,
Որդի՞ դորին, թէ ի թոռանց ոք վեհազանց ազգատոհմին.
Քանի՛ ի դմա է նմանութիւն. այլ գիշեր սեաւ պարածածկէ
Տըխուր լմն ստուերաւ ըզկլուխ նորա։ Անքիսէս
Հայրն յայնժամ աչք յարտասուս. Մի դու, որդեակ իմ, խընդրեր,

Ըզքոյոցըդ սուգ ամբաւ։ Ցուցցեն ևեթ ըզդա երկրի
Հրամանք ճակատագրին, ոչ անդ յամել թողցեն դըմա։
Կարի հըզօր հռովմէականըն ձեզ թըւէր գըրոհ, ո՛վ դիք,
Եթէ երբեք պարգևդ այդ չնորհէր նըմա երկարատև.
Ըզմեծաւ արիսականըն քաղաքաւ բնակեալն երկիր
Քանիո՛ն կոծ արանց կականաւոր արձակեսցէ
Եւ որպիսի՛ սուգ ի թաղման տեսանիցես, ո՛վ Տիբերիս,
Շուրջ ըզնորոգ սահեալ ճիւաւն. յիւլիական ազգատոհմէ
Ոչ այլ ոք պատանեակ ըզլատինացն հաւուց ըզյոյս
Այնպէս ի վեր ամբարձցէ, և ոչ ի սան ոք այնպիսի
Հռոմուլեանն երկիր երբեմըն պանծասցի. աւա՛ղ կրօնից,
Եղո՛ւկ հընոյն հաւատոց, անյաղթ աչխն ի մարտի։
Ո՞ւմ ումեք էր խիզախել անպատուհաս ի ճակատ
Զինեալսն ըսպառազէնն, թէպէտ հեսի, թէպէտ հեծեալ,
Փրփրերաթ երիվարին մըտրակ ի կուշտ եթէ առնէր։
Ո՛վ հէք պատանեկիկ, եթէ լիցի քեզ խուսափել
Ի խիստ ճակատագրէն, դու եղիցիս Մարկելլոս։
Ծիրանագեղս ածէք չուչանս լինձ բըռնալիր. սըփռեցէք
Ծաղկունս ըզնովաւ, գոնեա զըստուեր խոյ թոռին
Ծածկել ձօնիւք, զէթ հարկանել այսպէս նըմա ըսպաս անուտի։

Վիրգիլիոս, ենեական Զ.

Թրգմ. Հ. Ե. Հիւրմիւզ

19

ԿԱՐԳ ԲԱՆԱԿԱՑՆ ՊԱՐՍԻՑ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՑ

Ակն վանի՝ վանեայ, բէ-բէղ — ձեպել, ֆո-ըռացնել
Ջերմ, ջրիկ աղբակաւնէր — ժանուար, կինէրու կառ՝ բէսպակ

Հայրենի լեռն սովորութիւն է Պարսից, յետ ծագելոյ արեգական ապա յուղի անկանել: Իբրև տիւն լուսանայր, փողանըշան ի վրանէ թագաւորին (Դարեհի) հնչէր: Ի վերայ խորանին նըմանութիւն արեգական պաղպաջէր ի մէջ ականց վանեայց, զի անտի ամենեցուն մարթիցի երևել:

Եւ բանակին կարգ այգպիսի լինչ էր: Հուրն զոր նոքա մեհենական եւ անմահն կոչէին, ի վերայ արծաթի բագնաց յառաջեալ երթայր: Մոգքն որ մերձն կային զհայրենի վիսպասանութիւնս (զերգս օրհնութեանց) նուագեալ հնչէին: Զհետ մոգացն երեքարիւր վաթսուն եւ հինգ երիտասարդք գնային, արկեալ պատմուճան պուճիկեցի (ծիրանի), թուով հանգոյն աւուրց ողջոյն իսկ տարւոյ. քանզի եւ Պարսից տարին յայնչափ աւուրս սահմանեալ է: Ապա զկառն Արամազդայ գնուիրականս սպիտակ ձիք տանէին. զնոցա զհետ երթայր երիվար մի յաղթանդամ անհեղեղ մեծութեամբ՝ զոր անուանեալ կոչէին Սրեգական: Զվարիչս երիվարացն ոսկի գաւազանք եւ սպիտակ հանգերձք զարդարէին: Ոչ հեռի ի նոցանէ էին տասն գահաւորակք ոսկիապատք եւ արծաթապատք: Զնոցա զհետ երթային հեծեալք յերկոտասան ազգաց՝ որոց պէսպէս զէնք էին եւ ազգավազգի բարք: Մօտ առ նոսա երթային եւ զորս անմահ գունդն կոչեն, բիւր մի: Բան զայլ ամենայն խուժադուժան՝ զնոսա առաւել չքեղացուցանէր զարդ բարբարոսիկ մեծութեանն. նոքա մանեակս ոսկիս ունէին եւ հանդերձ ոսկեհուռն եւ պատմուճանս թեզանաւորս ընդելուզեալս ածաղկամբք պատուականօք: Ի տակաւ լինչ վայրաց անջրպետութեան (խուն լինչ ի բացէ) ինգեհտասան հազար արանց՝ զորս ազգականս թագաւորին կոչեն, զրեթէ ըստ կանանց օրինակի պճնեալ, պերճանօքն մանաւանդ քան ի վայելչութենէ զինուն յայտնի լինէր: Անուանեալ կոչին տիգաւորք գունդն՝ որ մօտ երթայր նոցա, որք զարքունական հանգերձն սովոր էին ունել: Սոքա յառաջ քան

զկառս թագաւորին ընթանային, յորում լինքն թագաւորն ի բարձու նստեալ գայր: Ցերկուս կողմանս կառացն պատկերք դիցն ոսկեկուռք և արծաթագործք կային, և ի փայլիւն ականցն յեռելոց երևէր լուծն [կառացն], յորոյ վերայ կային երկու ոսկի պատկերք կանգնեանք՝ յորոց մին Նինոսի էր եւ միւսն Բելայ: Ի մէջ նոցա էր արծուի մի ոսկի նուիրեալ, տարածեալ զթեւս իւր և պատրաստ ի թռչել: Իսկ զարդ թագաւորին քան զամենայն յաճախագոյն երևէր: Ընդ ծիրանի պարեզօտն կէս սպիտակ խառնեալ. և գլօդիկն ընդելուզեալ ոսկւով զարդարէին բազէքն ոսկիք, որպէս թէ կոցովք ի մխմեանց վերայ դիմիցեն. կամար ոսկի ընդ մէջ ածեալ զօրէն կանանց՝ զդաշոյնն կախէր, որոյ ականակալ պատեանք էին: Պարսիկք խոյր՝ զգլխոյ պատիւ թագաւորին անուանէին. զնովաւ պատատեալ էր ապարօշ կապուտակ երկնագոյն ընդ սպիտակ խառնեալ: Զհետ կառացն տասն հազար տիգաւորայ գնային. զեզարդուն[ք] ի ձեռին նոցա արծաթաթապատ և սուինք ոսկեզօծք: Ցաջմէ և յահեկէ ընդ թագաւորն՝ գրեթէ երկերիւր աւագք ի ջերմոց նորա ընթանային, եւ գունդն նոցա փակեալ պատէր յերեսուն հազար հետեւակաց, զոր ոչ իսկ երթային չորեքհարիւր երիվարք արքայի: Ապա հեռի մինչ զհետ

կազմ եւ պատրաստ է՛ւ ի կալ է՛ւ ի գնալ, ոչ ամբոխիւ եւ ոչ բեռամբք ծանրացեալ, ուշ եղեալ մտադիւրութեամբ ո՛չ ի ճեպաւոյ կել միայն զօրավարին, այլ եւ յակնարկելն։ Բանակի տեղի եւ զօրականաց ռոճիկ պատրաստ էր։ Իսկ Աղեքսանդրի ոչ պակասեաց զօր ի ճակատու։ Այլ Դարեհ որ այնչափ բազմութեան թագաւոր էր, նեղութեամբ վայրացն՝ յորս կռուեցաւ՝ յայն սակաւութիւն եհաս՝ զոր ի թշնամւոյն վերայ արհամարհէր։

Թրգմ.
Հ. Յ. ԴԱՔՐՃԵԱՆՑ

ԿՈՒԻՆՏՈՍ ԿՈՒՐԿՈՍ
Պատմ. Աղեքսանդրի, Դպր. Գ.

20

ԴԱԻ ԸՆԴԴԷՄ ԴԱՐԵՀԻ ԵՒ ՄԱՀ ՆՈՐԱ

Աբբանեկուբիւս, Հաւատք, Հաստատութիւն
Ի դիպահուոջ (կալ), Բանդի ձեզ
Շեհ, Էյ–ը (Ծաւալ) Հաստուած երթալ, ղաթուէլ էրթալ
Ապախտաւոր, ապէքախ

Բեսոս եւ Նաբարզանէս զգործ անօրէնութեանն՝ զոր յառաջն նիւթեցին՝ խորհէին յանկ հանել, վառեալք թագաւորութեանն տենչանօք. այլ այնպիսւոյ իշխանութեան չկարէին ակն ունել, մինչդեռ Դարեհն կենդանի էր։ Բազում ժամս խորհուրդ խորհեալ՝ հաճոյ թուեցաւ ի ձեռն զօրականացն Բակտրիացւոց՝ որ առ ամենայն արբանեկութիւն յօժարեալ հասեալ կային՝ ձերբակալ զթագաւորն առնել, և առաքել պատգամաւոր առ Աղեքսանդր՝ թէ կենդանւոյն կայ ի դիպահուոջ Դարեհ։ Իսկ Պատրոն՝ որ էր զօրավար Ծունացն և զհետ երթայր կառաց թագաւորին՝ կամէր գտանել պարապ և խօսել ինչ ընդ նմա. քանզի իմացաւ յառաջագոյն զնենգաւոր գործն Բեսեայ։ Իբրև զայս ի Պատրոն դարձոյց թագաւորն՝ հարցանել թէ արդեօք կամիցի՞ ինչ ասել նմա, և իբրև հրաման առ մօտագոյն մատչել, սկսաւ ասել առանց թարգմանի այսպէս, քանզի էէր անգէտ Դարեհ յոյն լեզուի։ Սրքայ, ասէ, ի վխտուն հազարաց անտի յուենաց՝ սակաւք մնացաք. ամենեքեան ընթացակից եմք բախտին քումմ. վառաւորութիւն քո եւ ձախողել քո՝ նոքին յօդեցին զմեզ ընդ քեզ։ Արդ՝ վասն այդպիսի ճշմարիտ հաւատոց մերոց աղաչեմ պաղատիմ, ի մերում բանակի աստ հար քեզ վրան, և յանձն առ, զի մեք լինիցիմք քեզ անձնապահք։ Ամենայն յոյս մեր ի քեզ է, երանի թէ այսպիսի միտք և յայլսն ևս էին։ Չէ ժամ չատ խօսելոյ, Բեսոս և Նաբարզանէս դարանակալ են քեզ յայսմ ի վերջնում վիճակ թագաւորութեան քո եւ կենաց քոց։ Այս օր լիցի օր յետին կա՛մ սպանչաց քոց կամ քեզ գլխովին։ Տայր Դարեհ պատասխանի. Թէպէտև զձեր Ծունաց հաւատս ծանուցեալ գիտեմ, բայց չիմոց չընկերահաչտեաց աստի չեմ մեկնե

խըստականին: Ապա առաւել ևս ստուգեալ գիտաց, թէ ոչ միայն ի կապանս կայ թագաւորն, այլ և ի վտանգի մահու է: Ի միվայր կոչէր զգօրավարս իւր և զսպարապետս և ասէր այսպէս. Գործ մեծ մնացեալ է, այլ աշխատութիւն սակաւ ժամանակի. Դարեհ ոչ ինչ հեռի ի մէնջ է, թողեալ լքեալ չիւրոց անտի կամ սպանեալ. յանձին անդ նորա եղեալ է մեր յաղթութիւն, եւ այսչափ և այսպիսի իրք՝ վարձք են արագութեան մերոյ: Այնուհետև փութանակի զգունդն վարեալ տանէր յարշաւանի և ոչ ի ճանապարհի, մինչ զի և ոչ քուն ցայգուբեանն՝ ցերեկութեան վաստակոցն առնէր զիւրութիւն: Վասն այսորիկ յառաջեաց ընթացաւ հինգհարիւր վտաւան, և եկին հասին ի գիւղ մի՝ յորում զԴարեհ ըմբռնեալ էր Բեսեայ: Ազգային գնացին դարձեալ երեք հարիւր վտաւանս (ասպարէզս), և ի ճանապարհին լուեալ՝ թէ ոչ աւելի քան զերկերիւր վտաւան հեռի է Բեսոս, խթեալ զերիվարան երթային դիմեալ յարշաւանի, և երեքեան բարբարոսացն: Ցայնժամ Բեսոս և այլքն ևս՝ որ կցորդ էին նենգութեան գործոց նորա՝ մատուցեալ ի կառն Դարեհի, սկսան խրատ տալ, զի ի ձի հեծանիցի, և փախստեամբ զանձն պրծեալ ի թշնամւոյն ապրեցուցանիցէ: Նա զնէր վկայութիւն՝ թէ աստուածքն վրէժիւընդիր հասեալ են, խնդրէր զպաշտպանութիւն Աղեքսանդրի, եւ ոչ կամէր երթալ ընդ սիրանենգն: Ցայնժամ ցասմամբ ևս վառեալ՝ արձակեն նետս ի թաղաւոր անդր, և բազում վիրօք խոցեալ թողուն վիրաւոր: Եւ զգրաստս ևս խոցէին, զի մի կարի յառաջեալ երթիցեն. սպանին և գծառայսն երկուս՝ որ ընդ թաղաւորին երթային: Իբրև զայն գործ դառնութեան վճարէին, զի գհետս փախստեանն բաժանիցեն, Նաբարզանէս ի վրկանս չոգաւ և Բեսոս ի Բակտրիս...

Ցայնմ վայրի գրաստք՝ որ զԴարեհս ձգեալ տանէին, քանզի կառավար չգոյր, ի բաց ելին յարքունի ճանապարհէ, և մոլորեալ երթային չորս վտաւանս, և ի հովտի ուրեք գադարեցին խոնջեալք և վաստակեալք ի տապոյ անտի և ի վիրացն: Ոչ ինչ հեռի կայր ի տեղւոջէն աղբիւր՝ որ ի տեղեկացն ցուցաւ Պողիսպարատեայ Մակեդոնացւոյ, եւ նա քանզի պապակէր ի ծարաւոյ իւրմէ, մատեաւ անդր. և իբրև սաղաւարտիւն ջուր հանեալ ըմպէր, հասեալ զնետսն հարեալ ի գրաստուցն մարմինս, որ երթային և նուաղէին. եւ լսէր զհեծութիւն մարդոյ կիսամեռ եղեալ: Վասն այսորիկ ըստ սովորութեան մատոյ մարդկան ցանկացաւ տեսանել՝ թէ զի՛նչ թագուցեալ կայցէ ի դեսպակի անդ. մատուցեալ ի վեր առնոյր զմորթեան որովք ծածկեալն էր և եպիտ զԴարեհ խոցեալ վիրօք բազմօք. զի հանգերձն արքունի և չղթայքն ոսկեղէնք՝ որովք կապեալ էր նա ի տիրանենգացն՝ չտային վարանել: Դարեհի՝ որ ի ծարաւոյն ևս նեղէր՝ ջուր մատոյց Պողիսպարատոս. և իբրև կազդուրեցաւ թագաւորն՝ յուսացն խօսեցաւ և ասէ. Այս ևս ի վերայ այնչափ վշտաց վերջին վիճօsf եկին յաւելան, զի քեզ երախտաւորիդ չկարեմ առնել հատուցումն փոխարէն. բայց հատուսցէ քեզ Աղեքսանդրոս, եւ Աղեքսանդրի՝ [հատուսցեն] դիքն: Ապա զայջ իւր կարկառէր և հրաման տայր զնչան (զողջոյն) ձեռինն՝ արքունական հաւատոցն զրաւական տանել Աղեքսանդրի, և ըմբռնեալ զձեռն Պողիսպարատեայ՝ փչեաց զոգին: Ցօրժամ Աղեքսանդրոս գիտաց զմահ թըշնաւառութեան մեծագանձ թագաւորին, եկն առժամայն եւ ելաց դառնապէս, և խոկ և խոկ հանեալ զիւր զգամիդն՝ զմարմինն ծածկէր, և հրաման տայր մեծաւ պատուով առ իւրն տանել զնա, զի յօրինեալ ըստ արքունի սովորութեանն Պարսից՝ թաղեացի ի գերեզման նախնեաց իւրոց...:

Իսկ զապախտաւոր միտս մարդկանն՝ յորոց փոխանակ մեծացն երախտեաց անագորոյն սատակումն կրեաց Դարեհ, կշտամբեալ յանդիմանեցին աքանչելի բարք հաւատարիմք չան միոջ, որ առ նմին կայր մնայր միայն, թէպէտև թողեալ էր նա յամենայն ընտանեաց իւրոց. զի զո՛ր գութ խնամոյ ունէր առ նա, մինչդեռ կենդանին էր, զնոյն ցուցանէր յորժամ ի մեռանել էր:

Թրգմ. ՆՈՑՆ

21

ԴՐՈՒԱՑ ՇԻՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ
ԵՒ
ԱԼԵՒՈՐՆ ԿՈՐԻԿ

Ընկաւեալ, *տմահեալ*
Ջրուաճ=Կուռնոս, *դէմ ժամանակէ*
Աղխատրոյզ, *խառնակ, պանդուխտ*
Փարաս, *ընտրեալ, պատուական*
Ընդարի, *ինձուկ (ֆր. orme)*
Արբուճ *(բոյս.)*, *կորեկ տարեկան*
Կոկաճենի, *վայրկեան տալընկէց*
Այգորեվիճ, *առաջնոյն այցելուներ*
Խուրձ, *էլիսաւորեան նշան (ֆր. faisceau)*
Աճուս, *անշարժ*
Աղաւնիճ, *խոտ մը (ֆր. verveine)*
Սիկիոնեան հատ, *Սկիւռնէ յետ*
Անգիճ, *յետ*
Նսիճ=ճսեճ, *բախտ*
Առուական դեղ, *ձէրմակ ներկ*
Մարուզ, *խնդրուկ պտուղը (տե.*
Դոյաւոր, *առնուր [ուշիմ եկուղեղ)*
Աճեռովճ, *պաշտօնէ ընտրեալն ինչ*
Խուրտիկ, *առաջնէ (հոմ՝ պտուղ,*
Վիճակ, *ընտրէն, արդ [քանքար)*
Դրանդիճ, *ինձ պատուներ (տապատէ,*
Թէ=Եթէ, *ընկալ [հայլն)*

Ա.

Վա՛չ երջանիկ մըչակաց, զիւրեանց նըպտիղ թէ զիտիցեն.
Ոյց լինքնին երկիր արդար ի մարտամբոխ զինուց փարատ՝
Ի ծոցոյ հողոյն բըխեն զիւրապատարաստ պարէն կենաց:
Ապարանք բարձրաձեղունք աչխարհամուտ դրամբք հոյակապ
Թէ հոսեն ոչ ի գաւթաց զայգորելեացն ուզխից կոհակս,
[Թէ] ի դրանդիս ոչ պակչոտին կամարաչէն պերճ նըկարեանս,
Ոչ ի պըղինձս եփիւրացիս եւ ի հանդերձս ոսկեճամուկս.
Թէ ոչ ա՛սր ըսպիտակ յատորական դեղ չըպարի,
Ոչ ծորածոյ իւղոյն պարզուածք կասեաւ ի պէտս ապականին.
Այլ հանդիստ յապահով, կեանք անպատիր ճոխ ընչաւէտ,
Այլ անդորը ի գիւր վիճակս, անճաւք եւ լիճք ջուրց կենդանի,
Այլ հովիտք հովանաւորք և անդէնց մեղմիկ բընչիւնք,
Եւ ընդ ծառով հեչտալի քուն հանգըստեան ա՛չ պակասին:
Անդ արօտք եւ անտառք եւ երէնց որջք եւ մորիք,
Եւ արբուն ժիր մանկութեան սակաւապէտ եւ երկասէր,
Աստուածոյ պաշտամունք եւ սըրբանուէր հարց ալեւոյթք.

Արդարութիւն զվերջին հետս եդ առ նոսին մեկնեալ յերկրէ:...
Երանի՛ ումմ պատճառաց էից գիտաց գոլ խելամուտ,
Եւ զարհաւիրս ամենայն եւ զանողոք ճակատագիրը
Եւ զանյագ Աքերովնի չռինդ եւ չըշուկ առ ոտն եհար:
Նա եւ այնմ իսկ երանի՛ որ զգաչտային ծանեաւ ըզգիս.
Ոչ ըզնա խուրձ ամբոխին, ոչ թագազանցըն ծիրանիք,
Ոչ գրուժան հարապատից ընկճեաց երբեք վըրդովիչ խաղմ.
Ոչ ի գութ հեծեաց մուրկին կամ մախացաւ ընդ գոյաւոր.
Զոր ուղէշք մըտադիւր եւ զոր բերին անդք լինքնակամ
Զարդիւնըսըն ժողովեաց, եւ ոչ օրէնս լինչ երկաթիս,
Ոչ զորգոստայն աղխատրոյզ կամ զաչխարհին եաես գիւան:
Մըչակն արդիւնաբար կոր արօրով վարէ զերկիր.
Անդուստ ամին արարք, անտի գիտունեակս եւ գհայրենիս
Տածէ անտի գլոկ նախաց եւ գըբաւարակս արժանաւորս.
Եւ ոչ գուլ առնու երբեք՝ մինչեւ տարին մըրգովք վեղու
Կամ որգովք խաչանց եւ կամ ի գեմետրեան հասկաց որայս,
Եւ ծաձիւ տոհմականօք զակօսս՝ յաղթող լեալ համբարաց:
Եւ ծաձիւ տոհմականօք զակօսս՝ յաղթող լեալ համբարաց:
Եկըն ձըմեռն, ի մամուռս հատքըն լեսուն սիկիոնեանք,
Խոզք դաւնան կաղնով բերկրեալք, անտառք մաթուզ մատուռ
Եւ աչունն հասուցանէ զազգի ազգի պըտղոց խայրիս, [ցանեն,
Եւ ի մարմանդըս բըլրոց եփին անոյշ բարձր այգեկութք:
Անդ քաղցրիկ մանկըտին չուրջ ի համբոյր կախին շրթանց.
Պարկեշտ եւ ծընդասէր պահէ սընական ըզսըրբութիւնն:
Կաթնաբուխ տարածեն ըստինս երինջք, եւ գէր ամիկք
Ի զըւարթ մարգագետնի կան ոգորեալ խեթիկիչ եզջերօք:
Նա զոճնուտ խըմբէ գաւուրս եւ զանձն հեզեալ ի գալարիս,
Ոչ հրատ անդ ի միջի, լընուն ընկերք տաչտ թաթաղուն,
Ջեզ, Սպանդարամետ, ճօնեալ նըւէր՝ ըզքեզ կարդայ,
Եւ հովուաց սուր սըլաքաց գընկ հանդէս ի նըշդարին,
Եւ զերիտ անդաման հոլանէ ի չինական ըմբըշամարտս:
Զայս երբեմն վարեցին կենցաղ նախնի սաբինեցիք,
Զայս Հռեմոս եւ եղբայրն, այսպէս ածեաց քաջն Եարուբէ...
Զայս Հռեմոս եւ եղբայրն, այսպէս ածեաց քաջն Եարուբէ...
Մինչեւ ազգ ամպարիչս ի զուարակաց չուայտեալ բապանդ,
Զայս ոսկեղէնըն Զըրուան անցուցանէր ըզկեանս յերկրի.
Եւ ի լուր չեւ էր եկեալ փըքոցուռոյց փողոց գոչիւն,
Եւ յանոստ սալըս գարբնաց կայծակնացայտ ծաչել գինուց:

Թրգմ. Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ — ՎԻՐԳԻԼԻՈՍ, Մշակականիճ Բ.

Բ.

Զի յիշեմ ես զԻբալեայ բարձրապարիսպ աշտարակօք,
Ուր մբխինըն Փալեստս առագանէ զանդըս խարտեաշ,
Զալեւոր տեսեալ Կորիկ, որում սակաւ լինչ արտավար
Կայր ի խոպանն ագարակ, ոչ գիւր ի հերկս եզանց ածու,
Ո՛չ խաչանց բարեպատեհ, եւ ոչ ի տունկ այգեաց ի դէպ։
Սակայն ցի՛ր ի մացառս քաղեալ բանջար եւ չուրջ ի ծիր
Սպիտակ չուշան, աղաւնիճ եւ ըզխաչխաչ մանրահատիկ,
ի սըրտին հաւասարէր ընդ արքունի փարթամուքիւնս.
Եւ մրտեալ տարաժամու՝ կուտէր անգին խորտկօք սեղան։
Առաջին վարդ ի զարունն՝ եւ աճեայնի քաղէր խնձորս,
Եւ մինչ դառըն դեռ ձըմեռն ըզվէմս հերձայր սառամանեօք
Եւ ի պաղ ձուլեալ զընթացս ոտնակապէր ջուրց խոխոջից,
Նա զգըրգասուն յակընթի խուզէր յայնժամ ըզխոպոպս,
Նըշկահեալ ըզհեզգ ամառն եւ զյապաղկոտ սիւք քաղցրաչունչ։
Արդ նոյն ինքն յոգնաբեղուն և գունդագունդ մեղուաց պարուք
Քան ըզբնաւս էր բարգաւաճ, նրման թըմբիւք ե՛առատ չոճի,
Եւ ի ճընշել խորըսխաց մեղրը կըթէր նա փըրփրադէզ։
Եւ որչափ ի նոր ծաղկին ծառըն բերրի պըճնէր մըրգովք՝
Նոյն[չափ] եւ աճեայնի հասունս յանձին բարձեալ բերէր։
Ինքն եւ զառամ նըշդարիս տողեաց ի չար գեղեցկակարգ,
Եւ ըզկա՛րծըր տանձի, զսալորաբեր կոկանննիս,
Եւ ըզսօսարն գինեբերուաց զուարթացելոց հովանաւոր։

Թրգմ. ՆՈՅՆ

22

ԵԼԵԻՍԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՆՔ

Փոխիցդ, ալէ՜ւէ ջ՛ուռած սոթե՜	Խուճապ, խռովիկ
Ժահ, ազաչե՜ղ-ի՜ւն [լէ՛ւ+ ծը	Խորհրդածութիւն, խորհո՜ւրդն է՜
Կիկեոն, ըմպելի՛ ծը կամ խաղող	Անզբօս, անդբաղ [բո՜ւ կատարած
Քարոզ, ճառնե՜ի (յն. κηρύσσω)	Անդամմուճի, մարմո՜ւ

Քան զամենայն խորհուրդս սահմանեալս ի պատիւ դից գե՜բահռչակք են Դեմետրեայ խորհրդատունքն. քանզի նորին իսկ Դեմետրեայ ասեն կարգեալ զայն։ Զի ի չըլչըլեն ի խնդիր Պերսեփոնեայ դստերն իւրոյ՝ զոր Պղուտոնի յափշտակեալ էր, եկն եհաս ի դաշտ Ելևսեայ, և հաճեալ ընդ հիւրընկալութիւն բնակչաց քաղաքին՝ արար նոցա պարգեւս երկուս մեծամեծս, զարուեստ երկրագործութեան և զփիտութիւն սրբազան վարդապետութեան։ Ամենայն ուրեք, ուր և մուծին զայն Ա՛թենացիք, հաստատին զի սփոփ սէր մխաքանութեան և մարդասիրութիւն, եւ զի սրբէ նա զհոգի ի տգիտութենէ և ի պղծութեանց եւ պատրաստէ զառաւելութիւն օգնականութեան դիցն, զօրութիւն հաստանելոյ ի ծայր առաքինութեան, զբերկրութիւնս անբիծ կենաց և զյոյս անգորը մահու և բարեբաստութեան։ Նուիրելոցն ի խորհուրդս յայսոսիկ լիցի տեղի յեղիւսեան դաշտս. ժառանգեսցեն նոքա զլոյս անստուեր, եւ կեցցեն յաստուած. իսկ այլք ի մեռանելն բնակեսցեն յարհաւիրս՝ ի խաւարչին տեղւոջ։ Անդստին ի մատաղ տիոց Ա՛թենացիք մտանեն ի խորհրդածութիւն, իսկ որոց չիցէ երբեք հաղորդ լեալ պաշտամանն՝ խնդրեն զայն ի մահու։ Սակայն ոմանք յիմաստնագունից չհամարին զանձինս մահու։ Սակայն ոմանք յիմաստնագունից չհամարին զանձինս կարօտ պաշտամանն՝ առ ի լինել առաքինիս։ Սակրատ չէառ երբեք յանձն ընծայել ի պաշտօնն, և այս մերժումն նորա համարեցաւ նմա յամպարշտութիւն։ Դիոգինէս ևս յորդորեալ յամանց նուիրել ի պաշտօնն՝ ետ պատասխանի. Պատեհ[ին աւազակն հրեշակաւոր նուիրեալ իսկ էր, իսկ Եպամինոնդ և Ագեսիլայոս չեղեն ի խնդիր պաշտամանն ընծայութեան. արդ մի՛թէ նա երանելի՞ յեղիւսեան դաշտս կայցէ, եւ սոքա ի ժա՞հս դժոխոց ընդ քարշ ածիցին։

Բ.

Զի յիշեմ ես զԻբալեայ բարձրապարիսպ աշտարակօք,
Ուր մըթինըն Կալեսոս ոռոգանէ զանդըս խարտեաշ,
Զալեւոր տեսեալ Կորիկ, որում սակաւ լինչ արտավար
Կայր ի խոպանն ագարակ, ոչ դիւր ի հերկս եզանց ածու,
Ո՛չ խաշանց բարեպատեհ, եւ ոչ ի տունկ այգեաց ի դէպ։
Սակայն ցի՛ր ի մացառս քաղեալ բանջար եւ չուրջ ի ծիր
Սպիտակ չուչան, աղաւնիճ եւ ըզխաչխաչ մանրատատիկ,
Ի սըրտին հաւատարէր ընդ արքունի փարթամութիւնս.
Եւ մըտեալ տարաժամու՝ կուտէր անդին խորտիօք սեղան։
Առաջին վարդ ի գարունն՝ եւ ածնայնի քաղէր խնձորս,
Եւ մինչ գառըն դեռ ձըմեռն ըզվէմս հերձոյր սառամանեօք
Եւ ի պաղ ձուլեալ ըզնթացս ոռնակապէր ջուրց խոխոջից,
Նա զգըրգասուն յակընթի խուզէր յայնժամ ըզխոպոպիս,
Նըշխահեալ ըզհեզ ամառն եւ զյապաղկոտ սիք քաղցրաչունչ։
Արդ նոյն ինքն յոգնաբեղուն և զունդապունդ մեղուաց պարուք
Ճան ըզբնաւս էր բարգաւաճ, նըմա թըմբիւք ե՛առատ չոճի,
Եւ ի ճընշել խորընախաց մեղըր կըթէր նա փըրփրագեղ։
Եւ ոչափ ի նոր ծաղկին ծառըն բերրի պըճնէր մըրգովք՝
Նոյն[չափ] եւ ածնայնի հասուներ յանձին բարձեալ բերէր։
Ինքն եւ զառամ նըշդարիս տողեաց ի չար գեղեցկակարգ,
Եւ ըզկա՛ծըր տանձի, զսալորաբեր կոկանեղիս,
Եւ ըզսօսըն գինեբրուաց զուարթացելոց հովանաւոր։

Թրգմ. ՆՈՅՆ

ՆՈՅՆ, անդ, Դ.

22

ԵԼԵԻՍԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՆՔ

Փոխիմդ, ալէ՜ւբ շէնոտած ոտքե՜	Խուճապ, խռնկէն
Ժահ, աղաղակութիւն [լէթ մը	Խորհրդածութիւն, խորհուրդներ
Կիկեռն, ըմպելի մը կամ խաղող	Անգրօս, անդէպ [բռնադատում
Քարոզ, հռետորէն (յն. κηρύσσω)	Անդամմուռճ, մոմոտ

Քան զամենայն խորհուրդս սահմանեալս ի պատիւ դից զեբահեակք են Դեմետրեայ խորհրդատունքն. քանզի նորին խակ Դեմետրեայ ասեն կարգեալ զայն։ Զի ի չրջելն ի խնդիր Պերսեփոնեայ դստերն իւրոյ՝ զոր Պղուտոնի յափշտակեալ էր, եկն եհաս ի դաշտ Ելեւսեայ, և հաճեալ ընդ հիւրընկալութիւնն քնակէաց քաղաքին՝ արար նոցա պարգեւս երկուս մեծամեծս, զարուեստ երկրագործութեան և զփիտութիւն սրբազան վարդապետութեան։ Ամենայն ուրեք, ուր և մուծին զայն Աթենացիք, համարին զի սփոի սէր մխաքանութեան և մարդասիրութիւն, եւ զի սրբէ նա զհոգի ի տգիտութենէ և ի պղծութեանց եւ պատրաստէ զառաւելութիւն օգնականութեան դիցն, զվօրութիւն հասանելոյ ի ծայր առաքինութեան, զբերկրութիւնս անբիծ կենաց և զյոյս անդորր մահու և բարեբաստութեան։ Նուիրելոցն ի խորհուրդս յայսոսիկ լինի տեղի յԵղիւսեան դաշտս. ժառանգեացեն նոքա զլոյս անստուեր, եւ կեցցեն յաստուած. իսկ այլք ի մեռանելն բնակեացեն յարհաւիրս՝ ի խաւարչտին տեղւոջ։ Անդստին ի մատաղ տիոց Աթենացիք մտանեն ի խորհրդածութիւն, իսկ որոց չիցէ երբեք հաղորդ լեալ պաշտամանն՝ խնդրեն զայն ի մահու։ Սակայն ոմանք յիմաստնագունից չհամարին զանձինս կարօտ պաշտամանն՝ առ ի լինել առաքինիս։ Սակրատ չէառ երբեք յանձն ընծայել ի պաշտօնն, և այս մերժումն նորա համարեցաւ նմա յամպարշտութիւն։ Դիոգինէս ևս յորդորեալ յոմանց նուիրել ի պաշտօնն՝ ետ պատասխանի. Պատեկլեն աւազակն հրաշակաւոր նուիրեալ խակ էր, խակ Եպամինոնդ և Ագեսիլայոս չէին ի խնդիր պաշտամանն ընծայութեան. արդ մի՛թէ նա երանելի՞ յԵղիւսեան դաշտս կայցէ, եւ սոքա ի ժա՞հս դժոխոց ընդ քարշ ածիցին։

Ի քուրմս մեհենին զվխաւորք են չորք: Առաջին կատարո-
զապետ, որ ըստ անուան իւրում երևեցուցիչ սրբութեանց է (hiéro-
phante), և գործ է նորա նուիրել զմատուցեալսն ի խորհուրդսն:
Դայ նա ի մէջ զգեցեալ այլատարազ, թագ ի գլուխ, եւ վարսք
նորա զուսովքն ծփեալք: Պարտ է նմա լինել կատարեալ ըստ
ասոյ՝ համեմատ հանդարտութեան պաշտամանն, եւ զեղեցկա-
ձայն՝ ախորժալուր լսելեաց: Մինչև ցկեանս է իշխանութիւն
նորա, և ընդ առնուլ զայն՝ պարտ է հրաժարել նմա յամուսնու-
թենէ: Երկրորդ քրմին գործ է կրել զջահն սուրբ ի պաշտամունս
սքն, եւ սրբել զընծայեալսն. իշխանութիւն է եւ նմա հանդոյն
կատարողապետին երևել ապարօճ ի գլուխ: Իսկ այլք երկոքին
են՝ քարոզն սուրբ և ընթերակացն բազնին. առաջնումն անկ է
ի բաց առնել զպիղծս, և զգուշանալ լուռ և անգբօս կալոյ ներ-
էիրելոցն. իսկ երկրորդին՝ օգնել այլոց ի պաշտամունսն: Զորե-
ցունցն ևս են և այլ պաշտօնեայք բազումք ընդ ձեռամբ, թարգ-
մանք, երգիչք, և ուղղիչք կարգաց թափօրոցն և այլոց արա-
րողութեանց: Տեսաք մեք զնոսա, զի մտին ի չրջապատն մեհե-
նին. և ի վաղիւ անդր մի ի նորընծայիցն նուիրելոց՝ որ բարե-
կամ էր ինձ, պատմեաց ինձ զարարողութիւնս ինչ պաշտամանն՝
որում լեալ էր ականատես:

Գտաք մեք, ասէ, ի ներքս անդ զպաշտօնեայս մեհենին,
և էր նոցա զքրմական հանդերձն զգեցեալ: Կատարողապետն,
որ անդ զարարչին տիեզերաց զդէմս բերէ, կրէր նշանակս ամե-
նազօր իշխանութեան, ջահընկալն և ընթերակացն բազնին զգ-
կերպարանս արեգական և լուսնի, և քարոզն զչերմեայ: Եւ ա-
հա քարոզն կարգայր. «Ի բաց կացցեն անսուրբքն և ամպարիշտք,
և մի՛ ոք ի պղծելոցն անօրէնութեամբ՝ մերձեսցի ի բազինս յայս»:
Եւ մահապարտ էր՝ որ ոք յարտաքսելոցն յետ քարոզին ապդա-
րարութեան յանդգնէր կալ ի ժողովի անդ: Եւ քուրմն երկրորդ
տայր տարածանել ընդ ոտիւք մերովք զմոլթս մատուցելոց զո-
հից, որ եւ սրբեաց զմեզ վերստին, եւ բարձրաձայն ընթերցաւ
կարգաւորութիւն պաշտաման նուիրանաց ընծայելոցն, և օրհ-
նութիւնք Դեմետրեայ նուագչին:

Եւ ապա չչուկ լինէ լսելի լինելոց. թուէր մռնչել երկրի ընդ
ոտիւք մերովք, և չանթից և փայլատականց ահաւոր երևմունս
խուճապից և ճիւաղաց ի խաւարի գործել. որոց զսուրբ վայ-
րըն լցեալ կաղկանձմամբք՝ զարհուրեցուցանէին զմեզ: Կակիճ

մահաւէտ, անգամունք գժոխըմբերք, չքաւորութիւն, ախտ,
և մահ ինքնին գլխովին՝ կերպս ի կերպս գժնդակս եւ պակու-
ցիչս երևէին մեզ: Կատարողապետն մեկնէր մեզ զտեսիլսն, կեն-
դանատիպ նկարագրութեամբքն յամախեալ զտագնապ և զարհա-
ւիրս մեր:

Բայց ի նչոյլ աղօտ ինչ լուսոյ՝ յառաջ մատչէաք ի կողմն
գժոխոց, ուր սրբին հոգիք՝ մինչչև յերանաւէտ օթևանսն հասեալ.
և ի խառնաձայն ողբական հնչմունսն լուաք զգառն հեծութիւնս
անձնասպանից. և կատարողապետն յաւել. Դոքա աւազիկ պա-
տուհասին վասն թողլոյ զկայսն՝ ուր դիցն զնոսա յաշխարհի աստ
կացուցեալ էր: Եւ մինչդեռ բանքն ի բերան նորա կային, բացան
դրունք պղնձիք ահագին ճռնչմամբ, և յանդիման եղեն մեզ ար-
հաւիրք Տարտարոսին, որ հնչէր ի չառաչիւն չղթայից եւ ի ճիչ
թշուառականաց, և խառն ընդ ոխուր եւ սրտառուչ աղաղակն՝
երբեք երբեք լսելի լինէր բարբառս այս ահեղ. «Ի՞րատեցարուք
մեօք՝ երկինչել ի դից, և ուղղել զարդարութիւն, եւ գոհացողս
լինել»: Տեսաք մեք զժանտսն կատաղիս մարակաւորս զայրա-
գնեալս անխնայ ի վերայ եղեռնաւորացն:

Եւ մինչդեռ տեսիլքս այսոքիկ ահագինք յաւելեալ ի սաստ-
կութիւն յաղագ և ի մեծասաստ բարբառոյ կատարողապետին՝ որ
թուէր ինն երկնաւոր վրէժխնդրութեանն դահիճ՝ ընդուն զմեզ
սոսկմամբ, և հազիւ չունչ կենդանութեան էր ի մեզ, և ահա
փոխեցաք յանտառս զուարճալիս և յարօտս գեղածիծաղս, վայր
երանաւէտ՝ պատկեր Եղիսեան դաշտացն, ուր նչողէր լոյս ա-
նաղօտ, ուր ձայնք քաղցրալուրք հնչէին զմայլեցուցիչք. և ա-
պա մուծեալք ի վայրն սուրբ՝ տեսաք զանդրի դիցուհւոյն լու-
սապայծառ՝ զարդարեալ մեծափայլիմ իւրովք սպասուքն: Անդ
վախճան լինէր հանդիսի փորձութեան մերոյ, և անդ տեսաք և
լուաք իրս զորս ոչ է օրէն պատմել. բայց արբեալք ի սուրբ
խնդութենէն՝ նուաղէաք օրհնութիւն, երանելով զբախտ մեր:

Զայս պատմեաց մեզ նորընծայեալն ի խորհուրդսն: Եւ այլ
ոմն յաւել հանդամանս ինչ՝ զոր առաջնոյն մոռացեալ էր. Զի ի
միում յաւուրց տօնին երց կատարողապետն զկողովսն խոր-
հրդաւորս՝ զորս բարձեալ բերեն ի հանդիսին, մեծարեալս յա-
մենեցունց: Եւ են ի նոսա սրբազան սպասքն՝ որոց տեսիլ ար-
գելեալ է պղծոց, այսինքն են փոխինդք այլայլաձևք, հատք ա-
ղի, և այլ ինչ որ պատկանաւոր ի վէպս Դեմետրեայ և ի վար-

դապետութիւնս խորհրդոց նորա: Նուիրելոցն կողով ի կողովէ փոխեալ գնոսա, այնուհետեւ կարող են ասել՝ թէ պահեցաք եւ արբաք զկիկէոն:

Թարգմ.
Հ. Ե. ՀԻՒՐՄԻՒԶ

ՊԱՐԹԵԼԸՄԻ
Ուղեւոր. Անահարսեայ, Գլ. ԿՀ.

23

ՏԵՍԻԼ ՄԻ Ի «ՀԱՒՔ» ԽԱՂԷՆ ԱՐԻՍՏՈՓԱՆԵԱՅ

Ընձեռայf, պարգեւ	Գլել, ջերմաջնջել
Քարի՛նf, ղովելու յԼ մը	Ոսոխ, ախոյեան
Արդ եւս, դեռ նոր	Որի, որեակ մը ափսաս

Արիստոփան ծանեաւ զայս ազգ կատականաց, ոչ որ Աթենացւոց եւթէ ժամանակին էր հաճոյ, այլ որ յամենայն ժամանակի հաճոյ եղիցի մարդկան: Գործք նորա ունին յինքեանս զսերմն ճշմարիտ կատակերգութեան եւ գնախատիպս քաջի կատակերգուի. եւ չէ մարթ գլել գնա, առանց հասու լինելոյ զեղծկութեանց նորա: Այսմ լինքնին իսկ խելամուտ լինելիր՝ եթէ երկայնմտութեամբ աւարտեալ էր զի գընթերցուած այլաբանութեանն՝ բազումս գտեալ ի նմա ճայթիւնս ինքնաբուն բանից: Ներեսցի լինձ զտեսլեանց լինչ բովանդակելոց ի նմա տալ քեզ զկերպարանս:

Պլութեաեր և այլ ոք յաթենացւոց՝ առ ի գերծանելոյ ի դատից և ի գժոութեանց՝ որովք տաղտկանն բնակել յԱթէնս՝ չուեն ի գաւառ թռչնոց, և հաւանեցուցանեն գնոսա կանգնել քաղաք օդակառոյց: Ի սկիզբն հիմնարկութեան քաղաքին՝ հարկ ի վերայ կայր մատուցանել զոհ նոխազ մի, այլ յամէ պաշտօնն վասն ժիտ և դատարկախոյզ մարդկանն, որ դիմեն անդր անդադար ի խնդիր բախտի ի նորակերտ քաղաքին:

Հասանէ անդր նախ մի ի քերթողաց, նուագելով. «Երգեա՛, Մուսայդ, զթռչնաբնակ զամպակառոյց զքաղաքն»: Հարցանէ

գնա Պիսթեաեր. «Դու ո՞վ ես, և յորմէ՛ քաղաքէ»: Պատասխանի առնէ Քերթողն, «Որպէս Հոմերոսն ասէ, ծառայ հաւատարիմ եմ մուսայից. և ծորեն չերթունք իմ զմեղր անոյշ մեղեգեաց:

Պիսթեաեր. Սարուկ ումն ես դու, և զիա՛րդ ուներեցիս երկայն գէսս հերաց:

Քերթողն. Ոչ այդպէս, մեք ամենեքին քերթողք, որպէս ասացն Հոմերոս, հաւատարիմ ծառայք եմք մուսայից:

Պիսթեաեր. Առ ի՞նչ գաս այսր:

Քերթողն. Ոսոխ Սիմոնիդեայ (քերթողի) կացեալ՝ յօրինեցի նուագս օրհնութեանց ազգի ազգիս յաղագս ամենայն պաշտամանց՝ ի պատիւ նորակերտ քաղաքիդ, եւ ոչ գագարեցայց յերգելոյ զդա. «Ո՛ հայր, որ զհիմունս Եանայ հաստատեցեր, հեղ յերգելոյ զդա. «Ո՛ հայր, որ զհիմունս Եանայ հաստատեցեր, հեղ յիս զաւրվիս բարութեանց՝ զորս կա՛մ էր լինձ կուտել ի գլուխս քո»:

Պիսթեաեր. Եւ ե՞րբ յօրինեցեր զայդ ամենայն:

Քերթողն. Ի վաղուց հետէ երգեմ ես զքաղաքս զայս:

Պիսթեաեր. Բայց արդ ես զոհիւս հիմն արկից նմա:

Քերթողն. «Այսպէս երագագոյնք քան զօգս սուրան երկնավարք, և արձակի մուսայիցն ձայն»:

Պիսթեաեր. Տաղտկացուսցէ զիս այսր այս, մինչև տաց լինչ դմա պարգև. (Առ ադրուին է՛ր). Լո՛ւր լինձ, տուր դմա զպատմուճանդ, այլ զդոյզ լեր զի մի՛ և զբաճկոն քո առցէ: (Ե՛ս առ էբճանդ, այլ զդոյզ լեր զի մի՛ և զբաճկոն քո առցէ: (Ե՛ս առ էբճոնդ). Առ զպատմուճանդ, զի թուխս լինձ ընդարմացեալ ի ցրտոյ:

Քերթողն. Գոհանայ մուսայն իմ զպարգեւաց քոց. զպինդարական լուր արդ զտաղս. . . «Սարատոն մոլորեալ ընթանայ ընդ վաչկատուն Սկիւթացիս. չէ նորա հանդերձ կտաւի. և ցաւ

Իղձն. *(Դարձեալ է յերկինս)* Մի՛ ոք հուպ լիցի ի սպանդն.

Պիսքեսեր. Դու ո՞վ ես:

Իղձն. Թարգման պատգամաց և գուշակ:

Պիսքեսեր. Դարձի՛ զքիկունդ:

Իղձն. Զգոյշ լեր, եւ ակն ած ի սրբութեանց. պատգամ ածեմ քաղաքիդ:

Պիսքեսեր. Վաղագոյն պարտ էր քեզ բերել զայդ:

Իղձն. Ոչ թոյլ եառն աստուածքն:

Պիսքեսեր. Ասա՛ ուրեմն:

Իղձն. «Ցորժամ գայլք ընդ սպիտակ որիս բնակեսցեն ի դաշտին՝ որ բաժանէ ընդ Սիկիոն և ընդ Կորնթոս»...

Պիսքեսեր. Ջի՞ կայ իմ եւ Կորնթացւոց:

Իղձն. Առակաւոր է պատգամս, եւ ակնարկէ ի գաւառ օդոց յորում եմքս. Լուր և զոր զկնիճ. «Ջենի՛ք Պանդորայ նոխազ մի սպիտակ, եւ որ զկամս իմ նախ թարգմանեսցէ՝ առցէ հանդերձ գեղեցիկ եւ կօշիկ նոր»:

Պիսքեսեր. Եւ զկօշի՞կն ասիցէ:

Իղձն. Կա՛ և ընթերցիր. «Կօշիկ նոր, և բաժակ գինւոյ, և ի փորոտեաց զոհի մասն»:

Պիսքեսեր. Եւ զփորոտի՞ն եւս [ասիցէ]:

Իղձն. Կա՛ եւ ընթերցիր. «Եթէ զհրամանս իմ առնիցէք, լինիք գեր ի վերոյ մահկանացուաց, որպէս արծուի ի մէջ ամպոց (թռչնոց)»:

Պիսքեսեր. Եւ զա՞յն եւս գուշակիցէ:

Իղձն. Կա՛ եւ ընթերցիր:

Պիսքեսեր. Է իմ սակայն ի թղթի ուրեք արձանագրեալ պատգամ Ապողնի, ամենեւին ընդհատ ի քոյոյդ, եւ ունի այսպէս. «Ցորժամ ոք լինքնահրաւէր ժպրհեսցի սպրդել մտանել ի ձեզ և աղմկել զկարգ զոհիցդ, և պահանջել անտի մսան, գանակոծ լիցի»:

Իղձն. Թուի լինձ թէ խաղ առնիցես.

Պիսքեսեր. *(Դարձեալ ընդ ինքն)*. Կա՛ եւ ընթերցիր. «Թէպէտեւ արծուի լեցէ, և թէ՛ ի հուչակաւոր խաբեբայից ոք ապաթենացւոց, հարէ՛ք զնա և մի՛ խնայէ՛ք»:

Իղձն. Եւ զա՞յն եւս ասիցէ:

Պիսքեսեր. Կա՛ եւ ընթերցիր. Այլ օ՛ն անդր, երթ ի բաց. քարի՛նք ի պատգամս քո:

Իղձն. Ո՛հ, հէքս եւ թշուառականս:

Պիսքեսեր. Կորի՛ր, եւ այլուր մարգարէա՛ց:

— Ընդ ելանել նորա և ահա հասանէ Մետոն աստեղաբաշխ, քանոն եւ կարակին ի ձեռին, առ ի տեղագծել զնորակերտ քաղաքն, եւ խօսի բանս անպատեհս:

Մետոն. Դամ առ քեզ, զի չափեցից զդաշտս օդոց և բաժանեցից ի վիճակս:

Պիսքեսեր. Եւ ո՞վ ես դու:

Մետոն. Մետոն է անուն իմ, եւ համբաւ ելեալ է զինէն ընդ ամենայն երկրագս և ի կողոնէ:

Պիսքեսեր. Ջի՞նչ է զոր ունիսդ ի ձեռին:

Մետոն. Քանոն է չափելոյ զօդս, և այսու կարակնաւ գծեցից չրջանակ մի, վերուստ ի վայր...

Պիսքեսեր. Շաղակրատ մարդկան չիք աստ տեղի, պարտ է քեզ ի բաց ելանել:

Մետոն. Մաղապուր զերծայց:

Պիսքեսեր. Եւ ընդէ՞ր յամես ի գնալ. ահա որոտան երկինք *(հարկանէ ձա)*. յառաջագոյն ասացի քեզ զայն. ե՛րթ այլուր չափել զանդ...:

— Ապա հասանէ մի յոստիկանաց, զորս հասարակապետութիւնն արձակէ ի հարկահանութիւն, եւ պահանջեն նոքա ընձեռիւնն արձակէ ի հարկատու ազգաց: Ի մօտել նորա՝ լսելի լինին բարբառ, ռայս ի հարկատու ազգաց: Ի՞ր են ասպնջականքն մեր:

Պիսքեսեր. Ո՞ է Սարդանապաղդ այդ:

Հարկահանն. Վիճակաւ ընտրեալ հարկահան՝ նորակերտ քաղաքիդ:

Պիսքեսեր. Ցումմէ՞ գաս:

Հարկահանն. Ցերեսաց ժողովրդեանն Ալթենայ:

Պիսքեսեր. Արդ լուր լինձ, չիք ինչ քո ընդ սահմանս մեր, այլ իրաւախոհ եղեալ՝ տացուք լինչ քեզ և երթիցես խաղաղութեամբ:

Հարկահանն. Երդուեալ ի դիս, հաւանիմ ընդ այդ. զի պարտ է լինձ հասանել ի համախումբ ժողովն որ առաջի կայ մեզ, ի խորհուրդ հաշտութեանն՝ յոր սկսայ խօսել ընդ Փառնակայ՝ ընդ մխում ի տեղակալաց արքային Պարսից:

Պեսքեսեր *(հարկանէ ձեռամբ ընդ ճակատն)*. Ահա զոր խոստացայն քեզ. առեալ զայդ՝ երթիցես բարեաւ, և մի՛ յամեսցես:

Հարկահանն. Եւ զի՞նչ լցէ այդ։

Պիսբեեր. Այս վճիռ է համախուռմբ ժողովոյն վասն փառնակայ։

Հարկահանն. Դու զայր հարկահան իշխե՞ս հարկանել. հաս՛ք վկայք (ելնէ)։

Պիսբեեր. Դէ՛պք նորանչան. մինչչեւ զհմուռնս արկեալ քաղաքիս՝ կանխեն հարկահանք։

— Քարոզն. Եթէ ոք ի բնակչաց նորակերտ քաղաքիս զայր աթենացի թշնամանեսցէ...

Պիսբեեր. Իսկ սա զի՞նչ չազփազփիցէ ընդ էքոտի թըզթեանդ։

Քարոզն. Զհրովարտակս վաճառեմ զաւազանւոյն և զժողովրդեան. նորք են, լցէ՞ ոք զնող։

Պիսբեեր. Զի՞նչ հրաման է հրովարտակին։

Քարոզն. Հպատակել ձեզ կչռոց, չափուց և վճռաց մերոց։

Պիսբեեր. Մնա լնձ վայրկի մի, և ցուցից քեզ զոր մեքն երբեմն ի կիր արկանեմք (և հաբէնէ ընա)։

Քարոզն. Զի՞ գործես։

Պիսբեեր. Եթէ ոչ առեալ զհրովարտակդ ի բաց կորիցես...

Քարոզն (ի թեսաբան ա՛ղբ դարչնել) Զպիսթեեր յատեան կոչեմ, փոխանակ զի զայր աթենացի թշնամանեաց։

Պիսբեեր. Աղէ՛, և դա՞տեալ յանդգնիս երևել։

Քարոզն (դ-ասէգամ դարչնել ի թեսաբան). Եթէ ոք զաւազանին մեր ի բաց վտարէ, փոխանակ պատչաճն մեծապանօք ընդունելոյ...

Պիսբեեր. Տակաւին դեգերի՞ս աստ։

Քարոզն. Դու տուժեսցիս հազար դրամակչիռ։

(Ե- քաղամ անգամ ելամոսք առնեն, և Պիսբեեր ձերն չայս ոտ և ձերն չայն հալածէ, զինչ ոտիկն ձնինել գնաւ ի քաց)։

Թրգմ. ՆՈՑՆ

24

ԷՋՔ ՈՐՓԷՈՍԻ Ի ԴԺՈԽՍ ԵԻ ԵՂԵՐԱԿԱՆ ՎԱԽՃԱՆՆ

Զօրեն, էբր	Ընդ խօլ, ա՛նխել-ը-նե՛ֆ
Ցայգապաւօսն, գնե՛լ ըյ- գե՛ոգ	Գաւիմ, ա՛ղարդ գնա՛լ
Սիճկգ, շո՛ն [պաշտօնեա՛	Վանգ, յոյն

. . . Հէքն Որփէոս անպարտակիր
Փոխանակ առևանգչին իւր ամուսնոյն մոլէր գըժնեայ...
Եւ առեալ վին գոգաւոր՝ բաղմատըխուր սիրոյ սփոփանք՝
Կգքեզ, քա՛ղցր ամուսին, ըզքեզ միայն յափն ամայի,
Կգքեզ, յելս արուսեակին, ըզքեզ ի մուտսըն նըւազէր։
Ինքն ի կիրճսըն տենարեան յանդընդախոր գրունըս մահու՝
Եւ յանտառըն թափ անցեալ սեաւ արհաւրօք մառախլապատ,
Սանդարամետս ի՛ջ ի վիհ, մատեաւ առ պետըն սոսկալի
Եւ առ այն որ ի մարդկան պաղատանաց սիրտ անողոք։

Այլ երգովքըն վըրդովեալ յանդընդական խոր կայենից
Նուրբ ըստուերք եւ ուրուականք լուսատենչիկք ընթանային...
Պակեաւ տունն իսկ, տատասրոսք ներքինք մահու և կորըստեան
Եւ օձիւք կապուտակօք գիսախըռիւքըն կատաղիք.
Կերբեր բերանաբաց սինկըզ սանձեաց գերբեակ որկորն,
Եւ եկաց հողմոյն անիւ չըրջանակին Իքսիոնեան։
Եւ ահա ի վտանգաց քաւեալ բնաւից դառնայր ընդ կրուկ,
Եւ չնորհեալ Եւրիդիկէ գայր եւանէր յօդ արփենի՝
Ըզհետուվք, քանզի օրենս էր զայս տըւեալ Պերսեփոնէ.
Անդէն յանկարծ ափչռթիւն ընդ խօլ կալաւ ըզսիրելին,
—Ներելի արդարև՝ թէ գիտէին ներել գըժոխք —
Ըզտեղի առ և առ դուրս անդ լուսոյն յիւրն Եւրիդիկէ
Ցանըզգաստս, եղո՛ւկ, յոգւոյն պարտեալ առկ զաչըս իւր։
Անդ հոսեալ ճիգըն բոլոր, և անողորմ բըռնաւորին
Դաչինք ցըրեալ, և երիցս հնչեալ բոմբիւն յանդընդոց լիճ։
Ո՞վ և գիս, ճըչեաց նա, գրըռուառս և զքեզ կորոյս, Որփեա.
Ողջ մընա, վարիմ ահա մեծ գիչերաւ պարածածուկ,
Զապիկար բազուկս առ քեզ ձըգելով, ո՛հ, ոչ ևս քոյին։
Ասաց, և յաչացն անդէն զօրէն ծուխ ի նուրբ օդ

Խառնեալ կորեաւ տարագէմ, և ոչ ևս այլ հետս ըզնա,
Որ զբստուերս ըմբըռնէր զուր, և բան բազում կամէր ասել.
Զի՛նչ առնել էր, յո՞ դիմել կրկին կապտեալ ի յամուսնոյն,
Ո՞ր կոծով զսանդարամետս՝ որո՞վ ձայնիւ զդիսըն չարժէր:

Զեօթն ամիս ողջոյն ի բուն ասեն ըզնա յողբս համակեալ
Ընդ բարձու քարաժայռիս, յալիս անչէնն ըմարիմռնեալ,
Եւ ընդ ցուրտ անձաւօք զայս ամենայն յեղյեղելով՝
Ըզվագերս յողոք ածեալ և ըզկաղնիս երդովքն ի ճեմ:
Իբրու սոխակ անձկաբեկ ընդ հովանեաւ կաղամախին
Զորդեկացն ողբայ կորուստ, զոր վայրենին արօրագիր
Ի բունին նըկատեալ՝ չե՛ւ թևաբուսիկ առ և տարաւ.
Իսկ նա լայ զդիշերն ի բուն, ողբերգական ձայնիւ նըւագս
Ցոստ մի նըստեալ զեղգեղէ, չուրջ լընու զվայրն յողբսիմ մրմունջ:
Ո՛չ մի սէր, ոչ հարսանիք ինչ այլ ըզմիտըն հաճեցին.
Շըրջէր նա մենացեալ՝ գյափըշտակեալն Եւրիդիկէ
Եւ զանվաւեր ըզպարգևսըն դըժոխոց աչխարելով:

Ցանձկալի մեծարանացն անարգեալ կոյսք կիկոնուհիք
Ի դից տօնս և ի խընջոյս ցայգապաշտօն Սպանդարմետին
Ըզպատանին գիշատեալ արկին ի գաշտս լայնաձիգս.
Եւ անդ խակ ի ձիւնափայլ պարանոցէն խըզեալ կառափն
Ի գետոյն Հեբրոսի վարեալ ուղխիցըն թաւալգլոր,
Նոյն լինքըն ձայնն և լեզուն ցըրտասառույց գԵւրիդիկէ,
Ի պարզել ոգւոցն, աւա՛ղ, գԵւրիդիկէ կարգայր ըզհէք,
գԵւրիդիկէ գետեզերք բոլոր ընդդէմ կրկնէին վանդ:

Թրգմ. Հ. Ա. Կ. Բ. ՎԻՐԳԻԼԻՈՍ, Մշակականաւ Դ.

25

ՀՐԵՇՀՆ ՀՌՈՎՄԱՅ ԵՒ ԲՈՑԱԿԷՋ ԱՅՐՈՒՄՆ ՓՐԻՍՏՈՆԷԻՑ

Սեստեր, հռոմէական դրամ մը — Հարթարդակ, ցած ու չէրուկ (թեղ)
Անհնարին, չափազանց [(sesterce) — Կամակար, յոժարակամ

Ի վերայ հետս հրդեհ, յարկածո՞ց թէ ի հրամանէ ինքնակալին (Ներոնի) ոչ է գիտել, զի զերկոսին եւս աւանդեն պատմիչք: Սկիզբն ի կողմանէ կրկնոցն առեալ՝ և անդ ի վաճառանոցս այրեցական նիւթոց արագ արագ բորբոքեալ, հողմավար ճարակեցաւ ընդ երկայնութիւն կրկնոցն, զի չէին անդ տունք որմափակք, ոչ մեհեանք պարսպապատք, և ոչ այլ ինչ՝ որ զընթացս հրդեհին խափանէր: Ցետ զհարթարդակս լափլիզելոյ՝ ել ապա ի բլուրս, օժանդակեալ յանձուկ եւ ի ծամածուռ եւ յանկարգ փողոցաց, որպիսիք էին նախնոյն Հռոմայ: Անդ էր լսել զկանանց ահաբեկելոց, և տեսանել զապիկար ի փախուստս և զճիչ կանանցն ահաբեկելոց, և տեսանել զապիկար ի փախուստս հասակ ծերունեաց և զանփորձ մանկտին: Ցամբոխեն բազմութիւնք կէսք անձանց, այլք այլոց օգնէին. զօրաւորք ի թիկունս հասանէին տկարաց՝ ի բաց ածել զնոսա ի հրոյն, կէսք զկայ առեալ, այլք խուճապեալ, արգել եւ խափան ամենայն ուստեք լինէին: Ցաճախ ի հայելն յետկոյս՝ չուրջ պատէր զնոսա հուր ի դիմաց կամ ի կողմանց, և ի խուսել ն այլուր՝ հասանէր բոցն զհետ, ուստի յանհնարին վարանս ըմբռնեալ՝ ոչ գիտելով ո՛ւր խոյս տալ, յո՛ դիմել, խռնէին ընդ ընդ զճանապարհս, և ծածկէին համաստիւռ զանդաստանս. կէսք զամենայն ինչ իւրեանց կորուսեալ՝ աւուրն պարենի կարօտք, այլք առ սէր ընտանեաց՝ զորս չէր կարացեալ նոցա վերծուցանել՝ կամակար զանձինս ի մահ մատնէին, ուր առձեռն կայր նոցա փախուստ, եւ ոչ ոք կարէր գուն գործել ընդդէմ հրոյն:

Ցաւուրս հրդեհին Ներոն կայր յԱնտիոն, եւ ոչ դարձաւ ի Հռոմ մինչեւ ի մերձենալ հրոյն յապարանս իւր. այլ ոչ կարաց վերծուցանել ո՛չ զարքունիս և ոչ զապարանս իւր, և ոչ զվինուածս չուրջանակի: Ցայնժամ ի սփոփումն ժողովրդեան՝ որ խուճապեալ թափառական չրջէր՝ եթաց զդաշտն Արիսի, զձեռակերտս Ագրիպպայ և զիւր իսկ պարտէզս, և ետ կառուցանել ի նոսա ափ յափոյ բնակարանս կարօտելոցն բազմութեան, եւ առնոսա ծել կահ և կարասի յՈստիոյ և ի մերձակայ քաղաքաց. և զվինս ցորենոյ նուաղեցոյց մինչեւ ի սեստերս երիս: Այլ այս ամենայն բարերարութիւնք նորա առ ժողովուրդն եղեն անարգանայն բարերարութիւնք նորա առ ժողովուրդն եղեն անարգասաւորք. զի ի հրդեհել քաղաքին՝ համբաւէր եթէ ելեալ ի տեսարան իւր առնէին՝ զկործանումն Տրովադայ ողբերգաբար նուագեալ էր նորա, զարկածս ժամանակին անցելոցն վաղնջականաց նմանեցուցեալ:

Բայց Ներոնի զաւեր հայրենեացն յօգուտ ի կիր արկեալ, կառոյց իւր ապարանս. ուր ոսկի և ականք պատուականք, վազ

իսկ առ զեղխութեան ի սովորութիւն փոխեալք, չէին լինչ առաւել նորանչանք քան զդաչտս և զլիճս և զանտառախիտ միայնանոցս որք ի միոյ կողմանէ, և քան զլայնածաւալ և հեռատեսիլ աբօտս ի միւսմէ կողմանէ, որոց ճարտարապետք կացին կեղերք եւ Սեւերոս՝ քաջայանդուգն հանճարով մտաբերեալ արուեստակերտել զթողեալս ի բնութենէ անգործ, եւ գանձիւք լինքնակալին յարդիւնս ածել: Բայց ի վայրս այրեցելոց տանց ոչ վարկպարապի եւ անկարգ կառուցան չինուածք, այլ ի կարգ ածեալ փողոցք, արահետք ընդարձակեալ. բարձրութեան տանց չափ սահմանեալ, և բակս ի նոսին. և Ներոն գաւթիթս կամարակապս առաջի նոցա ի գանձուց իւրոց խոստացաւ կառուցանել, պարզեւելով տանուտերաց զերկիրն սրբեալ ի փլատակաց:

Այլ ոչ ճիգն մարդկեղէն, ոչ առատաձեռնութիւնք լինքնակալին եւ ոչ հաշտարար պաշտամունք դից կարացին խափանել զհամբաւն չար՝ որ ի հրամանէ լինքնակալին համարէր լեալ զհրձգութիւնն: Իսկ Ներոն առ ի լռեցուցանել զչարախօսութիւնն՝ զայլս ցուցանէր չարեացապարտս, եւ չարաչար խոշտանգանօք պատուհասէր զայնոսիկ՝ զորս ռամիկն քրիստոնեայս անուանէ: Սոքա ի Քրիստոսէ ուսեալք, որ առ լինքնակալութեամբ Տիբերեայ ի ձեռն Պոնտիոս Պիղատոսի գործակալի մատնեալն էր ի մահ, ունէին զանուանակոչութիւնն: Որք միանգամ խոստովան լինէին զաղանդ իւրեանց՝ այնուքիկ ըմբռնեալ, եւ ըստ խոստովանութեան նոցա բազմութիւն անբաւ՝ ոչ ևս վասն հրդեհին եղեռան, այլ առ ատելութեան ազգի մարդկան դատապարտէին: Ջի ի պատուհաս նոցա յաւելուին եւ ձաղանք. կէսք մորթովք երէոց ծածկեալ՝ խածատմամբ շանց սպանանէին, այլք ի խաչի բևեռեալ կամ այրեցական նիւթովք օծեալ, առ ի լոյս գիշերայնի՝ ի խնարհել տունջեան վառեալ բորբոքէին. որովք Ներոնի զպարտէզս իւր ջահաւորեալ՝ կկրկխական խաղս անդ ածէր ի տեսիլ, մերթ ի ձեւ կառավարի խառն ընդ ռամկին կալով անդ ի գնին, և մերթ ի կառս բազմեալ: Վասն որոյ տեսողացն յուզէին գութք ի վերայ պատուհասելոցն՝ թէպէտեւ վնասապարտից եւ սաստիկ պատժոյ արժանաւորաց. զի ոչ ևս յօգուտ հասարակաց վարէին նոքա ի մահ, այլ անգթութեան միոյ ուրուք ի ճարակ:

Թրգմ. Հ. Ե. ՀԻՒՐՄԻՒԶ

ՏԱԿԻՏՈՍ, Տարեգիրք, Գիրք ԺԵ.

26

ԳԵՐՄԱՆԻԿ ՅԱՂԹԷ ԳԵՐՄԱՆԱՑԻՈՑ

Անարդիլ, խոշոր, անճոռնի
Աւտէ, նշան
Խառնիմ, էօվէլ
Առ եսեղ, թեղուն վրայ
Ձօշ = ձօշան, կոյտ+է ջրոհ
Մեկնակագեն, ընդհ- գնուած
Գիշերախառն, գիշերուան [(ջրտ)
Ախոյեան, յաղթանակ

Կեսարու (Գերմանիկեայ) անցեալ ընդ Վզուրկ գետ, գիտաց յումեքէ ի փախստէից գտեղի ճակատուն, զոր Արմինեայ ընտրեալ էր, եւ զի այլք ևս յազգաց ի մի վայր ընդ նմա եկեալ էին յանտառն նուիրական Հերակլի եւ պատրաստէին տալ գիշերախառն պատերազմ ընդ Հռոմէական բանակին: Հաւատարիմ թըւեցաւ վկայութիւնդ այդ, զի և խարոյկք երևէին, եւ լրտեսք մերձ ևս մատուցեալ անդր՝ գլխովինջ երիվարաց ասէին լսել, եւ զխառնաձայն ամբոխի մեծի յոյժ: Եւ զի մինչչեւ գիմաւրաւեալ ի վտանգն՝ զելս իրացն սահմանելոց էր, կարևոր համարեցաւ հետապօտել զմիտս զօրականին. խորհէր ի գժուարութիւն գիտելոյ զայն ստուգութեամբ, զի հազարապետք և հարիւրապետք սովոր էին գրոյցս հաճոյս քան եթէ զճշմարտութիւն պատմել, զի ապատելոց ի սորկութենէ ծառայաբարոյ էր բնաւորութիւն, զի բարեկամք չողոմէին, զի ժողով եւս եթէ կոչէր՝ զսակաւուց ոմանց բանս երկրորդէին այլք, և զի ոչ այլազգ մարթէր գլխորհուրդս զօրականին գիտել՝ բայց ի ճաշել նոցա մխայնակ անտես եւ անլուր ի զօրապետաց, ուր գյոյս եւ գերկիւղ իւրեանց յայտ առնէին:

Յառաջնումն պահու գիշերոյն եկ նա ի համայարանէն ընդ դուռն գողուզի զանխուլ ի գիշերապահից, միով ևեթ ընկերաւ, մարթ անաստնեղէն արկեալ գիւրև անցեալ ընդ միջնաշաւիղս բանակին՝ գկայ էառ առ խորանօք, և ծանեաւ ստուգիւ զի մեծամեծ էր զօրականին: Քանզի կէսք զաղնուականութիւն նորա զգեցեալ վէին, այլք զվայելչութիւն, առաւելագոյնք զերկայնմտութիւն նորա զհեզութիւն եւ զանյեղլի բնաւորութիւն ի յանձանձանս իրաց կարևորաց եւ ի զբօսանս, եւ ամենեքեան խոստովանէին չնորհապարտ կալ նմա ի ճակատամարտին, եւ ի վրէժ նորա եւ

ի փառս սատակել զնենգաւորս և զխանգարիչս խաղաղութեան:

Դիշերոյն այնորիկ զուարթաբար եղև հանգիստ քնոյ Տերմանիկեայ: Թուէր նմա ի տեսլեան՝ զոհ մատուցանել, և ի ցայտել արեան զոհին զձորձով իւրով՝ միւս այլ գեղեցկագոյն մատուցանէր նմա Աւգոստա հանի իւր: Ցաջալերեալ աւետաւոր գուշակութեամբն՝ զոր և հաւանմայք հաստատէին՝ համախմբեաց զզօրականն, եւ նոցա նախահոգ խոստութեամբ հրահանգս վասն առաջիկայ պատերազմին, և ասէ. Մի՛ համարիք եթէ դաշտաւայրք ևեթ նպաստամատոյց իցեն հռովմայեցւոց զօրականին, այլ և մայրիք և անտառք, եթէ գիտիցէ յօդուտ ի կիր արկանել զայն: Բարբարոսացն ասպարք անարգիլք և աշտէք երկայնաբունք չեն լինչ գիւրակիրք ի թփուտս եւ յանտառախիտս որպէս զտէգ և զտուսեր և զդրահս պատշաճեալս ի մարմին: Յաճախեցէք զհարուածս, ի տէգ նիզակի որոնեալ զդէմս. գերմանացւոց ոչ զրահք են և ոչ սաղաւարտք, և ասպարք իսկ նոցա ոչ երկաթապատք և ոչ ճօշիւք ամրացեալ՝ այլ սղորահիւս, այլ տախտակ նուրբ նկարէն: Առաջին ևեթ ռազմ ճակատու նոցա է նիզակաւոր, այլոց նետս ևեթ մխեալս ի հուր կամ գեղարդունս կարճաբունս կրելով: Մարմին նոցա զժնէատեսիլ սուզ լինչ տալ կայ ընդդէմ յարձակման, չկարեն նոքա ժուժկալել հարուածոց, անզգայք են նախատանաց, անփոյթք հաճոյ լինելոյ զօրավարաց, դասալիքք, փախստեայք, երկչոտք ի ճախողանս, և ոմանհարք իրաւանց աստուածայնոց և մարդկայնոց ի չարդուածս: Եթէ խոնջք ի նաւարկութենէ՝ ցանկայք վախճան առնել աչխատութեան, ի ճակատամարտի պատրաստեալ կայ այն: Մերձ կայք Ալբիս քան ի Հռենոս. անդ վախճան լիցի պատերազմի, եթէ զզօրավար ձեր՝ որ զհետ քաջութեան հոր իւրոյ և հօրեղբօր նկրտի՝ յաղթող ի նմին երկրի կացուցանիցէք. — Ի բանից աստի վառեցաւ եռանդն զօրականին, և փոյթ հարաւ ի պատերազմ:

Անտի և Արմինիոս և զօրավարք գերմանացւոց խրախուսէին զզօրս իւրեանց, և ասէին. Հռովմայեցիքդ, քան զբանակն վարուի վառք, առ ի խուսել ի պատերազմէ՝ յապստամբութիւն մատնեն: Կէսք վիրալից ի թիկունս, այլք յալեկոծութենէ և ի մրրկաց խեղեալք, գան զարձեալ ձայնատուր լինին վրէժխնդրութեան թշնամեաց և սրամտութեան դից, ի նաւս ապաստանեալ և յանդնաց ուղին ովկիանոս՝ զի մի՛ ոք զդէմ ունել կարասցէ կամ հալածեսցէ զնոսա. այլ յորժամ պատերազմ խառնեսցի, ոչ օգնեսցեն պարտելոց հոգմք եւ թիակք: Ցուշ լիցի ձեզ ազահութիւն նոցա, անպիտանութիւն եւ գոռոզութիւն. զի՞նչ այլ ինայ ձեզ, բայց պաշտպանել ազատութեան կամ մեռանել նախ քան զգերութիւն:

Այսպէս նոցա յեռանդն պատերազմի զզօրս վառեալ՝ իջուցին զնոսա ի դաշտն՝ որ ընդ Վզուրկ և ընդ բլուրս ընդարձակի և անձկանայ ըստ չրջանի գետոյն և ըստ լերանցն առաւել կամ նուազ տարածութեան: Ցառնէր յետկուսէ անտառ բարձրուղէշ, այլ ընդ բուռն ծառոց երկիրն ի միջի էր ազատ: Բանակն բարբարոսաց գտեալ էառ ի գիշերի անդ ի մուտս անտառին: Իսկ կարգ չուոյ բանակին մերոյ էր այս. օժանդակ գունդք գալլիացւոց և գերմանացիք յառաջոյ, զհետ նոցա ազեղնաւորք հետեւակք. ապա լեգէոնք չորս, և Գերմանիկ երկոքեամբք գումարտակք. ապա մեծ սայլից և ընտիր հեծելազնդաւք. և ապա այլ ոմանք թիկնապահ զօրաց և ընտիր հեծելազնդաւք. և ապա այլ եւս քառեակ լեգէոնք, հետեւակազօրն մեկնակազէն, և ազեղնաւորք հեծեալք՝ ընդ այլս ի նիզակակցաց: Կազմ և պատրաստ կայր զօրականն ճակատել ի նչան մարտի:...

Ցայնմ վայրի նչան բարեգուշակ տեսեալ զօրավարին՝ արծուիս ուրի, որ յանուանէ կոյս թռուցեալ մտանէին անդր, զոչեաց մեծաձայն առ զօրականն. Օ՛ն, երթայք զհետ հռովմէացւոց մեծամարտն առ զօրականն. Օ՛ն, երթայք զհետ հռովմէացւոց կանացդ հաւուց, բնիկ դից լեգէոնացդ: Եւ նոյնհետայն հետեւակազօրն յառաջ խաղաց, մինչդեռ այրուձին վազ արձակեալ հարկանէր զթշնամին ի թիկանց և ի կողաց: Դէպք նորահրաչ. երկոքեան թևք թշնամեաց տարագէմ փախստականք՝ որք յանկոքին թևէ թշնամեաց տարագէմ փախստականք՝ որք յանտառն անդ էին՝ զիմէին ի դաշտն, եւ որք ի միջավայրէ երկոցունց թևաց ի բլուրս կային՝ խուժեցին ի վայր, եւ նչանաւոր ի նոսա Արմինիոս՝ ձեռօք ձայնիւ և վիրօք իւրովք զօրացուցանէր զմարտն: Անկաւ նա ի վերայ զնդի ազեղնաւորաց, և յաջող

ժամէ աւուրն մինչև ցգիշեր անկանէին թշնամիք, եւ ծածկէը երկիր զինակամբք և զինուք չուրջանակի ցբիւր մի քայլ։ Գոան ընդ կապուտն և չզթայք, զորս թշնամիք վասն Հռովմայեցւոց էին բերեալ գերեվեաց՝ աներկբայք ընդ յաղթութիւն։ Անդէն առ եռեղ ինքնակալ զՏիբեր կարգացին զօրքն, և ամբարձեալ հողաբլուր՝ կանգնեցին ի նմա ախոյեան ի զինուց, արձանագրեալ ի ստորև զանուանս պարտելոց ազգաց։

Թրգմ. ՆՈՑՆ — ՆՈՑՆ, անդ, Բ.

27

ՆՇԱՆՔ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ

Հօտի, ձիոց, եւ մեղուաց

Գլքոր, ընդ. (ֆր. noix de galle)
Խուճապ, յայն հանել (+ընդ +ընդ)
Խայթահար (բոյ.), խայտող ջոջ
Գզաք, քոյթ
Ի բաց պարուրել, ընդ գլխին կըռ-
նելոյ, ընդ հանել [ծիս
Տերեփուկ, վայրի խոտ մը (ֆր. cen-
Որ զի, որովհետև [taurée)
Ցուրաս (լինել), հրաժարիլ
Կոն վրացի, դեղձակ (ֆր. ellébore)
Շուշեմ, ընտելանալ
Փրփուր արծաթոյ, +արծաթյանկ
Հրաս, պաճուճիչ ((ֆր. litharge)
Անգժաս, +ագիճան խեժը (galba-
Թաւուն, հնացող, ընդարձիլ [num)
Կտուրք, ոչխար խոշորը

Ա

Եւ զախտիցն ուսուցիչ ըզմեզ պատճառս և զնըշանակս։
Քոս չարակեղ հարկանէ զհօտն՝ ուր ցուրտ անձրև խորամուտ
ի մարմինն անցանէ թաւի և կարաձմեռըն սառնասոյզ,
կամ յետ կըտրոց ըզնոքօք եթէ մածնու քիրան անլըւայ
եւ ցըտեն ճոցա զանգամանըն խայթահարք քըսամընափուշք։
Վասն որոյ ֆալցր ի վրտակս հովիւք զբուլոր խաչն ողողեն,
եւ խոյն գլզգաթուն թուրմ ի գետ անգըր մըխըրճի
եւ ընդ հոսանս յորձանաց թողեալ խաղայ գընայ ի լիւղ։

Կամ տոգորեն ըզխուզեալ իրանն ի ժանտ մըրուր ձիթոյ՝
Զարծաթոյ խառնեալ փրփուր և ըզծըծումբըն կենդանի,
Եւ ձիւթ խղակաև և խուզային մամ ճարպալիր,
Մրկնասոխ և վըրացի կոճըս ծանուցնս և կուպըր սեաւ։
Սակայն չիք լինչ առաւել ցաւոցըն դիւր երազահաս
Քան եթէ ոք երկաթով պատառիցէ զխոցոյն գըլուխ։
Թէ ի վէրսըն խաչնարած ձեռն արկանել բժըշկական
Հրաժարեալ՝ և զանենայն ի դից նըստեալ հայցէ զբարիս։
Իսկ իբրև ցաւն ի ներքին ոսկերան հօտին անկեալ մոլի,
Եւ տենդ տապախառն առնէ զանդամսըն հալ և մաշ,
Լաւ իցէ փարատել ըզբորբոքեալ հրատին եռանդն՝
Երակ արիւնաբուխ պըճղանն ի ծագս հատանելով...
Զոր օգտեալ և ընդ ախորժ մըտեալ ըստէպ ընդ հովանեաւ
Կամ ըզծայրըս հեղգաբար զբուսոց կըրծել տեսանիցես,
Եւ վերջոտնեալ՝ կամ դաշտին ընդ արածելն անկեալ ի մէջ՝
Մեկուսի կայ և մընայ՝ անազանեալ ի գիշերին,
Երկաթով՝ զեղեռն ի բաց վաղվազակի հա՛տ պատառեա,
Զև ընդ ամբոխն անըզգոյշ ճարակ զբաեալ ախտին չարի։

Թրգմ. Հ. Ա. Կ. Բ. — ՎԻՐԳԻԼԻՈՍ, Մշակականք, Գ.

Բ

Անկանի վատաբախտիկ գոռ երիվարըն քաջայաղթ
Ըզխոտ և զախորժակսըն մոռացեալ, յաղբերց յուրաս,
Եւ ոտիւքըն հապ ըստէպ դափը հատանէ, ականջըն ի կախ,
Եւ անդ քիրան յեղյեղուկ, և այն՝ ցըրտին յօրհասականս.
Մորթ խըռուեալ երիթացեալ բիrs ի զընին ձեռին խուրընայ՝
Զայսոսիկ տան նըշանս ի սկիզբն աւուրց նախ քան ըզմահ։
Իսկ եթէ այնուհետև սկըսանի ախտըն զայրանալ,
Անդ աչք բոցագոյն, և հատկըտեալ մերթ ի խորոց
Շուռնչ թասուն հառաչակուռ, երկարաձիգ հեծեծանօք
Ներքին կուշտք ձըկտեալ պըրկին, արիւն ընդ քիթս ընթանայ
Եւ լեզուն հոծեալ խընու զանցս հագագին՝ կըցեալ ի քիմսն։ [թուխ,
Օգնեցին Սպանդարմետին մատուցակեալ ծորանք եղջերք,
Այդ ևեթ երևեալ ի հոգեվարսըն փըրկանակ.
Այլ այդու ևս ապա եհաս եղեռն, և մոլեգնեալք

Բորբոքէին, և լինքնին, զառն օրհասին առ դուրս հասեալ,
Խածատեալ մերկ ատամամբք յօշոտէին զանդամս իւրեանց։

Թրգմ. ՆՈՑՆ ՆՈՑՆ, անդ, Գ.

Գ

Իսկ եթէ, որ զի կենցաղ ըզմեր վըտանգս ետ և մեղուաց,
Ախտիւ դառնութեան ծորեալ մարմնոց թառամեացուն,
Զոյր անչուշտ ունիցիս նըշանակօք ծանօթս առնուլ,
Առժամայն խօթիցըն մոյնք այլագունեալ՝ խամրին երեսք
Սոսկալի մաշարայիւ, անդ ի գաւթաց մարմինս յայնժամ
Հանեն դիակնացեալս և յուղարկեն ողորմագին.
կամ ոտն ի յոտն ըզմխիթամբք յեռեալ կախին կարգաւ առ դուրս,
կամ ի ներքըս որմարգել տանցըն չուշեն առհասարակ,
Նըքթեալք առ քաղցի ւ՛ ընդարմացեալք կարկամ ցըրտով.
Լու լինի անդ թաւ հնչիւն և մըրմընջեն յերկար նուագօք...
Աստանօր բուրմունս այրել զանգրժատի յորդորեցից
Եւ ընդ ցընցուղ եղեգնեայ ծուռանս ի ներքս ամալ մեղու,
Ախորժիւք ըզպարտասեալն յընտանի խիւս հրաւիրելով։
Լաւ իցէ խառնել ի նոյն և զգըլխորոյ լեսեալ ճաշակ
Եւ վարդ չոր կամ քաղցու ի հուր բազում պարարտացեալ,
Կամ ողկոյզըս չամչի առ ի փսխթեան այգեստանէն,
Եւ զկեկրոպեանըն ծոթոր և զտերեփուկ բազմաբուրեան։
Է և ծաղիկ լինչ ի մարգս՝ առ երկրագործօքն ցինկ անուն,
Դիւրագիւտ բոյս և առձեռն ոյց միանգամ ելցեն ի խոյզ.
Զի անտառ մեծ ամբառնայ ի մէջէ ևեթ փընջէ,
Ինքն ոսկի, այլ ի տերևսն որ խուռներամ զիւրև սըփռեալ՝
Կապուտակ մանուշակին ծիրաներփնեան հարկանի փայլ։
Զարմատըս սորա՝ յանուշահոտ եփեալ զինւոյ
Եւ լիով սակառեօք մատո նոցա ճարակ առ դուրս։

Թրգմ. ՆՈՑՆ ՆՈՑՆ, անդ, Դ.

28

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԿԻՒՐՈՍԻ

Գալ ընդ զարդ, ղարդէ ձէ ըմբռնել
Գրաս, ձերբակալ [խուզել
Աճառ, յիւր ձրայէ ղարդ
Խառնելիք, ըմպելի (գինի)
Երփնաներկ, գոյնզգոյն ներկեալ
Ցանախագուբ, գորշավարդ
Պախճաւանդ, կոշտէ ղարդ
Թալանալ ի ծաղուէ, խնդալեն
Ողողել, ցօղել [մարել
Խաղալով կամ ընդ խաղ, հաճախակի
Ճաշակ, գաւառ [պակեղով
Կամել ընդ... հաճել, հաճոյել (բառնի
Ամալ ծարիր, ծարկէ տալ [մը)
Փաշտաման, ներքնաման, վէշտ

Կիւրոս մինչև ցերկոտասան ամն՝ կամ թէ սակաւ լինչ աւելի՝ նովին խրատու և խմաստութեամբ խրատեցաւ, և քան զայն ուսանէր զայն որ արժանն լինչ էր, եւ բարւոք եւ առաքինութեամբ զիւրաքանչիւր պատշաճան գործէր։

Կոչեաց Աժդահակ զիւրոյն դուստր և զնորին որդի, զի ցանկացաւ տեսանել զնա, քանզի լսէր իսկ զնմանէ թէ բարւոք և գեղեցիկ է։ Եւ Մանդանէ լինքնին ել չոգաւ առ հայր իւր և ունէր զԿիւրոս զորդի իւր ընդ իւր։ Իբրև փութանակի երթեալ հասանէր, և ի միտ առնոյր Կիւրոս եթէ մօրն հայր է Աժդահակ, իսկ և իսկ վաղվաղակի, քանզի իբրև որդի յաճախադոյն գութ էր ի բնէ, ողջոյն ետ նմա, զոր օրինակ յառաջագոյն սըննդակից ոք կամ բարեկամ ողջունիցի։ Եւ ետես զնա ընդ զարդ եկեալ և ամացեալ ծարիր յաչս և յերփնաներկս սնգուրեալ և զգեսան յօրինեալ և զգանգուրան, որպէս օրէնք էին Մարաց.— քանզի այս ամենայն մարական է, և ծիրանի պարեգօտկունքն և զրատքն և քայտքն ի պարանոցի և ապարանջանք ի ձեռս և պախճաւանդքն եւ լանջապեղ կամարք. իսկ Պարսից եւ այժմ իսկ ի տունս ձորձք յոռիք են և կերակուրք խոտանք—։

Արդ տեսեալ զզարդ հաւուն եւ հայեցեալ ընդ նա առէր. Մայր, իբրև զի՛ գեղեցիկ է հաւս։ Եւ մօրն հարցեալ զնա՝ թէ մա՛ քան զո գեղեցիկ թռուիցի, հա՞յրդ եթէ սա։ Պատասխանի տայր կիւրոս. Մայր, քան զամենայն պարսիկս իմ հայրն վայելուչ և

գեղեցիկ է, բայց քան զամենայն Մարս, որչափ ես տեսի ի ճա-
նապարհս և ի դրունս, կարի հաւս իմ գեղեցկագոյն է:

Ողջոյն տայր նմա Աժդահակ և ազուցանէր պատմուճան
գեղեցիկ, և քայտամանեկօք և ապարանջանօք մեծարոյ զար-
գարէր, և եթէ ուրեք հասանէր գնալ՝ յոսկեսանձ երիվարի վերայ
չրջեցուցանէր (ոսկւովք զարդուք ականակապ աճառօք), որ-
պէս և ինքն սովոր էր երթալ: Եւ Կիւրոս քանզի մանուկ էր և
ընդ զարդ կամէր, ուրախ լինէր ընդ պատմուճանն և խնդայր
յորժամ ուսանէր յերիվար հեծանել. քանզի ի Պարսից աչխար-
հին վասն դժուարին լինելոյ և զերիվարան բուծանել և ձի վա-
րել, զի լեռնային է աչխարհն, եւ երիվար անգամ տեսանել
անօսր էր:

Յորժամ ընթրիս ուտէր Աժդահակ հանդերձ դստերաւն և
Կիւրոսիւ, իբրև կամէր թէ ախորժելով կերիցէ զընթրիսն մա-
նուկն, զի մի տան խորտակացն տենչանայցէ, ած առաջի նորա
սկաւառակս և պէսպէս ազգի ազգի համեմանս և խորտիկս: Իսկ
զԿիւրոսէ պատմեն ասել այսպէս. Ով հաւ, քանի՛ աչխատու-
թիւն է քեզ յընթրիսն fում, թէ հարկ լիցէ քեզ ի բնաւ իսկ ի
սկաւառակսն ձգել զձեռս և ճաչակել յազգի ազգի խորտակաց
այսի: Ասէ Աժդահակ. Իսկ արդ զիա՞րդ, ո՞չ քան զՊարսից ըն-
թրիսն բարւոք թուիցին քեզ ընթրիքս: Եւ Կիւրոս ասեն տալ առ
այն պատասխանի՝ թէ Ո՛չ, հաւ, այլ յոյժ իսկ լոկ և վարկպա-
րազի առ մեզ ճանապարհ է առ յագենալ՝ քան առ ձեզդ: Քանզի
զի զմեզ հացիկն և միսն յագեցուցանէ, և դուք ի նոյն փու-
թայք ընդ մեզ, և ընդ բազում իմն արահետս ի վեր և ի խո-
նարհ յածիք չրջիք մոլորեալք թափառական, և հազիւ եկեալ
հասանէք յոր մեք վաղագոյնն հասաք:

Ասէ Աժդահակ. Այսուհետև, ով մանուկ դու, գոնէ միս
կեր զի զօրագոյն երթայցես ի տուն: Իբրև զայս ասէր բազում
պատրուճակս երէոց և զգօն անասնոց բերէր առաջի. և Կիւրոս
իբրև եառս միս բազում. Տա՛ս լինձ, ասէ, ով հաւ, զայս ամե-
նայն միս, որպէս լինչ լինձ կամ լցէ, արկանել զնոսա ի կիր:
Ասէ. Երդուեալ իմ յԱրամազդ. չինէն տուեալ քեզ, մանուկ
դու: Յայնմ վայրի առեալ Կիւրոսի զմիսն՝ տայր ցայնոսիկ որ
չուրջ զհաւուն ի սպասու կային. և ցիւրաքանչիւր ոք ասէր՝ թէ
Քեզ այդ, քանզի մտադիւրութեամբ ուսուցանես լինձ յերիվար
հեծանել. և քեզ, զի սուսեր եառուր լինձ, քանզի այժմ զայս

լինչ ունիմ. իսկ քեզ, զի հաւուս քալ դարման տանիս. և քեզ,
զի մեծարանս գնես մօր իմոյմ: Զայս առնէր մինչև ետ զամե-
նայն զմիսն զոր առ:

Ասէ Աժդահակ. Շակասայ մատուռակի՝ զոր ես առաւել
մեծարեմ՝ չտա՞ս լինչ: Եւ Կիւրոս եհարց համարձակութեամբ իբ-
րև մանուկ զի ոչ լինչ կասկած կամ կարծիս ի մոլ ունէր, թէ
Ձմէ՞ կամ ընդէ՞ր, հաւ, դմա այդպէս չուք գնիցես: Աժդահակ
խաղալով ասէ. Ջտեսանիցե՞ս, զիա՛րդ զեղեցիկս մատուռակիցէ
և պատչաճ կերպարանօք: Հրաման տուր, ասէ Կիւրոս, և լինձ
տալ զբաժակն, զի և ես բարւոք խառնեցից [հեղից] քեզ ըմպելի
և զմիտսդ հաճեցից, եթէ կարիցեմ: Եւ հրամայեցաւ տալ: Իսկ
Կիւրոսի ի ձեռն առեալ զբաժակն՝ ազնուագոյնս ողողէր, զոր
օրինակ տեսեալ էր նորա զՇակաս, և այնպէս յօրինեալ գկեր-
պարանն՝ փութով և պատչաճութեամբ մատուցեալ տայր զտաչ-
տըն հաւուն, մինչև մօրն և Աժդահակայ ի ծաղուէն թալանալ:
Եւ Կիւրոսի իսկ ծաղու ընթացեալ առ հաւն, և միանգամայն
ընդ համբուրելն ասէր. Ով Շակաս, կորեար մերժեցար, արկա-
նեմ զքեզ ի պատուոյ այսի քումմէ, զի այլովք բազմօք քան
զքեզ ազնուագոյն մատուռակիցեմ և զգինին ոչ ըմպիցեմ: —
Զի թագաւորաց մատուռակք յորժամ զտաչտն մատուցանիցեն,
հանեալ ի նմանէ ի ճաչակ անդր յահեակ ձեռն հեղեալ ըմպեն,
զի մի աչողեսցի նոցա եթէ դեղ խառնիցեն —:

Ցետ այնորիկ ասէ ընդ խաղ Աժդահակ. Զի՞ է, Կիւրոս,
զի այլով ամենայնիւ նմանեցեր Շակասայ, բայց զգինիդ չար-
բեր: Զի երկեայ, ասէ, թէ գուցէ դեղ իսկ խառնեալ լիցէ ի
խառնելիսն. զի յորժամ հացկերոյթն առնէիր բարեկամաց յա-
ւուր ծննդոց, ստոյգ ի վերայ հասի եթէ սա ձեզ դեղ խառնէ:
Եւ ի՞նր, ասէ, զիտացեր զայդ մանուկդ: Քանզի տեսի, ասէ,
զձեզ զի և մօք և մարմնովք ձերովք սխալակեալ էիք. զի
նախ զոր չտայք վեզ մանկտւոյ գործել՝ զայն դուք առնէիք.
քանզի ամենեքին իսկ միանգամայն ճչէիք, և իմանայիք ոչ
զմիմեանս, եւ երգէիք եւս յաճախ ծաղրալից կերպարանօք.
այնմ որ երգէրն չլսէիք, բայց երգնուիք եթէ քալ նուագիցէ:
Պատմէր իւրաքանչիւր ոք ի ձէնջ զիւրոյ անձինն գօրութիւն.
յորժամ յառնէիք կաքաւել, ոչ եթէ կաքաւաձև լինչ զոտս բա-
խել՝ այլ և ոչ թէ կալ իսկ ուղղորդ կարէիք. ամենևին իսկ
յապուշ միտս հարեալ էիք. դու մոռացեալ եթէ թագաւոր լիցես,

և այլքն՝ եթէ դու իշխան ես: Աժդահակ ասէ. Իսկ քո հայրն յորժամ ըմպիցէ՝ ո՞չ արբենայ: Ո՛չ, ասէ: Այլ ի՞նչ գործէ: Ի ծաւրաւոյն դադարէ, և ոչ այլ ինչ փաչաման կրէ. զի ոչ եթէ որպէս ինձ թուի, ով հաւ, Շակաս մատռուակ է նորա:

Այսպէս ուրախ առնէր զնոսա ի վերայ ընթրեացն, և զգեբեկ թէ ազգ լինէր նմա թէ կարօտ լինէ իւիք է կամ հաւն կամ մօրն եղբայրն, դժկամակ լինէր եթէ այլ ոք աճապարէր զնոյն առնել. զի ուրախ լինէր կիւրոս եթէ որչափ ինչ ձեռնհասն էր, պաշտօն առնել նոցա:

Յորժամ կազմ և պատրաստ լինէր Մանդանէ գնալ մխւանգամ առ այր իւր, աղաչէր զնա Աժդահակ զկիւրոս թողուլ: Եւ ցկիւրոս ասէ. Որդեակ, եթէ առ իս մնայցես, ի բուրաստանն զգազանն քեզ տաց, և զայլ ազգի ազգի երէս ժողովեցից, զորոց դու իսկ և իսկ, յորժամ ուսանիցիս երիվար արշաւեցուցանել, զնես պնդիցիս, և նետիւք և աղեղամբք տապաստ արկանիցես, որպէս և աւազ որեարն: Նաև մանկտի ևս տաց քեզ՝ խաղալ ընդ նոսա, և այլ զի՛նչ և կամիցիս՝ ասիցես ցիս և ոչ վրիպեսցիս: Զայս իբրև ասաց Աժդահակ, եհարց մայրն ցկիւրոս՝ թէ զո՛ր առաւել կամիցի, մնա՛լ թէ ելեալ երթալ: Նա ոչ դանդաղեաց, այլ ասէ վաղվաղակի թէ կամիմ մնալ: Մխւանգամ հարցեալ ի մօրէն՝ թէ ընդէ՞ր. ասէ. Ի մերում աշխարհին քան զամենայն հասակակիցս համարիմ ազնուագոյն և յաղեղն և ի նետ. եթէ ասա զիս թողուցուս և ուսանիցիմ յերիվար հեծանել, ի գալ խմում այսրէն ի Մարս՝ չանացայց զօրավիգն լինել հաւուս, եղեալ իսկ քան զամենեսեան քաջ այրուձի ազնուագոյն:

Թրգմ.

Հ. Յ. ԴԱՔՐՃԵԱՆՑ

29

Ա.ԲՐԱԴԱՏ
ԵՒ
ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ԿՆՈՋ ՆՈՐԱ ՊԻՒԹԻԱՅ

Ցախստարակաց, բնականէն
Գարգմանական, ցեղական (սահմանադրէ)
Սամիխ, ընկեր (կառէ)
Աշխար դնել, ուղեել
Երդմնի լինել, երդումնուել
Դուն ինչ, նուաղ
Անձին առնել, ինքնին սպանանել
Վազել, ցատկել
Գոգել, ըմբել
Գաւառական, հայրենական

Ա.

Կիւրոս էարկ վիճակս, և Աբրադատայ արքային Շօշանցւոց եւ վիճակն՝ որպէս յանձին կալեալ էր, և յարեաւ ընդդէմ Եգիպտացւոցն:

Նորա էին կառք չորից սամեաց և ուղթ երիվարաց մեծապայծառ զարդարեալ: Եւ քանզի կամէր զկտաւն զրահան՝ որպէս նմա Պանթիա ոսկի սաղաւարտ վողվողեալ, և բազկաց արկանելիս և ապարանջանս վասն ձեռացն և պարեգօտ ծիրանի պըճղնաւոր ի ներքոյ և գարգմանակ ներկեալ կապուտակ երկնագոյն նարօտուք. զայս ամենայն գործեաց գաղտ յառնէ իւրմէ՝ չափեալ զչէնսն նորա: Տեսեալ առնն զարմանայր և հարցանէր ցՊանթիա. Ով կին դու, զքո զարդդ հատեալ՝ զէ՞նս լինձ գործեցեր: Եւ ասէ Պանթիա. Սակայն ո՛չ նոքիմբք որք մեծապինքն էին, զի դու լինձ, եթէ այլոց երևեսցիս որպիսի ոք լինձ թուիս թէ լցես, մեծ իմն զարդ լինիցիս: Իբրև զայս ասէր, զչէնսն ագուցանէր. և թէպէտ ծածկել ևս չկամայր, արտասուք ընդ այտսն վիժէին: Իսկ Աբրադատ, քանզի և յառաջն արժանի տեսանելոյ էր, յորժամ նովին զինուք վառեցաւ՝ ևս զեղեցիկ և լուսաւոր երևէր, զի յախտարակաց զեղեցիկ էր. առեալ ի կառավարէ անտի զկառան՝ պատրաստ լինէր ի կառն ելանել:

Ցայնմ վայրի Պանթիա հրաման տուեալ մեկնել ամենեցուն որ մերձն կային, խօսէր. Ով Աբրադատ, եթէ այլ ոք երբեք ուրեք կին զիւր այրն առաւել քան զիւր անձն մեծարեաց,

թուի լինձ ի միտ առնուլ քեզ, եթէ և ես մի ումն ի նոցանէ եմ... երդմնի լինիմ յիմ և ի քո գուբեն՝ թէ կամիմ ընդ քեզ՝ յորժամ այր քաջ լինիցիս առհասարակ ի հող մտանել քան ընդ քեզ ամօթալից կեանս կալ: Եւ Կիւրոսի մեծ լինչ չնորհս պարտիմք, զի որ գերիս էի ի՛ւր ընտրեաց զիս, և ոչ աղախին կամեցաւ ստանալ զիս, և ոչ ազատակին անարգութեան անուամբ, այլ պահեաց զիս քեզ իբրև զկին եղբօր: Նա զայս լինչ խօսեցաւ. իսկ Աբրադատայ զարմացեալ ընդ բանն՝ ձեռն զգլխով [նորա] արկանէր և հայեցեալ ընդ երկինս՝ յաղօթս եկաց այսպէս. «Սրա՜ մազդ մեծ, տուր լինձ Պանթիայ արժանի այր երևել, և Կիւրոսի արժանաւոր բարեկամ՝ որ պատուեացն իսկ զմեզ»: Եւ նա զայն խօսէր ընդ դրունս աթոռոյ կառացն: Իբրև յետ ելանելոյ նորա փակեաց զդուռնն կառավարն, քանզի չկարէր Պանթիա այլազգ լինչ այնուհետև համբուրել զնա, զդուռնն համբուրեաց: Եւ յառաջեալ երթային կառքն, իսկ նա գաղտագողի երթեալ հասանէր առ նա, մինչև դարձեալ ի բիկուես կոյս և տեսեալ զնա Աբրադատայ՝ ասէր. Քաջալերեաց, Պանթիա, ողջոյն ընդ քեզ, ե՛րթ: Ապա առեալ զնա ներքինեացն տանէին զնա ի դեսպակն, և նստուցեալ զնա ի զահոյն՝ ծածկեցին վրանաւն:

Թրգմ.

Հ. Յ. ԴԱՓՐՃԵԱՆՑ ՔՍԵՆՈՓՈՆ, Խրատ Կիւրոսի, Դպր. Ջ. դ.

Բ

Կիւրոսի կոչեցեալ զոմանս ի սպասաւորացն որ անդ կային, Ասացէք լինձ, ասէ, զոգէք, եաե՞ս ոք ի ձէնջ զԱբրադատ, քանզի զարմացեալ եմ, զի որ յառաջն չաճախէր առ մեզ, այժմ ոչ ուրեք երևի: Ետ պատասխանի ումն ի սպասաւորաց անոլ՝ եթէ Տէր, չէ կենդանի, այլ ի ճակատուն մեռաւ, արկեալ զկառն ի մէջ եգիպտացւոցն. իսկ այլքն՝ բաց յընկերաց նորա՝ խոտորեցան որպէս պատմեն, յորժամ զկարգս (զվաչոս) եգիպտացւոցն տեսին. և այժմ ևս, ասեն, թէ կին նորա եբարձ զգլխակն և եդեալ ի դեսպակ անդր որով լինքն գայր, եբեր զնա այսր ուրեմն առ Պակտոլոս գետ. և զներքինեացն և զծառայիցն նորա, ասեն, փորեալ ի վերայ բլրի իրիք դիակալ տապան վախճանելոյն, և զկնոջէն պատմեն՝ թէ ի գետին նստիցի և զարդարիցէ զայրն իւրով զարդուքն և զգլուխն ի ծնգացն վերայ ունիցի: Զայս իբրև լուաւ Կիւրոս, հար զկոշս իւր, և իսկ և իսկ վազեալ յեբիվարն առեալ հազար հեծեալ՝ երթայր ի սգոյ տեղին: Հրաման տայր Գադատայ և Գովբրիայ զոր ինչ կարիցեն առնուլ զարդ գեղեցիկ առն բարեկամի վախճանելոյ՝ առեալ զհետ պնդեացին: Եւ որ ոք ունէր հօտս և անդեայս և երիվարս՝ ընդ իւր տանիցի, և այլ ևս բազում խաչինս ուր և համարիցի զնա լեալ, զի զենցէ Աբրադատայ: Իբրև եհաս զկինն ի հող նստեալ և դիակնն եղեալ կայր, արտասուեաց ընդ վիշտն և ասէ. Ոհ առաքինի ոգի, գնացե՞ր թողեալ զմեզ. և բուռն եհար զաջոյ ձեռանէ նորա, և զայն սուսերաւ ի բաց հատեալ էր եգիպտացւոցն: Զոր տեսեալ Կիւրոսի՝ առաւել ևս ի խոր խոցէր, և կինն ճիչ բարձեալ գուժէր, և առեալ ի Կիւրոսէ՝ համբուրեաց զձեռնն, և միւսանգամ որչափ մարթ էր ի միմեանս յարեր և ասէր. Եւ այլ ևս անդամք նորա նոյնպէս են, Կիւրոս. այլ զի՞ պիտոյ իցէ քեզ տեսանել. զիտեմ եթէ վասն իմ կրեաց լինքն զայսպիսի վիշտս, թերևս և ոչ գուն լինչ և վասն քո, ով Կիւրոս. զի ես յիմարս ստէպ քաջալերեցի զնա ա՛յսպէս իսկ առնել զի քեզ բարեկամ ընտիր երևիցի. գիտեմ թէ լինքն չածէր լինչ զայն զմտաւ՝ թէ զի՛նչ գործ գործիցէ, այլ թէ զի՛նչ գործիցէ զի ի քէն չնորհս գտանիցէ: Արդ նա առանց պարսաւանաց վախճանեցաւ, և ես որ քաջալերս իսկ ետուս նմա, նստիմ առ նմին կենդանի:

Կիւրոս վայր մի լռիկ արտասուս արկանէր, ապա բարբառէր. Սա, ով կին, զեղեցիկ վախճան կալաւ, քանզի յաղթուեթամբ վախճանեցաւ. բայց գուս զսոսա առեալ յինէն զարդս ետուս զնա... և ապա ասէ. Գիտասջիր թէ և ոչ յայլոց ևս պատուոց անմեծար լինիցի. այլ և բազումք յիշատակարան ըստ ձերում արժանի գրոչեացեն և զենցեն ի վերայ նոցա որպէս ի դէպ իցէ առն քաջի. և դու, ոչ թափուր լինիցիս, այլ ես քեզ վասն զգաստութեանդ և ամենայն քաջութեանդ մեծարանս եղից, և կացուցից զոք որ տարցի զքեզ ուր ուրեք և կամիցիս. միայն յայտ արա առ ա՛ ոք ախորժիցես երթալ: Եւ Պանթիա ասէ. Քաջալերեաց, ով Կիւրոս, ոչ թագուցից ի քէն՝ թէ առ ա՛ կամիցիմ երթալ: Իբրև զայս խօսեցաւ՝ Կիւրոս ի բաց չոգաւ ո՛ղորմեալ ի վերայ կնոջն՝ թէ յորմէ՛ առնէ զրկեցաւ, և ի վերայ առնն՝ թէ որպիսի՛ կին եթող և ոչ տեսանիցէ: Իսկ կինն հրամայեալ ներքինեացն ի բաց գնալ, մինչև, ասէ, ես աչխար եղեալ լայցեմ զնա որպէս կամիցիմ. և դայեկին ասէր՝ թէ Մնա՛. և պատուէր ետ նմա՝ թէ յորժամ մեռանիցի՝ զնա և զայրն միով

հանդերձիւ պատիւոյ: Իբրև չատ ազաչեաց դայեակն՝ մի՛ առնել զայն, և ոչ ինչ օգուտ լինէր, և դժկամակ լեալ զնա տեսանէր, նստաւ գլալ հարկանել: Նա, քանզի զդաշոյնն յառաջագոյն պատրաստեալ էր, մխեաց յանձն իւր, և զգլուխ իւր ի վերայ բարձից առնն եդեալ մեռանէր. և դայեակն սուգ առեալ զերկոսեան պատէր, որպէս պատուէր տուեալ էր Պանթիայ:

Կլեոբոս իբրև զգայր զգործ կնոջն, զահի հարեալ չոգաւ, եթէ կարիցէ օգնել ինչ: Իսկ ներքինեացն տեսեալ զԼիրսն որ եղեն և երեք ներքինիք էին, հանեալ և նոցա զդաշոյնն ինքեանք անձանց առնէին, կացեալք ի տեղւոջն յորում հրամայեաց նոցա: Եւ այժմ ևս ասեն թէ յիշատակարանն կայ կարկառ լեալ մինչև ցներքինիսն և ի վերայ վերնոյ արձանին առնն և կնոջն անուանք գրոչմեալ կան ասորի գրով, եւ ի խոնարհ՝ պատմեն լեալ երիս արձանս յորոց վերայ գրեալ կայ. ԻՇԽԱՆԱՑ:

Թրգմ. ՆՈՅՆ

ՆՈՅՆ, անդ, Դպր. է. գ.

30

ՀԵԿՏՈՐ ԵՒ ԱՆԴՐՈՄԱՔԷ

Դուոյք տալ, յաբյակէլ բաղմաբ — Գեր, ոչք, լաց
Տեռ, լալակ — Կափարուիմ, գեբելման
Պես առնել, հոբ պանէլ — Անկանել, հէսել
Թափել, պլոռել — Առ անձուկ, կաբօտէն

Դուստրն էսխովնի էր պըղնձագէնն Հեկտորի կին,
Որ գիպաւ նմա 'նդ առաջ. ի միասին գայր և նաժիշտն
Ըզմանկիկըն մատաղ բարձեալ ի գիրկս՝ անխօս տղայ,
Զհեկտորեանըն սիրելի՝ զգեղեցկափայլ նմանն աստեղ.
Հայեցեալ ընդ մանուկըն ժըպտեցաւ նա լըռելեայն:

Մատուցեալ Անդրոմաքէ կայր առ նըմին արտասուաթոր,
Եւ ձեռն ի ձեռն իւր խառնեալ՝ կարգաց զանուն և խօսեցաւ.
Ո՛վ վեհ, հոգիդ ի կորուստ մատնեսցէ զքեզ, և ոչ գըթաս

ի տղայ մանկիկդ և յիս բօտւառս՝ որ վաղ ի քէն մնայից այրի.
Քանզի վաղ ըզքեզ ընդ փոյթ աքայեցիք միաբոլոր
Դառն տըւեալ ըսպանցեն, և ինձ ի քէնըդ վրիպելոյս
Լաւ է ի հող մըտանել. զի ոչ ևս այլ իցէ սփոփումն՝
Եթէ գամ մի դու ի մահ յուղարկեսցիս, այլ ցաւք ևեթ:
Զի ոչ հայր ե իմ համբուն և ոչ մայրիկ իմ մեծամբոյ...
Սակայն դու ինքն ես ինձ հայր, Հեկտոր, և մայր մեծամեծար,
Եւ եղբայր հարազատ, և ամուսին զուարթածաղիկ.
Այլ արդ եկ ողորմեա և կաց աստէն յամրոցի աստ.
Մի զորդեակդ որբացուսցես և թողուցուս ըզկինդ այրի:
Ետ նըմա պատասխանի մեծըն Հեկտոր սաղուարտաճօճ.
Եւ ի'նձ իսկ գըլխովին ամենայն այդ փոյթ է, կին դու.
Այլ պատկառեմ յոյժ ի տրովեանց, յերկայնատեւ և տրտունեաց՝
Թէ խոյս տըւեալ վատաբար մեկուսացայց ի ճակատուէն:
Եւ ոչ սիրտ իմ հրամայէ, քանզի ուսայ քաջ լինել միշտ,
Եւ ի գլուխ նահատակաց գընդին տրովեանց կալ և կըռուել
Ի պարծանս հայրենի մեծի փառաց և իմ անձին:
Քանզի քաջ իսկ խելամուտ եմ ես ի միտս իմ և յոգիս,
Եկեսցէ երբեմն օր՝ յոր կորնչէ Իլիոս սուրբ
Եւ Պրիամոս և ժողովուրդ կորովատեզըն Պրիամու:
Այլ չառնեմ ես այնպէս փոյթ ըզմօտալուտ ցաւոց տրովեանց՝
Որպէս ըզհոդդ, յորժամ ոք ի պղընձակուռ աքայեցւոց
Վարեսցէ զքեզ լալագին՝ զազատութեանդ հատեալ զարև.
Եւ գուցէ յԱրգոս երթեալ՝ անկցես ոստայն այլուս տիկնոջ,
Կամ ջուր կրեսցես յաղբերէն Մեսսէիսի կամ Հիպերեայ՝
Հատիպեալ չարաչար և տաղնապեալ ի խիստ հարկէն:
Եւ թերևս յարտօսրիջոյցդ հայեցեալ ասիցէ ոք.
Բա՛ կինն է դա Հեկտորի՝ զօրագունդին ի պատերազմ
Ի տրովեանց քաջածիոց՝ ի կըռուի անդ զԻլիոնիս:
Այսպէս ոք ասացէ, և ցաւք ի քեզ նորոգեսցին
Առ անձուկ առն որ կարիցէ ըզգերութեան թափել ըզկեանսդ:
Այլ ըզմեռեալս հողակոյտ ծածկեսցէ զիս ի կափարուիմս,
Ընկառաչ քո և ըզգեր և ըզլըլկանըդ չև լըւեալ:
Ասացեալ զայս՝ տարածեաց Հեկտոր ահեղ գիրկս առ որդ-
Եւ մանկիկն յետս ի ծոց գեղեցկամէջ իւրոյ սընձտուէն [եակն,
Ճիչ բարձեալ խոնարհեցաւ՝ ի տես սիրուն հօր զարհուրեալ,
Պակուցեալ ի պըղընձոյն ե՛ ի ձիագէս գարգմանակէն,

Ընդ որ հայրըն սիրելի և մեծարոյն ժմտեցաւ մայր։
Եւ անդէն բարձ ի գըլխոյն ըզսաղաւարան ահեղն Հեկտոր
Եւ առեալ զայն ի վայր՝ ճաճանչաւէտ եդ ի գետնի.
Եւ զմանկիկըն սիրուն ողջագուրեալ ճօճեալ ի ձեռան,
Ցաղօթս եկաց և ասէ առ Սրամազդ և առ այլ դիս.

«Սրամազդ և այլ աստուածք, տուք և ըզսա զիմըս որդ-
Լինել, որպէս և ես, արժանապատ ի տրուակըս, [եակ
Եւ իշխել ա՛յսպէս զօրութեամբ և քաջաբար ի յԻլիոն։
Եւ ոչ ոք ասասցէ, բա՛մ սա քան զհայրն արիագոյն,
Ի մարտէն յորժամ դարձցի և արիւնոտ բերցէ կապուտ՝
Սատակեալ զախոյեանն, և մայրն ի սիրտ իւր խընդասցէ»։

Զայս ասաց և ամուսնոյն զորդեակն ի ձեռս ետ սիրայնոյ,
Որ առեալ ընկալաւ ըզնա ի գիրկս իւր բուրազուարթ՝
Արտասուախառնըն խընդութեամբ. առն յայն տեսիլ խանդաղա-
Փայփայեաց ձեռօքն ըզնա, կարդաց զանուն իւր և ասէ. [տեալ՝

Նազելի՛դ իմ, մի՛ անչափ գինէն ի սուգ հարցի սիրտ քո.
Չի յառաջ քան զՀրամանն ոչ ոք ի գժոխս ընկեսցէ զիս.
Իսկ յօրհասէն՝ և ոչ զոք ի մարդկանէ կարծեմ փախչել.
Ոչ ըզվատ և ոչ ըզքաջ, յետ միանգամ ի լոյս գալոյ։
Այլ երթեալ քո ի տուն՝ քոյոց իրաց առնիջիր պէտ,
Ոստայնիդ և իլոյդ, և աղախնայըդ տուր հրամայ
Ըզգործովք գալ իւրեանց, հոգապատն արէ ի պատերազմ
Որ ծընեալքն են յԻլիոն ամենեքին, ես մանաւանդ։

Ասաց և առ ըզգըլխանոցըն ձիագլի՝ Հեկտորն ահեղ.
Իսկ կինըն սիրայնին ելեալ անտի գընաց ի տուն,
Ըստէպ ըստէպ յետս հայելով և ջերմեռանդն հոսեալ արտօսր։

Թրգմ. Հ. Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՀՈՄԵՐՈՍ, Իլիական Զ.

31

ԿԻԿԵՐՈՆ ԸՆԴԴԷՄ ԱՆՏՈՆԻՈՍԻ

Համայն, ամենքեան
Բոյս բարուց, բնաւորութիւն
Ի վերայ կալ, հասկնալ
Գուն դնել, ջանալ
Փուրսիճ, հրամո՛ւթիւն
Ի բիծ տանել, վարկաբեկել
Ընկերհաւատութիւն, } հասարակա-
Ընկերահաւատիք } պետութիւն

Հարք ատենակալք, կայ ինձ ասել ինչ զինէն, և ընդդէմ Անտոնիոսի բազում ինչ. զմին՝ ի ձէնջ հայցեմ զի ի խօսելս զինէն՝ քաղցրութեամբ մատուսջիք ունկն, զմիւսն՝ ես արարից զի զընդդէմ նմին բանիս մտադիւրութեամբ լուիջիք։ Համայն և զայս ևս աղաչեմ, զի եթէ գիմ յամենայն ի կեանս և ի խօսս ճանաչէք զհամեստութիւն և զպարկեշտութիւն, մի՛ զիս այսօր, ի պատասխանելս սմա ըստ զրգռելոյն իւրոյ, զանձն ի մոռացօնս ինչ արկեալ համարիջիք։ Ոչ վարեցայց ընդ նմա իբրև ընդ բդեշխի, և ոչ նա [վարեցաւ] ընդ իս իբրև ընդ երբեմն բդեշխի։ Թէպետև նա չիցէ ամենևին բդեշխ, և՛ վարուքն, և՛ տեսչութեամբ ընկերհաշտութեանն, և՛ ի բուսոյ բարուցն. յիս սակայն, առանց ընդ բանս ինչ ածելոյ, բդեշխութեան կայ պատիւ։ Արդ, առ ի վերայ կալոյ ձեզ՝ թէ որպիսի՛ բդեշխ զանձն իւր ընծայեցուցանիցէ, ի բիծ տանի զիմ բդեշխութիւնս, որ յանուանն՝ իմ, իսկ արդեամբք՝ ձեր էր բդեշխութիւն, Հարք ատենակալք։ Չի զի՞նչ կարգեցի, զի՞նչ կատարեցի, զի՞նչ գործեցի, որ ոչ ըստ խորհրդոյ կամաց և իշխանութեան և մտաց այսր ատենի։ Բդեշխութիւն իմ չէ հաճոյ Անտոնիոսի. . . Բայց ընդ բդեշխութիւնն իմ հաճեալ հաւանեցաւ Պոմպիոս, որ ի մեկնելն յԱսորւոց, իսկ և իսկ ընդ տեսանելն զիս՝ զիրկս արկեալ և գոհութիւն մատուցեալ, յիմմէ չնորհէ ասաց արժանի լինել տեսոյ հայրենի աշխարհին։ Եւ զի՞ մի մի թուիցեմ զամենեսին. ակմբահոյլ ատենի ազանուոյն այնպէս հաճոյ եղև, զի չմնաց ոք՝ որ չխոստովանէր ինձ չնորհս իբրև հօր, որ ոչ երախտապարտ լինիմ հաշուէր զկեանս իւր, զորդիս, զստացուածս, զընկերհաշտութիւնն։ . . . Որ՝րըդովք Լուկիոս կեսարու վարեցայ ես օտարս ի նմանէ՝ ի բդեշխութեան. գու, [Անտոնիէ], նորա քեռորդի, զի՞նչ երբեք հար-

ցեր ցնա զընկերհաչտութենէս։ Իսկ ընդ ո՞յս [ոմանս] խորհիցի դա խորհուրդ։ Ո՛վ դիք անմահք, ընդ այնոսիկ՝ զորոց և զա-
ւուրս ծննդոցն հասանէ մեզ լսել։ Այսօր չեկն չել չերևեցաւ Ան-
տոնիոս։ Ընդէ՞ր։ Տօն ծննդոց խմբէ ի պարտէզս։ Ո՞ւմ ուսմէ։
Զանուանեցից և ոչ զոք. . . Ո՛վ եղեռնաւոր գարշութեան առնն.
ո՛վ անտանելի լրբութեան, անզգամութեան և լկտութեանն։
Դու, որում այնքան մերձաւոր էր իշխանն խորհրդական, ան-
համեմատ քաղաքացին, ոչ ինչ խորհիս ընդ նմա զընկերահաչ-
տութենէ. ընդ նոսա խորհիս՝ որոց չիք ինչ, և զգոյս քո վատ-
նեն։ Ահա արդարև՞ քո բդեշխութիւնդ՝ փրկաւէտ, իմա՝ եղեռ-
նական։

. . . Եկեսցուք ի մեծամեծսն։ Իմով խորհրդով սպանեալ
ասացեր զկղոդիոս։ Զի՞նչ արդեօք համարեցոց էին մարդիկ,
եթէ յա՛յնժամ էր սպանեալ, յորժամ դու ի հրապարակին՝ ակն
յանդիման հռովմէական ժողովրդեան՝ սուր հանեալ ի նա յարձա-
կեցար. և զգործն վճարեալ լինէիր, եթէ չէր նորա ի սանդուղս
կրպակի գրոց ընկեցեալ զանձն, եւ խցեալ զայնս՝ զթափ բըռ-
նութեանդ խափանեալ։ Սուր զիս յօժարամիտ ընդ քեզ եղեալ
վկայեմ. թէ յինէն հրապուրեցար, և ո՛չ դու ինքն ասես։ Սա-
կայն ուրախ եղէ։ Եւ զի՞նչ. յայնչափ խնդութեան համօրէն
քաղաքիս՝ ի՞նձ ուրեմն պարտ էր միայն տրտում լինել։ Զմահ-
ուանէն կղոդեայ ապաքէն եղև փուրսիչ։ Սրդ՝ զոր ի դատել
իրացն ոչ ոք բամբասեաց յիս, յետ այնչափ ամաց դո՞ւ դատ
բաղբաղել զայն։

Իսկ զոր յանդգնեցար ասել, և զայն՝ բազմաբանութեամբ,
թէ իմով առնելով ճեղքեցաւ Պոմպիոս ի բարեկամութենէն կե-
սարու, վասն որոյ և իմով յանցանօք ծագեցաւ պատերազմն
քաղաքական, յայդմ դու ապաքէն ոչ յիրացն բռվանդակ, այլ
որ ևան է՝ ի ժամանակացն ստերիւրեցար։ Ես ի բդեշխութեան
Բիբուղոսի առն նշանաւորի՝ ոչ ինչ թողի յորոց կարէի գործել
և ջանալ, զի մի օգտեցից զՊոմպիոս ի միաբանութենէն կեսա-
րու, յորում կեսար յաջողագոյն գտաւ, զի նա զՊոմպիոս յիմմէ
ընտանութենէս ուծացոյց։ Իսկ իրրև Պոմպիոս բնաւ ի ձեռս ետ
զինքն կեսարու, զի՞ էր ինձ դուն դնել պատառել զնա ի նմանէ.
յիմարի էր յուսալ, յորդորել՝ լրբեցւոյ։ Իսկ յորժամ զամենայն
զղօրութիւնս իւր և զհռովմէական ժողովրդեանն աւանդեաց
Պոմպիոս ի կեսար, և անագան ուրեմն սկսաւ ի միտ առնուլ զոր

իմ յոյժ կանխաւ նկատեալ էր և տեսեալ, զի անօրէն պատե-
րազմ յառնելոց է ի վերայ աշխարհիս. նոյն ինքն ես ոչ դադա-
րեցի խաղաղութեան՝ միաբանութեան և հաչտութեան լինել ա-
ռաջնորդ, և ծանօթ իսկ է բազմաց բարբառն իմ այն՝ թէ «երա-
նի՛ թէ, Պոմպիոս, մի՛ երբեք ի միաբանութիւն գայիր ընկերա-
բար ընդ կեսարու, կամ մի՛ երբեք քակէիր. մին պերճութեանդ
քումն էր, միւսն իմաստութեանդ»։ Այս էին, յամենայն ժամ,
Անտոնիէ, և զՊոմպիոսէ և զընկերհաչտութենէն իմ խորհուրդք.
որոց եթէ տիրեալ կալեալ էր, կայր միայր ընկերհաչտութիւնն,
և դու քոյին եղեռնութեամբդ՝ չքաւորութեամբ և կեղտ ան-
ուամբ սատակէիր։

Այլ այսքիկ հինք. իսկ նոր այն՝ թէ իմով խորհրդով լցէ
կեսար սպանեալ։ — Ո՞ այն ոք՝ որոյ ընդ իրագէտս մեծապանծ
գործոյն լուեալ լցէ զիմ անուն. իսկ ո՞յր ուրուք ի համարուէ
անտի նոցուն ծածկեցաւ անուն. և զի՞ ծածկել ասիցեմ, նա
աւանիկ որո՞յ ոչ անդէն առժամայն հռչակեցաւ [անուն]։ Ա-
սացից համարձակ, թէ մանաւանդ պարծեցան և ոմանք յընկեր-
չակութենէ անտի լինել՝ որ չէինն ի խորհրդին, քան թէ որ
էրն՝ զանխլանալ ոք կամեցաւ։ Նա աւանիկ քանի՞օն հաւա-
նութեան իցէ, թէ յայնքան բազմութեան՝ որոց կէսք աննչանք
ոմանք, կէսք երևութասարդք՝ որ ոչ զոք թագուցանեն, անուն
իմ մոռացեալ կայցէ։ Բայց ո՛րպէս յանդգնմանիցէ զիս այրն սուր,
աղէ ածէ՛ք զմտաս։ Ընդ սրախողխողն լինել կեսարու, ասէ,
ամբարձեալ անդէն ի վեր Բրուտոսի զարիւնաներկ դաշոյնն՝
զկիկերոն կարդաց յանուանէ, և ուրախակից նմա եղև ընդ ա-
զատութեանն հասանել։ Տե՛ս՝ գուցէ յայն սակս ձայնեալ լցէ
զիս, զի գործ մի հանդոյն իմոցս կատարեալ, զիս առաւել վկայ
ունէր՝ նախանձաւոր իմով պարծանացս երևեալ։ Իսկ դու, պան-
դոյր քան զամենեսեան, չիմանաս՝ զի եթէ ընդ մահն կամել
կեսարու, զոր չիս բիծ չփես, վասն լինչ լցէ, վասն է և խնդալն
ի մահ կեսարու։ Սթափեցիր աղէ, լրջացիր ի քնոյ չուայտու-
թեան, և թափեա զքինիդ։ Զիմանա՞ս համբուն՝ թէ պարտ է
քեզ սահմանել, սպանո՞ղք արդեօք լցեն գործօնք իրիդ, թէ
ազատութեան քինախնդիրք։ Այնսա փոքր մի, և զխոկս առն
լրջամտի վայրկի մի ընկալ։ Ես վկայեմ, զի թէ չէցեն նոքա ա-
զատեցուցիչք հռովմէական ժողովրդեան և ընկերհաչտութեան
պահպանիչք, եղեռնաթիւրք են քան զսրիկայս, քան զարիւնա-

հեղս և քան զհայրախոչոչս անգամ. զի անագորոյն և ես զաշխարհին հայր սպանանել քան զիւրն։ . . .

Աղէ հայեաց, աղաչեմ, գամ մի յընկերահաչուութիւնն, Անտոնիէ. արկ ի միտ՝ յորոց ծնեալդ ես, և մի՛ ընդ որս կենցաղիսդ. ընդ իս՝ որպէս և քեզ կամք լցեն. ընդ ընկերահաչիս դարձիր ի սէր և ի հաճութիւն։ Այլ զքէն դու քեզէն տեսջիր, ես զանձնէս յայտ յանգիման վկայեցից։ Պահեցի զընկերահաչուութիւնն յերիտասարդութեանս, ոչ լքից ի ծերութեան. արհամարհեցի զսուսերն կատիլինայի, ոչ չրտեայց ի քոյոդդ. նա աւանիկ կամակար մատուցից զանձն, թէ մարթիցի ազատութեան քաղաքիս՝ իմով մահուամբ յառնել անդէն ի կեանս. որպէս զի ցաւք հռովմէական ժողովրդեան՝ ծնցեն ուրեմն զոր երկնեն ի վաղուց։ Զի թէ յառաջ քան զամս իրրև զքսան, ի տաճարի աստ յայսմիկ ասացի վասն առն բդեշխութեամբ պատուելոյ, թէ չէ հնար տարաժամ պատահել նմա մահու, ո՞րչափ ճշմարտագոյն եւս ասացից այժմիկ վասն ալեւորիս։ Այլ լինձ, Հարք ատենակալք, արդէն փափաքելի իսկ է մահ, յետ յանկ հանելոյ զպարտս պաշտամանցն՝ յորս վիճակեցայ եւ կատարեցի։ Երկուս լինչս միայն խնդրեմ. մի, զի ի մեռանելս՝ ազատ թողուցում զժողովուրդն հռովմէական. մեծ եւս լինչ քան զայս լինձ պարգեւել չէիք բնաւ դիցն անմահից. եւ միւս, զի իւրաքանչիւր ումեք ըստ [բարի և չար] գործոց իւրոց առ ընկերահաչուութիւնն՝ կշռեսցին փոխարէնքն։

Թրգմ.

Հ. Ա. Ն. ԲԱԴՐԱՏՈՒՆԻ

ԿԻԿԵՐՈՆ, Բ ՃԱՌ ՓԻԼԻՊՊԵԱՆ

32

ՁՕԳՏԱԿԱՐՈՒԹԵՆԷ ՓԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ

Պարապ բերել, ընդունել	Ի նով ելանել, ջնջել երթալ (օդա-
Նիազուբիւն, նուաղութիւն	Բայ, խօտ [փոխութիւն)
Ոտնակատել, կոխել առնել	Ամբոխ (ած.), խառնաշփոթ
Զանկանիմ (գիւիք), (քանի ը)	Բոյս բնութեան, բուսութիւն
Սարտնուլ, խրտնիլ [յարուիլ	Հեծանալ, հաճոյ ընդունիլ
Նօքնեմ, ծռիլ, նկրիլ	Ընծայութիւն, յանդնաբարութիւն

Եթէ դուցէ յիս հանճար, դատաւորք, որոյ իրագէտ եմ նիազութեանն, կամ թէ խօսից վարժութիւն՝ յորում ոչ ժխտեմ փոքր ի շատէ զիս պարապեալ, կամ թէ ինչ այսր իրի (քերթողութեան) ճմտութիւն՝ ի կրթութենէ ազնուական արուեստից եւ ի հրահանգից, յորոց վկայեմ զի ոչ երբեք սարսուցեալ եմ ի կեանս իմ, զայնր աւեճայնի նախ Սրբքիոս այս (քերթող) յիրաւի պահանջեսցէ յինէն զպտուղ՝ գրեթէ սեպհական իմն իրաւամբք։ Զի որչափ հեռագոյնս զօրեն ակնարկեն միտք իմ յելս անցեալ զառանցեալ ժամանակաց՝ եւ զմանկութեանս յուշ ածել խորհին յիշատակ՝ զսա տեսանեմ իշխան առաջնորդ լինձ կացեալ ի սկզբանել եւ ի զարգանալ ի կիրթս ուսմանցս այսոցիկ։ Զի եթէ ձայնս այս բարբառոյս՝ սորա խրախուսանօքն եւ խրատու յարդարեալ՝ եղեւ երբեմն ոմանց ի փրկութիւն, ապա յորմէ զսոյնս ընկալաք առ ի զօրավիգն այլոց լինելոյ եւ զայլս կեցուցանելոյ, ամին ինքեան ապաքէն՝ որչափ ի կարի մերում է՝ ե՛ւ օգնութիւն ե՛ւ փրկութիւն արժան է մատուցանել։ Եւ զի մի՛ ոք ընդ այս բանս մեր զարմացի, որպէս թէ ա՛յլ իմն ի սմա լցէ հանճարոյ զօրութիւն քան զայս գիտութիւն և զհրահանգս խօսից, [ասեմք] զի մեք ոչ յայս եւեթ ջանս համակ նուիրեցաք զանձինս։ Քան զի եւ ամենայն արուեստք առ մարդկութիւն պատկանաւորք՝ ունին ինչ ընդ միմեանս աղերս, եւ իրրեւ ազգախառնութեամբ իմն ընդ իրեարս յեռեալ են։ . .

Իրրեւ անց Սրբքիոս ըստ սիս մանկութեան, ետ զանձն ի ջանս գրաւոր վաստակոց զառաջինն անդ Անտիոք, ուր ծնեալն է յազնուական տանէ, յերբեմն հռչակաւոր և ի ճոխ բաղաքի և

քաջահմուտ արերով և ազատական ուսմամբք պերճացելոյ, անդէն վաղվաղակի եհաս նմա անցանել զամենեքումբք ի փառս հանճարոյ: Ապա յայլ կողմանս ասիացւոց և յամենայն Յունաստան այնպէս հռչակ հարկանէր զգալատենէ նորա, զի քան զհանճարոյն համբաւ՝ ակնկալութիւն առնն և քան զակնկալութիւնն նորա՝ մուտք իւր և հիացումն մարդկանն առաւել գտանէին: Սովին մեծանուն համբաւով յարեաւ եկն ի Հռովմ, ի բդեչխութեան Մարիոսի եւ Կատուլեայ, մինչդեռ եւս պատանեակն էր Արքիաս, և անդէն և անդ ընկալան զնա Լուկուլլեանք ի յարկս իւրեանց:

Հարցանիցես թերեւս զմեզ, Դրատիէ, թէ զի՞ այսչափ արամբս այսուիկ հեշտանայցեմք:— Վասնզի զայն լինչ նօթիճ մեզ, յոր կազդուրեսցին ոգիքս յատենական աղմկէ ասի, եւ հանգիցեն ականջք պարտասեալք յամբոխ աղաղակէս: Համարիցի՞ս թէ առձեռն մեզ կայցէ խօսել հանապազօր յայսչափ գուշնակ գուշնակ կերպարանս իրաց՝ եթէ չհրահանգիցեմք զմիտս մեր դպրութեամբ, կամ թէ միտք մեր տակայցե՞ն այսքանոյ ճգնութեան, եթէ ոչ նովին գիտութեամբ անդորր լինչ առնիցեմք: Այլ ես խոստովան լինիմ՝ թէ զաովին ուսմամբք զանկեալ եւ ըզգածեալ է իմ: Յամօթ լիցին այլք, եթէ այնպէս ի դպրութիւնս խթեցան ոմանք, զի չունիցին լինչ անտի հասարակաց հանել արգասիս, եւ ոչ ի տեսիլ եւ ի լոյս ընծայել: Իսկ ինձ առ ի՞նչ իցէ ամաչել, որ այսչափ ամք են՝ այնպէս կեամ, գատաւորք, զի ոչ երբեք ի կարիս լինչ ուրուք կամ ի բարիս՝ յետս գիս ընկրկեաց հանգիստ իմ, կամ ի բաց գարձոյց հեշտութիւն, կամ յուշացոյց քուն: Վասն որոյ՝ ո՞ այն ոք որ զիս կշտամբեսցէ, կամ ո՞ իրաւամբք ցասնուցու ընդ իս, թէ զժամն՝ որ այլոց չնորհին ի վճարումն պետոյից իւրեանց, կամ ի հանդէս ծնողական աւուրցն խաղուց, կամ առ այլ եւս զբօսանս զուարճութեանց եւ առ գլխովին խակ հոգւոց եւ մարմնոց հանգիստս, եւ զոր այլք նուիրեն կանխեալ եւ յերկարեալ խրախճանաց, կամ ուղանց եւ գնդի խաղալոյ, զայն ես լինձ ի դեգերանս առից ախորժակաց այսոցիկ: Եւ այնչափ առաւել ներելի է լինձ այս, զի ի վարժից ասի (քերթողականին) յարգեալ համարի եւ այս բանաիօսութիւնն եւ ճարտարութիւն. որ որչափ լինչ իցէ եւ յիս՝ ոչ երբեք ապաժաման գտաւ ի վտանգս բարեկամաց: Որ եթէ ումեք թեթեւ լինչ թուիցի, եւ զմեծագոյնսն թէ յորմէ՛ աղբերէ առնուցում՝ այնմ եւս քաջ խելամուտ եմ: Զի եթէ ոչ ի մանկութենէ՝ բազմաց խրատուք եւ բազում դպրութեամբք՝ զմիտս յա՛յն հրահանգեալ էի՝ թէ չիք ի կեանս առաւել քան զգովութիւն եւ զպարծանս փափագելի, եւ թէ ի գիւտ նոցին՝ դոյզն լինչ է գրելի զամենայն չարչարանս մարմնոյ եւ զամենայն վտանգ մահու եւ աքսորանաց, ոչ երբեք վասն փրկութեան ձերոյ տայի զանձն յայնքան մաքառումունս եւ ի հանապազորդ հէնս խուժանի արանց ապականելոց եւ անուանարկաց: Բայց լի են մատեանք ամենայն, լի խմաստնոցն ձայնք, լի եւ հոծեալ օրինակօք վաղ ժամանակաց, որք առհասարակ ի խաւարի անկեալ մնային, եթէ ոչ հասանէր դպրութեանցն լոյս: Գանի՛ն յաճախ նկարագիրս, ոչ ի նկատել եւեթ այլ եւ ի նախանձաւոր լինել, թողին մեզ մատենագիրք յոյնք եւ լատինք զարանց բաջաց կենդանագրեալս, զորս իմ ցանգ առաջի աչաց արձանացուցեալ ի վարչութեան պետութեանս՝ զմիտս իմ եւ զհոգիս ի նոյն խմաստս արանցն ընտրականաց տպաւորէի:

Հարցանիցէ ոք թերեւս. Իսկ գի՞րդ. մի՛թէ եւ արքն այնոքիկ վսեմականք, որոց առաքինութիւնք ի գիրս դրոշմեալք են, սովի՞ն գիտութեամբ հմտացան զոր դու գովութեամբք պանծացուցանես: Դժուարին է հաւաստել զայդ զբօղորեցուանս, բայց աներկեւան է իմ առ այդ պատասխանի: Զբազումս՝ վկայեմ եա՝ առանց գիտութեան արս վսեմամիտս եւ առաքինիս լեալ եւ իբրեւ յաստուածեղէն իմն բուսոյ բնութեան՝ հաւեստս եւ զգօնս: Սա՛ աւասիկ եւ զայս յաւելում, զի բազում ուրեք բնութիւն առանց գիտութեան բաւական գտաւ ի փառս եւ յառաքինութիւն, քան գիտութիւն առանց բնութեան. բայց սակայն և զայս վճիռ, զի ուր ուրեք յընտիր եւ յազնիւ բնութիւն զուգաւորեսցին հրահանգք լինչ եւ յօրինուածութիւն գիտութեան, անդ ոքանչելի լիմն եւ անհամեմատ չգիտեմ զի՛նչ՝ սովոր է ի վեր երեւել: . . . Ի թուոյ ասի էր այրն արիական եւ գիտնաւաւոր ի ժամանակին՝ ձերունին այն կատոն, որ եթէ ոչ լինչ չահէր ի դպրութեանց՝ ի գիւտ եւ ի կիրթս առաքինութեան, ոչ բնաւ յուսումն նոցին բերէր պարապ: Բայց թէպետև ոչ արդիւնք այս մեծ համարէին, եւ զուարճութիւն եւեթ էր ջանիցս կատարած, համայն, որպէս լինձ թուի, յոյժ վայելուչ վարկանէիք մարդոյ եւ ազատական՝ զմտազիւրութիւնս զայս: Զի այլք ոչ ամենայն ժամանակի են, ոչ ամենայն հասակի եւ ոչ տեղւոյ. իսկ այս

ուսմունք զմանկութիւն վարժեն, զծերութիւն զբօսուցանեն, զարդ են ի յաջողուածս, ի ձախողանս՝ ապաւէն եւ սփոփանս ընձեռեն, հեչտութիւն են առնելին, արտաքոյ՝ ոչ ինչ խափան լինին, ընդ մեզ հակեն, ճանապարհ առնեն, ի հով ելանեն...:

Ես զայս Արքիաս քանի՞ցս տեսի, դատաւորք, զի առանց ինչ նշանագրելոյ՝ ընտիր ընտիր տունս բազմաթիւս ափ յափոյ յանկարծաթափ ածէր ճառէր զիրաց իրաց առժամայն պատահելոց: Քանի՞ցս դարձեալ անդրէն վերստին զնոյն բանս կրկնէր յեղյեղէր այլափոխ բայիւք եւ իմաստիւք: Իսկ զոր խնամովն եւ ուշի ուշով գրէր, այնպէս ի գովութիւն առեալ տեսի զայն, մինչեւ ի վաղնջուց մատենագրացն ժաման լինել ի փառս: Իսկ արդ զսա ես ո՞չ սիրիցեմ, ո՞չ սքանչացայց ընդ սա, եւ չհամարիցի՞մ ամենայն իրաւամբք պաշտպանութեան արժանի: Ցարանց ականաւորաց եւ բազմահմտից այսպէս ընկալաք՝ թէ այլոց իրաց ուսմանց գոյ գիտութեամբ եւ օրինօք եւ արուեստիւ կատարել, իսկ բանաստեղծին անդստին ի բնութենէն ի ունել զօրութիւն, եւ իւրոց մտացն կորովով վերանալ, եւ հոգի իմն գոգցես աստուածեղէն կրել յանձին շունչ: Վասն որոյ մերն այն ենթիոս յիրաւի նուիրականս կոչէ զբանաստեղծսն, զի իբրեւ յաստուածոց իմն պարգեւաց եւ շնորհաց երևին ի մեզ աւանդեալ:

Լիցի արդ սուրբ առ ձեզ, դատաւորք, անուն բանաստեղծի, զոր ոչ մի ինչ դուժ վայրենութիւն պղծեաց երբեք: Վէմք եւ ափափայք ի ձայն նորա դունչեն արձագանգս, գազանք ամեհիք ողոքին յաճախ երգովքն եւ ոռնակառչեն. մեք ի լաւագոյնսն ընդելակրթեալքս ո՞չ չարժիցիմք ի քերթողացն բարբառ: Զհոմերոս քաղաքացի իւրեանց ասեն լինել կողոփոնացիք, քիացիք յիւրեանս վտարեն, պահանջեն սաղամինացիք, իսկ զմիւռնացիք՝ իւրեանց լինել հաստատեն, վասն որոյ եւ տաճար սրբեցին նմա յաւանի անդ. թող զդոսա, այլ եւս յոլովագոյնք մարտ եդեալ կռուին ընդ միմեանս: Արդ՝ նոքա զօտարն, քանզի բանաստեղծ էր, յետ մահուն եւս ի միմեանց խլեն, մեք զսա զկենդանի նիս որ սրտի կամաւ եւ օրինօք մերս է՝ ի բաց հանիցեմք, ուր զի երբեմն եւ զամենայն ճիգն եւ զհանճար թափեալ է Արքիայ ի քարոզել զփառս եւ զպարծանս հռովմէական ժողովրդեանս: Ձիք ոք այնպէս գժտախահեղ ընդ մուսայս՝ որ ոչ մտադիւր ողջունեսցէ՝ թէ ոք զյաւերժայիշատակ հռչակ վաստակոց իւրոց հարկանիցէ ի տաղս: Ձթեմիստոկլես՝ զայրն մեծ աթենացի, իբրեւ հարցաւ թէ ո՞ր լուր կամ ո՞յր ուրուք ձայն քաղցրասցի յունկն իւր, աւանդեն ասացեալ. «Նորայն՝ որ զիմ քաջութիւնս սքանչելապէս քարոզիցէ»: Քանի՛ ամբոխ մատենագրաց իւրացն իւրոց ընդ իւր ունել պատմի մեծն այն Աղեքսանդր. եւ սակայն յորժամ ի Սիգէոն առ Աքիլլեայ դամբանին հասեալ եկաց. «Ո՛վ երանելիդ, ասէ, պատանեակ, որ քաջութեանդ քումդ զՀոմերոս գտեր քարոզ»: Եւ արդարե՛ւ յիրաւի, զի եթէ չէր Իլիականն այն ի միջի, գերեզմանն այն որ զմարմին նորա ծածկէր եւ զանուն նորա կորուսեալ էր հետախաղաղ:...

Իսկ ի սմանէ (յԱրքիասայ)՝ պատերազմն միհրդատեան մեծ եւ տաժանելի եւ բազմօրինակ ընդ ծով եւ ընդ ցամաք յածեալ, նկարագրեալ է բովանդակ. որ ոչ զԼուկուլլոս միայն՝ զայրն քաջ եւ զանուանի, այլ եւ զանուն հռովմէական ժողովրդեանն փառաւորեն մատեանքն այն... Մեր հանապազ պատմեսցի եւ քարոզեսցի՝ մարտիւ պատերազմացն Լուկուլլեայ՝ անհաւատալին այն առ Տիգնեզեաւ նաւամարտ. Մեր են նշանք յաղթութեան, մեր արձանք յիշատակի, մեր յաղթանակք:... Ապա որոց հանճարովն այսոքիկ հռչակին, հռովմէական ժողովրդեան համբաւի անուն:...

Եւ զի այս այսպէս, խնդրեմք ի ձէնջ, դատաւորք, եթէ ոչ մարդկեղէն եւեթ, այլ եւ աստուածեղէն իմն ընծայութեան հարկ է մեջ անցանել, զի զայն՝ որ զզօրագլուխս ձեր, որ զաբիւրեան հանդէսս հռովմէական ժողովրդեան յաւէժ գեղազարդեաց, որ եւ յայնմ թուոյ է՝ որ միշտ առ ամենեսեան ընդ սուրբս են համարեալ եւ քարոզեալ, այնպէս ի ձեր հաւատս ընկալջիք [իբրեւ զքաղաքացի ոք], որպէս զի ձերով մարդասիրութեամբդ ի սփոփանս լինել երեւեսցի, քան եթէ վշասեսցի յերեսաց խստութեան ձերոյ:

Թրգմ. ՆՈՅՆ

ՆՈՅՆ, Ձառ վասն Արիայ հերոսի

33

ԱՐՈՒԵՍՏ ՓԵՐԹՈՂԱԿԱՆ

Ամբոկ (գործոյ), (ջրբէնի) լծնուելը
Ի ձիգ, երկարօրէն
Ի ձուոց, (լր. բացատր.) ակնդէն
Վերոյ, վերէ կողմէն [(ab ovo)
Ունել ժոյժ ի ծաղուէ, խնդալը
Որ զի, որպէս ըն [քանել
Գեգեր, պարապոմ, ղբաղտմ
Ընդ միս տանել, արդանդել, ձգտիլ
Ոգել, երգել, ըսել [ըը պահել
Աշխարհաւաղդ, քինդարան
Թանգար, վաճառական
Հիմուլ, հնաբել, ապրանքներ
Խաղաւամ, վանդակին մարդիկը
Վնաս, յանցանք

Ձեռն յանձին հարկանել, յանձնառու լինել, հանդէս [նապատրաստ ըլլալ
Դեմ դնել, դէմ ելլել
Սատան, հակառակորդ
Տասակ, տախտակ, պարկեր
Դուրգն, բրուտի անօթը
Խառնիճ, ըռնտաւորութիւն
Գամ մի, ձեռ անգամ
Զառածանիմ, խոստանալ, էնալ
Անկ, պարտք
Արիւն, արիւնհեղութիւն
Եղունգն (ձիոյ.), էրբև յղկելու քերիչ, քերծ-ըլեան
Կատակ, հաճոյախօսութիւն

Զի պարտ եղծանել զպարզութիւն եւ զմիտութիւն իրին։

Ըզձիոյ պարանոց ի մարդկեղէն կըցել գըլուխ
Նըկարիչ թէ կամիցի, և արկանել պէսպէս փետուրս
Ցամենուստ յօդեալ անդամս, որ զի վերոյն կին գեղեցիկ
Ի տգեղ աւարտեսցի սեաթոռմի ձուկըն զազիր,
Ունկնդի՞ք ժոյժ ի ծաղուէ մուծեալք ի տեսն, ո՛վ սիրելիք։
Հաւատացէք, Պիսոնեանք, յար և նըման գոլ տաստակիդ
Ըզմտացեանն, որ իբր անուրջք խօթի սնոտի նըկարին տիպ,
Ուր ոչ ոտք և ոչ գըլուխ ի մի մարմին պատկանաւորք։
Նըկարչաց և քերթողաց, յոր ինչ և գամ մի կա՛մ լցէ՝
Եղև միշտ հաստարակ համարձակել իշխանութիւն.—
Գիտեմք խոկ, և ըզդոյն հայցեմք և տամք միմեանց օճառ,
Ոչ զի՛ նդ հաւս օձք զուգեսցին, և ոչ գառինք ընդ վագերաց...
Սափորոյ սկիզբըն եղաւ, զի՞ կուժ դըրգռանդ ելցէ ի չուրջ.
Իսկ և իսկ ամենայն լիցի միայն պարզ ինչ և մի։
Բարւոյն կերպարանօք պատրիմք բազումք ի քերթողաց.

Ի հակիրճն նըկըրտեալ՝ լինիմ մըթին խրթնածածուկ.
Որ ի նուրբըս դընէ դէմ՝ չիւք և ոգիքըն լըքանին.
Որ զպերճագոյնս խոստանայ՝ այտնու փըչմամբ ուռուցիկ,
Սողի՛նդ երկիր կարի ըզգույշն՝ և երկընչոտն ի մըրրկաց։
Որ հրաշիւքն ըղձանայ փոփոխել զիրըն միաբուն՝
Դըլփին ի մայրիս կենդանագրէ, յալիս վարազ։
Անարուեստ փախուստ մեղաց յայլ ինն ածէ մոլորութիւն։

Ըստ տանելոյ կարողութեան ընտրել զնիւթն։

Առէք, բանահիւսք, ուժոյ ձերոյմ նիւթ ի կըճիռ.
Քընննելով ի ձիգ ի՛մ ուսքդ լցեն բերոյ, ի՛մ խմիք ոչ.
Ումմ ըստ կարի իւր ի դէպ գիրն ընտրեսցէ ուշիուշով՝
Ոչ բանից յորդ աղբիւր՝ ոչ կարգ յըստակ պակասեսցի։
Կարգին, եթէ չխաբիմ, այս ընտրութիւն է և չընորհ,
Զի զոր ասա այժմ է ասել՝ այժմ ասասցէ զայն աստանօր,
Բազում լինչ յամեցուցեալ՝ յառաջիկայն թողեալ պատեհ։

Հաւհարմարութիւն ճերոցդ ի նորաձեւել քառս, եւ վախճան քառից առհասարակ։

Նա՛ ւանիկ երկիւղած՝ ու ի նորատունկ բառից ըզդոյշ՝
Զայս սիրեալ՝ զայն հերքեսցէ աւետաւոր տաղից ճերոց...
Իսկ թէ նոր նըշանակօք թաքուննս լինչ հարկ յայտնել լիցի՝
Իցէ դէպ, և տացի չափով առեալ ազատութիւն,
Եւ նորք և դեռածինք վաւերական լինիցին բառք
Ի հելլէն թէ յաղբերէ դոյզն ի խոտոր անկանիցին...։
Էր օրէն և միշտ լիցի ձայն նորաթեք բերել ի լոյս.
Որպէս մայրեաց փոփոխին տերևք ընդ ամըս գիւրաստահ,
Հինք թափին. այսպէս բառից անցեալ գընայ զառամ հասակ,
Եւ զօրէն պատանեկաց ծաղկեն առոյգ արդի ծընեալք։
Որ անկեալքն են շատ անդրէն կենդանասցին, և չատք անկցին
Որ արդ կանս ի պատուի բառ, թէ այնպէս ինչ հաճեսցին պետ,
Առ որում են դատաստան՝ օրէնք խօսից և իրաւունք։

Պարս է ճերոցին գիրս եւ գիտել պատշաճել ըստ կերպարանաց իւրմանչիւր անձին։

Ըզպայմանեալ յեղանակս և զքերթածաց պահել գերանգս
Թէ չկարեմ կամ թէ չգիտեմ՝ ընդէ՞ր քերթող ես ողջունիմ.
Հի՞մ ընտրեմ թիւր ամօթով անգիտանալ քան ուսանել։

Կատակաց իրք չառնուն յանձն ոգել տաղիւք ոգբերգական...
Պահեսցէ իւրաքանչիւրն զգվիճակեալ կարգ վայելուչ:

Քերթածաց չէ բաւական դեղեցկութիւն, լիցին քաղցունք,
Եւ զոգի ունկընդրին յո՛ և կամին առեալ ածցեն.
Զերդ խընդան ընդ խընդացողս՝ նո՛յն ընդ լացողս լան դէմք մարդ-
Արտօսր լինէն թէ խընդրես՝ նախ քեզ վայել է սուգ ունել [կան.
Զանկսըզդ անճահ թէ խօսիս՝ ծիծաղեցայց կամ նիրհեցիլ.
Եթէ բանք խօսողին չիցեն բախտին իւր համեմատ,
Սեպուհք հռովմայեցիք և սինլըքորք բարձցեն քըրքիջ:
Խըտիր մե՛ծ է թէ ատրուկ և թէ դիւցազն ոք խօսիցի,
Ծեր հասուն, թէ ծաղկափթիթ տիով աչխոյժ երիտասարդ,
Եւ տիկին տիրուհի, եթէ դայեակ ոք ժըրպտլուխ,
Թանգար աստանդական, թէ բուսաբեր անդոյ մըշակ,
Ասորի, եգերացի, յՍրգոս ծընեալ թէ ի Թեբէ:

Թէ անփորձ և անսովոր լինչ ընծայես ի տեսարան,
Եւ դէմս լինչ նորագիւտ կերպարանել համարձակիս,
Նոյն նըման պահեսցի միշտ ի սկըզբանէ ցըկատարած:

[Զի որ աստուած ոք ի մէջ և որ դիւցազն ոք մատուսցի,
Ցառաջն յոսկի պայծառ ու ի ծիրանիս արքունական,
Յաչխարհաւանդս ի նըսեմ մի՛ զառածցի նըւաստ բանիւ,
Կամ յերկրէ ի բաց անցեալ՝ ըզհողմս և զամպս ըմբըռնեսցէ]:

Պատուիրէ ինչ վասն դիւցազներգուրեան:

Մի՛ որպէս պարբերական քերթողն երբեմն ըսկըսանիւր.
«Ըզ Պրիամոն երգեցից բախտ և զմեծապանծ ճակատամարտս:»
Զի՞նչ պարծողդ այդ արժանի այդքան պոռոտ բերցէ գոչման.
Ձըչեսցեն լերինք յերկունս և ծընցի մուկըն ծաղրալից:
Քանի՞ն վայելուչ ևս՝ այն որ ոչինչ նիւթեալ անդէպ՝
«Զայրն ասա, Մուսա, լինձ՝ որ յետ աւուրց առման Տրովայ
Ըզբազում որերոյ ետես ըզբարս և ըզքաղաքս:»
Ոչ ծուխ ի փայլականց, այլ ի ծըխոյ հնարի տալ լոյս.
Զի սքանչելիս զարմազան բերցէ ի վեր այնուհետև...
Ոչ ըզմարըըն տրովական ի յերկուորեակ ձուոց հինու:
Զոր էյուսայն յօրինուածով գեղեցկանալ թողու ի բաց,
Եւ այնպէս իմըն սըտէ՝ պատիրս ի սոյդըն խառնելով,
Զի ոչ մէջն ըսկըզբան, ոչ միջոյն վերջն օտար գըտցի:

Կարևոր է ի թիւս եւ ի չափս տողից պահել
զդաշնակութիւն տաղից, եւ յղկել խնամով:

Ոչ ամենայն դատաւոր խըռպոտ տաղից լինի հասու.
Եւ հոռոմ քերթողաց չնորհեալ ներումն է տարադէպ:
Իսկ արդ յա՛յդ լինչ ապաստան մոլորիցի՞մ ըստ քիմս ի վիր,
Կամ թէ զմեզս իմ ակնյայտնի՞ համարեցայց ամենեցուն՝
Ցուսով թողութեան աներկեան և յապահովս.
Ի սպիւտից ազատ գըտայ, իսկ գովութեան ոչ արժանի:
Դուք զհելլէն տիպարս ի ձեռս ածէք ըզխիչեր...
[Զհանճար Ցունաց ետ Մուսա, յունաց ոզորկ լեզուաւ խօսել]:
Ըզգեղջուկն և զուարճախօս գիտեմք ընտրել բան ի միմեանց,
Թէ լցեմք յունին և ի մատն օրինաւոր ձայնից հմուտ:

Ոչ թողին լինչ անփորձ և մերասեր ըստեղծաբանք,
Եւ ոչ փոքր առին պարծանս հարկանելով ձեռըն յանձին
Լըքանել զհելլէն չաւիղս և զառաջինն իրս հըռչակել:
Ոչ պերճ զինուք ու արուեստմբ վեհ քան լեզուաւ գոյր Լատինն՝
Թէ դեգեր և խարտոցի ճիպըն սատան չէր քերթողաց:
Ով արիւն Պոմպիլեան, լերուք տաղից դուք պարսաւիչ
Զոր ո՛չ աւուրք յոլովք և ոչ քերուածն ընկճեաց յերկար,
Եւ ոչ տանիցս եղընդամբք յըզկեալ կոկեաց յամբոկ գործոյն:

Պարսաւելիք ևս ցերթողի, որ բազմիցս սխալեն:

Ուր բազում լինչ փայլէ ի քերթածի՝ չտարայց ընդ միտ
Ըզսակաւ լինչ արատ զոր կամ եհեղ անհոգութիւն,
Կամ թէ բնութիւն մարդկային ըստ արժանի չըզգուշացաւ:
Զի՞նչ ապա. զոր օրինակ զրպետ զըպիր՝ թէպէտ խրատեալ՝
Եթէ զնոյն մեղիցէ ցանգ՝ ոչ արժանի է թողութեան,
Եւ ծաղըր կայ քնարահար՝ որ միշտ ի նոյն լար սըխալէ.
Եւ նոյն լինքնըս ցասնում յորժամ նիրհէ քաջըն Հոմեր.
Սակայն յերկար ի վաստակ մարթի թէ քուն սըպըրդիցի:

Քերթուած, որպէս նըկար, է լինչ՝ որ մօտ եթէ կայցես,
Եւ է՝ որ քաջ ի բաց կացեալ ըզքեզ յինքն յանկուսցէ.
Սիրէ ա՛յս լինչ ըզմութ, լուսով կամի գալ այն ի տես
Որ ի նուրբըն սրսրթենէ դատաւորին երկընչի ոչ:
Գամ մի եղև սա հաճոյ, նա տա՛ն անգամ լիցի՝ կըրկնեալ:
[Քերթողաց ոչ մարդիկ ոչ դիք ներեն լինել միջակ]:

Գովեստ հերթողութեան, եւ օգուտ նորին առ նախանձոտ։

Զվայրագ մարդիկ սուրբն Որփևս և աստուածոց պատգամաւոր
Ցարեանց ու ի չաղղակեր վարուց կենաց դարձոյց ի բաց.
Աստի զվագերս համբաւեալ և զամեհի կակղել առիւծս։
Եւ Սմփիոն՝ nասանին պատմի կերտողըն Թեբացւոց
Ըզքարինս ի ձայն փանդռան դընչեցուցեալ nստուցանել
Եւ ամոք ողոքանօք տանել բերել յուպէտ յուկամ։
Այս երբեմն խաստութիւն եղեալ՝ ընտրել ըզգօնաբար
Ըզսուրբըն ի պըղծոց, և զաշխարհին՝ յերաց անձնիւբ.
Զարս ի մոլոր խառնից կարճել, դընել դաչինըս կանամբեաց,
Աւան կառուցանել, գըծել օրէնս ի տախտակի.
Այսպէս եկն ի դիւցական ճարտարս ու ի տաղս անուն և փառք։
Ցետ սոցա մեծըն Հոմեր և Տիրտէոս ի նուագս երգոց
Զոգիս արիականս յարիական վառեցին գոռ.
Տաղիւք պատգամք խօսեցեալք, և ճանապարհ կենաց ցուցաւ։

Պահանջի հանճար եւ արուեստ ի հերթողութեան։

Խընդիր է՝ բնութեամբ լիցին թէ արուեստիւ տաղք գովելիք։
Ոչ ուսումըն կրթութեան առանց առատ ճոխ երակաց,
Եւ ոչ թէ միայն բիրտ հանճար օգուտ իցէ՝ տեսանեմ ես.
Այսպէս սիրով դաչնաւոր զմխիթանց նըպաստ հայցեն դոքա։
Նըկըրտեալն ի ցանկալի ասպարիսին ժամանել կէտ
Վաստակեաց յոյժ ի տղայ տիս՝ ի քիրան ի ցուրտ համբերատար,
Ժուժկալեալ հրաժարեաց յԱստղկանէ և ի գինւոյ.
Որ զպիթեանս երգէ փողար՝ ուսաւ սաստիւ նախ վարժողին։
Զարգիս չա՛տ է ասել՝ «Ես հրաշալի տաղս յօրինեմ.
Ըզյեանեալըն քոս առցէ, ամօթ է ինձ յետըս մընալ,
Եւ ո՛չ եղէց խոստովան անգիտանալ զոր ոչն ուսայ։»

Զգոյշ լեր ի մարդահաճոյ ունկնդրէ։

[Ընտրել պա՛րտ է զճըշմարիտն ի նենգաւոր բարեկամէն։]
Դու թէ ումեք եռուր լինչ կամ եթէ տալ լինչ կամիցիս՝
Մի՛ այնու զուրախացեալն առ քո քերթեալ տաղսըդ տաւիր.
Զի անդէն գոչիցէ՝ վա՛շ, գեղեցի՛կ, բարւո՛ք, ապնի՛ւ.
Թալկասցի առ նոքօք, աչքըն սիրունք քամեսցեն ցօղ,
Վազեսցէ ի վեր ընդոստ և կայթս ոսկւոքըն դոփեսցէ։

Ձերդ վարձաւորք ի դիահանս որ կոծ ջայլեն եղերամարք
Առաւել ասեն առնեն անդ քան ըզբուն սերտ սըգաւորս.
Այսպէս կատակն այպանող քան զհաւասին չարժի գովիչ։
Տաղս հիւսեալ քո՝ քեզ մի՛ բնաւ դաւեսցեն միտք աղուհակերպք։

Օրինակ եւ պաշտօն ուղղապատ ընթերցանի։

Կուլնտիլեայ եթէ լինչ ընթեռնուիր, ասէր՝ Ուզղեա
Փոքր լինչ աղէ զայս և զայս, թէ զուր ճըգնեալ զանձն ասէիր
Ի կըրկին փորձ ե՛ երիքկին լաւագունին անձեռընհաս,
Տայր ջընջել զանկազմըն տաղս և վերըստին ածել ի սալ։
Թէ ջատագով վընատուզ ընտրէիր կալ քան փոփոխել,
Ոչ ևս այլ ընդունայն բան լինչ կամ չան ի գործ առնէր,
Զի առանց նախանձորդի քոյովդ և քև զմայլեսցիս լոկ։
Այր բարի և խոհական կըշտամբեսցէ զտաղս անարուեստ,
Խըստի՛ցըն մեզ դիցէ, և ըզգըրիչըն դարձուցեալ
Անարդիցն արկցէ սեաւ նիշ, ըզպերճանացըն հատցէ զարդ.
Լոյս պահանջեսցէ այլոs այլոs ծագել տեղեաց,
Ցուցցէ վերկիսօսութիւնն և զփոխելիսն արատցէ յայտ.
Եղիցի Սրիստարքոս և մի բարուբս լինչ յօգեսցէ՝
Թէ առ ի՞մ ես ի սնոտիս տրամեցուցից ըզմըտերիմ։

Նկարագիր իմաստասիրական հերթողի։

[Որ խաղուց չէիցեն տեղեակ յասպարիսին խորչի գինւոց,
Անհմտանն անուոյ՝ զընդի և չոբընչանան նըստի հանդարտ,
Զի մի քըրքիջ աներկիւղ բարձցեն ակուսքաք կուռ բոլորեալք.
Իսկ որ անգէտն է տաղից, ժըլտի՛ սակայն ըստեղծանել...։]
Որպէս ա՛ք զոր չարակեղ բոր կամ գալուկըն տանջիցէ
Կամ չամբուշ բանգագուշանք կամ զայրագինըն Դիանա.
Ի մոլին հըպել հերթող խելթան ուշիմք՝ փախչէին ի բաց,
Բարձրավիզ սա յորժամ տաղս ըզգայուելով չըջի թափառ...
Եւ չէ յայտ ամենևին՝ ըզտաղն առ ի՞նչ կարկատիցէ...
Արգարև մոլի նա և օրինակ իմն իբր արջոյ
Զգայուագին թէ խորտակել զընդդիմակաց զօրեաց խաղխամս,
Ըզտըզէտն և զբանիբուն փախուցանէ ժանտ տաղասաց.
Իսկ կալեա՛լ զոք՝ պինդ ունի և ընթերցմամբ ըսպանանէ,
Տըզրուկ անբաժ ի մորթոյ՝ մինչչև արեամբ յագուրդ առեալ։

Որաւհու զինեւեան առացեալ։

Աւանիկ արդ ես ըսպաս հարից ուրեմն ըզյեսաևի՝
Որ զերկաթ գիտէ սըրել՝ լինքն անատակ հատանելոյ։
Ըզպաշտօնն և ըզգործ, իմ ոչ գըրեալ լինչ, ուսուցից,
Ուստի՛ գանձք մըթերիցին, զի՛նչ քերթողին սընուռնդ և կեանք։
[Զի՞նչ ի դէպ, զի՞նչ ոչ, և յո՛ տանի արուեստն, յո՛վ և վրիպանք։]

Թրգմ. Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՈՐԱՏԻՈՍ, Aratus Sicyonius

34

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ Ա.ՐԱՐՋՈՒԹԵԱՆ

Երփիճի, *(աե. երփնից)* ֆոյներ	Ականողիճ, ապերը
Խուռն *(ֆոյ.)* հոծ բաղմութիւն	Խոպալ, ցոփութիւն, վխտալ
Վտառ վտառ, խումբ խումբ *(յոյն.*	Անցարի, խաղը, անհերքելի
Խեփոր, խեցեմորիկ կենդ. *[կերտ.)*	Ծիծառնուկ, ասխատ
Գաղտակուր, ապտակ *(ակտիճ)*	Մխիթն հարկանել, շիրմել, սուղ-
Շուրջ ածել, ըստ դէն պտըտցնել	Խորդ, կոշտ *[ութիւն*

Եւ ասաց Աստուած.—Հանցեն ջուրքըն զեռուն բազմասերունդ։...
Իսկ և իսկ նեղուցք և ծովք, ծոց ամենայն, ամենայն խորշ
Եռացին յանթիւ սերունդ ի լուղակաց խուռն յոգնահոյլ՝
Ոյց թևովքն և ջինջ թեփովք ընդ կապուտակըն կոհակօք
Սող առեալ վըտառ վըտառ՝ խումբ և խըռուտս ի ծով գործեն։
Կէսք մենակեացք կամ ընդ ընկերս ըզբուռս իւրեանց ճարակին լօռ,
Եւ ջըրջին յայրըս բըստոյ. կամ խաղալով, փայլակըն սուր,
Ցուցանեն արեգական զվէտ վէտ չապիկան ոսկեճամուկ։
Այլք հեշտիւ ի գաղտակուր խեփոր մընան տամուկ խայծին,
Կամ ի զրահ պատենազէն սպասեն որսոյն ընդ խարակաւ։
Կորաքամակ դելփինք և որթք ծովու խոպան ի խաղաղ ջուրս.
Անարի, անճոռնի և ահագին վիշապ ձըկունք
Թաւալեալ յաղթահարեալ զմեծածովն՝ յուզեն մրըրիկ։
Անդանօր Լևիաթան՝ սոսկավիթխարն ի կենդանիս՝
Ի մկանունս անդընդոցըն տարածեալ իբր հըրուանդան՝

Կայ ի քուն, կամ գնայ ի լուղ, ծըփին ցամաք լինչ թըւեցեալ։
Ականջքն ի ներքըս ձըգեն, քթափողք ժայթքեն ծով մի ողջոյն։
Մեղմախառն անձաւք՝ ճահիճք՝ ափունք հանեն զանթիւս
Ի ձըւոցն որ նոյնհետայն բեկեալ ի դէպ ջախջախանօք՝ [ձագունս
Ցուցանեն ըզմերկանդամ մանկտին, որ փոյթ փետրազգեցիկ
Եւ ի թռիչըս պատրաստեալ թևովքն ելեալ վերասլանան,
Եւ կանչիւք յաղթանակօք սաւառնացեալ յօդըս վերին
Քամահեն զերկրաւս՝ տեսեալ զայն ի հեռուստ ընդ բարձր ամպով։
Սատ արծուին և արագիլ ի քարակոտոր ժայռս ափափայս
Եւ ի գիտակըս մայրից կառուցանեն իւրեանց զաշարս։
Ոհական խորդոցըն տոլ ի բարձր ի հողմըս վերեվակի՝
Ամի ամի զհետսըն ուղղեն, յանցին ի ծուփ ծածանին օդք։
Իսկ թըռչնիկք nus ի յոստոյ զպուրակս երգովքն առնեն ուրախ,
Թօթափեալ զօրըն ցերեկ ածեալ ըզթևսըն նըկարէն.
Եւ անդէն պանծալին ծիծառնուկ ո՛չ լըռէ յերգոյն
Գեղգեղեալ ըզցայգն ի բուն զողբանըբապ զիւր հեծութիւնսն։
Այլք յարծաթի ծովակ՝ ի գետս ի լիւղ լուանան զմանրաթև լանջս.
Իսկ կարապ՝ կարակնակերտ ուլամբ՝ յերկուս լուսափայլ թևս,
Ի լօգիկ հընքեղագեղ, թևաճակաձև լայնչի թաթիւք
Մընխրճ հարեալ շուրջ ածէ ի լոգարանս ըզպերճանս իւր։
Այլք երկրակոխ գետնագնաց յոտից ի ճեմըս պարծ հընջին,
Աքաղաղ ցըցունագարդ՝ փողակարդաց լըռին ժամուց,
Եւ միւս այն՝ գեղատեսուն փաղփեալ ի գոյն պէսպէս երփնից
Ծիրանի ծիածանին և աստղախուռն ականողեաց։

Թրգմ. Հ. Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՄԻԼՏՈՆ, Կորուս Դրախտին Ի.

35

ՈՂՒ ԱՆԴՐՈՄԱՔԵԱՅ ԸՆԴ ՄԱՀ ՀԵԿՏՈՐԻ

Սիrs ի բերաւ, հոքին քերանը հա-
Անկուած, հէ-ոռ-աձ+ [ռած
Երկդիմի (ձորձ), երկո- հէ-ոէով
Ոգի զոգուվ ածել, ընտոպո- ըռ-
Հոսել, վոր յէթել՝ նեռեռել [ռել
կկել, էորձնել (կռա-)
Ստուվիք, ներ+էին խորշեր
Ագաճել, հաքինել

Փողոտուկ, բլեռո ղարդ մը (կռա-
Վարձաւիք, օձէկռ [նանց
Ի միտս լինել, } խելքը վրան գալ
Զգալ անձին }
Զայրել, խոքովին լալ
Ամոխաս, ընդանէ+է անգամ
Տաճարակից, ուղտանէկց
Լուել, դադրիլ

... կինն Հեկտորի էր իրագիկ,
Զի ոչ չոգաւ ոք առ նա ատուգապատում զբօսացատար՝
Ազգել նըմա զի էր այր նորա մնացեալ արտաքոյ դրանցն։
Այլ նա յալըս ներքի՛ն տանըն բարձու կըկէր ոստայն,
Ծիրանի ձորձ երկդիմի՝ պէսպէս ծաղկեալ նըկարակերտ։
Պատուիրեալ ընդ ապարանն էր աղախնանց վարսագեղից՝
Ջեռուցել ի խարոյկ հրաւին զմեծն յեռոտանիս,
Ի ջերմացուր Հեկտորի լուացումն՝ ի դարձ պատերազմին։
Միամի՛ա. ոչ իմանայր զի յոյժ ի բաց ի լոգանաց՝
Ըզնա խաժակն Աքենաս պարտեալ ի ձեռն էր Աքիլլեայ։
Զայն զուժի և կականման յուսկն իւր հընչեաց յաչտարակէն.
Ըզդողի հարան անդամքն, ի ձեռանէն անկաւ կըկոցն,
Եւ անդէն ձայնարկեաց առ զանգրագեղ նաժըշտանին.
Օ՛ն, արիք ընդ իս երկուք, երթայց տեսից զի՛նչ գործեցաւ,
Զայն լըսեմ բզմեծարոյ սկեառիս, և յիս ի լանջըս իմ
Թընդայ վազէ սիրտս ի բերան, ծունկքս ի ներքոյ ի պաղ մած-
Զայս ասաց, և ի տանէն սրացաւ հանդոյն ցընորելոյ՝ [նուն...
Սիրտ ի թուընդ և ի դող. գնայլն ընդ իւր և աղախնայք։
Իսկ հասեալ յաչտարակն և ի մարդկանն ամբոխակոյտ,
Եւ կացեալ ի պարըսպին՝ չուրջ ած զաչերն, եաես ըզնա
Քաղաքին դէմ յանդիման ընդ քարշ վարեալ, և զձիսն երագ՝
Զի ձգէին զինքն անողորմ ի գոգաւոր նաւս Աքայեանց։
Գիշեր խաւարակուռ մածեալ ծածկեաց զականողիսն.

Ցետըս կոյս գլորեցաւ, ոգի զոգւով ածէր նըւազ։
Ի բաց հոսեաց ի գըլխոյն զպերճապըսակ զարդուցն չուք։
Զապարօշն, ըզծամակալ և զփողոչուկն իւր ըզհիւսկէն,
Եւ ըզքո՛ղըն զոր Աստղիկ ոսկեզլինիկ նըմա չնորհեաց
Ցաւո՛ւրն՝ յորում գինքն էած Հեկտոր սաղաւարտաճօճ
Ի տանէն էախովնի՝ բիւրս ի բիւրուց տըւեալ վարձանս։
Արդ ըզնովաւ չուրջ պար առեալ խըռնեալ կային տալք իւր և նէրք,
Ունէին գինքն չիւրեանս՝ որ թալանայր ճեպէր ի մահ։
Մինչ յոգիսըն դարձեալ՝ ի միտս եղև և զգաց անձին,
Կոծ առեալ արտօսրայեղց՝ ի տրովուհիսն արձակեաց ձայնս.
Հեկտո՛ր, վա՛յ լինձ հիքիս. ուրեմն ի մի ծընաք վիճակ
Դու և ես. դու ի Տրոյա՝ ի Պրիամեանն անդ ապարանս,
Իսկ ես ի Թեբէ, յանտառախիտ Պլակայ ustrus,
Ընդ յարկաւ էախովնի՝ որ զիս սընոյց ի տղայ տիոց,
Եղկելին զողորմելիս. ո՛տայր թէ քնաւ չէր զիս ծընեալ։
Իսկ արդ ի տուն գըժոխոց, ի ստորմիս խոր սանդարմետաց
Երթաս դու, և զիս ի սուգ ծանրաթախիծ լըքեալ այրի՝
Ցապարանսըդ թողուս, և դեռ մանկիկս ի ճիրմ հասակ
Զոր ծընաքըս դու և ես՝ թըշնուառականքս, և ոչ լիցիս
Դու նըմա ի պէտս, Հեկտոր, քանզի մեռար, և ոչ նա քեզ։
Զի թէպէտ և ապրեսցի յաղետաբեր խազմէ Աքեանց՝
Սակայն ապա միշտ ընդ իւր եղիցին ցաւք և տառապանք.
Զի օտարք ըզսահմանս անդոց իւրոց փոփոխեսցեն։
Որբուքեանն օր յամենայն ամոխախից գըրկէ զմանուկ.
Ինքն հանապազ գըլխակոր, արտասուալից ծընօտք նորա։
Կաթօտեալ երթայ տղայիկն առ բարեկամսըն հօր իւրոյ,
Զոմն ըզլօգկէն ձըգելով, զայլոյ ձորձոցըն բուռն հարեալ։
Ցողորմել ուրուք նըմա՝ ըզփոքր ըմպիկըն կարկառէ՝
Ըզչըրթունսն ևեթ թանալ, և զքիմսըն ոչ սուզանել։
Եւ զըւարթ ոք հարք և մարք՝ ի խրախճանէն իսկ մերժէ զնա՝
Գանալից կըսփեալ ձեռօք և հալածեալ նախատակոծ.
«Ե՛րթ ա՛յդպէս ի կորուստ, չիք քո ՚նդ մեզ հայր տաճարակից»։
Եւ գառնայ կողկողագին առ այրի մայրըն գնայ մանուկն,
Ոստանիբեանս՝ որ երբեմն ի ծունկս ի գիրկըս հօր իւրոյ
Ուղղուվք ևեթ կերակրէր և պարարակ խոյոց ճարպով.
Իսկ լըռեալ ի տղայական խազուցն յորժամ ի քուն երթայր՝
Ի մահիճըս նընջէր և ի ծոցի իւրոյ ստընտուին

Ի կակուղ անկողինս, ի փափկութեանց ըզմայլեալ սիրս։
Իսկ արդ շա՛տ ինչ, ի սիրուն հօբէն զբրկեալ, չարչարեսցի
Ոստանիչխանս, յոր աւուն Տրովադացիք զինքն յորջորջեն,
Զի դու միայն պահէիր զբարձըր պարիսպ նոցին և զդրունս։
Իսկ այժմիկ առ մահկաճև նաւուքն հեռի զԵզ ի ծնողաց՝
կերիցեն զեռուն որդունք ըզմերկդ՝ յես չանց քեզ յագելոյ.
Թէպէտև առատնին կան մըթերեալ քեզ պատմուճանք
Ներքանիւթք և չնորհաչուք, տարազագործ կանանց անկուած.
Այլ ընկեցեալ ի հուր ծախիչ այրեցից արդ զայն ամենայն,
Զի քեզ չեն լինչ պիտոյ, զորս և ոչ այլ ագանիցիս։
Զայս ասաց ողբալով, կանայքն ընդ իւր ջայլեին կոծ։

Թրգմ. Հ. Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ — ՀՈՄԵՐՈՍ, Իլիական *ԻԲ*.

36

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՆԱՄՔ ԱՐՋԱՌՈՑ ԵՒ ՁԻՈՑ

Ասիիք, կորճոլիւն, սաք
Թամբ, մասաց մասը (մարդիկ)
Երի, կորձիւն կախաստ գիսը
Ձեղ ընտրիս հանել, ընտրել
Վրիժակ, եղբայր
Աշխատ, կարգը քոյն (յն)
Կոռափիս, կոր
Ասպաստան, ախոռ (յնոռ)
Արբուն, կորչոտ հասակ
Պախրե, եզ, կով
Կարբ, սրոնդ
Աք, ոտ
Ատակ, կարող
Սուղ, կարճ
Սօս, հզարտ
Շռուշակ, սանդ
Ձեռներից, յանդասքն
Շրջուլ, իրարէ
Ջուգաց, ղայք, ձեկոնէղ
Պառակամայր, հորքներոս մայր
Գաւակ, յեռոյտ [(կով)
Ընջուղ, գեղցած հորթ, մոզէ
Սեռն (=վիսեռն), սայէ սռնակ
Դեղ դալար, կանանչ խոտ
Ոսին, նիհար
Ջաւակ, սերոնդ

Ա

Սըկսցեալ ընդ մըրցանակս ոլիմպական յաղթանակին
Ըզձիս ոք թէ սնուցանէ, թէ ոք յարօր ըզպինդ եզինս,
Ի վեր քան զամենայն զանձն և զիւրանն ընտրեսցէ մարդ։

Լաւագոյն են կերպարանք խոժոռագեղ թանձըր կովու,
Գլուխ անճոռնի անհեգեդ և պարանոց սոնք և ըստուար,
Եւ մորթ ի կըզակէն երեօքըն չափ անկեալ ի կախ,
Ոչ գոյ չափ երկայն կոզիցն, և ամենայն լինչ յաղթանդամ,
Եւ պըճղունք ւ՛ընդ կորափիտ եղջերըքն ականջքըն թաւամազ։
Ոչ անհաճոյ լինձ լիցի սպիտակախայտ նըշանաւոր,
Կամ ըմբոստ ի սամեռից և մերթ արի վրիժակօք խեռ,
Տեսիլ նորա հանդոյն ցըլու, և լինքն ուղղորդ լեռնաբերձ,
Եւ սաստոտաք ագռոյն ընդ քարչ՝ ի բայսն ածեն հետոցն աւել։
Օրինաւոր հարսանեաց և հըպատակ երկանց հասակ
Ցետ չորրորդ ամի սկըսեալ՝ նախ քան ըզտասըն դադարէ.
Ցա՛յլ ժամանակըս չեն ատակ ի ծնունդ, և ո՛չ յարօր զօրեղ։
Անդէն խակ մինչ անդէոց յորդէ զըբաղթ առոյգ արբուն,
Լո՛յծ զարուս և փոյթ ըզհօտն յամուսնութեան ի խառնըս արկ.
Եւ նորոգ սերընդեամբ զաւակ ի լոյս ընծայեսցիր։
Վայելուչ աւուրք սիոց հէք մահացուաց փախչին վաղվաղ,
Հզկընի զան մըտանեն ցաւք և ծերոյթ ծանրաթափիթ,
Եւ տաժանք և խիստ մահուն անգըթութիւն բառնայ զնոսա։...
[Ամենայն յետ ծընընդոց ի պէտս որթուց երթայ խրնամ.
Եւ անդէն զանուանս ազգին և ըզկընիքս հարեալ դրոշմեն,
Եւ թէ զո՛յս ընդ ընտիրս հանցեն յաճումըն պախրէից,
Կամ բաղնաց ի նըւէր, կամ ախօսից ի կոտորել
Եւ ըզգաշտըն կուտակեալ կոչտից ի դէզ՝ ցրուել ի հարթ։
Ա՛յլ ջոլիրքն արածին յարօտ գալար գարնանագեղ։
Զորս ի փոյթ և ի հրահանգըս չինական կըրթես վարուց,
Դու զընջուղս յորդորեսջիր և փոյթ արա նըւաճելոյ,
Մինչ ոչիւք մանկանց հըլու և մինչ հասակ է դիւրամէտ։
Եւ նախ բոյլ ի նուրբ ուռոց մանեակս ի վիզն արկանիցես.
Եւ երբ ազատ պարանոցք մըղին ի հարկ ծառայութեան՝
Ցայնմ հետէ յանրոց անտի ամոլս ի զոյգ կապեալ լըծեա,
Եւ զզըւարակս հարկեցո՛ զուգաց խաղալ յոտիցն ի ճեմ,
Եւ ըստէպ դատարկ անիւք ի նոցանէն ածգին ի քարշ
Ընդ երեսըս փուշոյն հազիւ զըծեալ զհետսըն թեթև։
Ծանրաբեռն ապա ճրգնեալ սեռըն փիճի ճըռընչիցէ,
Եւ զագուցիկ չըրջանակսըն ճրգեսցէ պղընձի առեղ։
Սատ տըրմուղ համբակացն ոչ դեղ դալար միայն ևեթ
Ոչ զուռեաց ոսին սաղարթ և կամ ըզխոտ ջըրասուն,

Այլ ցորեան դեռաբուսիկ քոյով ձեռօքըդ քաղեսցես,
Եւ զձիւնաթոյր գոյլըն՝ որպէս առ մեր նախնիս՝ պառակամարք
Մի՛ վընուցուն, այլ զբստինս ողջ ջամբեսցեն քաղցր որդեկաց։]

Բ

Նոյն նըման և ընտրութիւն է ձիականըն պահարի։
Զոր դամ մի պատուցանես ի յոյս ազգին գոլ պայազատս՝
Ի մատաղ տիոց անտի՝ հոգ խընամոյ տարջիր նոցուն։
Նախուստ իսկ մըտրուկ քաջազն երիվարի ելեալ ի դաշտ՝
Ուղղաբերձ սօս ընթանայ, զաքսըն թեթեւս առնու դընէ.
Ջեռներէց ի ճանապարհ և սպառնալից ուխից ի փորձ
Դիմագրաւ նահատակի ե՛ւ յանծանօթ դիպեալ կամուրջ.
Եւ ի սին սօսաւիւն ո՛չ սոսկալի ահիւ չրտնու։
Բարձրավիզ և գլուխս նուրբ, սուղ որովայն, գաւակ առոյգ,
Եւ արի կուրծք քաջալանջ ի թանձրամիս թամբ յօրանայ։
Թոյր ընտիր՝ չէկ և պիսակ, իսկ յոռեգոյն՝ գորշ և աշխէտ։
Իսկ և իսկ եթէ երբեք չաչիւն գինուց հընչէ հեռուստ,
Ոչ գիտէ հանդարտել, ականջք կանգուն, անդամք ի դող,
Եւ ընդ քինթս լզմրթբերեալըն փռընչելով մըրըրկէ բոց.
Բաշքըն թաւ և գալ ուսովն իւր ազբախտամբ անկեալ խաղան,
Եւ կրկինն ընդ թիկնամէջս ողուցիք հլեալ սըփռին ի վայր,
Եւ թաթուլ սալասըմբակ գոփեալ թընդայ գափր հատանէ։...

[Բեզ թէ փոյր մարտից յաւէտ և ձիախրոխտ իցէ սպայից,
Առաջին ջան՝ է տեսանել ըզմարտկաց գոռս և զառնապէնս,
Հանդուրժել գալարփողոց և չառաչման չարժուն կառաց.
Սանձուց և չրուշակաց յասպաստանին չկահիւն լըսել,
Գեր ի վեր ի վարժողին հեչա փաղաքուշ խայտալ դրուաս
Եւ սիրել ըզծափաձայն չօշափ ուլանն ուժգնահընչակ։
Ցայդոսիկ՝ այն ինչ ի ատեանց մօրն հատուցեալ՝ խրախուսեսցէ.
Առ նըմին տացէ զկըզակն և ի փափուկ դանգանաւանդ,
Դեռ ևս անզօր դեղևկոտ, անփորձ դեռ ևս աստեացն ուժի։
Սակայն յելս երբորգաց՝ ի մուտ չորիր ամարայնոյ՝
Ըսկիզբն առցէ ճախր ի ճեմել, ճեմքն ի կըշիռ բընդել դրընդիւն,
Եւ զկարքիցն ի ճօճ կրկնեալ առցէ թողցէ ճապուկ մանուած
Տագնապելոյ լին հանգոյն, ձայն յասպարէզ այնուհետեւ
Սրընթացիւք տացի հողմոց, և իբր արձակ յերասանաց
Ի հարթաբրգակ թռուցեալ ի դաշտ՝ հազիւ զիցէ հետս յաւագին։]

Թրգմ. Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ — ՎԻՐԳԻԼԻՈՍ, Մեսականաց Գ.

37

ՍԱԴԱՅԵԼ ԵՒ ԻՒՐՔՆ ԱՅԼԱԿԵՐՊԻՆ ՅՕՋՍ

Աղապատաճիւ, կաբկեցուկ	Պայքիւ, պուլպուտ (ծաղիկը ջուր)
Նաղապատել, երբ պլանչ	Ցուկիլ, ցուկիլ-պէս-երկնալ, յեր-
Ձովսաճաճ, քառահիղ	Դիտակ, դիմակ [աղեղի ըւլալ
Ամենագիւց (մեհեան), Պանթէոն	Զովող, ընկեր, քրձակից
Ցաղրանակ (ած.), յաղթական	Նուանդ, նուլը, վխտալը (որ-
Արեւային, Նղջերիկ, Ծառաւ (ծարբ), Խառամանի } օդի պեսպիներ	Ընդհաս, պարբեր [դերան)
Զո՛յգ, նդնդակ	Ակումբ, (ած.), բուլբուլած
	Ռամիկապատ, բանակին մէջ ձա-
	Ձեպ տալ, ճեպել [ուղղել (ընդուդ)
	Զանխուլ, քաղցր

Անցեալ ընդ գուռնըն զըժոխոց անպահապան և մեծաբաց՝
Զամենայն լինչ զըտանէ Սատան ի խոր ամայութեան.
Զի կարգեալքն անդէն ի պահ՝ բողեալ զտեղին իւրեանց բափուր՝
Ելեալ կային ի բացեայ թռուցեալ յաչխարհըն վերագոյն։
Այլք յալուցս էին մեկնեալ՝ զԱմենագիւց չինին որմովք՝
Որ քաղաքն էր և գոռոզ արքայարանն Սրուսեկի.—
Զայդ կոչումն առեալ Սատանն ի նմանութիւն պայծառ աստեղն։—
Առ վայրօքն ի պահ կան գունդք, աւազորեաւրն յատեան ակումբ.
Զայս տըւեալ նորա պատուէր ի գնալ իւրում, և պահէին։...
Ակրն ժամ ի ժամ կալեալ դարձի մեծի նահատակին
Ցարձաւանացն յոր չոգաւ տարաչխարհաց ի խընդիր։
Անց սատանն ընդ բազմամբոխ գունդըն զանխուլ և յանծանօթս
Տեսլեամբ հրեշատակերպ ռամիկըսպաս զօրականի։
Ի դրաց Սամայելեան գահլըճին եկ յաներեւոյթս
Եւ նըստաւ յաթոռ իւր պերճ որ՝ ճոխաճան պարզեալ կերպաս՝
Կայր ի բա՛ձրըր ծագ սրահին արքայապանծ չըքեղութեամբ։
Եկաց ժամ մի բազմեալ՝ պարագիտել անտեսաբար.
Իբր յամպոյ լմինքէ ապա գըլուխ իւր ճաճանչեղ
Եւ գիտակ աստեղափայլ կերպարանացն երևեցան։
Հիացեալ գունդ զըժոխոց՝ աչս ի յանկարծ բարձին ծագումն,
Եւ ծանեան ըզցանկալին իւրեանց հասեալ ըզպետն հըզօր.
Աղաղակ ուժգնին հընչեաց, ճեպ յատենէն եռուն աւազք.

Ի խաւարին ակըմբիւցըն յարուցեալ մատեան առ Նա
Հասարակ ուրախութեամբ ի խնդակից նըմա լինել։
Նա ձեռամբ լըռեցոյց յունկընդրութիւն սովին բանիւք.
«Ա՛թոռք, Տէրութիւնք, Իշխանութիւնք, Զօրք զօրութեանց,
Ըզկընի յաջողուածոյս քան զամենայն ըզյոյս ի վեր՝
Եկի հասի առնուլ հանել ըզձեզ աստի յաղթանակաւ
Ի զազիր և նըզովեալ սանդարամետ խոր վիրապէս։
Օ՛ն, արիք, ժառանգեցէք արդ տիրաբար զաշխարհ մի մեծ՝
Ասն մի ընդհատ ի բնակաւոր և հայրենի երկինէ մերմէ,
Զոր ստացայ ծանուս վտանգաւ, տաժանաւոր ձեռնարկութեամբս...։
Զիպ լոյծ զրուցել ըզգիւտ նորատեղծեալ այնր աշխարհի
Հրուչակելումն ընդ երկինս յառաջագոյն ի համբաւուց,
Դաստակե՞րտ զարմանագործ ամենալից բարգաւաճեալ՝
Ուր մերով հերքմամբս եղաւ մարդն ի գրախտի յերջանկութիւն։
Իմ յիւրմէ Ալարչէն ուծացուցեալ ըզնա նենգաւ՝
Որսացայ, և յառաւել ի ձեր զարմանս, պըտղով միով։
Ցասուցեալ ընդ այս նորա,— կարէ՞ք ունել ժոյժ ի ծաղուէ,—
Մատնեաց ետ ըզսիրելին իւր մարդ՝ համայն և զայն աշխարհ
Ցաւար Մեղաց և Մահու, հարկաւ և մեզ միանգամայն
Երթալ ընդ այն ընթանալ, բնակել անդէն, տիրել մարդում,
Փոխանակ՝ զի նա ինքն ամենայնի էր իշխելոց։
Սպաքէն և զիս ինքնին դատեցաւ նա, նա՛ մանաւանդ
Ոչ թէ զիս, այլ զօձն անբան՝ յոյր կերպարան խաբեցեր զմարդն։
Արդ ահա գործոցս համար. զի՞նչ այլ մընայ ձեզ առնել, դիք...
Ցառնել այժմէն մըտանել ի ծայրալիր երանութիւն»։

Զայս խօսեալ՝ վայր մի եկաց, ակն ի պայթիս միահամուռ
Եւ ի բա՛րձրը դըրուաւիս կալեալ թէ զան յունկն իւր ճայթել։
Բայց սակայն ընդհակառակս ի բոլորից լըսէ դիմաց
Միախուռն և դըժընդակ անթըւելի լեզուաց չըչիւն...։
Ցապուշ միտըս զառածաւ, սակայն առ սուղ ինչ ժամանակ,
Զի անդէն առ նըմին յաւէտ ընդ անձն իւր զարմանայ,
Տեսեալ զի ի՛ւր խակ երեսք ձըկտեալ ցըուկեալ ծիւրին ծընգին,
Բազուկքն ի կողսըն մածնուն, ազդերքն յիրեարս առնուն ոլորս,
Մինչև յոտիցն խակ անկեալ՝ գլորի վիշապ սոսկավիթխար,
Ընդ պորտըն սողալով. ընդդէմ մըրցի, սակայն ի զո՞ւր։
Զօրութիւն մեծ գինքն ընկճէ՝ ատ գատակընքին պատուհասեալ
Ընդ նովին կերպարանօք որով գործեալ խակ էր գոճիրն։

Խօսել ճըգնի, այլ երկճիւղ լեզուաւ առ նոյն երկճիւղ լեզուս
Շըչիւն առ չըչիւն դարձուցանէ զարհուրագին.
Զի էին գեւք համօրէն առհասարակ այլանդակեալ
Բընաւքն յօձ, իբրու զովղք յանդըգնագործ դըժնէ վիսաուն։
Սոսկալի էր չռինչ չէմանցն անդ ի սրահին յոր գեռային
Հրէշից եռանդըն թանձրախիտ չաղապատեալ գլուխս և սրտունս,
Կարիճ, քարբ, իժ անողորմ, արքայիկ, ժանտ խարամանի,
Եղջերիկ և ծարաւ, որպիսի ոչ ուրեք երբեք
Սողնոց ջոլիր խառնափընդոր եռաց գեռաց յերեսս երկրի...
Էր և մեծն ի նոսին ինքնին գարձեալ ի վիշապ օձ
Անճառնի և յաղթանդամ քան զանհեղեղըն Պիւթոն,
Եւ թըւէր ոչ ինչ պակաս իշխանութիւն գեռ յայլս ունել։
Զիւր ըզհետ բոլորեքեան ելին ի դաշտ ազատ արձակ՝
Ուր ա՛յլ գունդն ապըստամբ անկեալ յերկնից՝ էր բանակեալ,
Կամ կարգեալ ռազմի ճակատ՝ ակն ունէին զըւարթամիտ
Տեսանել ըզյաղթանակ գալուստ իւրեանց վեհապետին.
Բայց այլանդակ տեսին հանդէս՝ զազրակերպեալ օձից խուժանն։
Ահ կալաւ զնոսա և զո՛յզ քըստմընափուշ աղաղատանք.
Ցոր հայէինն՝ յանկարծուստ փոխակերպեալ գարձան ի նոյն։
Անկանէին ծըղիք իւրեանց, տեգք և վահանքըն թօթափէին,
Եւ նոցին տապալեալ թաւալագլոր ի նոյն ըշտապ՝
Ըսկսանէին և ինքեանք ըզնոյն չըչիւն զարհուրելի,
Ըզգեցեալք զահեղ տեսիլըն՝ ժանտագործ ազգմամբն առեալ,
Հաւասարք՝ որպէս ի մեզն՝ և ի պատիժ պատուհասին։

Թրգմ.

Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՄԻԼՏՈՆ, Կորուս Դրախտիճ Ժ.

38

ՆԿԱՐԱԳԻՐ ՎԱՀԱՆԻՆ ԱՌԻԼԵԱՅ

Ներքասեղն, քարակ ճէ-ղէբ ու-
Անճախաս, ընդդնող [ներդող
Ապաս, ղէն պէղ, տաղտ
Փանդիռն, պէսակ մը դնար
Ոռիոն, Հայկ համապէղու-ըէ-նը
Յօդածայն, յօդաւոր յայն ունեցող
Ցեցեալ յալիս, ալևոր ձեղեր
Հարկիք, ըու-խտ մը եղ
Լուսակիզն, ճեղմակ քուրդ ու-
Խեչ, նեցուկ [ներդող
Հիռ գալ, ղբջան ընել

Հասկաթուռ, լեցուն հասկով
Գօշել, պոռալ՝ յաբյակելու համար
Գադիւշ, որաներու դեղ
Կաղակրկին, երկու դէղեն կաղացող
Աղիք (ճիքբ.), դնարք ընելիք
Խայծիլ (խաղողոյ), հասուննալ
Ջողաբարձ, յողէ վրայ հանուած
Խաղալիկ, խաղացող
Յափսիթեռս (խաղալ), ղրս ոտէ
Իռանուիք, տուն [վերայ տալեւ
Թեղօշ, պէսակ մը կաղնի ծառ

Հինգ էին վահանին պատուածք, ի բընի անդ Հեփեստոս
Բազում լինչ հընարաչակերտս իմաստութեամբ սըրտին գործէր։

Յօրինեաց անդէն ի նմա գերկիր, գերկին և ըզծով,
Զարեգակն անաչխատ և ըզԼուսին լուսապատառ,
Անդ զարփիան ամենայն՝ որովք երկինք են պըսակեալ,
Ըզհոյլսն և զԲազմաստեղս և զգօրութիւնն Որիոնի,
Եւ զԱրջըն՝ զոր և Սայլ ևս անուանեն յորջորջանօք.
Որ ցանգ անդըր չուրջ եկեալ՝ դէտ յՈրիոն ակն ունի պիշ,
Եւ միայն է անհաղորդ լոգարանացն Ովկիանոս։

Անդ արար յօդածայնից մարդկան կըրկին քաղաքս չէնս,
Ի միոնն էին հարսանիք և մեծասպաս խրախճանք կոչնոց,
Եւ զհարսունս յառագաստից բոցաճաճանչ վառեալ ջահիւք
Ածէին ընդ ոստանն՝ հարսանեկան երգոց հընչմամբք.
Եւ մանկտի պարաւոր չրջան առեալ կաճառիին,
Եւ փող և փանդռունք բարբառէին ըզձայնս իւրեանց.
Եւ կանայք զարմանային՝ կացեալ առ դուրս իւրաքանչիւր...։
Իսկ ըզմիւս քաղաքն երկուք պաշարէին զօրաց բանակք
Սպառազէն փայլակնացեալք, որ յերկչաւիղ կային խորհուրդ,
Կամ ի սպառ սատակել, կամ բաժանել ըզբնաւն յերկուս՝

Որչափ ի ներքս էգեն ինչք ի ցանկալի յայնմ ապատին։
Իսկ պաշարեալքն անդ ի ներքս զինուորէին գաղտ ի դարան,
Պահէին ըզպարիսպըն՝ սիրելի կանայք և տղայք
Ամբարձեալք ի նմա, և արք ևս ընդ նոսին յեցեալք յալիս...։
(Եւ ի դէպ ժամու խուժեալ արտաքս) մարտի՛ տըւեալ ճակատ՝
Սատակէին ըզմիմեանս ի պղնձակուռ նիզակաց սայրս։

Եդ ի նմա և դեռահասիկ արտ մի վաստուկ, արտ արդաւանդ,
Լայնատարած, երեքկնարօր, և մաճակալք ի նմին յոգունք
Տանէին և բերէին չըրջեալ հարկիս այսըր և անդր.
Որոց ի գլուխ ժամանեալ արտավարին զարձադարձիւ՝
Եկեալ ա՛յր մի անդէն մատուցանէր սոցին ի ձեռս
Դաշխուրան անոյշ գինւոյ, և զառնային նոքա ՚նդ ակօսս
Տենչացեալք ի խոր անդոյն գալ հասանել անդրէն յաւարս։
Հարկանէր այն ի թիկանց, իբր արօրեալ, երիվրն մըթին,
Թէպէտ և էր ոսկենիւթ, և հիացումն էր այս մեծ յոյժ։

Եդ ի նմին և արտորայ մի հասկաթուռ, յորում մըշակք
Սայրասուր գերաւդիք ի ձեռս ըզհունձս հարկանէին,
Եւ որայքն՝ էր որ յերկիր թօթափէին թանձր ընդ ակօսս,
Էր զոր կապողք որայիցն առնէին զայնս ողորակապ...
Հասկաքաղ մանկտի յետուստ բարձեալ ի գիրկսըն բերէին
Մատուցեալ անդուլ ի նպաստ. ի մէջ նոցա պետըն լըռիկ
Ցուպ ի ձեռին կայր ի վերայ գադչին սըրտիւ բերկրապատառ։
Կազմէին քարոզք կոչունս ընդ թեղօշիս մի մեկուսի,
Եւ զենեալ եզըն մի մեծ՝ հանդերձէին, և անդ կանայք՝
Մըշակացըն հայս յընթրիս՝ թրէին գերմակ ալիւր առատ։

Եդ ի նմին և այգեստան մի բարգաւաճ ողկուզալիր,
Վայելուչ և ոսկեկուռ, և սեաւ ի խայծ անկեալ ողկոյզքն,
Եւ կանգուն կայր ձողաբարձ յարծաթի խեչըս ծայր ի ծայր։
Առուամէջըս կապուտակս և յանագէ զնովիմբ ած ցանկ.
Մի և եթ էր անդ չաւիղ գնալոյ կրելեաց ի կուժս այգւոյն։
Կուսագեղ օրիորդք և պատանեակք փափկախորհուրդք
Ի հիւսուածոյ սակառիս զանուշահամ բերան ածէին.
Ցոյց ի մէջ հընչուն քնարաւ մանուկ մի քաղցըր նըւագէր,
Եւ ընդ ազիս բարեյարմարս գողտրիկ ձայնիւ զուգէր գեղգեղ,
Նոքա ընդ նոյն յերգ և ի չռինչ յոտին գոփիւն կայթէին զհետ։

Սրար և ի նըմա եղջերաբերձ երընջուց ջոկս.
Եւ երինջքս յօրինեալ էին յոսկւոյ և յանագէ,

Եւ բընչելով ի գոմոյն ելանէին յարօտս կոյս՝
Ըստ վըտակ մի կարկաջուն և ըստ չամբուտըն նըրբաստեղն։
Անդեռադէմ խառն ընդ երինջսըն ոսկեղեզիմ երթային չորք,
Եւ զգինի նոցա զամփռունք երագոտունք ինըն գնային։
Ամեհի առիւծք երկու յառաջընթաց կովուցն ի բոյլ
Զքառաչոտ ցուլն ունէին յահեղ պոչիւն վարեալ ընդ քարչ.
Եւ դիմեալ գամփռունք ի նա հասանէին և պատանիք։
Իսկ նոցա պատառեալ զմեծամարմին գուարակին մորթ՝
Զփորոտին և զարի՛ւնըն լափէին բոսորաբուխ.
Հովիւքըն զուր վանէին՝ յորդորելով ըզժիր գամփռունս,
Որ խըրտուցեալ յառիւծուցըն չառնուին յանձըն գօշել,
Եւ ելեալ և մատուցեալ մօտ հայէին և խորչէին։

Արար և անդ լուսակիզն հօտից արօտ մի լայնալիր
Կաղակըրկինն հոյակապ՝ ի գեղեցիկ հովտի միւսմ՝
Գոմս եզանց, մակաղատեղս և հանգըրուանս յարկածածուկ։

Դըրուագեաց անդ և ըզպար կաղակըրկինն հոյանուն...
Պատանիք անդանօր և օրիորդք չըքնաղագիւտք
Ըզձեռացըն գաստակէ կալեալ միմեանց առնուին պար.
Աղջկունք նուրբ բարակաման զգեցեալ բեհեզըս կըտաւիս,
Մանկտին բաճկոն քաջոլոր՝ լուսանըկար ի գոյն ձիթոյ.
Եւ նոցա՝ բոլորեալ էին պըսակք գեղեցկահիւսք,
Իսկ սոցա՝ դաճոյիճ ոսկիք՝ ըզկամարացն արծաթէից։
Մերթ ոտիւք հանճարեղօք մանեկաձև հիւս գային չուրջ,
Թեթեւակի յոյժ իբրու բրուտ մի զի կալեալ ի ձեռս ըզգուրգն
Եւ նըստեալ զփորձ առնուցու՝ թէ ի չրջանն ընթանայցէ՞,
Եւ մերթ անդրէն կարգ ընդ կարգ հարկանէին կայթս ընդ միմեանս.
Յոգնահոգի ըզտենչալի պարուն կուտեալ կային գումարք
Հեշտացեալք, և ի խըմբի նոցին գուսան աստուածեղէն
Երգէր քնարաւ, և երկուք ոք յափսիթերս անդ խաղալիկք՝
Ի սկըսնուլ նորուն յերգ՝ ի մէջ նոցա ճախր առնուին։

Եգ ի նմա և ըզգետոյն Ովկիանու մեծ զօրութիւն
Առ վերջին պարուհնակաւ ճարտարագործ վահանին այն։

Իսկ յորժամ բովանդակեաց զաստղարն ըզմեծ և հաստաբեստ՝
Յօրինեաց և զըրահս քան զճառագայթս հըրոյ պայծառ,
Եւ սաղաւարտ պինդ՝ իրանոցըն դիւցազին պատշաճեալ,
Գեղաշուք բազմաքանդակ, և զարգմանակ արկ ոսկեփուռնջ.
Յօրինեաց և սըռնապանս ի կռանակուռ անագ թիթղանց։

Վըճարեալ զկազմածս ողջոյն կաղակըրկինն հըրէշականուն,
Զամենայն բարձեալ տարաւ մօրն Ա.քիլլեայ եղ առաջի։

Թրգմ.

Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՀՈՄԵՐՈՍ, Իլիական ԺՀ.


39

ԳՈՐԾԻՔ ՄՇԱԿԱՅ ԵՒ ՀՈԳԻՔ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ

Թեղ, պեղ ցորենի
Ցախանիւմ, ականիլ, կոտոր ճաղ
Վիճակ, բնութիւն, արտ
Օրան, արանդրոս պեղ
Ելեւսեան Մայր, Դեմետրէ
Երկողնի, երկոս կոնակ ունեցող
Դահուկ, հողակոչող ճըրող ցուտան
Տրմուխ, (տճ. ըղբմըճ) (ֆր. râteau)
Դարաս, ձառատան, անտառ
Մնինայ, պղտիկ ոճառ, կամ ոտիճ
Պախել, ճաքոտիլ
Ուռ ի կուրծս անկանել, լռի
Ի ներս, եռանդն [տրտմել
Կելեան, կըլեոսի անուանը կրող
Կալոտի, կալը աշխատող (եղբ)
Մաթուզ, (տճ. հոճա եմիշլէ)
Փիճի, պեսակ մը կաղնի (լտ. fagus)
Տափան, ցած կամ ցածան
Կտուրել, (ռմկ. տըռուել) յօրել (ճիւղ
Նոյր, մաղ [ղերըք)
Առեղ, սամիճն պակի կռնոտ մասը
Սոր, ձակ պեղբր

Բեր տեսցուք զի՛նչ և անօթք լցեն կամ զէնք պինդ մըշակաց,
Ցոյց վրէպ՝ ոչ վար և ցան և ոչ հընձոց յաուներն հասակք։
Գալարուն ծանր արօրոյ նախ և յառաջ կաղնին և խոփ,
Եւ սայլակք ելեւսեան Մօրն անուահոլով յամրընթացիկք,
Դահուկք և կամնասայլք և անհեղեղ բեռին տըրմուխք,
Նա և ոզորահիւս կելեան նըւաստ կահ և կազմած,
Մաթզի տափան, և նըքօյր Սպանդարմետին խորհըրդաւոր.
Զոր ուշ ի կուրծս անկեալ կանուխ հանդերձեսցես զամենայն,
Երկնաւէտ վիճակին եթէ պահին քեզ փառք հանդէպ։

Անդէն և անդ ի մայրիս մեծաւ ուժով թեքեալ յառեղ՝
Գայ ի ձև կոր աղօղոյ պարտեալ մատաղ նըշդարենին,
Ծոր սամին ի բընոյն ձիգ երկայնեալ յոլթ ոտնաչափ,
Զոյգ ունկուընքըն պատշաճեալ և երկողնի առատամուընք:
Հարկանի փոյթ և թըմբլին թեթև ի լուծ ու երկայն փիճի,
Եւ մաճ, որ ի թիկանց գյետոյս սայլին տանի բերէ.
Եւ զմայրիդ յակուբ ի կախ ծուխըն փորձէ խարուկածին:
Են առ իս բազում պատուէրք հայրենատուրք աւանդել քեզ՝
Թէ ա՛չ խորշեալ տաղտկասցիս ի գիտելոյ մանր ըզխընամս:
Պարտ է նախ ըզկալ հարթել ի ղուղան մեծ սոսկավիթխար,
Եւ զընտել ձեռամբացի՝ կուռ և մածան բըռել կաւով,
Զի մի՛ բոյսք արձակեսցին կամ պախիցէ լուծեալ յամիւն:
Թաքթաքուր խաղան յայնժամ ազգի ազգի անդ ժանտաժուռք,
Երդ ըստէպ և մըթերոց եդ ընդ հողով մուկըն մանրիկ,
Կամ թէ կոյր խըլըրդանին բրեցին խշտի մըշտապիշեր.
Գըտաւ ի սորս և դօդօշ և որ ինչ այլ բերէ երկիր
Ճիւաղ բազմաճըճի խառնափընդոր ի ծոց իւրում.
Եւ աւար առնու մինչև գլեռնակարկառ թեղ ցորենոյ,
Եւ մրջիւն՝ ցանկանելոյ զառատութեան կասկածաւոր:
Միտ դիր ևս յորժամ նըշին ի գարատի՝ փունջ խուռներամ
Ցօրինեալ ծաղկապըսակ՝ ձանուշահոտ գոտասըն հակէ.



Ա. Ր Օ Բ

Ա Ա. սամի
Բ. առատամ, առատամուցիկ
Գ. խոփ
Դ. խեչակ (լտ. fulcrum, անկողնոց)
Ե Ե. ունկուցիկ
Զ. մաճ

Թէ պըտուղքն են բազմաբիւրք՝ տոհմականօք գայցեն ցօրեանք,
Եւ ընդ մեծ տօթոյն ի հետ հասանիցէ մեծ կալորայ.
Իսկ թէ չռայլեա՛լ վարսիւք յորդէ սաղարթագեղ հովանի,
Զուր կասուցու կալոտին ըզյարդաւէտ թափուր օրան:
Առ բազում սերմանահանս տեսի թըմբմեալ ըզսերմանիս
Ի բորակ նախ և ի թուխ ոռոգելով մրուր ձիթոյ.
Զի արմըտիք քան ըզպատիր պատեանս ծընցին յոյր և պարարտ,
Եւ ի հուր մեղմախառն ամօքեսցին դիւրապատրաստ:
Երկայնամիտ տըքնութեամբ թէպէտ լցեն փորձք հատընտիրք,
Տեսի սակայն զի խորթանան, թէ զպարարուն ամ ըստ ամէ
Մի առ մի ձեռօք իւրովք ոչ կըտուեսցէ մարգկեղէն ուշ:
Այսպէս համայնից միշտ ի վաspար տապալել կոյս
Եւ յե՛տս ընդ կրուկ սահել՝ նակատագրեալ ի հրամանաց:

Թրգմ.
Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՅՈՆԻ — Վ. ԻՐԻՒԻՒՈՍ, Մշակակաճ Ա.

40

ՀԱՅԿԱՆՈՅՇ

Դարեւանդ, ղարիվայր՝ բարյր դէր- — Յոտն ի մատն յառնել, ոտի մատ-
Գիլ (յիմիմն), երբեմն տալիլ [տով — Դուռ, բոլորը [ներսն վրայ կայնիլ
Կտրնդոց, ընելիքը ղարնող բարձիւ — Սառնասոյզ, ամուր պակ ամուղամած
Աղեբախիմ, ընելիքոն ղարնուածիը — Խաղաղասիմ, հանդարտ բնող

Անդ Հայկանոյշ յետ ընթրեացն առեալ ըզքնար իւր փղոս-
Եւ անցեալ ի դարեւանդ մի գալարի բըլրոյն ի նիստ, [կրեայ
Սաղաւարտ ոսկեճամուկ լուսափետուր զամոյր հերովի,
Մեծագեղ աչկունիմն ի բոց ջահիցն արփիք չողչողենիք,
Հեզաշարժ աղաւնակերպք ի վեր յերկինս ուղերձեալ բիբք...
Նագելի կերպարանօք գաչս հանդիսին յինքըն գըլեալ,
Նըման վարդին յետ մըրըրկի ցօղատարափ ժըմտեալ զըւարճ,

Կամ ընծուլիցն արփենից կաթեալ ի բլուրս յետ ամպրոպաց.
Պատանի արիասիրտ ի գեղաւուրն երևեալ կոյս,
Պատանեակ ի սկայս արանց, ըսկայ ի պարս օրիորդաց,
Պատկեր չընաչխարհիկ՝ զուարթնոց երկնից եկեալ ի սէր.
Աստ և անդ, մօտ և հեռի, ազատագունդն ակնարկելով,
Եւ ամբոխն յոտն ի մատըն յարուցեալ յակճիռս յայլիռս,
Աչք և սիրտ ամենեցուն յարի պարկեշտն ընկըղմեալ գեղ.
Հրեշտակ՝ կոյս գեղեցկութիւն ամբիծ ի սուրբ սիրտ և յանձին,
Եւ մըտօքն յափըշտակեալ ի գեղ ամբաւ աստուածութեանն...

Աչագեղ և դիւցային դուստրըն Հայոց բազմեալ այսպէս՝
Նըւագէր քաղցըր ձայնիւ կըտընդոցին ընդ աղեբախս.

«Ցարեաւ Բել բիւրաւորօքն և զօրութիւնքըն հարաւոյ.
Ել Աստուր ի ծագից արևելից յաղեղն՝ ի սուր.
Դաշտք հրեղենք գումարեցան ընդ սառնասոյզ սարս հիւսիսոյ
Ի վերայ Թորգոմեան քաջի որդւոյն՝ գիւցազանց հօրն։
Զարթուցեա՛լ հեղեղատն յարեաւ ընդդէմ թըշնամւոյն,
Հեղեղատըն սըրտմըտեալ ի կապուտաղն իջեալ լեռնէն
Սրբ զարիւն քաջաց նոցա, զայր և ըզվէն նոցին եկուլ։
Ըզվիշքրիկ վըտակն ևեթ տեսեր, Բաբել, և սոսկացար.
Կարկեցան քաջայըզդ գոռք» չաղխեցան ոտք երիվարացդ.
Զի՞նչ ապա՝ յորժամ տեսցեն աչք քո զյորձանըս բըռնութեան
Յաղթաձըւոր գոչող ալեաց Սրածանուոյ և Երասխայ։
Ոչ տեսին տակաւին ա՛չ՝ աչք քո զարի սկայն Թորգոմեան,
Ոչ տեսին զառիւծ լերանցս և ըզկորիւնսն արիւնախանձ։
Մի չբաւէ՞ր երկիրըդ ձեզ նընջել անդէն ի հող մահու,
Փերեզման եկիք խնդրել ի հովասուն Մասեաց լերինս։
Զի՞նչ են այդ դիակունք զոր թաւալեն Դըկլաթայ թումբք —
Այդ որդիք են ձեր ծնողացդ և սըրտակաթ դըստերց փեսայք.
Հուպ ելցեն կարմիր հեղեղք ըզբանակիդ բերել մնացորդ»։—

Զայս երգէր, ի ձայն նուագացըն պարէին կոյսք գեղանիք։
Զայնք և բոցք չիջանին տակաւ սուզեալք ի լուռ գիշեր.
Աչք նըւազին աստեղաց ի ծագելոյ փառաց լուսնին՝
Որ օգիւք խաղաղասիք գայր ի ճեմել յերկնից կամար,
Գեղածըփեալ լոյսն ի պուրակս և ի ծովակըն ոըշտունի.
Եւ հողմոց չարժէին թևք ի սօսափիւն ոստոց մայրեաց.
Նիրհ անկեալ յարտևանունս զմանկանացուն հրապուրէր ազգ։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Դրուագ Գ.

41

ՉԳՈՅՇ ԼԻՆԵԼ ՅՕՋԻՑ ԵՒ Ի ՎԻՇԱՊԱՅ

Պասուբ, ձաբա	Սկալիմ, ըրնալ, ծաբոպիլ
Պարոյր, մանուածք ըրլան	Վիրգ, տար, ֆայտ (Ներքեւ համար)
Հարկանող, խաչնող	Գումարտակ, ըտ
Ծաւր, ձանրահոգ	Աղխ, կապեր, հանգոյցներ
Խազ, ըսբին ձանձաղ պէրը	Ոլորբ, օղակ
Ցողն անկանել, ընկողնիլ	Յորապա, կանակի վրայ պահած

Ուսիր վառել ի փարախս և եղեւիւն ըզհոտեւան,
Եւ զվիշապսըն ծանուննս ի քաղբանեան վանել ճենճեր։
Բազում ա՛յն է զի՝նդ անչարժ մըտրովք դըժպիհ իժ հարկանող
Դարանեալ, և զարհուրեալ յերկնից լուսոյն՝ գնայ ի կորուստ.
Կամ սովոր է մըտանել օձ ընդ յարկաւ և ըստուերաւ՝
Անդէպ ժանտ ժըպիրհ, և ի թափել թոյնս ի հօտին՝
Ընդ հողով բունէ, բուռն հար, հովիւ, ի վիրգ, հար բուռն ի բիր.
Ըզխրոխտողն ըսպառնալից և զփըքացեալ չըչղ ուլամբն
Հալածեա՛. զգլուխն ահաբեկ ի խորս ահա թագոյց ի խոյս,
Մինչ ազխք ոչին և գումարտակ ոլորտապատ վէտ վէտ տըտաննե
Լուծանին, և զյամբ ոլորան ընդ քարչ ածէ յետին պարոյր։

Է և այն որ ի մայրիս կալաբրացւոցըն չար վիշապ
Ուղղաբերձ կանգուն լանջօքն հողովելով թեփուտ թիկունս
Եւ երկայն փոր խայտաբղէտ ի մեծամեծ նիշ նըկարէն.
Որ, յորժամ գեամբ յաղբերաց բըխեալ յորդին և մինչ երկիր
Ի տամուկ թանայ գարուն և հարաւովք անձրևաբեր,
Բնակէ ի լիճս, և նըստեալ անամօթին յեզերս անդ ջուրց՝
Զըկամբք և չաղակրատ գորտովք լընու զդըժոխս որկորն։
Իսկ իբրև խաղըն կիզեալ և ի տօթոյ սկալի գետինն՝
Ի ցամաք վազեալ կայտառ և աչս ածեալ չուրջ բոցավառս
Ծանդըս մոլի պասքով դըժնեայ և ի տապոյն գազանացեալ։
Ջա՛ւ լիցի նիրհել յայնժամ լինձ ընդ երկնաւ fուն քաղցրանինջ,
Ջա՛ւ յորսայս յողն անկանել ըզխոտաւէտ թիկամբ մայրեաց,
Մինչ նա զխորխն ընկեցեալ՝ նոր մանկութեամբ պայծառափայլ
Ման առնու, կամ ըզկորիւնսն ի տան թողեալ և կամ ըզձուս՝
Բարձրավիզ՝ և եռասայր լեզուբ ի շուրթն յարև չողայ։

Թրգմ. Հ. Ա. Կ. Բ. ՎԻՐԳԻԼԻՈՍ, Մշակականի Գ.

42

ԳԵՏՈՑՆ ՍԿԱՄԱՆԴՐԻ ԿՈՒԻ ԸՆԴ Ա.ՔԻԼԼԵԱՅ

Գայռել, պառկիլ	Յաշտ առնել, ըմպել
Վաղակաւոր, ընտ	(Զ)վրէժ տալ, պատիժը կրել
Կաշմբուռն, ոտքից, պինդ	Առ շեղ, ընկճիլ
Գրդանիճ, յորյան	Յոտաց (կալ), ոտիւ վրայ (կենալ)
Հերճել, վանել, հեռացնել	Ուրդ, առուտ ճամբայ
Առուտուր, ընտ գործող, ոտքող	Կոր, աշխին ակտը
Առ ի կողմն, դեպ դէպ վրայ	Կատառն, ոտքը ծոցող կտոր
Ի հակառակ մտանել, դէմ կենալ	Գերփել, ծրցնել, ատրճել

(Լիկայն առ Ա.քիլլևս) ըզսըրաթռիչ խօսեցաւ բանս.
Փարեալ զծընդովդդ, Ա.քիլլևս, մաղթեմ՝ չիս ա՛կն ած և զբթա՛,
Զի առ քեզ է ճաշակեալ իմ նախ զարդիւնըս Դեմետրի
Ցաւուրն՝ յոր ձերբակալ զիս արարեալ յընտիր այգւոջն
Ի հօրէ ու՛ի սիրելեաց վըտարանդի վաճառեցեր
Ի Լեմնո՛ս սուրբ, և քեզ հարիւր եղիւն եղէ ես զինք,
Արդ երիցս այնչափ վըրկանս տաց ընդ անձին (ո՛ Ա.քիլլևս)...:
Ա՛յլ և ինչ քեզ ասացից, և դու ի միտս քո չեռ զայն,
Մի՛ զիս ըսպանաներ, զի համամայր չեմ Հեկտորի՝
Որ զբաւեաց ըզմըտերիմդ համբուրասէր և զհաջազօր:
Այսպէս առ նա Պրիամու չընքեզ որդին պաղատեցաւ
Բանիւք աղերսագօք, բայց անողոք լըսաւ բարբառ.
Մի՛, անմիտ, ինձ վըրկանակս ածեր ի յուշ և մի՛ պատմեր.
Զի մինչչև էր Պատրոկլի զճակատագրին վըճարեալ կէտ՝
Էր ինչ սըրտիս սիրելի խնայել յայնժամ ի Տրովացիսդ...
Իսկ զարդիս՝ չիք ոք ուրեք որ ապրիցէ ի մահուանէ
Զոր յիմ ձեռս արկցէ աստուած դէմ յանդիման Իլիոնի
Ցամենայն տրովեանց, յորդւոցըդ մանաւանդ Պրիամու:
Մեռիր և դու, բարեկամ, զի՛ բնաւ այդպէս խաղապատիս.
Մեռաւ և Պատրոկլոս՝ վըսեմականն յոյժ քան զըզեզ...:
Եւ ձըղեալ Ա.քիլլի զվազակաւորն յեսանաստուր՝
Եհար զանրակն առ ուլանն, և երկայրի սուսերն ողջոյն
Մինչ ի ներքս անց եմուտ. նա գլխիվայր յերեսս երկրի
Գայռացեալ անկեալ զընէր, վիժէր արիւն թուխ՝ թանայր գհող:

Բուռն Ա.քիլլևս զոտանէն հարեալ ի գետն ընկէց՝ տանել,
Եւ խրոխտաւ ի վերայ նորա զթռչուն խօսեցաւ բանս.
Կաց արդ այդը ընդ լուղակս, որ յապահովս լիզուցուն
Ըզվիրիդ ապաժոյժ, և ոչ մայրիկ քո կոծեսցի
Ցանկողնի եդեալ ըզքեզ, այլ Սկամանդրոս յորձանատոյզ
Ցափըշտակեալ վարեսցէ ի ծոց ծովուն ի լայնատարբ,
Վազս առեալ ձուկն ընդ ալիս ի մըզկանուշս անդ մըռայլ՝
Ցարիցէ և կերիցէ զվիկայնի ճարպն ըսպիտակ:
Կորիջիք, մինչև զոտանն առցուք զսըրբոյն Իլիոսի,
Փախըստեայք դուք յառաջոյ, ես ի թիկանց սատակելով:
Ոչ օգնեսցէ լինձ ձեզ գետդ յորդահեղեզ՝ ականակիտ,
Որում յաշն իսկ առնէք ի վաղընջուց զուարակ բազում,
Արկանէք և կենդանւոյն միասըմբակ յուխտն երիվարս:
Այլ մահու չարաւ և ա՛նպէս կորիջիք մինչև բընաւքդ
Ըզպատրոկլի մահուն վըրէժ և զԱ.քայեանց տայցէք տուժից,
Զորս առանց իմ առ երագ նաւատորմին կոտորեցէք:...
Եւ զյոլով յոյժ սատակէր Պէոնացիս ժիրն Ա.քիլլևս,
Եթէ չէր սըրամըտաւթեամբ գետն յորձախոր զառն առեալ դէմս՝
Եւ ի խորոց պըտուտիցն արձակեալ ձայն և բարբառեալ.
Ուժգին ես, ով Ա.քիլլևս, և քան զմարդիկ գործես ոճիրս,
Բանզի քեզ աստուածք լինքնին կան ի թիկունս յամենայն ժամ...
Դէթ ի դուրս լինէն վարեալ երթ արա՛նդ զաշն ըզսոսկալիսդ,
Զի վըտակք իմ ցանկալիք արդ ևս լըցան մեռելոտուվք,
Եւ ոչ ևս այլ հոսել կարեմ զուխս իմ ի ծովն աստուածային՝
Անձկացեալ ի դիականց, և դու սաստիկս ըսպանանես.
Այլ աղէ թո՛ղ տուր, զի ունի զիս ապշութիւն, իշխանդ ազանց:...
Սասց նա, իսկ Ա.քիլլևս կորովատէգ ոստեաւ ի մէջ,
Անգր ընդ թուխըն վազելով. յարեաւ և ինքն ալիասաստ,
Եւ պըզտորեալ՝ ըզգըրգանան ողջոյն զարթոյց: և զդիակունսն
Աղխաղխեալ վարեաց՝ որ լի անդ յԱ.քիլլեայ սպանեալ կային,
Եւ ընկէց ի ցամաք մըրընչելով իբրև ըզցուլ...
Եւ ահեղ դիպան ալիքըն խռովախուժ չուրջ զԱ.քիլլեաւ,
Վէտ վէտ յասպար անկեալ մղէին, և ոչ կարէր կալ ի յոտաց.
Բուռն հար յառոյգ մեծ նըշդար՝ որ տապալեալ արմատախիլ՝
Զդարևանդն ողջոյն փըլոյզ, և թանձրախիտ ոստովք իւրովք
Զգեղեցիկ հոսանսն արգել և կամըրջեաց ըզգետն ինքնին՝
Անդ տապալ անկեալ ի մէջ. նա ի պտուտիցն ի բաց վազեալ՝

Ձեռ ընդ հարթըն եs թռչել երագ ոտիւք առ պակուցմանն։
Ոչ ցածեաւ մեծն աստուած, այլ ի կապոյտ կոհակաց ծայրս
Ամբարձաւ ի վեր ի վեր ըզդիւցազարշն Աքիլլեսիւ,
Նահանջել զինքն ի կըռուոյն և ի տրովեանց հերքել զեղեռն։
Իսկ Պելեանն ի բաց ոստեաւ տեգրնկեցի մի ասպարեզ
Սըլացիւք սեաւփետուր որսականի արծուոյն այնմիկ՝
Որ սրաթև և կաչըմբուռն է յամենայն հաւուց թռչնոց։
Նըմին նըման սըրացաւ, պըղինձն ի լանջս հնչէր ահեղ,
Եւ առ չեզ խոտորընթաց առ ի նմանէ գնայր ի փախուստ,
Իսկ նա զհետ գայր ի թիկանցն հեղեղատեալ մեծաւ գոչմամբ։
Որպէս մինչ այր առուածու ի ծմակաջուր աղբերականց
Ի պարտէզս իւր և ի դրախտ ուրդըս ուխելցըն բանայցէ
Ի ձեռին կալեալ ըզբահ՝ կոտորելով զկորեաց կաւառն,
Ի վտակացն յառաջ խաղալ՝ կոպիճ ի գիլ գլորին բոլոր,
Խոխոջեն նոքա յընթացս իւրեանց ընդ վայր ինչ զառիթափ,
Եւ կանխեն երագելով զառաջնորդաւն իւրեանց անգամ.
Նոյնպէս ցանգ զԱքիլլեայ կըրթէին զինեs կոհակք ուխելցն,
Թէպէտև էր քաջարշաւ. այլ քան զմարդիկ հզօր են գիք։
Եւ քանիցըս գուն գընէր երագընթաց քաջն Աքիլլևս
Ի հակառակ մըտանել, առնուլ ի մէտ՝ թէ համօրէն
Վանիցե՛ն զինքն անմահք՝ անդորրաւէտ երկնից իշխանք,
Նոյնքան կոհակ մեծազոզ յԱրամազդայ հոսեալ գեsոյն՝
Հարկանէր զուսան ի վերուստ, և նա յոգի իւր սըրտմտգին
Վազվազէր ի վեր ոտիւքն. իսկ ի ներքուստ սըրտաւար գեան
Առ ի կողմն թաւալեալ՝ ըզնորա ծունկսըն պարտասէր,
Եւ սըկախառն ըզփուշն գերփէր ներքուստ գարշապարացն։

Թրգմ. Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ — ՀՈՄԵՐՈՍ, Իլիական ԻԱ.

43

ՊՐՈՏԷՈՍ

Պատիրֆ (ֆոյ.), նենգութիւն	Ելի աղագ, հնարս, պէտս
Ձեւել, կոբել, շրջապատել	Ձանխուլֆ, ծածուկ որեղեր
Ցեղուլ (կր.), ֆոխուիլ	Դամագիs լինել, ծար մը ֆդնել
Սարիֆ, կապանս, շղթայ	Նիւթիմ, յարմարցուիլ [(ընասելս)

Ի կարպաթեան ծոց պըտուտից Պիսիդոնի այր մի է գիւթ,
Կապոյտըն Պրոտէոս, այն որ զանդունդս համատարած
Ձիաճուկն երկոտանի նըշանգս ի կառս վարեալ ձեւե։...
Ըզնա պաշտեմք յաւերժ հարսունքս... գի է բնաւից կիւս խեղամուs՝
Որ ինչ եsն, որ ինչ եղեն, որ առաջի կարգեալ նիւթին
Իբրև այն գի այսպէս Պիսիդոնի հաճոյ բուեցեալ,
Զոյր ըզնախիրն ամեհի և զգազիր փոկս հովուէ յանդունդս։
Ըզսա դու նախ ի սարիս արկեալ, որդեակ, կաչկանդեսցես։...
Զի պատգամ և ոչ մի տացէ երբեք անբըռնադատ,
Եւ ոչ յաղերս ածիցես. ձեռըն հզօր և պարաւանդս
Աւկեալ ի նա կալ և կապ, անդ ի գերև լուծցին պատիրքն։
Ես ինքն ըզքեզ, մինչ արևն ըզմիջօրեայ բորբոքէ տապ,
Մինչ գալարիք ծարաւեն և հովանի քաղցր է հօտի՝
Ի գանխուլս ածից ծերոյն, ուր խոնջ յալեաց մեկուսանայ.
Զի զքընով անկելուս դիւրեաւ հասցես գոլ գամագիտ։
Այլ ձերբակալ արարեալ երբ ի կապանս ըմբըռնիցես,
Անդ պէսպէս խաղայցեն դէմք և կերպարանք գազանեղէնք.
Զի անդէն ի սոսկալի յեղյեղ վարագ, ի վագր ի ժանտ,
Ի վիշապ թեփամորթ և ի յառիւծ շեկ պարանոց.
Կամ սաստիկ բոցոյ խօշիւն արձակելով՝ ի կալանաց
Թափեսցի, կամ չիք ի ջուրըն հոսանուտ վիժեալ լիցի։
Այլ որչափ ձև և տեսիլ նա փոխեսցէ ի կերպըս կերպս՝
Այնչափ պնդեսջի՛ր դու զուժգնապինդ տոկունսն, որդեակ,
Մինչև յայն գարձցի բնութիւնն՝ յորում տեսեր նախ զառաջին,
Մինչ առ ի քուն լինելոյ զաչըս իւր դեռ կափուցանէր։

Թրգմ. Հ. Ա. Կ. Բ. — ՎԻՐԳԻԼԻՈՍ, Մեսակաձի Դ.

44

ՀՈՒԴՈՆԻ ՓՈՍԿՈԼԵԱՅ

ՏԱՂ

ՅԱՂԱԳՍ ԳԵՐԵԶՄԱՆԱՅ

ԱՌ ՀԻՊՊՈԼԻՏՈՍ ՊԻՆԴԵՄՈՆՑ

Անուրական, կնոջ, վար
Յաչաղել, նախանձիլ
Քաւ ի..., բաց է...
Գեղայօրեն, քեղեցիկ յօրինուած
Գնացեալ, վախճանած
Խաւնակ, անուրբ, պիղծ
Խանդալ, նախանձիլ
Փուռ, ուղբ, հեծկլտանք

Խեղդ, խղդուելոց ըման
Թափել, իլել, առնել
Սղոխ, ծեղմ հով
Սարդի, փափկի? (ախալ սուսուով)
Շոպել, յափշտակել
Շահապես, պահապան ոգի
Շիրել, խայրել
Խուն մի, էլ մը

Ընդ նոճեաց հովանեաւ եւ ի տապան սիփփեալ յարտօսր
Եթէ քուն մահուն իցէ՞ լինչ երբեք խուն մի հեչտագոյն։
Յորժամ ո՛չ եւս արեգակն լինձ ընդ երկիր բըլխեցուսցէ
Զգալարուոյ են զկենդանեաց չըքնաղ տոհմի զարմ եւ սերունդ,
Եւ չպարիցեն զառաջեօքս հանդերձեալ ժամք գեղեցկայոյնք,
Եւ ոչ, քա՛ղցը Սիրելի, այլ եւս ըզտաղտն ի քէն լըսայց
Եւ զնոցին յօրինիչ ըզտըրտմագին երդոց նըւագս,
Եւ ոչ ի սըրտիս խմոմ Ոգին բարբառիցի
Կոյս Մուսայից եւ Սիրոյ, նըշդեհ կենացս ոգի մխայն.
Զի՞նչ աւուրց կորուսելոց լիցի արձան մի մըխիթար՝
Զիմս յանթիւ մեկնել ոսկերց, զոր մահ ցընդէ՛նդ ծով, ընդ ցամաք։
Սրդարեւ, Պինդեմոնտ, Յոյն խակ յետին աստուածուհի
Խուսէ ի չիրմաց, եւ զամենայն լինչ յիւր գիշեր
Պատէ մոռացութիւն. եւ զօրութիւն լիմն ազդեցօղ
Շարժմանէ ի շարժումըն տագնապէ զամենեսին,

45

ՀՈՒԴՈՆԻ ՓՈՍԿՈԼԵԱՅ

ՏԱՂ

Ի ԳԵՐԵԶՄԱՆՍ

ԱՌ ՀԻՊՊՈԼԻՏՈՍ ՊԻՆԴԵՄՈՆՑ

Յոլով, շատ
Հայիմ (իբրև Ներքս.), փնտռել
Յօրացուցանել, պարարտացնել
Նեխարf, կտրուանտ
Կառափնաց, քլխապուած
Պակուոտեալ, լըքացած, ցոփ
Ապաստան (լինել), ապաւինիլ
Տոգորել, ներկիլ, ներկել

Ազդոյ, պղտոր, պղտիկի
Կօշարայ, շինչ(անուշ-ուռ, Լայնը)
Փաղանգ, գունդ, լեցեռն
Արգադիր, նուէր կամ պեշտպան
Նու, հարս [քաքեպաշտական
Մարդելոյզ, շողոքորթ? (ախալ ա-
Թարթափել, պընդընալ [ռուով)
Սեղեակ, ծիծ ուռող

Ի սուրբ նոճից ի մէջ չիրմաց ըսփոփելոց յարտասուս
Նըւագագո՞յն արդեօք քընոյ մահուն իցէ գառնութիւն.
Յորժամ ոչ ևս բըլխեսցէ լինձ արեգակն ընդ երկիր
Ըզկենդանեաց և ըզբուսոց չըքնաղագեղ ազգատոհմ,
Ուր լինձ ոչ ևս գեղեցկայոյս պարեսցեն ժամք ապառնիք,
Յորժամ ոչ ևս գերգ քոյին լըսայց, քաղցրիկ բարեկամ,
Եւ զաբխրագին գաչնակն՝ որ զայն յարմարաւոր յօրինէր,
Յորժամ ոչ ևս հոգին կուսից յիս մուսայից խօսիցի,
Եւ սիրոյն՝ որ նըշդեհեալ կենացս է չունչ և ոգի,
Զի՞նչ ըսփոփուն լինձ փոխանակ կորուսելոցս է աւուրց
Վէմ՝ որ զիմս որոշիցէ յայլոց անթիւ ոսկերաց,
Զորս ընդ ծով և ընդ ցամաք սերմանէ մահ ցան և ցիր։
Այո, ով իմըս Պինդեմոնտ, յոյն խակ յետին դիցուհի
Ասյս ի չիրմաց տայ. զամենայն լինչ ի գիշեր իւր սուզէ
Մոռացութիւն. մըղէ այժ իմն ազդոյ վարեալ յարաշարժ

Եւ ըզմարդ եւ զիւր դամբանս եւ ըզյետին դիմաց նըշմարս
Եւ զնըշխարս երկրի ուերկինից այլակերպէ ժամանակ։

Իսկ հի՞մ յանձնէն տարաժամ յաչազիցէ մահկանացուն
Ըզպատիրն որ ի դժոխոց կասէ զնա սեամս եւ յետ մահու։
Միթէ չիցէ՞ կենդանի եւ ի ստորին սանդարամետս
Ի լըռել ի նմանէ գեղայօրէն նուագաց աւուրն,
Ցիւրոցն ի սիրտ թէ ծնանել զօրէ զնոսին քաղցըր խնամովք։
Երկնաւո՛ր է սիրալին այս խորհըրդոց մըտերմութիւն,
Պարգե՛ւ է երկնաւոր յազգի մարդկան, եւ նովաւ կեամք
Ցաճախագոյն ընդ գնացեալ սիրեցելւոյմ, գնացեալն ընդ մեզ,
Թէ երկիրն, որ զնա մանուկ ընկալեալ նախ եւ սնուցանէր,
Վերջին ապաստան ի մայրենիսն մատուցեալ ծոց՝
Սուրբ ըզնըշխարան առնիցէ ի թօնընկէց թըշնամանաց
Ու՛ի խառնակ ոտից ռամկին, եւ պահեսցէ վէմ մի զանուն,
Եւ գըրգեսցէ տունկ ծաղկոհոտ սիրուն՝ զաճիւնն հեչ հովանեաւ։

Որ սիրոյ չթողու ժառանգ՝ նա եւեթ ոչ բերկրի՛ շիւմեն,
Եւ ըզկնի յուշարկելոյն՝ թէ հայիցի, յակն անկանի
Ոգին իւր մոլորեալ յԱխերոնեան կայենից կոծ,
Կամ ի մեծ թեւս ապաստան ներողութեանն աստուածայնոյ.
Իսկ ըզփոշին ընկենու յեղիճս հողոյն ամայութեան,
Ուր ոչ կին սիրայորդոր գըթովք աղօթըս մատուսցէ,
Ոչ անցորդ ճանապարհի մխայնըթաց լըւիցէ բնաւ
Ջհեծութիւն զոր առաքէ ի դամբանէն առ մեզ Բնութիւն։

Այլ նոր օրէնք հրամայեն այսօր արտաքս ըզգերեզմանս
Ցաչաց գըթասիրաց, եւ զմեռելոցն անուն խանդան։
Եւ առանց չիրմի անկեալ կայ պաշտօնեայն քո, Թալիա,
Որ ի յարկ իւր աղքատին քեզ երգելով, յաւէրժ սիրով
Սարգի մի սընոյց, պըսակս եւ քեզ կախէր պըսակս,
Եւ ի քո ժըմիտ գու զարդարէիր զերգըս նորուն՝
Որ չիթեալ կըծանէին զԼանգուարտացին Սարգանաբաղ,
Որում քաղցր է արջառոց եւեթ բընչումն եւ գուարակաց՝
Որք յԱդդուական քարայրից եւ ի յուխիցըն Տիկինեայ
Ի հանգիստ եւ ի խորհրդիս առնեն զնա երանելի։
Ո՛վ Մուսա գեղեցիկ, ո՞ւր իցես գու, չառնում ըզբոյր

Ըզհամագոյս, և զմարդ չիրմօքն հանդերձ և զհուսկ իսկ յետին
Տիպ և նըշխար երկնի ու երկրի այլակերպէ ժամանակ։

Այլ ընդէ՞ր կանխիցէ մարդ մահկանացու ի զբրկել
Զանճն ի յուսոյն ազօքանաց՝ որ ի մահուն իսկ նըմա
Ըզկայ ի սեամըս գըժոխոց թարթափելով տայ առնուլ.
Միթէ չիցէ՞ նա ընդ երկրաւ իսկ կենդանի՝ ի լըռել
Պաբերգութեան օրակըշիռ արեւուն չուրջ ըզնովաւ.
Եթէ ի սիրտ իւրոցն ազդել կարէ զայն քաղցըր խնամովք։
Գերաշխարհիկ ինն է սիրոյ սըրտից այս սէր փոխադարձ.
Եւ չնորհ երկնից՝ որով յաճախ ընդ հանգուցեալսըս մեր կեամք
Ընդ սիրելիս, և հանգուցեալքն ընդ մեզ լինին կենակիցք,
Եթէ երկիր բարեգորով՝ որոյ զնոսա ընկալեալ
Սընոյց մանկունս, ի մայրենի ծոց իւր վերջին ապաւէն
Տըւեալ նոցա՝ զնըշխարս նոցին սուրբ ի հինից ամպրոպաց
Եւ յամպարիշտ ոտից ռամկին կոխոտելոյ առնիցէ,
Վիմի զանուն նոցա պահեալ, և զովացիկ հովանեաւ
Ի բոյր ծաղկանց գըթասիրի ծառոյ զաճիւնն ըսփոփեալ։

Որոյ սիրոյն իւրոյ չիցէ թողեալ ժառանգ, նա եւեթ
Ցիւրում չիրմի ոչ ըսփոփի. և ի մարմնոյն յուշարկել
Հայի զոգի իւր թափառեալ յախերոնեան կայս ի կոծ,
Կամ ընդ էին թեւով մեծաւ ողորմութեանն ապաստան.
Այլ լըքանէ զաճիւնն ի հող տատասկախիտ ամայի,
Ուր ոչ հարսըն սիրատարփ մատուցանէ պաղատանս,
Ոչ մենաւոր ոք անցաւոր ընդ այն լըսէ զհեծեծանս՝
Զոր ի խորոց անտի չիրմաց վերառաքէ մեզ բնութիւն։

Եւ սակայն արդ ի բարեգութ աչաց ի բաց օրէն նոր
Ըզգերեզմանըս սահմանէ, առնէ զմեռեալս անանուն։
Առանց չիրմի կայ պաշտօնեայն քո անկեալ, ո՛վ Թալիա,
Որ քեզ ի յարկ իւր աղքատին անդուլ ի սէր սնուցանէր
Դաւինի, պըսակըս կախելով քեզ և ըզքեզ երգելով.
Եւ գու ի ժպիտ քո զըւարթ՝ պըճնէիր զերգըս նորին,
Որովք Լանգուարտն յանգիմանեալ Սարդանաբաղ կըշտամբէր,
Ուստ քաղցր եղանց է լոկ բառաչ՝ որք յԱդդուական անձաւոց
Եւ ի յուխիցըն Տիկինեայ յօրացուցեալ ի խորտիկ,

Շրնչոյդ անմահութեան՝ ընծաւակի աստուածութեանդ՝
ի միջի աստ տընկոցս՝ ուր կամ նըստեալ եւ հառաչեմ
Առ յարկն իմ մայրենի։ Եւ դու գայիր եւ ժըմտէիր
Առ նա՛ ի ներքոյ թըմբուդդ, որ արդ ըզվարսն արկեալ՝
Մոընչէ, ո՛վ Դիցանոյշ, զի չըսքողէ զչիրիմ ծերոյն՝
Ուամ երբեմն հանդարտութեան եւ հովանւոյ էր օժանդակ։
Դու թերեւս ի խաժամուժ գոհիկ դամբանս յածելով չուրջ
Նըկատես՝ ո՛ր նընջիցէ նուիրական գլուխ քոյդ Պարինեայ։
Ոչ նըմա՝ յիւր պարըսպին՝ եդ լինչ քաղաքըն հովանի,
Պակչոտեալըն հրապուրօղ անարական երգահանից,
Ոչ արձան, ոչ մի բան, եւ ո՞ գիտէ խակ թէ թերեւս
Շաղախէ յարիւն զսակերն իւր աւազակըն կառափնատ,
Որ ի խեղդ կախազանին ըզմեղանացն եթող սճիւռս։
Լըսես ի քարակոյտըս անդ դերըկաց եւ ի կոճեղս
Զի սկուռնդն ընդ վայր անդ հարեալ փորէ թաթիւք իւրովք զերկիր
Թափառական ընդ խոռչս եւ ոռնաձայն սովալըլուկ,
Եւ զյոպոպ ի կառափնէն՝ ուր ի լուանոյ խոյս տայր, ելեալ
Սաւառնեալ ըզցան եւ ցիր խաչիւք դաշտին մահաբերի,
Եւ տըխուր հեկեկանօք պիղծ ամբաստան ըզնըբուիից՝
Որովք կան բարերարին առ մոռացեալ չիրիմս աստեղք։
Զուր, Դիցանոյշ, խընդրես ցօղ ի մութ ցայդոյդ քուս քերթողին·
Ո՛հ, ի վերայ մեռելոց՝ ծաղկան լինչ ոչ յառնէ փըրթիթ,
Թէ մարդկան չիցէ զովիւք եւ արտասուօք սիրոյ պատուեալ։

Ցայնմ օրէ՝ յոր հարսանիք և դատաստանք և սեղանք սուրբ
Մարդկեղէն երկոց եռուն լինել զորովագութ
Առ անձինս եւ առ այլըս, կենդանիք զողորմ ճնացորդս՝
[Զ]որ բնութիւն մըշտանորոգ յայլ լմն ազգումըն հրաւիրէ՝
Ցապականիչ ժանտ օդոյն ու ի գազանացըն կորզէին։
Դամբարանք երաչխաւորք էին վիպաց, որդւոց՝ բազինք,
Եւ անդուստ առաջնին Ուրուականացն հրնչէր պատգամ,
Եւ երդումն ի վերայ փոշւոյ հաւուցն՝ էր ահաւոր·
Կրօնք զոր պէ՛սպէս օրինօք առաքինի հարցըն հանդէսք՝
Ընդ նոսին եւ զորով՝ ընթացուցին ընդ ամս յամայր։
Ոչ միչտ վէմ դամբանական էր մեհենից սալայատակ,
Եւ ոչ խունկ ի նեխ գիւոց պատեալ պըղծեաց զաղօթաւորս,
Եւ ոչ քաղաք տըխրագգած եղեն ի կմախըս պատկերեալս։

Երջանիկ կացուցանեն ըզնա ի յոյլ ի հանգիստ։
Ո՞ւր ես Մուսայդ չըքնաղագեղ, ընդէ՞ր բուրումըն քոյին՝
Աստուածութեանըդ ցոյց՝ չազդի ի ծառաստանս ուր բազմեալ
Եւ առ յարկն իմ մայրենի անձկակարօտ հառաչեմ։ [կամ,
Եւ դու եկեալ անդ ժըպտեիր նըմա թըմբուդն ի ներքոյ՝
Որ ըզսաղարթըսըն խոնարհեալ հեծեծէ, ո՛վ դիցուհի,
Զի ոչ ևս արդ կարէ ծածկել ըզգերեզման ծերունւոյն,
Որուամ երբեմն ըզհովանի իւր ընծայէր ի հանգիստ։
Իսկ դու թերևս ի խառնաղանճ դամբանըս չուրջ ակն ածեալ
Տընդրես թէ ո՛ր հանգիցէ գլուխ պատուական քոյդ Պարինեայ.
Նըմա քաղաքըն պակչոտեալ՝ վատ քերթողաց հրապուրող՝
Զետ ի պարիսպ իւր հովանի, ոչ ներքոզեան լինչ, ոչ վէմ։
Թերևս յարիւն իւր աւազակըն կառափնատ, որ եթող
Զոճիրան ի բեմ պատուհասին, զաճիւն նորա չաղախէ։
Ի քարակոյտս անդ ըսկուռնդն և ի կոճեղըս լըքեալ
Սովալըլուկ թափառական ընդ խորափորս ի կաղկանձ՝
Փորէ թաթիւք իւրովք զերկիր. յոպոպն որ խոյս ի լուանոյ
Տըւեալ ի գանկ նորին ծածկէր՝ անտի արտաքս յարձակեալ
Ըզհամասփիւռ յեղերական դաշտին ճախրէ ըզվաչիւճ.
Եւ գանգատի ժանտըն տըրտում հեկեկանօք զասեղոց
Ի մոռացեալս անդր ի չիրիմըս գըթութեամբ ծագելոյ։
Զուր մաղթես, աստուածուհիդ, ի տըխրագին գիշերոյ
Ցօղ ի վերայ հում հերոզի. ո՛հ ի վերայ մեռելոց
Ոչ ընձիւղէ ծաղիկ, ուր ոչ մահկանացուաց գըրուատիք,
Ուր ոչ ըսպաս մեծարանաց հարցեն սիրոյ արտասուք։

Ցորմէհետէ եռուն աստեանք և հարսանիք և սեղանք
Երկոյ մարդագիմի գըթալ անձին և այլոց,
Փրկէին ի ժանտ օդոց ու ի գազանաց՝ կենդանիք
Զողորմն աճիւն սահմանեալ յա՛ր ի բնութենէ բարձր ի կէտ.
Վըրկայ վիպաց էին չիրիմք, էին բազինք գաւակաց
Ուստի պատգամք ընտանեկաց ելանէին թերափից,
Եւ ի նըշխարս հաւուց երդումն էր ահաւոր. կրօնք՝ զոր գութ
Եւ լաւութիւնք հարց պահեցին պէսպէս ծխիւք յամս յամայր։
Ոչ ըզտաճարըս միչտ չիրիմք սալայատակ ծածկէին,
Ոչ խունկ ընդ նեխ գիւոց խառնեալ զաղօթաւորըս պըղծէր,
Եւ ոչ քաղաք ի նկարակերտ կըմախս ի սուգ համակէր.

Զարհուրեալք ընդոստ ի քնոյ կարկառեն մարք մերկ ըզբազուկս
Ի վերայ սիրեցելոյ գլխոյ իւրեանց ըսպընդէին,
Զի մի՛ յերկարաձիգ զարթուսցէ քուք մեռեալ հոգւոյ
Որ հայցիցէ ի ժառանգացն ըզսըբբութեան վարձուորը աղօթս։
Այլ նոճք եւ եղեւինք ըզսիւքս ի սուրբ զանգեալ չոգի՝
Անթարշամ սըփռէին գալարուխիւն ըզդամբանօք՝
Ցիշատակ յաւէրժական, եւ մեծագին չիւք կօշարայք
Զարտասուսըն ժողովեալ ուխտանըէրս ամփոփէին։
Թափէին սիրելիք կայծակըն մի յարեգակնէ
Տանել լոյս ծագել ի մռայլ անդընդախորը գիշերայնոյն.
Զի մարգոյս աչք ի մահու խընդրեն զարեւ արեգական,
Եւ քնաւ լանջք գյեսին թառանչն առ փախստեայ նըշոյլն հանեն։
Աղբերք ի գնացըս վըտակաց սըբբութեան ջուրց՝ բողբոջէին
Անթառամ ծաղկունս ի հող մահուն եւ հոյլ հոյլ մանիչակ.
Եւ որ նըստէր կաթն հեղուլ նըւէր՝ և զվիշտըս իւր պատմել
Սիրելեաց հրաժարելոց, բուրումն առնոյր անուշութեան
Շուրջ գիւրեւ՝ իբր յելևտեան երանաւէտ մարգաց սըզոխս։
Մոլութի՛ւն գորովասէր, որ զգրախտ չիրմացն արուարձանեայց
Կուսիցըն բրիտանեայց ըզձակերտիկ կացուցանէ,
Ուր մօր կորուսելոյ լինի նոցին սէր առաջնորդ,
Ուր զգարձին հրեշտակս ի գուխ աղերսելին Սառաքինուոյն՝
Որ զնաւին մատնելոյ ի պարտութիւն ըզմեծ չոճին
Հար ընկէց, եւ փորեաց առ ի նըմանէն իւրեան դագաղս։
Իսկ ուր նընջէ անուանի արիական գործոց աւիւն,
Եւ կենաց խաղաղայնոյ՝ լինչք եւ դողումն են սպասաւորք,
Անդ յառնեն մահարձանք եւ կըճեպարկք դամբարանաց,
Պերճանք սընաւետական եւ գըժոխոց տօնուստ դրօշեալք։
Աւանիկ գիտուննն եւ ճոխ եւ յոգնախոսմըն ազատագունդ,
Պարծանք ազնիւ Իտալական արքայութեանն եւ միտք չըքնաղ,
Կայ թաղեալ կենդանւոյն ի փաղաքշեալ անդ արքունիս,
Եւ գըրուատիս մի եւեթ ունի գնըշանս ազգատոհմին։
Մեզ մահ՝ հանգըստոց յօրինեսցէ խաղաղաւէտ՝
Ուր բախտն ի վրիժուցըն մխանգամ գադարեսցէ,
Եւ կալցի սէր մըտերիմ՝ ոչ թէ գանձից ժառանգութիւն,
Այլ մըրմունջըս ջերմագութ, եւ պատճենիկ ազատ տաղից։

Շիրիմք քաջազանց՝ գարի ոգին, ո՛վ Պինդեմոնտ,

Ընդոստ ի քնոյ մայր ահաբեկ կարկառէ մերկ ըզբազուկ
Ի սընընդէին սիրեցելոյ ի գլուխ՝ գի մի՛ զարթնուցու
Յերկարաձիգ հնծութենէ հանգուցելոյն՝ որ հայցէ
Զաղօթըս սըբբութեան ի ժառանգացըն տըրոց։
Այլ եղևիկն և նոճք ի սուրբ տոգորեալ ծուխ ըզգեփիւռ,
Սըփռէին ըզչիրմօք մըշտագալար հովանի
Ի յիշատակ յաւէրժական, և կօշարայք մեծագինք
Ամփոփէին ըզսիրելեաց նոցին արտօսր արգաւիր,
Որոց առեալ կայծ ի յարփւոյն ի սառերկրեան ի գիշեր
Անէին լոյս. գի խընդրեն լոյս աչք ի մահուն, և զվերջին
Հառաչ առ լոյսըն փախըստեայ հանել օրհաս ի սրտէ։
Անթառամք և մանիչակք ի հող մահուն բողբոջէին.
Ծաղկափըթիթք ի գնացըս ջուրցըն քաւութեան ոռոգեալք.
Եւ որ ըզկաթն հեղոյր ի նուէր և բազմէր անդ ի պատմել
Սիրելեացն հանգուցելոց զաղէտըս իւր, ըզմայլէր
Ի հոտ անոյշ որպէս ի սիւք երանելեացըն դաշտաց։
Մոլութիւն բարեպաշտիկ՝ որ բրիտանեացըն կուսից
Սիրելի առնէ զդամբանս բուրաստանացն արուարձանեայց,
Ուրանօր մօր կորուսելոյ առաջնորդէ նոցա սէր,
Ուր գհրեշտակսըն հաշտս ի գարձ աղերսելին վեհագին՝
Որ ըզնաւուն նըւաճելոյ եհատ գըստուար եղևնին,
Դագաղս անդըստին առ ի հանգիստ իւր փորեալ.
Այլ ուր տենչ արուեստանց վհատից նիրհէ, ուր դողումն
Եւ ճոխութիւն քաղաքական կենաց լինին պաշտօնեայ,
Անդ մահարձանք և դըժոխոց դրօշեալ պատկերք և չիրմիք
Մարմարակուռք յառնեն ի գուր կանգնին տօնից հանդիսիւք։
Ճոխն և գիտուն, և գեղանուոյն Իտալիոյ չուք և միտք,
Ազատագունդըն կայ թաղեալ ահաւասիկ կենդանւոյն
Ցարքունիս՝ ուր փաղաքուշ չընթէ չողոմ մարգելոյզ,
Եւ ներբողեան է նմա կընիք ազգատոհմին ևեթ անդ։
Իսկ մեզ մահ պատրաստեսցէ խաղաղաւէտ օթևան՝
Այն լինչ բախտ տացէ գադար գամ մի ի վրէժ խընդրելոյ,
Եւ բարեկամ ընդունիցի ժառանգութիւն ոչ գանձուց,
Այլ սերտ սիրոյ, և օրինակ առատաձեռնըն տաղից։

Շիրիմք քաջազանց ի մեծամեծս յորդորեն
Ըզսիրտ արի, ո՛վ Պինդեմոնտ, և սըրբանուէր և սիրուն

Առ մեծամեծըս վառեն, եւ գեղեցիկ եւ սըրբանուէր
Ընծայեն պանդըխտին զասպընջականն իւրեանց զերկիր։
Իմ զդամբան տեսեալ երբեմն՝ յորում զընի մարմին Մեծին
Որ կալեալ ի չափու զթագաւորացըն գաւազան,
Եւ զնորուն տերևընկէց փետեալ սարդիս, ի վեր հանէ
Որպիսի՛ արտասուս եւ որպիսի՛ ծորէ արիւն.
Եւ զտապանն այնորիկ՝ որ նորակերտ լիճն Ոլիմպոս
Կառուցեալ կանգնեցոյց ի Հռովմ դասուցն երկնաւորաց,
Եւ զոյր տեսեն ընդ արփի՛ն վրանաւ յոլով աշխարհս ի ճախր
Եւ անչարժ զարեգակն առ ի նոսա ճառագայթեալ,
Որով նախ ըզկամարացն երկնից հորդեաց ըզճանապարհս
Անգլխացւոյն՝ որ ահագինս անդըր պարզեաց սաւառնաթեւս.
Երանի՛ քեզ, գոչեցի, առ կենաչունչ անոյշ օդոցդ,
Եւ լուալեաց զոր ի սնարիցըն ծաւալէ քեզ Ապենին։
Լուսինն օդովք քով բերկրալիր զգեցուցանէ չքնտակ լուսով
Զդարեւանդըս քո եւ զբլուրըս զուարճացեալս ի կութս այգեաց,
Եւ հովիտք ձիթաստանեօք եւ բնակաւէտ չինիւք խըռնեալ՝
Խունկ յերկինս վերառաքեն բիւրս ի բիւրուց ծաղկանց բուրմունս։
Եւ դու նախ, Փլորենտիա, նըշագոյն ունկըն զընէիր
Որ զգայրուկըս փախըստեայ Փիբելլինին զուարթացուցին.
Եւ դու զսիրելի ծընօդսըն՝իւր եւ ըզբարբառ
Շնորհեցեր մեղրաբուխ կալլիովպեան չըրթանն այնմիկ,
Որ ըզՄէրըն մերկանդամ ի Ցունաստան, մերկ եւ ի Հռովմ,
Լուսանիւթ քողով պըճնեալ՝ տայր յերկնային Աստղկան զերկիր։
Այլ յաւէտ եւս երանի՛, զի ամփոփեալ ի մի տաճար
Պահպանես զիտալական փառս, եւ թերեւս ըզմի միայն,
Ցորմէհետէ անարգել Ալպիք, եւ բուռըն զօրութիւն
Դարձադարձ մարդկեղէն բախտից՝ ի զէնդ եւ ի ստացուածս
Եւ ի բազինդ ասպատակ դնէին եւ հարց քոց ի գաւառ,
Եւ գոգցես թէ յամենայն, եաւ ի նոցին յիշատակէ։
Զի ուր յոյս չողայ փառաց յիտալիա եւ յարի միտս,
Անտի մեզ հանցուք հըմայս։ Եկն իսկ ըստէպ Վիկտորիոս
Ի կուճս յայս ոգի ծըծել. ընդ հայրենին սըրտմըտեալ գիս,
Թափառէր անմըռունչ յԱռնոսական ամայութիւնս՝
Պըչուցեալ կաթոգին ընդ դաչտորայն եւ ընդ երկինս.
Եւ մինչ ո՛չ եւ մի տեսիլ կենսածաղիկ բուժէր զթախիծն,
Անողոքն աստ հանգչէր, մահուն դալուկն ի դէմն, եւ յոյս։

Ընծայեն հիւրոց ըզվայրս ասպընջականըս նոցին։
Ի տեսանել իմում երբեմն ըզգերեզմանն՝ ուր հանգչէի
Վեհին դիակն՝ որ զարքայից սանձահարեալ գաւազան՝
Տերևաթափ ըզսարդենիս նոցա արար՝ յայտնելով
Տիեզերաց քանի՛ արտօսր անտի կաթէ և արիւն,
Եւ ըզտապան նորին՝ որ միւս այլ Ոլիմպոս երկնայնոց
Կառոյց ի Հռովմ, և զայնորիկ՝ որ ընդ երկնի խորանաւ
Եաես յոլով աշխարհըս ճախր առեալ, եաես զարեգակն
Անչարժ՝ ըզճառագայթսըն սըփռելով ի նոսա,
Եւ կանխեաց հորդել ուղի անգլխացւոյն ընդ եթեր՝
Զի յանդուգն ընդ այն ի ճեմ սաւառնաթեւ սըլանայցէ,
Քեզ երանի՛ յայնժամ երկիր Իտալիոյ կարդացի
Վասն երջանիկ կենսակայլակ օդոց և ջուրց վըտակաց՝
Զորս ի սնարից իւրոց ի քեզ տարածանէ Ապենին.
Լուսինն ի քոյդ բերկրեալ այեր՝ պըճնէ ի լոյս իւր վըճիտ
Ըզգարեւանդըս քո ի կութս այգեստանեայց զուարճացեալս,
Եւ բնակաւէտք ըզքէ հովիտք ձիթաստանեօք և չինիւք՝
Խունկս ի բիւրուց խառնեալ ծաղկանց վերածըխեն ընդ երկին։
Եւ քեզ նախ, ո՛ Փլորենտիա, երգն այն եղև լըսելի,
Որ ըզգայրոյթ փախըստէին Փիբելլինի սթափեցոյց.
Եւ դու ըզծնողսըն սիրելիս պարգևեցեր և զբարբառ
Կալլիոպեան քաղցըր շրթանն այնմիկ՝ որ զմերկն յելլադա
Եւ զմերկն ի Հռովմ ըզՄէր ի fօղ պարածածկեալ ի սպիտակ,
Պայծառագեղ զայն երկնայնոյն գարձոյց ի գիրկս Աստղկան։
Այլ առաւել քեզ երանի՛ զի պահպանես ամփոփեալ
Ի մի տաճար զիտալական պարծանս, թերևս ըզմիայն՝
Ցորմէհետէ Ալպիք լըքեալ, և գարձադարձ զօրութիւն
Մարդկեղէն բախտի զսեղան, ըզզէն և ըզգոյս և զգաւառ
Եւ զամենայն, բաց ի փառաց յիշատակէ, կողոպտէր։
Զի ուր ի յոյս փառաց Իտալք ու արիական վառին միտք,
Անտի մեզ բե՛ր հանցուք հըմայս։ Ցաճախ ի վէմս յայսոսիկ
Գայր Վիկտոր ընդ հայրենիսըն ցասուցեալ ընդ սեղանս,
Անմըռունչ թափառական ուր յառաւել ամայոջ
Գետահետ Առնոս. և կայր ընդ դաչտորայս պըչուցեալ
Եւ ընդ երկին, առ ի վերուստ ազդեցութեան անձկաւէտ։
Եւ մինչ ոչ տիպ լինչ կենդանի ըսփոփէր զհոգըս նորին,
Անդ անողոքն հանգչէր՝ մահու դալուկն ի դէմս իւր և յոյս,

Ընդ վեհիցս յաւէժ բնակէ, մռընչեն ոսկերքն հայրենեաց սէր.
Օ՛ն և օ՛ն, ի կրօնասէր յայնմ հանգըստեան Աստուած խօսի,
Եւ ախոյեան պարսկայնոց սընուցանէր ի Մարաթոն—
Ուր Աթէնք դամբարանս իւրոց քաջացըն նըւիրեաց—
Զառաքինի զօրութիւն եւ զբարկութիւնն հելլենական։
Նաւալիւղն առագաստեալ ընդ այն անդունդս առ Եւբիաւ՝
Տեսանէր ի լայնատարը աղջամղջին՝ փայլատակունս
Թօթափեալ սաղաւարտից եւ սուսերաց ոգորելոց,
Եւ խարոյկըս հրաչունչ գոլորշախառն ոլորտացեալ։
Տեսանէր եւ երեւոյթըս ռազմաւոր նահատակաց,
Զի վառեալք յերկաթակուռ զէն՝ խաղային ի պատերազմ,
Եւ ի մութ սարսափելի վիշերայնոյ խոր լըռութեան
Ծաւալէր երկայնէր ընդ դաշտս ողջոյն գընդից գըղորդ,
Փողոց ձայն են հալածել երիվարաց արշաւելոց
Եւ դռոյթ նոցին ոռնաւորի զգըլխանոցօք հոգեհանաց,
Եւ ողբումն եւ նըւագք, ե՛օրհասաբեր Դըսաերցըն երգ։

Երանի՛ քեզ, Հիպպոլիտ, որ ի ախոյդ ամըս գալար
Ընդ հողմոցն ընթանայիր լիասահման իշխանութիւն.
Եւ թէ վարեաց ըստ էգեան կըզգիս ըզթեւսըդ նաւուղիդ,
Հին զրուցաց լըւար անչուշտ համբաւ յեզերս Հելլեսպոնտի,
Եւ զգոչումն ալեաց ծովուն՝ որ տանէին յափունս Ռետեան
Առ ոսկրոտին Էասայ զԱքիլլիսին զինուց կազմած։
Արդար առ քաջազունս է մահ՝ փառաց մատակարար.
Ոչ հանճար խորագէտ, ոչ սէր եւ չնորհ թագաւորաց
Պահէին Իթակեցւոյն ըզկողոպուտն անհընարին.
Զի ալիք յորդորեալք յանդընդային աստուածութեանց՝
Շոպեալ զայն չորթեցին ի թափառոտ լաստափայտէն։

Եւ զիս, զոր ժամանակք եւ պատուասէր չըքոյ տըւիփք
Վարեն գնալ փախըստական յօտարաստեղ ապին գըրոհ,
Զիս Մուսայք խրախուսիչք մահկանացու խմաստութեան՝
Ցերեւան հրաւիրեցեն կոչել հանել ըզդիւցազունս։
Նըստեա՛լ կան պահակերք գերեզմանացըն չահապետք,
Եւ յորժամ ժամանակ ցըրտասառոյց թեւովք իւրովք
Հարեալ ի բաց թօթափէ եւ զաւերակս անգամ անդուստ,
Զանապատս ուրախ առնեն ի ձայն երգոց իւրեանց Պիմպլայք,

Ընդ վեհիցն այնոցիկ եղեալ յաւէժ բնակակից.
Անդանօր մռընչեն ոսկերք դեռ եւըս սէր հայրենեաց,
Օ՛ն և օ՛ն խօսի ի սուրբ խաղաղութեան անդ հոգին՝
Որ անուցանէր ի Մարաթոն ոսոխ ընդդէմ պարսկայնոց —
Ուր չիրխմս Աթէնք ի նուէր իւրոց քաջացըն կանգնեաց —
Ըզցասումն եկեղական և ըզհզօր զօրութիւն։
Նաւորդ ընդ ծովն ընդ այն քերեալ առ Եւբիաւ անցաւոր
Փայլատակունըս տեսանէր ընդ լայնատարըր խաւար
Թօթափեալ սաղաւարտից և չհանելոց սուսերաց,
Ծուխըս հրեղէնս ի խարուկից անտի ի վեր դիզացեալ,
Եւ երեւոյթ լինչ դիմելոց ի պատերազմ նահատակաց
Վառելոց համակ ի զէն երկաթակուռ՝ տեսանէր,
Եւ ծաւալէր յարհաւիրըս լըռութեան գիշերայնոյ
Երկայնաձիգ գըղորդ ընդ դաշտըս խառնամբոխ փաղանգաց.
Փողոց գոչիւն, սալասըմբակ երիվարաց ասպատակ
Ոռնաւորի ընդ սաղաւարտըս կիսամեռ անկելոց,
Ողբումն և նուագ, և դըսաերացըն Պարկայից եղերերգ։

Երանի՛ քեզ, ո՛ Հիպպոլիտ, որ ի գալար տիս քոյին
Ընդ անոլորտ սահմանս հողմոց ընթանայիր. և արդեօք —
Եթէ երբեք վարեաց ըզկայմ քո նաւուղիդ անդր ի բաց
Քան ըզկըզգիս եգէականս — լըւար զհամբաւ անդանօր
Ընդ եզերս Ելլեսպոնտեայ զանցիցըն վաղ անցելոց
Եւ ըզգոչիւն ալեաց՝ որ զգէնս Աքիլլեայ անդր ածէին
Ի հռետեան ծովափունս առ ոսկրոտին Էասայ։
Արդարակըիւ առ քաջազունըս մահ բաշխող է փառաց.
Ոչ խորագէտ հանճար և ոչ թագաւորաց լինչ չընորհք
Պահեցին Իթակացւոյն ըզկողոպուտն անառիկ.
Զոր ալիք յանդընդայնոց դիցըն դըրդեալք թափեցին
Ի տարագէմ լաստափայտին յափըշտակեալ ի խելաց։

Եւ լինձ՝ զոր սէ՛ր փառաց և իրք ժամանակիս ըստիպեն
Գընալ ընդ ազգս և ընդ ազինըս փախըստեայ, օ՛ն Մուսայք
Խրախուսիչք մահկանացուաց մըտաց տացեն լինձ հրաւէր
Վերակոչել ըզդիւցազունս։ Նըստին չիրմայըն պահակք,
Եւ ուրանօր ցըրտին թեւովքըն թօթափէ ժամանակ
Զաւերակս նոցին ի բաց, զըւարթ երգովք անդ Պիմպլայք

Եւ յաղթէ լըռութեան հաղար դարուց՝ նուագերգութիւնն։
Եւ այժմիկ ի Տրովադա՝ յակոսաբեկն եղեալ ի վար՝
Ձաճանչէ առ պանդուխտն յաւէժալոյս վայր մըշալնջեան
Ի պատճառս Յաւէրժհարսին՝ Սրամազդայ հարսնացելոյն,
Որ զաւակ ընծայեցոյց ըզԴարդանոս Սրամազդայ,
Յորմէ եղեն եւ ի լոյս եկին Տրոյա ընԱսսարակոս,
Եւ յիսուն սրբսկապանքն, եւ պետութիւն Յուլեան տոհմին։
Զի յորժամ Էլէկտրա լըսաւ ըզձայն օրհասին դից՝
Որ զնա կոչէր ի կենսաձիր չընչոյ լուսոյն յելիսեան պարս,
Ցեղին զայս ուղերձեալ առ Սրամազդ աղերս՝ ասէր.
Թէ քեզ սիրուն եղեն հերքս և դէմք և քաղցըր տըքնութիւնք,
Եւ տրիտուր լինչ պանծագոյն չներեն լինձ կամք ճակատագրաց,
Ի մեռեալ քո սիրելիդ զէթ դու յերկնից ակնարկեսցես,
Զի հրաչակ համբաւոյ մնասցէ անուան քոյդ Էլէկտրեայ։
Մեռանի՛ր նա յայս աղօթս, եւ Ոլիմպոս հեծեծէր.
Եւ գըլուխն անմահական զանմահութեան ցօղ ի վարսից
Ակնարկելով արկանէր զՅաւէրժական հարսին անձամբ,
Եւ արար սըրբանուէր զմարմինըն զայն եւ ըզչիրիմ։
Անդ հանգեաւ Երիքթոն, նընջէ Իլեանն աճիւն արդար,
Անդ կանայք Իլիուհիք արձակէին ըզդէսս յաղերս,
Ո՜հ, ի գուբ, մերժել յարանցն ըզմօտալուտ օրհաս մահուն.
Անդանօր կասանդրա, մինչդեռ աստուած յիւրում սըրտին
Տայր նըմա բարբառել զմահաչըշուկ օր Տրոյոյ,
Եկն հհաս և երգեաց սիրոյ մըլմունջս առ Ուրուականն,
Եւ անցեալ պարագլուխ եղբօրորդւոցն՝ ուսուցանէր
Պատանեկացն ողբ սիրոյ, և զայս ասէր յոգւոց ելեալ.
Ո՜հ, ձեզ դարձ թէ յԱրգոսէ, ուր զերիվարան արածիցէք
ԸզՏլեպեան և զՎայերտեան որդւոյն, ըմուռիեն երբէք երկինք,
Վայրապար և ի նանիր ըզհայրենիդ խնդրիցէք տուն.
Որմունքըն գործ Փիբոսի 'նդ աւերակօքըն ծըխեսցին,
Այլ Թերափքըն տրովականք վանըս կալցին յայս գերեզմանս.
Զի պահել անուն պերճ ի տառապանս՝ ե դից պարգեւ։
Եւ գուբ նոճք ե՛արմաւենիք, զոր Պրիամուն տընկեն նըւանք,
Եւ յայրուբեան ոռոգեալ փութով յարsour, ո՛հ, ամիցէք,
Լերուք հարցըս հովանի. և որ գըլխով պահէ գտապար
Ի նուիրական սաղարթուցդ՝ հասցէ նմա մի՛ տոհմային սուգ,
Եւ ի բաղին սըրբութեան ամբիծ ձեռօք լինիցի հուպ։

Զանապատս ամայիս ուրախ առնեն, ի գեղգեղ
Ներդաշնակ յաղթանակեալ բիւրուց դարուց լըռութեան։
Յակոսաբեկն արդ ի Տրովա փայլէ հիւրոց վայր յաւէրժ,
Յանուն յաւէրժհարսինն հարսնացելոյ Դիոսի,
Որ ետ զաւակ նըմա զԴարդան՝ յորմէ Տրովա եւ Ասսարակ
Եւ սրըսկապանքն յիսուն, և գահ յուլեան ազին եկն ի լոյս։
Զի ի լըսել ելեկտրայ զձա՛յն օրհասաբեր Պարկային՝
Որ զնա կոչէր ի կենսական օգոց աստի կենցաղոյս
Ցելիսական պարս, առ Դիոս աղերս յետին արար զայս.
Եթէ հաճոյ եղեն քեզ վարսք իմ, եթէ քեզ սիրելի
Դէմք իմ և քաղցըր տըքնութիւնք, և լաւագոյն լինչ լինձ վարձ
Ոչ ներեն կամք ճակատագրին, գէթ հայեսջիր դու յերկնից
Ի սիրելիդ քոյին մեռեալ, որպէս զի մի՛ կորիցէ
Համբաւ քոյդ Ելեկտրայ։ Եւ աղօթեալ զայս, մեռաւ։
Հեծեծաց Ոլիմպ ընդ այն. և գլուխն անմահական ակնարկեալ,
Ամբրոսային ցօղ ի վարսից ի յաւէրժհարսն իւր ցօղեաց,
Ըզդիակըն նորին սըրբազանեալ եւ զչիրիմ։
Անդ հանգեաւ եւ Երիքթոն, անդ եւ Իլեանըն նընջէ
Անճիւն արդար. Իլիուհեաց, ո՜հ, անդ ի գուբ հերարձակ
Աղերսելով մերժել յարանց իւրեանց ըզմահ մօտալուտ։
Անդ կասանդրա, յազդել ի սիրտ նորին եւ տալ նըմա գից
Գուժել զօրհաս Տրովադայ, եկն առ ուրուս նըւազել
Երգ սիրատարփ. եւ պարագլուխ եղբօրորդեացըն կացեալ
Ի սիրոյ եղերերգ ըզպատանեկանըն մարզէր,
Եւ յոգւոց հանեալ ասէր. եթէ երբէք ձեզ երկինք,
Ո՜հ, չնորհեսցեն դարձ յԱրգոսէ, ուր ըզՏլեպեան զաւակին
Ուր զՎայերտեան որդւոյն մընայ ձեզ արածել ըզձիան.
Զուր ըզգաւառ ձեր խընդրիցէք. որմունք Փիբեան դաստակերտք
Ընդ փլատակօքըն ծըխեսցին, այլ ի չիրիմս յայնոսիկ
Կացցեն Թերափք Տրովադայ. զի չնորհք են գից պահպանել
Ի տառապանս իսկ զանուն պերճ։ Եւ գուբ արմաւք եւ նոճիք,
Որ ի նուռսըն Պրիամու տընկագործեալ, եւ աւա՜ղ,
Ցարտասր այրի մնացելոցն ոռոգեալ վաղ աճիցէք,
Լերուք իմոց հարց հովանի. եւ որ խնայէ ըզտապար
Ի սրբանուէր կողերըդ՝ մի՛ հասցէ նմա սուգ ընտանեաց,
Նա անարատ ձեռօք լինի հուպ ի սեղան սըրբութեան,
Լերուք իմոց հարց հովանի. գայցեն աւուրք՝ զի մուրիկ

Լերուք հարցըս հովանի. տեսանիցէք յաւուր միում
Ըզկոյր ոք մուրացիկ թափառ ի հին ձեր հովանիս,
Առ խարխափ երերուն ի դամբարանսըն առնել մուտ,
Փիրկս արկանել զտապանօքն և ըզնոսին հարցափորձել։
Հեծեծեսցեն զանխուլ անձաւք, և պատմեսցէ չիրիմն ողջոյն
Զիլիոն հարթեալ երկիցըս և երկիցըս յարուցեալ
Փառօք պայծառապէս ըզլըռանխոտ ճանապարհօք՝
Ճակատագրեալ Պելեանց չըքեղ եւս յաղթանակ չընորհել վերջին։
Ողոբեալ երգովքն ի հաչս սուրբ եւդողիմ զսըրբոմեալ հոգիսն՝
Արասցէ զթագաւորսն արգիացիս յաւէրժ անմահս
Ընդ տիեզերս, զոր հայրըն մեծ Ովկիանոս ընդգոգէ։
Այդ և քե՛զ, Հեկտոր, ողբոց լիցի պատիւ, ուր լցէ սուրբ
Եւ արտասուաց արժանի՝ արիւն հեղեալ վասն հայրենեաց,
Եւ մարդկան ցորքան ի վիշտսըն ծագեսցէ ակն արեւուն։(*)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

(Քաs տողից առաջին բարգմանութեանն)

33. Ախերոն՝ գետ դժոխոց, ախերոնեան՝ դժոխային։
41. Յովսէփ Պարինի, քերթող իտալացի կամ Լոնգոբարտացի, զոր փոսկոլոյ կոչէ պաշտօնեայ Թալիայ մուսային։
43. Սարդենին անուցեալ ի Պարինեայ՝ է քերթուած նորին ՕՐ անուանեալ։
45. Սարդանաբաղն՝ է ապնուականն ճոխ, հեշտասէր և փափկակեաց։
47. Ադդուա և Տիկինոս անուանք են գետոց։
79. Ոգիք առաքինեացն կոչէին ընտանի դիք կամ ուրուականք։
89. Վարձկան ազօթք, զի քահանայք փոխան ազօթիցն առնուն զտուրս պաշտման։
92. Արտասուք կոծողացն ի չիշս հաւաքեալք՝ թաղէին ընդ վախճանեալսն։

(*) Թարգմանիչ Տաղիս (Հ. Ա. Կ. Բագրատունի) գրէ զայս օրինակ. «Քաղցր է մեզ յիշատակել... զի ծանուցեալ ոմանց ղյարգ և զհամ Տաղիս՝ ստիպեցին զմեզ տալ զսա նոցա և այլոց ընթեռնուլ հայերէն, ոչ ինչ երկմտեալ՝ թէ գուցէ հայն կորուսանիցէ զչնորհսն և զվսեմութիւնն»։

Թափառեալ կոյր ընդ հովանեօքըդ վաղեմեօք առ խարխափ
Ի դամբարան անդըր մըտցէ արկանել զիրկս ըզչիրմօք,
Մատուցանել նոցա հարցուած։ եւ յայնժամ խորք անձաւոց
Հանցեն հառաչ, եւ զերեզմանք առ հասարակ պատմեսցեն
Անկեալ երկիցըս կործանեալ հարթայատակ զԻլիոն,
Եւ զլուռ ուղեօք երկիցս անդրէն վերականգնեալ զայն փառօք,
Ճակատագրեալ Պելեանց չըքեղ եւըս վերջին յաղթանակ։
Ըզսըրբոմալից հոգիսըն հաւոս երգովք խրովք առաքեալ
Սուրբ երգողին, անմահ զարքայն արգիացիս կացուսցէ
Ընդ երկիր՝ որքան մեծն ընդգըրկէ հայրն Ովկիան։
Եւ քեզ, Հեկտոր, տացին ողբոց փառք ուր ուրեք լցէ սուրբ
Եւ չարժեսցէ զարտօսր արիւն հեղեալ ի փառս հայրենեաց,
Եւ ցորքան արփւոյն լոյս ի յաղէտըս մահացուաց ծագեսցէ։(*)

101. Ի Տապանի ուրեք արձանագրեալ կայ հելլեններէն. «Ցիւպս անուշ չունս հոգին քո, որդեակ»։
104. Գերեզմանատեղիք յԱնգղիա հասարակաց ճեմելիք են ժողովըրդեանն, զարդարեալք իրրեւ զղբահաս ծաղկամբք և ծառովք։
106. Առաքինի ծովակալն անգլիացի Նելսոն՝ որ ի ստուար բնոյ կայմէ փրանսական նաւուն՝ զոր կալաւ յեգիպտոս՝ արար իւր զագաղըս, և մինչ ընդ իւր տանէր։
110. Ինչ գատարկանձանց, եւ դողդոմն յերեսաց բռնաւորութեան ի պէտս անձնդիւրութեան ի կիր արկանին։
124. Դամբան Մաքեաւելլեայ՝ հզօր քաղաքավարի իտալացւոյ։
128. Տապան Միքէլանգելոսի՝ մեծի ճարտարապետին իտալացւոյ։
130. երեցուհոյ սոցա դամբարանք գտանին ի Ս. Խաչ եկեղեցւոջ Փլորընտիոյ։
140. Գիբելլին կոչի Տանթէ քերթողն, վասն կուսակից լինելոյ նորա ազատասիրաց ժամանակին Գիբելլին անուանելոց։

(*) Թարգմանիչ Տաղիս (Հ. Ե. Հիւրմիւզ) ակնարկեալ ի միւս թարգմանութիւնն՝ որ է Բագրատունեայ, գրէ. «Քանզի բնագիր Տաղիս մթին է յոյժ, վասն ոճ թարգմանչին զժուարիմաց ևս ո՛չ գուն ուրեք առնէ զայն. վասն որոյ բանասիրաց ոմանց իղձք միւս այլ պարզագոյն թարգմանութիւն ուննելոյ զՏաղին՝ ... հարկեցուցին զիս ջիջանել ի հայցուածս նոցա»։

143. Կալլիովպէ՝ մուսայ բանաստեղծութեան։ Ջպեղբարկայ քերթողէ են բանքդ, որ երգեաց զՍէր։
145. Աստղիկն երկնային և հոգևոր՝ ընդհատ է ամենեքեան յերկրաւոր եւ ի զգայական Աստղկանէ. պաշտամունք եւ քուրմք սոցա երկոցուն այլ և այլ էին ի հեթանոսութեան։
153. Վիկտորիոս է Ալփիէրի՝ քերթողն ոզբերգակ, որոյ եւ չիրիմն կայ ի Ս. Խաչ Փլորենտիոյ։
155. Առնոս՝ մին ի գետոց Իտալիոյ։
161. Պաւսանիաս հելլէն պատմիչն ասէ. «Ի Մարաթոնեան դաշտին են գերեզմանք Աթենացւոցն անկելոց ի մարտին, եւ զամենայն գիշեր լսել լինին անդ խրխինջք ձիոց, եւ երևութեանն ցնորք պատերազմողաց»։
174. Դատերք Օրհասին են Պարկայք։
179. Վահանն Աքիլլեայ պարգևեցաւ Ոդիսեայ, բայց ի նաւաբեկութեան սորա ծովն առեալ տարաւ զայն ի Սալամինա՝ ի գերեզմանն Էասայ. վասն որոյ եւ անուանի եղեւ Ռետեան սարաւանդն կարկառեալ ի Թրակեանն վոսփոր։
193. Պիմպլայք = Մուսայք։
195. Մնացորդք գերեզմանին Իլոսի՝ որ էր մին ի նախահարց Դարդանացւոց (Տրովադացւոց)՝ գտեալ եղեն ի Տրովադա։
197. Յաւէրժահարսին Էլեկտրայ, որ ըստ ազգաբանութեան Դարդանացւոց։
200. Յիսուն պռագաստքն են յիսնից ուստերացն եւ նուաներն Պրիամոսի արքային Տրովադացւոց։ — Ի Դարդանեան Ասսարակոսէ սերեցաւ Ենէաս նախահայրն Հռովմայեցւոց, յորմէ Յուլեանն ազգ՝ և ցեղ Յուլիոսի Կեսարու։
212. Երիքթոն ուստր էր Դարդանոսի՝ արքային Տրոյիոյ, իսկ յանուն Իլոսի՝ որ էր թոռն Երիքթոնի՝ քաղաքն Տրովադացւոց կոչէր Իլիոն կամ Իլիոս։
215. Կասսանդրա, դուստր Պրիամու, մարգարէուհի համարեալ։
220. Արածել զձիս՝ գործ էր ծառայից և ստրկաց։
221. Տիդեանն՝ Դիոմեդէս է, իսկ Լայերտեանն՝ Ոդիսեւս, երկոքին անուանի ախոյեանք ընդդէմ Տրովեանց։
223. Փիբոս կամ Գուշակն Ապողոն եւ Պոսիդոն հիմն արկեալ չինեցին զքաղաքն Տրոյա։
232. Կոյրդ այդ մուրիկ՝ Հոմերոս է։
236. Իլիոն միանգամ ի Հերակլեայ, եւ երկրորդ անգամ՝ յԱմազոնաց կործանեցաւ։
238. Պելեանց, այսինքն Աքիլլեայ եւ որդւոյ նորա Պիւռոսի պահեալ էր ընաջինջ բարձումն Իլիոնի։
240. Արգիացի թագաւորքն են Իչխանք Ելլադայ, որ տասնամեայ մարտիւ յաղթեցին Տրովադացւոց, որպէս ընթեռնուսմք յԻլիականին Հոմերոսի։

ՃԱՇԱԿ ՄԸ

ՅՈՒՆԱՐԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՅԵՐԷՆԷՆ

Յունաբան Դպրոցի Հայերիկը՝ որ մեր մէջ ծաղկած է Զ եւ Է դարերուն՝ ակնյայտնի կը շեղի մեր Դասական կամ Ոսկեդարեան հայերենին 1⁰. *Նոր բառերու(*) կիրարկումով, որոնցմէ միայն կրնան քանի հայեցի գաւառական հաւատարիմ, իսկ շատերը՝ իբրեւ գրական կամ փիլիսոփայական բառեր, նիւթական բարգաւանութիւնն ընդարձակ բառեր, մեծ տեղ մը սկսան գրաւել լեզուին մէջ, մանաւանդ Երեսուն Դպրութեանց (Քերականութիւն, Հռետորական արուեստ, Իմաստասիրութիւն) մեր մէջ մշակուելուն հետեւանքով։* 2⁰. *Քերականական զարտուղի կանոններու կամ օsարոցի ձեւերու գործածութեամբ, որոնցմէ հազիւ ոմանք Դասական լեզուի մէջ կը դիւտուին երբեմն(**).* 3⁰. *Շարադրութեան յատուկ գնացքի մը հետեւելով, ուր իւրաքանչիւր բառ իր ճանապարհը կը շեշտուի յոյն լեզուի բառակարգը, եւ խնդիր ու խնդրառու բառերը իրարմէ հեռու դնելու սովորութիւնը՝ յունականին հաւասարեալ, որով հերթականութիւնը կը ցուցադրուի աւելորեմ(***)։*

(*) Պէտք է գիտնալ՝ որ Յունաբան Դպրոցի ձեռնարկէն առաջ՝ արդէն ընդհանրացած կ'երեւին մեր մէջ ոչ-Ոսկեդարեան ինչ ինչ բառեր. պոր օր. բառ, տաւ, սեւ, տեսակ, յատուկ կամ յատկութիւն, յեղանակ, մտածութիւն, գոյացութիւն, կենցաղ, յարաժամ, առանձին, եւլն. և կարգ մը գաւառական բառեր։ Իսկ Յունաբան Դպրոցի ձեռքով՝ յոյն նախամասնիկներու թարգմանութեամբ ձեւուած գոյականներն ու բայերը որոնց կարգէն են՝ ներգործել, յարաբերիլ, յարացոյց կամ տարացոյց (օրինակ), վերաբերիլ, ապացոյց, բացատրութիւն, շարունակ, տրամաբանութիւն, դերանուն, մակբայ, եւայլն, եւայլն, բաւական մեծ պաշար մը բերած են մեր լեզուին։

(**) Քերականական այս ձեւերը պիտի մատնանշենք մեր բացատրութիւններու կարգին։

(***) Բերթողական ոճ կոչուած այդ զեղծ գրականութիւնը՝ անճաշակ թարգմանիչներու կամ իմաստակօրէն գրողներու գրչին տակ մանաւանդ ստեղծած է շատ անգամ լեզուի այլանդակութիւններ եւ խրթնութիւններ, եւ կամայական ու աղճատ շարադրութիւն մը։

Արդ՝ մեր ևսպասելի է դոյզն ձաշակ մը տալ այդ յուսաբան լեզուին։ Ան իր ծագման թուականեն ասդին՝ իր անմիջական ազդեցութիւնն ունեցած է մեր ղաւազոյն գրողներուն վրայ (Խորենացի, Օձնեցի, Ս. Սիւնեցի, եւայլն), եւ նոյն իսկ մեր հին Շարականներուն շատերը անոր դրոշմը կը կրեն իրենց վրայ։ Ցաղոդական դարերու մէջ ալ՝ աւելի կամ նուազ չափով՝ նոյն բերթողական ոճին հետեւած են ուրիշ մասնաւորներ մինչեւ Շնորհալի։ Իսկ գրաբարի վերանորոգման յեղափոխական թուականին (ԺԸ–ԺԹ դար)՝ մասնաւորապէս Վենետիկեան Հայերեն Բազրատունի՝ Դասական հայերէնին հետ քանաց ընդհատել Ցունաբան դպրոցի մասրագործուած շարադրութիւնը՝ իր արձակ եւ տաղաչափեալ բոլոր գործերուն մէջ, մինչդեռ Վիեննական Միխիթարեանք (Կաթըրճեան, Գարագաշ, եւայլն) Ոսկեդարեան լեզուին հաւատարիմ մնալու սկզբունքը տարիողած են միշտ։

Մեր սոյն դասը օգտակար ընելու համար՝ հետեւածներ ընտրած ենք միայն Դարիր փիլիսոփայի երկու գործերեն (Սահմանք եւ Վերլուծութիւն) որոնց բարգմանութիւնը, իբրեւ Ցունական Դպրոցի նախընծայ աշխատութիւն, Դասական Հայերէնի վարժեչութիւնը կը պահէ չափով մը։ Ուսանողներու դիւրութեան համար ընդգծումով կը ընշանակենք նորատուն բառերը եւ ճեռնարկական զարտուղութիւնները, մասնաւոր ուշադրութիւն հրաւիրելով վերջիններուն վրայ։

Ցունական Դպրոցի դրութեան եւ աշխատանքներու մասին՝ ուսանողը աւելի տեղեկութիւններ պիտի կրնայ գտնել մեր հրատարակեալ Հայ Մատենագրութեան Պատմութեան մէջ։

46

ՀԱՏՈՒԱԾՔ

Ի ՍԱՀՄԱՆՍԱՑ ԴԱԻԹԻ

Ա. *Որք միանգամ իմաստասիրութեան տենչան բանից, և առ ի նմանէ հեծութեանց (առ ի նոցանէ հեչտութեանն)[1] ծայրիւ միայն մատին հանդիպին ճաշակեալք[1] (ճաշակողք), ամենայն կենցաղական հոգոց բարեաւ մնալ ատացեալք[1] (ատացողք), ողջախոհ լինի մոլութեամբ առ այսոսիկ վարեալք[1] բերին[2]։*

(1) Ընդգծուած յոգնակի անցեալ ընդունելութիւնները՝ իբրեւ բայածականներ գործածուած են ըստ յունին։ Առաջին երկուքը՝ Դասական հայերէնով պիտի ըլլային «որք ճաշակեն», «որք ատեն», ինչպէս ըրած է թարգմանիչը մէջ գրելով՝ «որք... տենչան», մինչդեռ ըստ յունին պիտի գրէր՝ տենչացեալք (տենչացողք)։ Յոյնին համաձայն է նաև վարեալը՝ որուն յոգնականացուցիչ ի գիրը աւելորդ կրնայ համարուիլ՝ մեզի ծանօթ գրաբարին օրէնքով։

(2) Բերին (φέρονται) բայը նիւթական թարգմանութիւնն է յոյնին, դիմել, միտիլ, տարուիլ նշանակութեամբ։

Բ. *Զոր օրինակ ի հոսանուտ գետի՝ ի նոյն ջուր անկար է (անհնար է ումեք) երկիցս թաղել զոմն, և կամ որպէս ոմանք ևս յարաձգելով[1] զտարակուսանաղ՝ ասեն, եթէ և ոչ մի անգամ կարողութիւն է ի նոյն ջուր թաղել զոմն, այն ինչ (առժամայն) ջրոյն փութապէս հոսեցելոյ եւ անցելոյ[2]։*

(1) Բառը՝ ինչպէս յար նախամասնիկէն կը յայտնուի՝ նոր է ինքնին։ Ցունաբան Դպրոցը անցեալ ընդունելութեան տեղ՝ կը նախընտրէ աներեւոյթին գործիականով կիրարկումը։

(2) Ցոյնէն փոխ առնուած քերականական ձեւի մը համաձայն՝ նախադասութեան մը դիմաւոր բայի ենթակային հետ կապ չունեցող անցեալ ընդունելութիւն մը իր ենթակային հետ սեռական հոլով կը դնուի, ինչպէս է հոս. ջրոյն... հոսեցելոյ և անցելոյ։ Այս ձեւը սակայն Դասական լեզուի մէջ ալ կ'երեւի երբեմն. օրինակներ. «Զի սուտ (հոգւոյն) ապրեցելոյ, և մարմինն հալորդի փրկութեան» (Ոսկ. Մեկն. Թղթ. Պօղ. Բ 427). «եթէ ձեռնն, ոտինն փտելոյ, չլինիցի վշտակից... (նոյն, Ա 244). «Մտացն շփոթեցելոց, մոռանալ դաղթեան» (Մանդակունի), եւայլն։

Գ. *Արիստոտէլ ասէ, եթէ «[Իմաստասիրութիւն], որպէս բոլոր լինէ, ի մասունս բաժանեցաւ»։ Եւ բարւոք ասէ, վասնզի* տեսականն *և գործականն մասունք իմաստասիրութեան են. եւ որպէս՝ միոյ մասին պակասելոյ(*)՝ հարկ է զբոլորն անկատար գոլ(1), նոյն օրինակ [տեսականին եւ] գործականին ոչ ելոյ(*)՝ անկատար է իմաստասիրութիւն, [զի ձեռին ոչ ելոյ(*) անկատար է ամենայն մարմինն]։ Քանզի պարտ է իմաստասիրին ո՛չ միայն տեսականաւն այլ և գործականաւն զարդարիլ(2)։*

(*) Տես Բ. հատուածին (2) կանոնը։

(1) Ցուներէնն լեզուի մէջ՝ աներեւոյթին հնչական կամ տէր բային հայցական հոլով կը դրուի, ինչ որ օտար է դասական հայերէնին։ Պէտք է ըսել սակայն՝ որ նոյն ձեւը մեր հին թարգմանութիւններուն մէջ որդեգրուած է արդէն, պայմանաւ սակայն որ ներգործական բայի մը ներկայութիւնը տեղնուի խօսքին մէջ. Օրինակներ. «Աստ՝ զիմաստութիւն հոյր քեզ լինել» (Առակք, Ի 4). «Կամիմ զամենայն մարդիկ իբրև զիս լինել» (Ա. Կորնթ. Է 7). «Զի զամենեսին... մատաղարժս և աստուածապաշտս կամէր լինել Աստուած» (Եւթալ). «Մտեալ ի տունն մոխրանոցին՝ զիրակն ասաց զոլ աստուած» (Փարպեցի)։ Իսկ Գործք Առաքելոցի Իէ գլ. 44 համաբին «և զայլսն զո՛րս ի տախտակս, և զո՛րս յայլ ինչ կահ ի նաւէ անտի» խօսքին մէջ՝ թարգմանիչը ուշադիր եղած չերեւիր անմիջապէս առաջ դերուած նոամայեաց »բային, անոր պատշաճեցնելու համար անջատուրէն գործածուած հայցական տէրբայիներուս դիրքը։ — Գոյ և ել բայերու գործածութիւնը յաճախադէպ է յունաբաններուն մօտ, և լեալ կամ եղեալ տեղ ստէպ կը կիրարկեն՝ գոլով, ելով։ Այս վերջինը իր հրամայական ձեւին տակ միայն ծանօթ է մեզի Աւետարաններէն. «Ոդջ եր, թագաւոր Հրէից»։

(2) Ցուներէնի բայերը՝ թէ՛ հասարակ և թէ կրաւորական բայերու աներեւոյթներուն ելը՝ որ յատուկ է Ոսկեդարեան լեզուին՝ կը փոխէ իլի։ Հաւանական է սակայն՝ որ աւելի կանուխ տեղի ունեցած ըլլայ այդ փոփոխութիւնը, չվոխութիւն մը զարմանելու նպատակաւ։ Ըստ այսմ՝ համարել, խօսել, դատել, հայլն, եղած են համարիլ, խօսիլ, դատիլ։ Պարագան նոյն է նաև կրաւորականներուն համար։

Դ. *Ոչ կամեցաւ թողուլ շարագրածուքիւնս Պլեթագորաս, ասելով՝ եթէ Ոչ կամիմ զիմ վարդապետութիւնս թողուլ յանշունչս, այլ ի շնչաւորս։ Անշունչս կոչելով զգիրս, իսկ շնչաւորս՝ զաշակերտսն, որ[ք]՝ եթէ ոք հարցանիցէ կամ տարակուսեսցի՝ կարողք դոն պատասխանատրել(1) և լուծանել զտարակուսանս. իսկ գիրք միշտ զմի և զնոյն ասելով՝ ոչ կարեն լուծանել զարտաքոյ իւրեանց տարակուսանս(2)։*

(1) Նոր է այս բառը փոխանակ ըսելու՝ պատասխանի տալ։ Այս ձեւով միաւորուած բայեր՝ զոր օր. փառատրել՝ (փխնկ. փառս տալ ի), մեղադրել (փխնկ. մեղ դնել ի), ձեռնարկել (փխնկ. ձեռն արկանել ի), և այլն. և ըստ այնմ կազմուած գոյական բառերը՝ փառատրութիւն, մեղադրութիւն, ձեռնարկութիւն, հայլն, Դասական լեզուի մէջ սովորական են արդէն։

(2) Հոս նախադրութեամբ խնդիրով ձեւացած ասացուած մը ածականաբար կը գործածէ թարգմանիչը. եղանակ մըն է բացատրութեան և ո՛չ լեզուական անտեղութիւն մը, թէև Ոսկեդարը այդ ազատութենէն չատ օգտուած չերեւիր։

Ե. *Բազում աստիճանօք ցուցաւ իմաստասիրութիւն պիտանացեալ (ի կիր արկեալ), և եթէ լաւագոյն ամենայն արհեստից եւ մակացութեանց(1) (գիտութեանց) է իմաստասիրութիւն, որպէս Պղատոն առ ոմն Թէոդորոս երկրաչափ յայտ առնէ ասելով՝ թէ «Ա.յսպիսի ինչ բարի, ով Թէոդորէ, ոչ եկն երբեք առ ի մարդիկ և ոչ եկեսցէ երբեք առ յԱստուածոյ»։*

(1) Ցուներէնի մէջ բազդատական և գերադրական ածականները սեռական խնդիր կ'առնեն։ Մեր թարգմանիչն ալ նոյն խնդիրը տուած է լաւագոյն ին, փոխանակ ըսելու՝ լաւագոյն բան գտնեցայ արհեստս եւ մակացութիւնս։ Պղատոնի նոյն տողը ուրիշ յունարան մը կը թարգմանէ բնագիրին համաձայն, [իմաստասիրութեան]՝ «որոյ մեծագոյն բարի...» (Տիմէոս, էջ 11ֆ), փխնկ. ըսելու՝ «բան զոր մեծագոյն բարի»։ Դաւիթ Անյաղթի ընծայուած Եռչի ներբող ին մէջ ալ՝ որ յունարան Դպրոցի արդիւնք է՝ մէկէ աւելի անգամներով կը հանդիպինք այս ձեւին. «բարձրագոյն գոս նրաշից». «գերագոյն ծփական ալեաց». «վերագոյն մտեներոյն» հայլն։ Ըստ այսմ՝ Դասական լեզուի գեր ի վերոյ (գերագոյն) եւ տուպ (փոքրագոյն, նուազագոյն) բառերը՝ բազդատական կամ գերադրական ածականներ նկատելով՝ սեռական կը համարինք իրենց խնդիրը. «գեր ի վերոյ լինելոյն անզգայմաց» (Առակք, ԺԹ 11). «գեր ի վերոյ լինելոյն ախոյեանից» (Եզնիկ.) «ինձ որ տուպս եմ ամենայն արբոյ» (Եփես. Գ 8)։ Տե՛ս Դասագիրքիս մէջ (էջ 15 (ճ))։

ՅԵՂԱՆԱԿՔ ԼՈՒԾԱՆԵԼՈՅ ԵՐԱԽԱՆԻ

[Ստոյիկեանքն] ասեն՝ եթէ վանզի առաջիկայ կենցաղս այս երախանի նմանեալ գոյ, յայտ է եթէ ըստ որչափից(1) յեղանակաց երախանն լուծանի, ըստ այնքանեաց յիրաւի ոք զինքն (զանձն) արտաճանի։

Նա քանզի և ասեն խակ՝ եթէ ըստ վեց յեղանակաց լուծանի երախանն. ա) կամ վասն կարօտութեան կերակրոց. զի կարօտութեան եղոյ կերակրոց (ի պակասել կերակրոց), յիրաւի յառնեն կոչեցեալքն եւ լուծանի երախանն։ Արդ այսպէս եւ վասն կարօտութեան ընչից՝ յիրաւի ոք զինքն արտահանէ, այսինքն ի բաց բառնայ, ոչ կամելով ծախիլ ի սովոյ։ Որպէս եւ Թէոդնիս յայտ առնէ ցոմն Սկլուռնոս (Կիւռնոս) ասելով՝ թէ «Պարտ է յաղքատութենէ վախչել եւ ի մեծակիսեղն (որ ունի կէտս մեծամեծս) անկանել ծով, եւ ի վիմաց, Սկլուռնէ, հոսիլ յարեգնակոս»(2)։ Եւ արդ պարտ է գիտել՝ եթէ ոչ զայն ասէ, եթէ պարտ է տնանկին զինքն ի բաց բառնալ, այլ զայն ասէ, թէ Պարտ է տնանկին ամենայն ուրեք սերմանել՝ եւ ի վիհս անկոխս, եթէ հնար ինչ լցէ եւ ի ծովու, որպէսզի ազատեսցի ի սովոյ։

բ) Ըստ երկրորդ յեղանակի՝ դարձեալ լուծանի երախանն, վասն լինելոյ չարահաւ (չարախուս) զկերակուրսն(3) եւ դեղս մակարդչեալս(4). քանզի այսպիսեաց եղոյ կերակրոց(5)՝ յիրաւի յառնեն կոչեցեալքն եւ լուծանի երախանն։ Արդ այսպէս եւ մարմնոյ ուրուք չարահաւելոյ (կարդա՝ չարահաւ եղոյ) եւ անպատկանաւոր (եղոյ) առ ի յընդունելոյ զանձնաւորական ազդումն, յիրաւի արտահանէ՝ ի բաց քերելով (քեցելով ?) զինքն ի ցաւոյն (ի տառապանացն)։ Որպէս եւ ոմն չնական փիլիսոփոս կիսագօս գոլով, մատեաւ առ Յուլիանոս թագաւոր՝ ասելով. «Կէս մարմնոյ իմոյ մեռաւ և կէս տեսանէ զիս. զի՛մ, ով թագաւոր, ի կիսակտուր չնականս». այսինքն թէ՝ հրամայեա կամ բժշկել կամ սպանանել։ Առ որ ասաց [թագաւորն] թէ՝ «Զերկոսեան զրկես, և զՊղուտոն (զդժոխս) և զՓայեթոն (զարեգակն), յումեմնէ պակասեալ, և զոմն տակաւին ևս տեսանելով»։

գ) Ըստ երրորդ յեղանակի՝ դարձեալ լուծանի երախանն, վասն առանձնական տագնապի կոչնատեառն. քանզի կոչնատեառն(5) կամ յանկարծակի հիւանդանալ՝ և կամ լսել(5) զկորուստ սիրելոյ, յառնեն կոչեցեալքն և լուծանի երախանն։ Եւ արդ այսպէս՝ եթէ առանձնական ումեք տագնապ հասանիցէ, յիրաւի ի բաց բառնայ զինքն. որպէս և արար Պիւթագորուհին(6)՝ որ կոչեցաւ Թէանոնէ։ Քանզի նա անկեալ ի բուռն Սիկիլացւոց բռնաւորին, և հարցեալ (կր.) թէ Ընդէ՞ր ոչ ուտեն Պիւթագորականքն զմեծ ոլոռունս՝ ասէր. կերայց քան թէ ասացից։ Եւ յասել բռնաւորին՝ թէ կեր, ասէր. Ասացից քան թէ կերայց. և այսպէս ծամելով զլեզուն՝ վախճանեցաւ։

դ) Ըստ չորրորդ յեղանակի՝ դարձեալ լուծանի երախանն վասն արբեցութեան. քանզի յարբեցութիւն անկելոց կոչեցելոցն՝ յիրաւի լուծանի երախանն։ Այսպէս յիրաւի ոք ի բաց բառնայ զինքն, յորժամ ի վերջինն հասանիցէ ի ծերութիւն (և զառանցիցէ), և սկիզբն առնէ աղճատելոյ և բարբառնջելոյ։

ե) Ըստ հինգերորդ յեղանակի՝ դարձեալ լուծանի երախանն, յորժամ սկիզբն առնեն կուռելոյ կոչեցեալքն, և անիրաւս առ միմեանս առնել[ոյ]։ Նոյնպէս յիրաւի ոք ի բաց բառնայ զինքն, յորժամ ըմբռնեալ ի թշնամեաց՝ հրամայի(7) առնել անիրաւ ինչ, կամ ընդ մօր անկանել կամ անպատեհ ինչ ուտել։

զ) Իսկ ըստ վեցերորդ յեղանակի լուծանի երախանն վասն հասարակական(8) տագնապի, քանզի հասարակական տագնապի հասելոյ՝ կամ հրայրեցութեան (կամ չարժման) կամ արշաւանաց բարբարոսաց, յառնեն կոչեցեալքն և լուծանի երախանն։ Այսպէս յիրաւի ոք զինքն ի բաց բառնայ ի հասարակական տագնապէ հասելոյ, և թճնամեացն այն ինչ զքաղաքն առնուլ հուպ եղելոյ, և նորա յերկիւղէ անտի յաղթահարելոյ։ Արդ զայսոսիկ Ստոյիկեանքն [ասեն]։

Իսկ այլք երկուս միայն յեղանակս յարադրեն, ըստ որոց յիրաւի ոք ի բաց բառնայ զինքն։ Քանզի ասեն՝ թէ Առ ի կեալ՝ կենցաղս է կամ լաւ կամ յոռի կամ միջակ. արդ յորժամ ի լաւն արուսմն և ի միջակումն(9) գոլով՝ և տեսանէ զինքն ի յոռին արատաւիսեալ՝ յիրաւի ի բաց բառնայ զինքն։ Եւ դարձեալ ի յոռեգունումն գոլով՝ և տեսանէ զինքն ոչ երբեք ի լաւագոյնն վերադունումն գոլով՝ և տեսանէ զինքն ոչ երբեք ի լաւագոյնն վերաթեւեալ, յիրաւի ի բաց բառնայ [զինքն]։

Սակայն՝ եթէ ոչ ըստ իրաւանց և ոչ ըստ անիրաւութեան պարտ է զինքն ի բաց բառնալ ումեք. քանզի որք զայս այսպէսն կամին կամ խորհին՝ ընդդիմանան Արարչին. հարուսանութեամբ կամելով զկապն լուծանել զոր կապեաց, [ասեմ իսկ զբաժանումն հոգւոյն ի մարմնոյ]։ Եւ պարտ է հաւանել Պղատո-

նի որ ասէ, թէ Ահա որպէս յումեմն պահարանում (ի պահարանի ուրեք) եմք, և ոչ է պարտ յայսմանէ զինեքն արտաքսել և տարափախչիլ, այլ կալ մնալ կապղէն՝ մինչև նա լուծցէ: Իսկ փորձութիւնք թէ ուրեք պատահիցեն, ա՛չ վասն այնորիկ՝ որպէս թէ ումեք պարտ է զինեքն ի բաց բառնալ, այլ վասն փորձելոյ զհոգին: Քանզի որպէս լաւ նաւապետ ա՛չ ի հանդարտութեան ծովուն, այլ ի յուզման ալեացն փորձի, նոյնպէս և վեհագոյն հոգի ի փորձութեան նահատակի: Ուստի և Ճեմականքն կամելով զժուժկալութիւն հոգւոյ ցուցանել՝ աղօթին(10) ասելով, «Ձևս, տեղեա՛ ի մեզ փորձութիւնս»:

ՍՏ

(1) Դասական լեզուի մէջ այնչափ, որչափ բառերը չեն հոլովուիր իրրև ածականներ, այլ իրենց այնքանի, որքանի ձևերովը կը գործածուին ու կը հոլովուին իրրև ածականներ:

(2) Յունարէն քերթուածի բառակարգին հետևած է մեր թարգմանիչը, փոխանակ ըսելու. յարեգակնակոխ վիմաց: Ուրիշ յունարան մը սապէս կը թարգմանէ միևնոյն տողերը. Արժան է յաղքատութենէ (կամ՝ ի չքաւորութենէ) փախչել, եւ ի մեծն անկանել ծով, եւ կամ ի վիմաց հոսիլ ի բարձանց (կամ՝ ի ծայրագոյն հոսիլ բարձանց գահից) (Գիրք Պիտոյից):

(3) Հմմտ. Դ հատուածին 1 կանոնը:

(4) Թերևս իրրև մէկ բառ պէտք է կարդալ՝ դեղամոխակարդեցեալս (թոյնով մակարդուած?): Թարգմանիչը սխալ հասկցողութեամբ մը չինած է իր բառը, յունարէն δηλητηριώδη բառին առաջին արմատին մէջ հայերէն դեղ (թոյն) բառը տեսնել կարծելով և երկրորդ արմատը (τηρ...) τυρέω (մակարդել) բային հետ չվոխելով. մինչդեռ նոյն բառը՝ որ փրանսերէնի մէջ ալ կը գործածուի (délétère)՝ կը նշանակէ մսնաբեր, կորուսիչ:

(5) Քերականօրէն անկապակից կը մնան այս տողերը հետագայ նախադասութեան հետ: Ցունարանօրէն պէտք էր թարգմանել. կոչնատեառնն հիւանդացելոյ եւ լսելոյ... (զերբային լսեալ ձևէն՝ զոր ցունարանք կը գործածեն);

(6) Ուհի (=ուրհի) իգականացուցիչ մասնիկին կիրարկումը դասական է, ինչպէս յայտնի է թագուհի՝ աստուածուհի հայերէն բառերէն: Ցունարան գպրոցը սակայն սեպ կը գործածէ զայն. երիտասարդուհի, սըրբուհի, հայլն:

(7) Հրամայիմ բային գործածութիւնը Ոսկեդարեան չէ. բայց ցունարան Դպրոցէն առաջ կ'երթար կ'երևի: (Տե՛ս Եղիշէի Պատմութեան Ընծայականին մէջ... «Ա՛ռ ի՞նչ արդեօք հրամայեցեր, քան եթէ հրամայիցիս»:

(8) Նոր ձևն է հասարակաց դասական բառին:

(9) Ցունարան գպրոցն ընդհանրապէս վերջահոլով տրականի ում ձևը կը գործածէ թէ՛ ածական և թէ գոյական բառերու համար:

(10) «Աղօթել» բայը՝ քիչ անգամ կ'երևի Դասական լեզուի մէջ, որ միշտ յաղօթս կալ, աղօթս մատուցանել ձևերը կը նախընտրէ (Հմմտ. Դ հատուած կ. 1):

47

ՀԱՏՈՒԱԾՔ

Ի ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵՆԷ ԴԱԻԹԻ

(«ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ» ՊՈՐՓԻՒՐԻ)

Ա. Ուսեալք զգիտաւորութիւն և զպիտանացու առաջիկայ շարագրութեանս՝ ասացցուք և զպատճառս մակագրութեանն: Եւ գիտելի է, զի մակագրեալ է առաջիկայ չարագրութիւնս «Պորփիւրի Ներածութիւն», Պորփիւրի Փիւնիկեացւոյ՝ աշակերտի Պղոտինի Լիկոպոլսեցւոյ,— իսկ Լիկոպոլիս յԵգիպտոս է,— վասն որոյ (զորմէ) ասացեալ է՝ եթէ «Ոչ յոքուննս եգիպտոս, բայց յորժամ ծնանի՝ մեծ ծնանի»: Վասն որոյ ասէ Պորփիւրիոս՝ եթէ Պղոտինոս վերայիս fեսակեալ(1) գոյր ամաչեցեալ՝ եթէ զի՛րդ արդեօք ի մարմնում լցէ: Եւ կամեցելոյ ումանց(2) յարուցանել նմա պատկեր՝ արգել ասելով. Շատ է ինձ՝ որ ի բնութենէս գոյ ստուերակերպութիւնն (այսինքն՝ մարմինն). ոչ է [արժան] ստուերակերպումս ստուերակերպ (պատկեր) կանգնել:

(1) Քսակեալ (նմանեալ կամ նմանեցուցեալ)՝ ցունարան զբպրոցի բառ է, նոյնպէս և վերայինը՝ զոր թերևս պէտք է կարդալ զմերային (=որ ինչ մեր է, այսինքն՝ մարմինն):

(2) Հոս անցեալ ընդունելութիւնը իրրև ածական գործածուած է. հոլովուած չէ իր ենթակային հետ:

Բ. Սմանչանք սկիզբն են իմաստասիրութեան: Եւ զի սքանչանք սկիզբն են իմաստասիրութեան՝ աստուս պարտ է գիտել, չանք սկիզբն են իմաստասիրութեան՝ աստուս պարտ է գիտել, վասնզի թէ ոչ սքանչանայ ոք՝ եւ ոչ ի խնդիր անկանի եւ ոչ իմաստասիրէ, որգոն(1)՝ յորժամ տեսանելով ոք զծիածանդ եւ ոչ սքանչանայ՝ եթէ զի՛նչ լցէ և ո՛ւստի բաղկանայցեն խառոչ սքանչանայ՝ եթէ զի՛նչ լցէ և ո՛ւստի բաղկանայցեն խառնուածք նորին երփն երփն գունոցն, ոչ անկանի ի խնդիր, իսկ եթէ սքանչանայ, ապա և ի խնդիր անկանի, ապա և իմաստասիրել ձեռնարկէ:

(1) Փոխանակ ըսելու՝ որպէս: Նոյն իմաստով ցունարան գպրոցին մէջ կը գործածուին նաև որգան, հիկէն, հիգան բառերը:

Գ. *Քանզի ասէր Անտիսթենէս. Մարդ տեսանեմ, մարդութիւն ո՛չ. ձի տեսանեմ, ձիութիւն ո՛չ. (արջառ տեսանեմ, արջառութիւն ո՛չ)։ Զայս ասէր յայտ առնելով՝ թէ մասնաւորքս և զգալիքս են, իսկ ընդհանուրքն և համանալիքն չե՛ն։ Զոր յանդիմանելով ասեմք՝ եթէ ոչ ամենայն ինչ յէիցս ընդ զգայութեամբ անկանի։ Զի եթէ որք ընդ զգայութեամբ անկանին՝ նոքա միայն են գոյ, ապա վասնզի աստուածայինն և միտք և հոգի ոչ անկանին ընդ զգայութեամբ, ապա ուրեմն ոչ են գոյք։ Նաև պարտիմք իսկ ոչ զգայութեանցդ հաւատալ, վասնզի ոչ ճշմարտեն. ահաւասիկ արեգակն բազմապատիկ մեծ գոլով քան զերկիր՝ թզաչափաբար տեսանի, եւ զղեկ նաւի ի ջուր՝ բեկեալ տեսանեն զգայութիւնք։*

Դ. *[Ասեն] առ այսոքիւք՝ եթէ ոչ զօրութեամբ ունիմք զծիծաղականն, ուր և ոմանք ընդ Տրոփոնեայ [քարայրն] անցեալ՝ յայնմ հետէ և առ յապա առանց ծիծաղելոյ մնային։ Բայց ասելի է ըստ մեր խոստմանն՝ թէ գիա՛րդ լինի ծաղրն։ Ոմանք ասեն թէ անբան չնչումն լինի, որոց գաչնակից (համաձայն) գոմք, քանզի ծիծաղելն ի ձեռն մկանց և ջլաց լինի՝ որ անբան չնչոյն են, և ոչ ի ձեռն բանականի հոգւոյ։ Բայց տարակուսին ոմանք ասելով. եթէ ի ձեռն անբան չնչոյն ծաղրն լինի, վասնզի և մկունքն և ջիլքն ի միմեանս գալով առնեն զծաղրն, ապա պարտ է նմա (ծաղուն կամ ծիծաղելոյն) և յանբանսն տեսանիլ[1], վասնզի ունին մկունս և ջիլս։ Առ այսոսիկ ընդդիմաբանելով ասեմք՝ թէ և ա՛յլ կենդանիք են ծիծաղական, որպէս վիպէ Արիստոտէլ ի գիրսն ցաղագս կենդանեաց, յորոց մի է և տատեղն։*

(1) Կրաւորական. աներևոյթին փոփոխման մասին՝ տես վերը (46 ՀԱՏՈՒԱԾՔ, գ (2))։

Ե. *'Ցաւեհs որք ի ճեմարանէն'։ Ճեմականն յիշէ [Պորփիւր], որպէս ոմանք ասեն, վասնզի ճեմականքն զօրաւորք էին բանականաւն։ Այլք ասեն՝ թէ վասնզի պղատոնական է, կամեցաւ ցուցանել՝ թէ և Արիստոտելականացն հետեւի, վասն այսորիկ յիշեաց։ Իսկ ճեմական կոչեցաւ Արիստոտէլ, վասնզի Պղատոնի տակաւին և կենդանի գոլով՝ ոչ իշխէր նստիլ և ուսուցանել, այլ ճեմէր։ Այլք ասեն՝ Ոչ. այլ հակառակ էր Պղատոնի, զի նա նստեալ գոլով՝ լինքն յոտն կացցէ։ Որ զայդ ասեն՝ սուտ ասեն. այլ եւ պատուէր զնա եւ պաշտէր, որպէս եւ ուրեմն [ի վերայ գերեզմանին] բազին կանգնեաց և մակագրեաց այսպէս.*

«Զբազինս այս Պղատոնի կանգնեաց Արիստոտէլ,
առն՝ զոր չարք և ոչ գովելոյ զնա արժանի են»։

ՅԱՂԱԳՍ ԽՈՐԹՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԳՐԱԾՈՒԹԵԱՆՑ

Վասնզի բազում անգամ անհաւասար գոն մակագրութիւնք [շարագրածութեանց], վասն այսորիկ յերաւի եւ հարազատութիւնն խնդրի, վասնզի գիտելով՝ եթէ հարազատ է շարագրածն, զգիտութեան փառս ունդրի(1) վարդապետին յօժարութեամբ ընթեռնումք [զշարագրածն]... եւ որպէս սիրելի լինչ վարկանիմք զհետեւիլն կարծեաց վարդապետին։

Եւ լինին խորթք շարագրածութիւնք ըստ չորից յեղանակաց։

ա) Կամ վասն հոմանուանութեան շարագրողաց, և կամ վասն հոմանունութեան շարագրածաց։ Վասն հոմանունութեան շարագրողաց. որպէս յորժամ գտանին երկուք ոմանք հոմանուն, եւ գրէ իւրաքանչիւր ոք շարագրածս ումն վասն հոգւոյ, և ումն վասն երկնից. յայնժամ վասն հոմանունութեան շարագրողացն ոչ ոք կարող գոյ որոշել, այլ զերկոսեան շարագրածսն միով առն կարծէ գոլ։ Եւ կամ վասն հոմանունութեան շարագրածութեանցն. յորժամ գտանին երկուք ոմանք զանազան անուանս ունելով՝ և առնեն շարագրածութիւնս վասն միոյ իրի, կամ վասն հոգւոյ կամ վասն երկնից, և յայնժամ ոչ ոք կարող գոյ որոշել, կամ զնորայն սորա կարծելով, կամ զսորայն նորա։

բ) Ըստ երկրորդ յեղանակի ասին խորթք շարագրածութիւնք՝ որ լինին ի ձեռն պատուասիրութեան՝ այսինքն անափառութեան։ Քանզի ոմանք անփառք և աներևելիք գոլով՝ անուամբ վարդապետութեան կամելով յարկել զիւրեանց շարագրածն, մակագրեն յիւրեանց շարագրածն զերեւելի ուրուք զանուն վարդապետի։

գ) Ըստ երրորդ յեղանակի լինին խորթք շարագրածք վասն ժլատութեան (զօշաքաղութեան), որպէս եղև առ Պիսիստրատո-

սիւ։ Վասնզի առ նովաւ ցնդաբար (խառն ի խուռն) բերեցելոց հոմերականաց հագնեւրգուբեանցն(²), կա՛մ եղև նմա ժողովել զաՀենայն տաղս հոմերականս, և վարձս տանողացն բազումս խոստանայր տալ։ Վասն որոյ բազումք տաղս ստեղծանելով մատուցանէին քննաւորին՝ որպէս թէ Հոմերոսի իցէ՝ վասն իւրեանց չահիցն։

դ) Իսկ ըստ չորրորդ յեղանակի լինին խորթք չարագրածք վասն բարեմտութեան աշակերտաց առ իւրեանց վարդապետսն. գրեն չարագրածս ոմանս, և մակագրեն զանուն վարդապետին..., որպէս Պիւթագորականքն զՊիւթագորին ի վերայ ոչխ ասացեալոց առակացն (ըստ յունին՝ Վէպացն)։ Արդ՝ վասնզի բազումք են խորթ չարագրածուԹիւնք՝ յիրաւի զհարազատուԹիւնն խնդրեմք։ Բայց տարորոշին և ճանաչէին չարագրածք՝ թէ խո՛րթք իցեն, թէ հարազատք, ըստ նիւԹոյն և ըստ տեսակին։ Ըստ նիւԹոյն՝ ըստ յարմարման (ըստ ոճոյն), այսինքն ըստ բառից. զի յարմարումն և բառք որպէս նիւթք են չարագրուԹեան. իսկ ըստ տեսակի՝ ըստ մտածուԹեան (ըստ տեսուածոյ)։

(¹) Օղ կամ ող վերջաւորող բայածականը իր բային հայցական խնդիրը առած է։ Յունաբան Դպրոցին մէջ ամէպ կը հանդիպինք քերականական այս ձևին՝ որ սովորական է մեր աշխարհաբարին համար ալ։ Պէտք է գիտնալ ասկայն, որ ող նշանակուԹիւնն ուներգող ներգործական բայածականները (ինչպէս են առնել (ընող), լսել (լսող), ընդունել (ընդունող) և այլն, դասական հայերէնի մէջ ալ երբեմն նման խնդրառուԹեամբ կը գործածուին. զոր օր. «Ձրագաբերանայն... արկանելեաց և ի վեր հանելեաց զնաւականն (ըղբաժակն) ոսկի» (Ձաք. Դ 12). «Ոտք քահանայիցն կրելեաց զտապանակ ուխտին» (Յեսու, Գ 13)։

(²) Տես 46 հատուածք, Բ կ. 2։

ՊԵՏ ԿԱՌ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՅ-ՈՒՄ ՍՍՀ
Ա. ԳՄ. Հ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎՐԻՊԱԿՔ

Էջ 12 կ.	(⁴) աւելցնել	Համմտ. սակայն՝ «կատկածել ընդ տկաց, «հոգալ ընդ ընկերաց» (Ոսկեբերան)
» 15 տ.	10 [կarosի[մ]	կարդա՛ կarosի[մf]
» 15	(³) կանոնիկ վերջ աւելցնել	Ըստ այսմ և բայը։
» 176	աւելցնել բառերուն վրայ	«Տրմուղ, անվաթ» «Առեղ, այլն ղեկը»
» 176	բառերուն մէջ «Զնդ ընտիրս հանել»	կարդա՛ «Ընդ ընտիրս հանել»

2017 3580

ՀՀ Ազգային գրադարան
NL0059756